
Միջազգային պաշտպանության ներածություն

ՄԱԿ ՓԳՀ խնդրո առարկա անձանց պաշտպանությունը

Ինքնուսուցման մոդուլ 1



UNHCR

United Nations High Commissioner for Refugees
Haut Commissariat des Nations Unies pour les réfugiés

1 օգոստոսի 2005թ.

Ծանոթագրություն

Այս փաստաթուղթը պատրաստվել է ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի Միջազգային պաշտպանության կողմից: Այս փաստաթղթի բովանդակությունը կարող է տարածվել, վերարտադրվել կամ պատճենահանվել առանց ՄԱԿ ՓԳՀ-ի նախնական թույլտվության: Այն դեպքում երբ նյութն օգտագործվում է կամ մեջբերվում է այլ տեղ ՄԱԿ ՓԳՀ-ն պետք է նշվի որպես տեղեկատվության աղբյուր:

ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակ
Փոստային ինդեքս 2500
CH-1211 Ժնև 2
Շվեյցարիա
Ֆաքս: +41 22 739 7354
Էլ. փոստ: HQPR09@unhcr.org
Վեբկայք:
www.unhcr.org

Բովանդակություն

Միջազգային պաշտպանության ներածություն

Ընդհանուր ակնարկ	1
Նպատակ	1
Գլուխ 1.....	3
Միջազգային պաշտպանության զարգացումը և դրա համար պատասխանատվությունը.....	3
1.1 Պատմական ակնարկ	4
1.2 Միջազգային պաշտպանության համար պատասխանատվությունը	15
1.3 Միջազգային պաշտպանության կարիք ունեցող անձինք.....	16
1.4 Գործընկերային աշխատանք.....	18
Ամփոփում.....	22
Վարժություններ.....	24
Գլուխ 1-ի վարժությունների պատասխաններ	26
Գլուխ 2.....	25
2.1 Իրավական դաշտը.....	27
2.2 Փախստականներին առնչվող միջազգային իրավական նորմեր	29
2.3 Մարդու իրավունքներին առնչվող միջազգային իրավական նորմեր	36
2.4 Միջազգային մարդասիրական իրավունք	45
2.5 Միջազգային քրեական իրավունք	47
2.6 Միավորված ազգերի կազմակերպության Անվտանգության խորհրդի բանաձևերը	49
2.7 1951 թվականի Կոմվենցիայի/ 1967 թվականի Արձանագրության կատարումը ազգային մակարդակում	50
2.8 Քաղաքականության և պրակտիկայի մշակումը	53
Ամփոփում.....	55
Լրացուցիչ ընթերցանություն.....	57
Վարժություններ.....	58
Գլուխ 2-ի վարժությունների պատասխաններ	64
Գլուխ 3.....	69
3.1 Փախստականի սահմանումները միջազգային փաստաթղթերում և ազգային օրենսդրության մեջ	70
3.2 Ո՞վ է որոշում, թե արդյոք անձը համապատասխանում է փախստականի սահմանմանը	79
3.3 1951 թվականի Կոմվենցիայի փախստականի սահմանման կապակցությամբ ծագող ընդհանուր հարցեր	81
Ամփոփում.....	84
Լրացուցիչ ընթերցանություն.....	86
Վարժություններ.....	88
Գլուխ 3-ի վարժությունների պատասխաններ	95
Գլուխ 4.....	83
4.1 Վերադարձողներ	84
5.1 Քաղաքացիություն չունեցող անձինք.....	85

5.2	Ներքին տեղահանված անձինք	88
5.3	Այլ անհատներ	92
	Ամփոփում	93
	Վարժություններ	96
	Գլուխ 4-ի վարժությունների պատասխաններ	102
Գլուխ 5.....	101	
	Մաս I: Փախուստ և ապաստանի հասանելիություն	101
5.1	Ինչո՞ւ և ինչպե՞ս են փախչում փախստականները	102
5.2	Ապաստանի երկիր ընդունելությունը	104
5.3	Ապաստան հայցողների ընդունելությունը	106
5.4	Փախստականի կարգավիճակի որոշման ընթացակարգերի հասանելիությունը	110
	Ամփոփում	117
	Վարժություններ	120
	Գլուխ 5-ի վարժությունների պատասխաններ	123
Գլուխ 6.....	124	
Տեղահանման շրջափուլը.....	124	
	Մաս II: Վերաբերմունքի չափանիշներ	124
6.1	Վերաբերմունքի չափանիշներ	125
	Ամփոփում	136
	Վարժություններ	138
	Գլուխ 6-ի վարժությունների պատասխաններ	140
Գլուխ 7.....	142	
Տեղահանման շրջափուլը.....	142	
	Մաս III: Պատեհաժամ և տևական լուծումներ	142
7.2	Կամավոր հայրենադարձություն	145
7.3	Տեղական ինտեգրում	150
7.4	Վերաբնակեցում	152
	Ամփոփում	154
	Վարժություններ	157
	Գլուխ 7-ի վարժությունների պատասխաններ	160
Բառարան.....	164	

Միջազգային պաշտպանության ներածություն

ՄԱԿ ՓԳՀ խնդրո առարկա անձանց պաշտպանությունը

Ընդհանուր ակնարկ

Պետություններն ունեն փախստականներին պաշտպանելու հիմնական պատասխանատվություն: ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակն ՄԱԿՓԳՀ-ն աշխատում է ապահովել որ կառավորությունները ձեռնարկեն բոլոր գործողությունները, որոնք անհրաժեշտ են փախստականներին պաշտպանելու, ապաստարան փնտրողներին և մտահոգող այլ անձանց պաշտպանելու համար, ովքեր գտնվում են իրենց տարածքում կամ փնտրում են ընդունելություն դեպի իրենց տարածք: ՄԱԿ ՓԳՀ-ն՝ միակ միջազգային կազմակերպությունը գլոբալ մասշտաբով, փախստականներին պաշտպանելու մանդատով, ձգտում է նաև ապահովել երկարատև լուծումներ փախստականների համար որպեսզի նրանք կարողանան վերսկսել իրենց բնականոն կյանքը:

Նպատակ

Այս ձեռնարկը նպատակ ունի՝

- Խթանել միջազգային պաշտպանության ընդհանուր ըմբռնումը ՄԱԿ ՓԳՀ-ի բոլոր աշխատակիցների շրջանում
- Ծանոթացնել ՄԱԿ ՓԳՀ-ի գործընկերներին՝ կառավարական, միջկառավարական կամ ոչ կառավարական, միջազգային պաշտպանության հիմնական սկզբունքներին,
- Նպաստել պաշտպանության օրակարգի նպատակների իրականացմանը, որը նախաձեռնություն է պետությունների, ՀԿ-ների, ՄԿԳ-ների և ՄԱԿ ՓԳՀ-ի միջև, որը ձգտում է ամրապնդել փախստականների պաշտպանությունն ամբողջ աշխարհում:

Բովանդակություն

Այս ձեռնարկի յոթ գլուխներից յուրաքանչյուրը պարունակում է տեղեկատվություն միջազգային պաշտպանության հիմնական հայեցակերպերից մեկի վերաբերյալ

- Միջազգային պաշտպանության զարգացումը և դրա համար պատասխանատվությունը
- Միջազգային պաշտպանության իրավական դաշտը և դրա իրականացումը
- Փախստականի սահմանումը
- ՄԱԿ ՓԳՀ խնդրո առարկա այլ անձինք
- Փախուստ և ապաստան ստանալու հնարավորություն
- Վերաբերմունքի չափանիշներ
- Պատեհաժամ և հարատև լուծումներ

Յուրաքանչյուր գլխի սկսվում է հիմնական ուսումնական նպատակների մի շարքով և ավարտվում ամփոփումով, որը կարող է օգտագործվել վերապատրաստումների ժամանակ օգտագործվող ներկայացումներում: Լրացուցիչ ընթերցանության նյութերի ցանկը տրված է յուրաքանչյուր գլխի վերջում, իսկ հիմնական տերմինների բառարանը ներառված է ձեռնարկի վերջում: Բացի այդ, կան վարժություններ առանձին աշխատանքի համար: Վարժությունների պատասխանները, որոնց մեծ մասը կարելի է գտնել տեքստում, տրված են յուրաքանչյուր գլխի վերջում՝ առանձին էջերում: Սույն ձեռնարկում օգտագործված լեզուն ոչ իրավաբանական և ոչ տեխնիկական է: Լրացուցիչ ուսումնական նյութերի և ծրագրերի մասին տեղեկատվություն կարելի է ստանալ ժնևում ՄԱԿ ՓԳՀ-ի Միջազգային պաշտպանության վարչությունից:

Գլուխ 1

Միջազգային պաշտպանության զարգացումը և դրա համար պատասխանատվությունը



Հիմնական նպատակներ

Հասկանալ փախստականներին աջակցելու համար միջազգային գործողությունների պատմությունը, Փախստականների կարգավիճակի մասին 1951թ. կոնվենցիայի ընդունումը և ՄԱԿ ՓԳՀ-ի ստեղծումը

Տեղյակ լինել ներկա մարտահրավերների մասին, որոնք խոչընդոտում են փախստականների պաշտպանությանը:

Բացահայտել միջազգային պաշտպանության համար պատասխանատու տարբեր դերակատարներին և նրանց հետ գործընկերային աշխատանքի կարևորությունը:

Այս գլուխը ուրվագծում է փախստականների միջազգային պաշտպանության զարգացումը իր ստեղծումից ի վեր՝ Ազգերի Լիգայի ներքո՝ ՄԱԿ ՓԳՀ-ի ստեղծումից մինչև այսօր։ Այն ընդգծում է միջազգային պաշտպանությունն ապահովելու համար առկա մարտահրավերները և ուսումնասիրում է պետությունների և ՄԱԿ ՓԳՀ-ի պարտականությունները՝ երաշխավորելու միջազգային պաշտպանության ապահովումը և գտնելու կայուն լուծումներ։ Գլխում նկարագրվում են պաշտպանական գործունեության մեջ ներգրավված որոշ այլ հիմնական դերակատարներ։

1.1 Պատմական ակնարկ

Պատմության ընթացքում մարդիկ աշխարհի բոլոր անկյուններում հարկադրված են եղել փախչել իրենց ծննդավայրից՝ հետապնդումներից, քաղաքական բռնություններից և/կամ զինված հակամարտություններից պաշտպանվելու համար։ Բայց միայն քսաներորդ դարի սկզբին պետություններն ընդունեցին, որ փախստականների պաշտպանությունը պահանջում է համակարգված գլոբալ գործողություններ։

1.1.1 Ազգերի լիգան

1920-ական թվականներին և 1930-ական թվականներին Ազգերի Լիգան՝ միջպետական համագործակցության առաջին գլոբալ մարմինը և Միավորված ազգերի կազմակերպության նախահայրը, հանձն առավ մի շարք աննախադեպ նախաձեռնություններ՝ ուղղված Եվրոպայում փախստականներին օգնելուն։

1921թ.՝ Ռուսաստանի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակ

Այս գրասենյակը ստեղծվել է Առաջին համաշխարհային պատերազմի արդյունքում։ Մկրբում, գերագույն հանձնակատարի՝ դոկտոր Ֆրիտյոֆ Նանսեի խնդիրն էր աջակցել այն մարդկանց, որոնք փախստական են դարձել ռուսական հեղափոխության հետևանքով։ Նա իր ջանքերը կենտրոնացրեց ընդունող երկրներում նրանց իրավական կարգավիճակի հստակեցման վրա՝ նրանց տրամադրելով անձը հաստատող և ճամփորդական փաստաթղթեր։ Բացի այդ, նա ձգտում էր ապահովել աշխատանքի հնարավորություններ և մշակել հայրենադարձության միջոցներ նրանց համար։ Հետագայում Նանսենը պատասխանատվություն ստանձնեց Օսմանյան

կայսրության փլուզումից հետո տեղահանված մարդկանց օգնություն տրամադրելու և նրանց՝ ապաստանի առաջնային երկրներից բացի այլ երկրներում մշտական բնակություն հաստատելու հարցում օգնելու համար: 1930 թվականին Նանսենի մահից հետո Նանսենի Փախստականների միջազգային գրասենյակը շարունակեց նրա աշխատանքը: Այս գրասենյակը փոխարինվեց 1938 թվականին փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի նշանակմամբ:

1933թ.՝ **Գերմանիայից ժամանած փախստականների հարցերով գերագույն հանձնակատար**

Երբ փախստականները սկսեցին փախչել Հիտլերյան Գերմանիայից, Ազգերի լիգան Ջեյմս Մակդոնալդին նշանակեց Գերմանիայից ժամանած փախստականների հարցերով գերագույն հանձնակատար: Ամբողջ աշխարհում գործող ներգաղթի սահմանափակումներով՝ Մակդոնալդին աշխատում էր այդ փախստականների համար մշտական տուն գտնելու ուղղությամբ: Երկու տարվա ընթացքում նա վերաբնակեցրեց ավելի քան 80000 փախստականների, հիմնականում՝ դեպի Պաղեստին: Սակայն 1935 թվականին Մակդոնալդսը հրաժարական տվեց՝ ի նշան բողոքի Ազգերի լիգայի՝ Գերմանիայում հրեաների անունից ավելի կոպիտ քայլեր ձեռնարկելուց հրաժարվելու, որտեղ Նյուրնբերգի նոր ընդունված օրենքները զրկում էին նրանց քաղաքացիությունից և այլ հիմնարար իրավունքներից: Գերմանիայից ժամանած փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի պաշտոնը 1938 թվականին փոխարինվեց նորաստեղծ՝ փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի պաշտոնով:

1938թ.՝ **Փախստականների հարցերով գերագույն հանձնակատար և փախստականների հարցերով միջկառավարական կոմիտե**

Ինչպես նկարագրվեց վերը, Գերագույն հանձնակատարի գրասենյակը Նանսենի միջազգային գրասենյակի և Գերմանիայից ժամանած փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի միաձուլումն էր: Դրա դերը խիստ սահմանափակ էր և ավարտվեց 1946 թվականին: Նույն թվականին գումարվեց միջկառավարական կոմիտե: Ի սկզբանե մտահոգված լինելով Գերմանիայից և Ավստրիայից բռնի արտագաղթով՝ նրա աշխատանքը ընդլայնվեց՝ ընդգրկելով Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ Եվրոպայում ապրող փախստականների բոլոր խմբերին: Ի վերջո, Կոմիտեն փոխարինվեց 1947 թվականին Փախստականների միջազգային կազմակերպությամբ:

1.1.2 Երկրորդ համաշխարհային պատերազմի ազդեցությունը

1944թ.՝ Միավորված ազգերի կազմակերպության օգնության և վերականգնման վարչություն

Ազգերի լիգան լուծարվեց այն ժամանակ, երբ չկարողացավ կանխել Երկրորդ համաշխարհային պատերազմը: Հակամարտության ընթացքում ամբողջ Եվրոպայում տեղահանված միլիոնավոր մարդկանց ծանր վիճակին անդրադառնալու համար դաշնակիցները 1944 թվականին հիմնեցին Միավորված ազգերի օգնության և վերականգնման կազմակերպությունը՝ շտապ օգնություն ցուցաբերելու տեղահանվածներին: Պատերազմի ավարտին գործակալությունը կազմակերպեց միլիոնավոր փախստականների վերադարձը իրենց տները, սակայն շատ փախստականներ չէին ցանկանում հայրենադարձվել, քանի որ նրանց ծագման երկրները ենթարկվել էին գաղափարական լուրջ վերափոխումների:

1947թ.՝ Փախստականների միջազգային կազմակերպությունը

1947 թվականին՝ դրա լուծարումից երկու տարի անց, Միավորված ազգերի կազմակերպությունը հիմնեց Փախստականների միջազգային կազմակերպությունը՝ առաջին միջազգային կազմակերպությունը, որը համակողմանիորեն զբաղվում էր փախստականների կյանքի բոլոր բնագավառներով, ներառյալ՝ գրանցումը, կարգավիճակի որոշումը, հայրենադարձությունը և վերաբնակեցումը: Հաշվի առնելով այն ժամանակ Եվրոպայում տիրող քաղաքական իրավիճակը՝ փախստականների մեծ մասը այլևս չէր ցանկանում վերադառնալ իրենց երկրներ, փոխարենը նրանք վերաբնակեցվեց այլ վայրերում: Փախստականների միջազգային կազմակերպությունը հայտնվեց Արևելք-Արևմուտք զարգացող լարվածության կենտրոնում, որտեղ շատ երկրներ հարձակվում էին նրա վերաբնակեցման գործունեության վրա՝ որպես կուսակցական, կամ որպես Արևմուտքի աշխատուժի աղբյուր՝ ապահովող կամ դիվերսիոն խմբերին օժանդակող: Այս թշնամական ընդունելությունը, զուգորդված այն փաստի հետ, որ միայն սահմանափակ թվով երկրներ էին ներդրում կատարում Փախստականների միջազգային կազմակերպության բյուջեի մեջ, հանգեցրին նրա վերջնական փլուզմանը 1951 թվականին:

1.1.3 ՄԱԿ ՓԳՀ-ի հիմնադրումը

1940-ական թվականների վերջին Փախստականների միջազգային կազմակերպությունը հեղինակություն չէր վայելում այլևս, բայց պարզ էր, որ փախստականների համար ինչ-որ գործակալության կարիք կար, գոնե մոտ ապագայում: Միավորված ազգերի կազմակերպությունում բազմաթիվ բուռն քննարկումներից հետո, թե ինչպիսի ձև պետք է ունենար նման գործակալությունը, ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակը՝ ՄԱԿ ՓԳՀ-ն, հիմնադրվեց որպես Գլխավոր ասամբլեայի օժանդակ մարմին՝ ՄԱԿ Գլխավոր ասամբլեայի 1949 թվականի դեկտեմբերի թիվ 319 (IV) բանաձևով: Բանաձևում ասվում էր, որ ՄԱԿ ՓԳՀ-ն գործելու է երեք տարի՝ սկսած 1951 թվականի հունվարից՝ արտացոլելով պետությունների միջև առկա անհամաձայնությունը մշտական մարմնի ստեղծման քաղաքական հետևանքների վերաբերյալ: ՄԱԿ ՓԳՀ-ի հիմնական մանդատը ի սկզբանե ամրագրված էր նրա կանոնադրության մեջ, կցված էր Միավորված ազգերի Գլխավոր ասամբլեայի 1950 թվականի թիվ 428 (V) բանաձևին: Հետագայում այն ընդլայնվել է Գլխավոր ասամբլեայի և նրա Տնտեսական ու սոցիալական խորհրդի որոշումներով: ՄԱԿ ՓԳՀ-ի մանդատը ոչ քաղաքական և մարդասիրական հիմունքներով փախստականներին միջազգային պաշտպանություն տրամադրելն է և նրանց համար մշտական լուծումներ փնտրելը: Մարդիկ, որոնք արդեն օգնություն էին ստանում ՄԱԿ-ի այլ մարմիններից, երբ ընդունվեց Կանոնադրությունը, դուրս մնացին ՄԱԿ ՓԳՀ-ի մանդատի շրջանակից: Այսպիսով՝ Կորեական պատերազմի պատճառով տեղահանված մարդիկ, որոնք ընկել էին ՄԱԿ-ի Կորեայի վերակառուցման գործակալության մանդատի տակ, չեն ընդգրկվել ՄԱԿ ՓԳՀ-ի մանդատի ներքո: ՄԱԿ-ի Կորեայի վերակառուցման գործակալությունը այժմ լուծարված է: Տղամարդիկ, կանայք և երեխաները, որոնք գտնվում են Միավորված ազգերի կազմակերպության Մերձավոր Արևելքում Պաղեստինի փախստականների օգնության և աշխատանքի գործակալության պատասխանատվության ներքո, նույնպես դուրս են մնացել ՄԱԿ ՓԳՀ-ի մանդատից: ՄԱԿ-ի Մերձավոր Արևելքում Պաղեստինի փախստականների օգնության և աշխատանքի գործակալության պարտականությունները, սակայն, չեն տարածվում բոլոր պաղեստինցի փախստականների վրա, այլ միայն պաղեստինցի փախստականների որոշ կատեգորիաների վրա, որոնք մտնում են նրա գործունեության սահմանափակ աշխարհագրական տարածքի մեջ: (Տես Գլուխ 3-ի

բացառման դրույթների բաժինը): ՄԱԿ ՓԳՀ-ի մանդատը երկարաձգվել է Գլխավոր ասամբլեայի հաջորդական բանաձևերի միջոցով, մինչև 2003 թվականին ՄԱԿ ՓԳՀ-ն իրավասու եղավ շարունակելու իր աշխատանքը մինչև փախստականների խնդրի լուծումը:

Փախստականների **միջազգային պաշտպանությունը** սկսվում է ապաստանի երկիր նրանց ընդունելության ապահովումից, ապաստանի տրամադրումից և նրանց հիմնարար մարդու իրավունքների հարգանքից՝ ներառելով բռնի ուժով չվերադարձվելու իրավունքը դեպի մի երկիր, որտեղ նրանց անվտանգությունը և գեյատեսույնը վտանգված է (չվերադարձելիության սկզբունքը): Այն ավարտվում է միայն երկարատև լուծման հասնելով: Միջազգային պաշտպանությունը կարող է սահմանվել հետևյալ կերպ.

այն բոլոր գործողությունները, որոնք ուղղված են ՄԱԿ ՓԳՀ-ին մտահոգող կանանց, տղամարդկանց, աղջիկների և տղաների իրավունքների հավասար հասանելիությանը և դրանցից օգտվելու ապահովմանը՝ համաձայն համապատասխան իրավական նորմերի (ներառյալ միջազգային մարդասիրական, մարդու իրավունքներին և փախստականներին առնչվող իրավական նորմերը):

Այն ներառում է.

- Փախստականների պաշտպանության մասին միջազգային կոնվենցիաների վավերացմանն ու կիրառման վերահսկմանը խթանելը, գլոբալ և ավելի տարածաշրջանային մակարդակում փախստականների նույնականացմանը նպաստելը և ապաստանի երկրներում նրանց համապատասխան կարգավիճակ ու չափանիշներ տրամադրելը.

- Ազգային իշխանությունների հետ և միջոցով ապաստանի երկրներում փախստականների անվտանգությունը և բարեկեցությունը ապահովելը.

- Փախստական երեխաների, փախստական կանանց և փախստական տղամարդկանց կարիքները, ներառյալ, մասնավորապես բռնության գոհերի, ընտանիքի միայնակ մայրերի, տարեց փախստականների և երեխա փախստականների հատուկ կարիքները ապահովելը, որոնք բռնի ուժով հավաքագրվել են որպես երեխա-զինվոր և/կամ բաժանվել իրենց ընտանիքներից:

- Կառավարությունների և ՄԱԿ-ի և այլ միջազգային կառույցների հետ փախստականների փախուստի պատճառները վերացնելուն ուղղված միջոցառումների խթանումը, որպեսզի ստեղծվեն այնպիսի պայմաններ, որոնք թույլ կտան փախստականներին ապահով

վերադառնալ իրենց տները,

- Կամավոր հայրենադարձության անվտանգության և արժանապատիվ կերպով իրականացման հեշտացումը, աջակցումը և վերահսկումը, երբ դա իրագործելի է դառնում.

- Երբ դա հնարավոր չէ, տեղական ինտեգրման կամ վերաբնակեցման այլ կայուն լուծումների օժանդակումը:

1950 թվականից ի վեր Գլխավոր ասամբլեայի և Տնտեսական և սոցիալական խորհրդի բանաձևերն՝ **ընդլայնել են ՄԱԿ ՓԳՀ-ի պարտականությունները**՝ ներառելով մարդասիրական օգնությունը և պաշտպանական միջոցառումների կիրառումը փախստականներից բացի այլ մարդկանց համար, ինչպիսիք են քաղաքացիություն չունեցող անձինք և երբեմն ներքին տեղահանված անձինք: Այս «խնդրո առարկա անձինք» հակիրճ նկարագրված են այս գլխում «Միջազգային պաշտպանության կարիք ունեցող անձինք» ենթավերնագրի ներքո և ավելի մանրամասն՝ Գլուխ 4-ում:

Գերագույն հանձնակատարն ընտրվում է հինգ տարին մեկ անգամ Գլխավոր ասամբլեայի կողմից: Նա զեկուցում է ինչպես Գլխավոր ասամբլեային, այնպես էլ Տնտեսական և սոցիալական խորհրդին: Գերագույն հանձնակատարի աշխատանքին աջակցում է Գերագույն հանձնակատարի **Գործադիր կոմիտեն**, որը ստեղծվել է 1958 թվականին Գլխավոր ասամբլեայի պահանջով: Գերագույն հանձնակատարի Գործադիր կոմիտեն կազմված է Միավորված ազգերի կազմակերպության անդամ պետություններից, չնայած նրանք պարտադիր չէ որ 1951 թվականի կոնվենցիայի և/կամ 1967 թվականի Արձանագրության կողմեր լինեն: Գերագույն հանձնակատարի գործադիր կոմիտեի առաջադրանքները ներառում են Գերագույն հանձնակատարին տրամադրել խորհրդատվություն իր պաշտպանական գործառույթների վերաբերյալ (տես Գերագույն հանձնակատարի գործադիր կոմիտեի եզրակացությունների մասին Գլուխ 2), հաստատել նրա աջակցման գործառույթները և վերահսկել գործակալության բոլոր վարչական և ֆինանսական ասպեկտները: Թեև հիմնական կոմիտեն գումարվում է տարին միայն մեկ անգամ, նրա Մշտական կոմիտեն հանդիպում է երկու անգամ Գերագույն հանձնակատարի գործադիր կոմիտեի գլխավոր նիստից առաջ՝ նախապատրաստվելու այդ տարեկան ժողովին:

1.1.4 Դեպի փախստականի համընդհանուր հայեցակարգ. 1951 թվականի Կոնվենցիա

Բացի ՄԱԿ ՓԳՀ-ի ստեղծումից, կառավարություններն ընդունեցին նաև 1951 թվականի Կոնվենցիան, որը վերաբերում է փախստականների կարգավիճակին: Մինչ օրս Կոնվենցիան մնում է փախստականների մասին միջազգային իրավունքի հիմքը: Այն սահմանում է, թե ով է փախստականը (տե՛ս Գլուխ 3), և այս սահմանմանը համապատասխանող անձանց նկատմամբ վերաբերմունքի չափանիշները (տես Գլուխներ 5 և 6): Կոնվենցիան կարևոր իրադարձություն է, քանի որ արտահայտում է բռնի տեղահանման խնդիրները լուծելու համաշխարհային կամքը: Արտացոլելով այն ժամանակվա քաղաքական մտահոգությունները՝ 1951 թվականի Կոնվենցիան սահմանափակված էր այն մարդկանցով, որոնք փախստական դարձան մինչև 1951 թվականը տեղի ունեցած իրադարձությունների հետևանքով: Պետություններին տրվեց նաև եվրոպացի փախստականների նկատմամբ Կոնվենցիայի կիրառումը սահմանափակելու հնարավորություն: Այնուամենայնիվ, շուտով պարզ դարձավ, որ փախստականների ճգնաժամերը շարունակվում էին և չէին սահմանափակվում մեկ մայրցամաքով: 1956 թ.-ին ՄԱԿ ՓԳՀ-ն օգնեց համակարգել արձագանքը Հունգարիայում ապստամբությունից հետո տեղի ունեցած գաղթի դեմ: Մեկ տարի անց կազմակերպությանը հանձնարարվեց օգնել Հունկոնգում գտնվող չինացի փախստականներին: Միևնույն ժամանակ, այն ներգրավված էր նաև Ալժիրի անկախության համար մղվող պատերազմի հետևանքով Մարրոկո և Թունիս փախած ալժիրցիների ծանր վիճակին արձագանքելու գործում: ՄԱԿ ՓԳՀ-ի արձագանքներն այս ճգնաժամերին նշանավորեցին նրա ներգրավվածության սկիզբը փախստականների պաշտպանության և օգնության լայնածավալ գործողություններում: 1960-ական թվականներին սկսվեցին ապագադուրացման հետևանքով առաջացած ցնցումներ, որոնք առաջ բերեցին բազմաթիվ փախստականների շարժումներ Աֆրիկայում՝ ստեղծելով հսկայական մարտահրավեր ՄԱԿ ՓԳՀ-ի համար, որն ի վերջո փոխեց կազմակերպությունը: Ի տարբերություն եվրոպացի փախստականների իրավիճակի, Աֆրիկայում փախստականների համար հաճախ չկային հստակ կայուն լուծումներ: Նրանցից շատերը փախչում էին երկրներ, որոնք նույնպես անկայուն էին: Տասնամյակի վերջում ՄԱԿ ՓԳՀ-ի բյուջեի ավելի քան երկու երրորդը ծախսվում էր Աֆրիկայում՝ արտացոլելով կազմակերպության

ուշադրության ներքո տեղի ունեցած զանգվածային փոփոխությունը ընդամենը մեկ տասնամյակի ընթացքում: Միջազգային հանրությունն արձագանքեց այս փոփոխվող իրողություններին՝ ընդունելով 1951թ. Կոնվենցիան և դրա 1967թ. Արձանագրությունը: Արձանագրությունը հանեց Կոնվենցիայի փախստականների սահմանման սահմանափակումը, որը սահմանափակում էր դրա կիրառելիությունը մինչև 1951 թվականը տեղի ունեցած իրադարձությունների հետևանքով փախստականների նկատմամբ, և վերացրեց դրա կիրառության աշխարհագրական սահմանը Եվրոպայում տեղի ունեցող իրադարձությունների նկատմամբ (այն պետությունների համար, որոնք կիրառել էին դա): Թեև 1967 թ. Արձանագրությունը շատ երկար ճանապարհ է անցել նորանկախ աֆրիկյան երկրների մտահոգությունները լուծելու ուղղությամբ, 1969 թ. -ին Աֆրիկյան միասնության կազմակերպությունը (այժմ՝ Աֆրիկյան միություն) ընդունել է փախստականների մասին իր կոնվենցիան՝ ՄԱԿ ՓԳՀ-ի հետ իր խորհրդակցությունից հետո (Տես Գլուխ 2): 1970-ական թվականներին Ասիայում բռնկվեցին փախստականների ճգնաժամեր: Առավել ուշագրավ էին միլիոնավոր արևելյան պակիստանցիների զանգվածային փախուստը դեպի Հնդկաստան, միչև Բանգլադեշի առաջացում, և հարյուր հազարավոր վիետնամցիները, որոնք լքեցին իրենց երկիրը հաճախ փոքր և ոչ նավարկելի նավերով: Այս տարիների ընթացքում փախստականների այս իրավիճակներին լուծումներ տալու դժվարությունը ընդգծեց միջազգային համերաշխության և բեռի բաշխման կարևորությունը: Այս շրջանի կարևորագույն զարգացումներից էին հարավարևելյան Ասիայի փախստականներին աջակցելու համար ձեռնարկված միջազգային նախաձեռնությունները, ներառյալ 1980-ականների վերջին Գործողությունների համապարփակ ծրագիրը (ԳՀԾ): ԳՀԾ-ն ներառում էր փախստականների լայնածավալ վերաբնակեցումը Հյուսիսային Ամերիկայի, Եվրոպայի և Ավստրալասիայի երկրներում: 1980-ականների վերջին շատ երկրներ ավելի ու ավելի դժկամությամբ էին ապաստան տրամադրում այն բարենպաստ պայմաններով, որոնք նրանք առաջարկում էին նախկինում: Դա մեծապես պայմանավորված էր ամբողջ աշխարհում փախստականների թվի կտրուկ աճով և այն փաստով, որ նրանք այլևս չէին փախչում անկախության համար պայքարող երկրներից: Ավելի շուտ, փախստականների այս հոսքերը պայմանավորված էին այժմյան անկախ պետություններում ընթացող միջէթնիկական հակամարտություններով: Շատ հաճախ այս հակամարտություններում քաղաքացիական անձանց թիրախավորումը դառնում էր ռազմական

ռազմավարության մաս, այնպես որ նույնիսկ համեմատաբար «փոքր» հակամարտությունները կարող էին հանգեցնել զանգվածային տեղահանումների: Անկախ նրանից, թե Ասիայում, Կենտրոնական Ամերիկայում կամ Աֆրիկայում այս հակամարտությունները հաճախ սրվում էին գերտերությունների մրցակցության, թե համապատասխան երկրների սոցիալ-տնտեսական խնդիրների պատճառով, դրանց արդյունքում գնալով ավելի անհասկանալի էր դառնում, թե ինչպես պետք է երկարատև լուծում տրվեր փախստականների խնդիրներին: ՄԱԿ ՓԳՀ-ն ներգրավվածությունը հաճախ անապահով վիճակում գտնվող, ճամբարներում տեղավորված փախստականների օգնության երկարատև ծրագրերում գնալով ընդլայնվեց:

Սառը պատերազմի ավարտից հետո ազգամիջյան բռնությունները շարունակեցին փախստականների հոսքեր առաջացնել: Բացի այդ, բազմազգ ռազմական ուժերի հումանիտար միջամտությունն ավելի տարածված դարձավ: 1990-ական թվականներին, ինչպես նախորդ տասնամյակներում, լրատվամիջոցները մեծ դեր խաղացին միջազգային գործողությունների խթանման գործում, մինչդեռ հզոր երկրների շահերը մեծապես ազդեցին արձագանքի բնույթի վրա: Օրինակ, 1990 թվականին Հյուսիսատլանտյան դաշինքի անդամ երկրները, որոնք մտահոգված էին հարևան նախկին Հարավսլավիայի ապակայունացմամբ, շտապեցին միջամտել Կոսովոյի վատթարացող իրավիճակին: Ի հակադրություն, 1994 թվականին Ռուանդայի ցեղասպանությունը դադարեցնելու նպատակով այնտեղ ՄԱԿ-ի խաղաղապահ ուժեր ուղարկելու կոչերը հիմնականում անտեսվեցին: Նույնիսկ երբ ավելի հարուստ երկրներ էին ներգրավված լինում տեղահանման շրջաններում, նրանք հաճախ հակված էին սահմանափակող ապաստանի քաղաքականություն վարել իրենց տարածքում:

1.1.5 Ներկայիս կլիման

Վերջին հիսուն տարիների ընթացքում համաշխարհային փախստականների թիվը աճել է՝ մոտ երկու միլիոնից հասնելով 18 միլիոնի 1992 թվականին: 2004 թվականի սկզբի դրությամբ ամբողջ աշխարհում կար շուրջ 10 միլիոն փախստական: Միջավայրը, որտեղ այսօր տեղի է ունենում փախստականների պաշտպանությունը, շատ առումներով շատ ավելի պակաս բարենպաստ է, քան ՄԱԿ ՓԳՀ-ի պատմության ցանկացած այլ ժամանակաշրջանում: Ներկայիս կլիման բնութագրվում է մի շարք գործոններով, որոնք խոչընդոտում են

արդյունավետ միջազգային պաշտպանությանը, այդ թվում՝

Ապաստանի երկրներում փախստականների խնդիրների քաղաքական շահարկում, որը հաճախ սրվում է թշնամական ՁԼՄ-ների լուսաբանմամբ, ինչը հանգեցնում է այլատյացության և ռասիստական վերաբերմունքի աճին և նույնիսկ բռնությանը ապաստան հայցողների և փախստականների նկատմամբ,

- Քննադատություն առ այն, որ փախստականների փոփոխվող բնույթը 1951 թվականի Կոնվենցիան դարձնում է հնացած, և, հետևաբար, փախստականների միջազգային իրավունքի հիմնարար հիմքը հնացած է,
- Արդյունաբերական զարգացած երկրների մտահոգություններ՝ փախստականներին ընդունելու ծախսերի և նրանց կողմից ապաստանի ընթացակարգերի չարաշահման հետ կապված, ինչը հանգեցնում է ավելի ու ավելի սահմանափակող ազգային օրենքների և պրակտիկայի, որոնց վավերականությունը կասկածելի է միջազգային չափանիշների, ներառյալ՝ այդ երկրների՝ 1951 թվականի Կոնվենցիայով սահմանված պարտավորությունների համատեքստում,
- Մտավախություն որոշ պետություններում այն բանի վերաբերյալ, որ միջազգային պաշտպանության ներքո կարող են քողարկվել ահաբեկչական գործողությունների մեջ ներգրավված անձինք,
- Հետապնդումից փախչող փախստականների թվի աճ, որոնք փախչում են իրենց տները այլ պատճառներով լքած հայրենակիցների կողքին և միասին կոչվում են «խառը հոսքեր»՝ այսպիսով մտավախություն առաջացնելով միջազգային պաշտպանության ռեժիմի չարաշահման վերաբերյալ
- Արտերկրում անվտանգություն փնտրող մարդկանց առջև ծառացած վտանգներ, որոնք ստիպված են լինում դիմել մարդկանց առևտրով զբաղվողներին/մաքսանենգներին, և անցանկալի ընդունելություն, որին նրանք հաճախ հանդիպում են այն երկրներում, որտեղ նրանք ապաստան են փնտրում,
- Փախստականի երկարատև իրավիճակներ, երբ փախստականները հաճախ երկար տարիներ մնում են անորոշ վիճակում՝ անապահով պայմաններում՝ կախում ունենալով արտաքին օգնությունից և չկարողանալով երկարաժամկետ լուծումներ ապահովել իրենց ծանր վիճակի համար,

- Հերթական տեղահանումներ, որոնց պատճառը փախստականներին իրենց երկիր վերադարձնելն է, նախքան երկրում բավարար կայության հաստատումը:

Միջազգային պաշտպանություն տրամադրողները բխվում են լուրջ մարտահրավերների հետ, մասնավորապես՝

- Երաշխավորել, որ ապաստանի քաղաքականությունը համակարգելու և ներդաշնակեցնելու տարածաշրջանային փորձերը համահունչ լինեն փախստականներին առնչվող միջազգային իրավական նորմերով ստանձնած պարտավորություններին,
- Պաշտպանել փախստականներին անապահով միջավայրում, այդ թվում՝ պահպանելով ապաստանի քաղաքացիական և մարդասիրական բնույթը,
- Արձագանքել փախստականների զանգվածային տեղաշարժերին, մանավանդ որ ապաստան տրամադրող երկրները հաճախ զարգացող տնտեսություն ունեցող երկրներ են,
- Հասնել ավելի մեծ միջազգային բեռի և պատասխանատվության բաշխման, հատկապես երբ հայրենադարձության հեռանկարները բարեհաջող չեն կարճաժամկետ հեռանկարում,
- Բարելավել փախստականներին առնչվող միջազգային իրավական նորմերով սահմանված՝ անհատների պաշտպանության և մարդու իրավունքների առնչվող միջազգային իրավական նորմերով սահմանված նրանց պաշտպանության միջև կապերի ըմբռնումը և արդյունավետ կիրառումը:

Ճանաչելով այս մարտահրավերները՝ ՄԱԿ ՓԳՀ-ն 2000 թվականի վերջին մեկնարկեց Միջազգային պաշտպանության վերաբերյալ գլոբալ խորհրդակցությունները՝ քննարկելու թե ինչպես կարող է 21-րդ դարում **վերականգնել** միջազգային պաշտպանության ռեժիմը: Այս գործընթացի հիմնական արդյունքներից մեկը, որը համախմբեց փախստականների միջազգային պաշտպանության հիմնական դերակատարներին, մասնավորապես՝ պետություններին, Պաշտպանության օրակարգն էր (Օրակարգի վերաբերյալ մանրամասն տեղեկությունների համար տե՛ս Գլուխ 2-ը): Համաշխարհային խորհրդակցությունների նախաձեռնությունը նաև զգալի դեր խաղաց 2001 թվականին կայացած նախարարական հանդիպման ժամանակ՝ 1951 թվականի Կոնվենցիայի և/ կամ դրա 1967 թվականի Արձանագրության մասնակից

պետությունների կողմից Նախարարական հռչակագրի ընդունմանը տանող գործընթացում: Այս հռչակագիրը՝

«Ճանաչում է 1951 թվականի Կոնվենցիայի՝ որպես փախստականների պաշտպանության առաջնային գործիքի մնայուն նշանակությունը, որը, փոփոխված իր 1967 թվականի Արձանագրությամբ, սահմանում է իրավունքները, ներառյալ՝ մարդու իրավունքները և վերաբերմունքի նվազագույն չափանիշները, որոնք կիրառվում են դրա շրջանակներում գտնվող անձանց նկատմամբ»:

1.2 Միջազգային պաշտպանության համար պատասխանատվությունը

1.2.1 Պետություններ

Յուրաքանչյուր պետություն պատասխանատու է ապահովել, որ իր քաղաքացիների իրավունքները հարգված լինեն: Հետևաբար, միջազգային պաշտպանության կարիքն առաջանում է միայն այն դեպքում, երբ այդ ազգային պաշտպանությունը մերժվում է կամ այլ կերպ անհասանելի է: Այդ պահին միջազգային պաշտպանությունն ապահովելու առաջնային պատասխանատվությունը կրում է այն երկիրը, որտեղ անհատը ապաստան է խնդրել: Բոլոր պետություններն ընդհանուր պարտավորություն ունեն ապահովելու միջազգային պաշտպանություն, միջազգային իրավունքի, այդ թվում՝ մարդու իրավունքների և առնչվող միջազգային իրավական նորմերի և սովորույթային միջազգային իրավունքի վրա հիմնված պարտավորությունների արդյունքում: Պետությունները, որոնք հանդիսանում են Փախստականների կարգավիճակի մասին 1951 թվականի Կոնվենցիայի և/կամ նրա 1967 թվականի Արձանագրության կողմեր, ունեն պարտավորություններ՝ համաձայն այդ փաստաթղթի դրույթների: (Փախստականների և ապաստան հայցողների պաշտպանության իրավական դաշտի մանրամասն քննարկման համար տե՛ս Գլուխ 2-ը):

1.2.2 ՄԱԿ ՓԳՀ

Ինչպես նշվեց վերը, ՄԱԿ ՓԳՀ-ն նույնպես պարտավոր է ապահովել փախստականների միջազգային պաշտպանությունը: Անշուշտ, այն մնում է միակ միջազգային կազմակերպությունը, որն ունի հատուկ

մանդատ՝ պաշտպանելու փախստականներին համաշխարհային մակարդակով: Նրա կանոնադրությամբ և դրան հաջորդած Գլխավոր ասամբլեայի և Տնտեսական և սոցիալական խորհրդի (ECOSOC) բանաձևերով, ինչպես նաև 1951 թվականի Կոնվենցիայի համաձայն՝ Գերագույն հանձնակատարի պարտականությունները հիմնականում վերաբերում են մարդկանց մի քանի խմբերին, որոնք միասին հայտնի են որպես «ՄԱԿ ՓԳՀ-ի խնդրո առարկա անձինք»: Դրանք հիմնականում ներառում են փախստականներին և ապաստան հայցողներին, վերադարձողներին, քաղաքացիություն չունեցող անձանց և որոշակի պայմաններում ներքին տեղահանվածներին: Այսպիսով, ՄԱԿ ՓԳՀ-ի մանդատն ավելի լայն է, քան 1951 թվականի Կոնվենցիայի և/կամ նրա 1967 թվականի Արձանագրության մասնակից պետությունների ստանձնած պարտականությունները: Բացի այս պայմանագրերով ստանձնած իրենց պարտավորություններից, պետությունները կարող են նաև պատասխանատվություն կրել փախստականների և ապաստան հայցողների համար՝ իրենց անդամակցած այլ փաստաթղթերի, միջազգային իրավունքի սկզբունքների կամ ազգային օրենսդրության համաձայն:

1.3 Միջազգային պաշտպանության կարիք ունեցող անձինք

1.3.1 Փախստականներ և ապաստան հայցողներ

ՄԱԿ ՓԳՀ-ի մանդատի համաձայն՝ փախստական է համարվում ցանկացած անձ, ով գտնվում է իր ծագման երկրից կամ մշտական բնակության վայրից դուրս և ի վիճակի չէ կամ չի ցանկանում վերադառնալ այնտեղ՝

- Հետապնդման հիմնավոր երկյուղի պատճառով՝ 1951 թվականի Կոնվենցիայում նշված պատճառներից մեկի հիմքով,
- Կյանքին, ֆիզիկական ամբողջականությանը կամ ազատությանը սպառնացող լուրջ և անխտիր սպառնալիքների պատճառով, որոնք բխում են ընդհանրացված բռնությունից կամ հասարակական կարգը խախտող լուրջ իրադարձություններից:

Ապաստան հայցողն այն անհատն է, որը փնտրում է միջազգային պաշտպանություն՝ անհատական կամ խմբակային հիմունքներով: Անհատականացած ընթացակարգեր ունեցող երկրներում ապաստան հայցողն այն անձն է, ում հայցը դեռ վերջնականապես չի որոշվել այն երկրի կողմից, որտեղ նա ներկայացրել է այն: Ամեն մի

ապաստան հայցող չէ, որ ի վերջո կճանաչվի որպես փախստական, բայց յուրաքանչյուր փախստական ի սկզբանե ապաստան հայցող է:

Թեև փախստականներին ավելի ու ավելի են շփոթում այլ միգրանտների հետ, տարբերությունը սկզբունքորեն պարզ է: Փախստականները իրենց ընտրությամբ չեն լքել իրենց երկրները, նրանք ստիպված են եղել դա անել՝ ելնելով հետապնդման վախից: Ի հակադրություն, մյուս միգրանտները վայելում են իրենց հայրենի երկրների պաշտպանությունը, բայց որոշում են հեռանալ իրենց կամքով, օրինակ՝ իրենց տնտեսական վիճակը բարելավելու կամ ընտանեկան կապերի պատճառով:

1.3.2 Վերադարձողներ

Վերադարձողները նախկին փախստականներն են կամ ներքին տեղահանված անձինք (ՆՏԱ), որոնք վերադառնում են իրենց երկիր կամ ծագման տարածք՝ ինքնաբերիկ կամ կազմակերպված կերպով: Կարևոր է, որ նրանք վերադառնան ապահով և արժանապատիվ կերպով՝ պահպանելով ֆիզիկական, իրավական և նյութական անվտանգության առնվազն նվազագույն պայմանները:

1.3.3 Քաղաքացիություն չունեցող անձինք

Նրանք տղամարդիկ, կանայք և երեխաներ են, որոնք որևէ պետության քաղաքացի չեն համարվում: Որպես այդպիսին, նրանք չունեն որևէ արդյունավետ ազգային պաշտպանություն և կարող են ենթարկվել խտրականության, երբ խոսքը վերաբերում է քաղաքացիներին ընդհանուր առմամբ հասանելի իրավունքներին:

1.3.4 Ներքին տեղահանված անձինք (ՆՏԱ-ներ)

Ներքին տեղահանված անձինք (ՆՏԱ) այն մարդիկ են, որոնք ստիպված են եղել լքել իրենց տները՝ զինված հակամարտության, ներքին բախումների, մարդու իրավունքների համակարգված խախտումների, բնական կամ տեխնածին աղետների հետևանքով, և որոնք գտնվում են իրենց երկրի տարածքում: ՄԱԿ ՓԳՀ-ն առնչվում է ՆՏԱ-ների հետ միայն որոշակի պայմաններում:

Խնդրո առարկա անձանց այս կատեգորիաների և նրանցից յուրաքանչյուրի հետ կապված ՄԱԿ ՓԳՀ-ի դերի մասին ավելի մանրամասն տեղեկություններ կարելի է

գտնել հաջորդ գլուխներում:

1.4 Գործընկերային աշխատանք

1.4.1 Պետություններ

Քանի որ փախստականների պաշտպանությունն առաջին հերթին պետությունների պարտականությունն է, նրանց և ՄԱԿ ՓԳՀ-ի միջև համագործակցությունը կարևոր է: Կառավարություններն աշխատում են ՄԱԿ ՓԳՀ-ի հետ մի շարք ձևերով, օրինակ՝ ապաստան տրամադրելով իրենց միջազգային պարտավորություններին համապատասխան, և ֆինանսավորում տրամադրելով ՄԱԿ ՓԳՀ-ի գործունեության համար ամբողջ աշխարհում: ՄԱԿ ՓԳՀ-ն երաշխավորում է, որ պետությունները կատարեն փախստականներին պաշտպանելու իրենց պարտավորությունները, օրինակ՝ մշտադիտարկելով ազգային գործելակերպը, անհրաժեշտության դեպքում միջամտելով առանձին փախստականների անունից, և օգնելով կառավարություններին բարելավել ապաստան տրամադրելու իրենց կարողությունները: Որոշ երկրներում դա կարող է նշանակել, որ ՄԱԿ ՓԳՀ-ն գնահատում է ապաստանի անհատական հայցերը: ՄԱԿ ՓԳՀ-ն նաև համագործակցում է տարածաշրջանային միջկառավարական կազմակերպությունների հետ, ինչպիսիք են Աֆրիկյան միությունը, Եվրոպական միությունը և Ամերիկյան պետությունների կազմակերպությունը՝ ներդաշնակցելու և բարելավելու միջազգային պաշտպանության ապահովումը այդ տարածաշրջաններում:

Պետությունների միջև համագործակցությունը կենսական նշանակություն ունի նաև փախստականների խնդիրների լուծման համար, հատկապես երբ տեղի են ունենում մարդկանց անսպասելի և զանգվածային տեղահանումներ սահմաններից այն կողմ: Միջազգային գործողությունները կարող են զգալիորեն նվազեցնել առաջնագծի պետությունների բեռը: Նախաձեռնությունները կարող են ներառել փախստականների բնակեցման երկրում քաղաքական ճգնաժամի լուծմանն ուղղված ջանքեր, ֆինանսական և նյութական աջակցություն՝ օգնելու ապաստան տրամադրող երկրներին ապրուստի միջոցներ ապահովել փախստականների համար, և առաջարկել վերաբնակեցնել փախստական բնակչության անդամներին: ՄԱԿ ՓԳՀ-ն կարևոր դեր ունի պատասխանատվության և բեռի բաշխման, նման միջազգային նախաձեռնությունների մոբիլիզացման և

համակարգման գործում:

1.4.2 Միավորված ազգերի կազմակերպության մարմիններ

Գործընկերության անհրաժեշտությունը շատ ավելին է, քան միայն ՄԱԿ ՓԳՀ-ի և պետությունների միջև համագործակցությունը: Թեև ՄԱԿ ՓԳՀ-ն ՄԱԿ-ի միակ գործակալությունն է, որն ունի հատուկ մանդատ կապված փախստականների հետ, այն կանոնավոր կերպով աշխատում է Միավորված ազգերի կազմակերպության մի շարք այլ մարմինների հետ: Դրանք ներառում են, բայց չեն սահմանափակվում հետևյալով՝

- **Միավորված ազգերի կազմակերպության Մարդասիրական հարցերի համակարգման գրասենյակ (ՄՀՀԳ)**, որը համակարգում է Միավորված ազգերի կազմակերպության օգնությունը հումանիտար ճգնաժամերի ժամանակ, որոնք դուրս են ցանկացած առանձին գործակալության կարողություններից և լիազորություններից, հաճախ վերադարձողների և ՆՏԱ-ների իրավիճակներում,
- **Պարենի համաշխարհային ծրագիր (ՊՀԾ)**, որը տրամադրում է պարենային օգնություն, ներառյալ՝ փախստականների ճամբարներին,
- **Միավորված ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամ (ՅՈՒՆԻՍԵՖ)**, որը խթանում է երեխաների իրավունքները երեխաների առողջության, սննդի, կրթության, ուսուցման և սոցիալական ծառայությունների վրա կենտրոնացած ծրագրերի միջոցով, և որի գործունեությունը հաճախ լրացնում է ՄԱԿ ՓԳՀ-ի՝ փախստական տղաներին և աղջիկներին ուղղված ջանքերը,
- **Առողջապահության համաշխարհային կազմակերպություն (ԱՀԿ)**, որը ղեկավարում և համակարգում է միջազգային առողջապահական աշխատանքները և գործունեությունը էիմունիզացիայի և վերարտադրողական առողջության արշավներում,
- **Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագիր (ՄԱԶԾ)**, որը համակարգում է Միավորված ազգերի կազմակերպության զարգացման բոլոր գործողությունները, այդ թվում՝ փախստականների հետ կապված արտակարգ իրավիճակներից հետո երկարաժամկետ զարգացման գործողությունների վերահսկումը և աջակցությունը փախստականների ինտեգրմանը ապաստանի երկրներում կամ նրանց ինտեգրմանը տուն վերադառնալիս;
- **Միավորված ազգերի կազմակերպության ՄԻԱԿ/ՉԻԱՀ-**

ի ծրագիր, որը որպես այս համաձայնակի դեմ գլոբալ գործողությունների առաջատար ջատագով, առաջնորդում է տուժածներին հոգ տանելու և աջակցելու նախաձեռնությունները,

- Միավորված ազգերի կազմակերպության մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակը (ՄԱԿՄԻԳՀԳ), որը համակարգում է ՄԱԿ-ի գործողությունները հանուն մարդու իրավունքների և արձագանքում է մարդու իրավունքների կոպիտ խախտումներին:

Վերջին տարիներին ավելի մեծ ջանքեր են գործադրվել հումանիտար ճգնաժամի իրավիճակներում աշխատող Միավորված ազգերի կազմակերպության գործակալությունների միջև համագործակցությունը բարելավելու համար՝ ինչպես գլխավոր գրասենյակում գտնվող ցանցերի (օրինակ՝ Միջգերատեսչական կոմիտե), այնպես էլ դաշտային մակարդակում համակարգման միջոցով:

1.4.3 Հասարակական կազմակերպություններ

Կան նաև բազմաթիվ հասարակական կազմակերպություններ (ՀԿ-ներ), որոնք անգնահատելի դեր են խաղում միջազգային պաշտպանության ամրապնդման գործում: Իսկապես ՄԱԿ ՓԳՀ-ի կանոնադրությունը կոչ է անում Գերագույն հանձնակատարին կապ հաստատել «մասնավոր կազմակերպությունների» հետ: ՀԿ-ները տարբերվում են չափսերով, գործունեության շրջանակով, ֆինանսավորման աղբյուրով և աշխարհագրական գործունեության շրջանակով: Ավելի քան 500 ՀԿ-ներ աշխատում են ՄԱԿ ՓԳՀ-ի հետ որպես իրականացնող գործընկերներ՝ սովորաբար նյութական օգնություն տրամադրելով փախստականներին կամ օգնելով փախստականների ճամբարների ստեղծմանը և պահպանմանը: Որպես այդպիսին, նրանք հաճախ առաջնային դիրքում են մշտադիտարկելու և փախստականների իրավունքների խախտումների մասին զեկուցելու առումով: Որոշ ՀԿ-ներ տրամադրում են իրավական խորհրդատվություն և ներկայացուցչություն ապաստան հայցողների համար կամ այցելում նրանց կալանավայրերում, օգնում վերաբնակեցված փախստականներին և կառավարությունների մոտ հանդես են գալիս առանձին փախստականների անունից կամ հանուն ազգային ապաստանի քաղաքականության բարելավման:

1.4.4 Այլ կազմակերպություններ

ՄԱԿ ՓԳՀ-ն աշխատում է Կարմիր խաչի միջազգային կոմիտեի հետ (ԿԽՄԿ)՝ անկախ գործակալություն, որը գործում է՝ օգնելու պատերազմից տուժած անձանց, այդ թվում՝ ներքին հակամարտությունների ժամանակ տուժածներին, և ապահովելու միջազգային մարդասիրական իրավունքի հարգումը: Օրենքի այս մարմինը կարգավորում է հակամարտությունների դեմ պայքարի եղանակը, ի թիվս այլ միջոցների, որոնք նախատեսում են քաղաքացիական անձանց պաշտպանություն: Կազմակերպությունը նաև համագործակցում է Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիայի (IFRC) հետ, որն իր ազգային ընկերությունների միջոցով մարդասիրական օգնություն է տրամադրում արտակարգ իրավիճակներից տուժած մարդկանց և խթանում է միջազգային մարդասիրական իրավունքը:

Միգրացիայի միջազգային կազմակերպությունը (ՄՄԿ)՝ միգրացիոն ծառայություններ մատուցող միջկառավարական կազմակերպությունը, ՄԱԿ ՓԳՀ-ի ևս մեկ կարևոր գործընկեր է, հաճախ կամավոր հայրենադարձության համատեքստում:

1.4.5 Փախստականներ և ՄԱԿ ՓԳՀ-ի խնդրո առարկա այլ անձինք

Միջազգային պաշտպանության շահառուները միշտ պետք է լինեն նաև դրա իրականացման գործընկերները: Փախստականները և խնդրո առարկա այլ անձինք ավելի լավ են հասկանում իրենց համայնքները, քան որևէ մեկը: Կարևոր է, որ նրանք մասնակցեն իրենց համայնքների **կարիքների** որոշմանը, ծրագրերի մշակմանն ու իրականացմանը: Փախստական բնակչության բոլոր շերտերի, ներառյալ՝ կանանց, երեխաների և տարեցների հետ պետք է խորհրդակցել և վերջիններիս ներառել պաշտպանության և աջակցության գործունեության բոլոր ասպեկտներում և փուլերում: Եթե փախստական տղամարդիկ, կանայք և երեխաները ակտիվորեն ներգրավված են, ավելի հավանական է, որ նրանք ավելի մեծ վստահություն կունենան իրենց աջակցողների նկատմամբ և **կունենան** սեփականատիրության զգացում իրականացվող ծրագրերի նկատմամբ:

Ամփոփում

Միջազգային պաշտպանություն

Միջազգային պաշտպանությունը կարող է սահմանվել հետևյալ կերպ՝ այն բոլոր գործողությունները, որոնք ուղղված են ՄԱԿ ՓԳՀ-ի խնդրո առարկա կանանց, տղամարդկանց, աղջիկների և տղաների իրավունքների հավասար հասանելիության և դրանցից օգտվելու ապահովմանը՝ համաձայն համապատասխան օրենսդրության (այդ թվում՝ միջազգային մարդասիրական իրավունքի, մարդու իրավունքներին և փախստականներին առնչվող իրավական նորմերի):

Փախստականների միջազգային պաշտպանությունը սկսվում է ապահով ապաստանի երկիր նրանց ընդունելությունից, ապաստան տրամադրելուց և նրանց հիմնարար մարդու իրավունքների հարգումից, այդ թվում՝ հարկադիր վերադարձելիությունից պաշտպանվածությունից մի երկիր, որտեղ նրանց անվտանգությունը կամ գոյատևումը վտանգված է (չվերադարձելիության սկզբունք): Այն ավարտվում է միայն երկարատև լուծման հասնելով:

Միջազգային պաշտպանության համար պատասխանատվությունը

Կառավարությունները առաջնային պատասխանատվություն են կրում իրենց տարածքում գտնվող փախստականներին միջազգային պաշտպանություն տրամադրելու համար:

ՄԱԿ ՓԳՀ-ն նաև ունի փախստականներին և խնդրո առարկա այլ անձանց միջազգային պաշտպանություն տրամադրելու մանդատ:

Փախստականներ

ՄԱԿ ՓԳՀ-ն աշխատում է կառավարությունների և այլ գործընկերների հետ, ինչպիսիք են ՀԿ-ները, որպեսզի փախստականները և խնդրո առարկա այլ անձինք՝

- Ստանան միջազգային պաշտպանություն
- Ստանան մարդասիրական օգնություն
- Գտնեն իրենց դժբախտ իրավիճակի մշտական լուծում:

Խնդրո առարկա անձինք

Բացի փախստականներից և ապաստան հայցողներից, ՄԱԿ ՓԳՀ-ն նաև դերակատարում ունի հետևյալ անձանց պաշտպանելու և աջակցելու գործում՝

- Վերադարձողներ
- Քաղաքացիություն չունեցող անձինք
- Ներքին տեղահանվածներ:

Լրացուցիչ ընթերցանություն

ՄԱԿ ՓԳՀ, *Աշխարհի փախստականների վիճակը*, Օքսֆորդի համալսարանի հրատարակչություն, 2000 թ.

ՄԱԿ ՓԳՀ, *Փախստականները թվերով*, 2003 թ.

ՄԱԿ ՓԳՀ, *Փախստականների պաշտպանություն. հարցեր և պատասխաններ*, 2002 թ.

Կոնվենցիա 50: Փախստականների պաշտպանությանն ընդառաջ (Հարկադիր միգրացիայի ուսումնասիրություն թիվ 10), Էրիկա Ֆելլեր, 2001թ. ապրիլ

«Միջազգային պաշտպանության մասին» ծանոթագրություն, որն ամեն տարի պատրաստվում է ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից՝ որպես միջազգային պաշտպանությունն ապահովելու մարտահրավերների և գործողությունների վերանայում:

Վարժություններ

1. Հետևյալ փաստաթղթերից ո՞ր մեկում է նշված ՄԱԿ ՓԳՀ-ի հիմնական մանդատը:
 - ա Փախստականների կարգավիճակի մասին 1951թ. Կոնվենցիա
 - բ ՄԱԿ ՓԳՀ-ի կանոնադրություն.
 - գ Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրություն.
 - դ Գործադիր կոմիտեի եզրակացություններ:
2. Մարդկանց այս խմբերից ո՞ր մեկը երբեք չի մտնում ՄԱԿ ՓԳՀ-ի լիազորությունների շրջանակում:
 - ա քաղաքացիություն չունեցող անձինք.
 - բ ներքին տեղահանվածներ.
 - գ պաղեստինցի փախստականներ.
 - Դ միգրանտներ, որոնք տեղափոխվում են իրենց տնտեսական հնարավորությունները բարելավելու համար:
3. Գործադիր կոմիտեի վերաբերյալ հետևյալ պնդումներից ո՞ր մեկն է ճիշտ:
 - ա Նրա անդամները պետք է լինեն 1951 թվականի Կոնվենցիայի և/կամ 1967 թվականի Արձանագրության կողմեր:
 - բ Կոմիտեն վերահսկում է ՄԱԿ ՓԳՀ-ի ամենօրյա աշխատանքը:
 - գ Այն հանդիպում է ամսական կտրվածքով:
 - դ Այն խորհուրդ է տալիս Գերագույն հանձնակատարին ՄԱԿ ՓԳՀ-ի պաշտպանության գործառնությունների վերաբերյալ:
4. Ապաստանի տրամադրման տարածաշրջանային նախաձեռնությունների՝ միջազգային չափանիշներին համապատասխանության ապահովումը մարտահրավեր է, որի հետ բախվում են միջազգային պաշտպանությունն ապահովելու մեջ ներգրավված անձինք: Ճիշտ է, թե՞ սխալ:
5. Բոլոր պետությունները պատասխանատվություն են կրում փախստականների նկատմամբ միջազգային պաշտպանության համար իրենց տարածքում: Ճիշտ է, թե՞ սխալ:
6. Հետևյալ խմբերից որո՞նք են ՄԱԿ ՓԳՀ-ի խնդրո առարկա անձինք:
 - ա Փախստականներ, ապաստան հայցողներ, վերադարձողներ, քաղաքացիություն չունեցող և ներքին տեղահանված անձինք.
 - բ Վերադարձողներ, քաղաքացիություն չունեցող և ներքին տեղահանված անձինք.
 - գ Միայն փախստականներ.
 - դ Ցանկացած անձ, որը դիմում է ՄԱԿ ՓԳՀ-ի օգնությանը:
7. Մարդիկ, որոնք մտնում են ՄԱԿ ՓԳՀ-ի լիազորությունների շրջանակի մեջ, իրենց քաղաքացիության կամ մշտական բնակության երկրից դուրս են: Ճիշտ է, թե՞ սխալ:
8. Հետևյալներից ո՞ր մեկն է լավագույնս նկարագրում փախստականների ճգնաժամին համապատասխան արձագանքը:
 - ա Հիմնական դերակատարը ապաստան տրամադրող երկրի կառավարությունն է, որին աջակցում են ՄԱԿ ՓԳՀ-ն, Միավորված ազգերի կազմակերպության այլ մարմինները և հասարակական կազմակերպությունները՝ ըստ անհրաժեշտության:
 - բ ՄԱԿ ՓԳՀ-ն պատասխանատու է ապաստան տվող երկրին արձագանքելու, խորհրդակցելու և ներգրավելու հարցում՝ **ըստ իր հայեցողության:**
 - գ Ոչ մի կառավարություն կամ մարմին առանձնահատուկ պատասխանատվություն չունի, ցանկացած գործողություն բացարձակապես հայեցողական է:
 - դ ՄԱԿ ՓԳՀ-ի գործադիր կոմիտեն որոշում է, թե ինչպես պետք է բաշխել պարտականությունները տարբեր դերակատարների, այդ թվում՝ ապաստան տրամադրող երկրի կառավարության միջև:

9. ՄԱԿ ՓԳՀ-ն ՄԱԿ-ի միակ գործակալությունն է, որն ուղղակիորեն աշխատում է փախստականների հետ: Ճիշտ է, թե՞ սխալ:
10. Հաշվի առնելով Ձեր երկրում ստեղծված իրավիճակը՝ միջազգային պաշտպանությանն առնչվող ներկայիս գլոբալ մարտահրավերներից ո՞րն եք կարծում, որ առանձնահատուկ ազդեցություն կունենա Ձեր աշխատանքի վրա:

Գլուխ 1-ի վարժությունների պատասխաններ

- 1 **բ** Կանոնադրությունն առաջին փաստաթուղթն էր, որը սահմանեց ՄԱԿ ՓԳՀ-ի գործառույթները և մնում է նրա հիմնական մանդատի աղբյուրը:
- 2 **դ** ՄԱԿ ՓԳՀ-ն ունի քաղաքացիություն չունեցող և ներքին տեղահանված անձանց համար մանդատ՝ համաձայն Գլխավոր ասամբլեայի տարբեր բանաձևերի: Այն ունի մանդատ պաղեստինցի փախստականների նկատմամբ, որոնք չեն մտնում Մերձավոր Արևելքում Պաղեստինի փախստականների օգնության և աշխատանքների գործակալության պատասխանատվության ներքո՝ իր Կանոնադրության համաձայն փախստականների նկատմամբ իր ընդհանուր մանդատի ուժով:
- 3 **դ** Գործադիր կոմիտեն բաղկացած է Միավորված ազգերի կազմակերպության անդամ պետություններից, որոնք շահագրգռված են միջազգային պաշտպանությամբ. պարտադիր չէ, որ նրանք լինեն 1951 թվականի Կոնվենցիայի կամ 1967 թվականի Արձանագրության կողմ: Այն գումարվում է տարին մեկ անգամ, և նրա դերը ներառում է Գերագույն հանձնակատարին իր պաշտպանության գործառույթների վերաբերյալ խորհրդատվություն տրամադրելը, բայց ոչ ամենօրյա գործողությունները վերահսկելը:²
- 4 **Ճիշտ** Տարածաշրջանային հիմունքներով միջազգային պաշտպանությունը բարելավելու իրական փորձերը պետք է համապատասխանեն միջազգային չափանիշներին:
- 5 **Ճիշտ** Բոլոր պետությունները պատասխանատվություն են կրում միջազգային պաշտպանության համար՝ միջազգային սովորույթային իրավունքի համաձայն: Լրացուցիչ պարտավորություններ կառաջանան, եթե պետությունը հանդիսանում է փախստականների հետ կապված պայմանագրի մասնակից, ինչպիսին է 1951թ. Կոնվենցիան:
- 6 **ա** ՄԱԿ ՓԳՀ-ի կանոնադրությունը և ավելի ուշ Գլխավոր ասամբլեայի և Տնտեսական և սոցիալական հանձնաժողովի բանաձևերը սահմանում են, թե ովքեր են կազմակերպության խնդրո առարկա անձինք: Քանի որ ապաստան հայցողները կարող են փախստական լինել, նրանք նույնպես խնդրո առարկա անձինք են:
- 7 **Միայն** Ներքին տեղահանված անձինք երբեք չեն գտնվում իրենց քաղաքացիության կամ մշտական բնակության երկրից դուրս: Հակառակ դեպքում նրանք կլինեին արտաքին տեղահանված, այլ ոչ թե ներքին: Ինչ վերաբերում է քաղաքացիություն չունեցող անձանց, ապա նրանք կարող են լինել իրենց մշտական բնակության երկրում:
- 8 **ա** Փախստականների ճգնաժամի համար առաջնային պատասխանատվությունը կրում է այն երկրի կառավարությունը,

որի տարածքում են գտնվում փախստականները: Դա պայմանավորված է նրանով, որ միջազգային պաշտպանության հիմնական պատասխանատվությունը կրում են պետությունները, ոչ թե ՄԱԿ ՓԳՀ-ն կամ որևէ այլ կազմակերպություն:

- 9 Միայն թեև ՄԱԿ ՓԳՀ-ն ՄԱԿ-ի միակ գործակալությունն է, որն ունի հատուկ միջազգային մանդատ՝ կապված փախստականների հետ, մի շարք այլ գործակալություններ ունեն իրենց դերակատարումը՝ նման անձանց աջակցելու հարցում, և այդպիսով համագործակցում են ՄԱԿ ՓԳՀ-ի հետ: Օրինակ՝ Պարենի համաշխարհային ծրագիրը, որը տրամադրում է պարենային օգնություն, հաճախ սնունդ է տրամադրում փախստականների ճամբարներում: Միավորված ազգերի կազմակերպության այլ մարմիններ, որոնք նույնպես ներգրավված են փախստականների հետ աշխատանքներում, նշված են այս գլխի «Միավորված ազգերի կազմակերպության մարմիններ» վերնագրի ներքո:
- 10 Մտածեք, թե այս գլխի «Ներկայիս Կլիմա» վերնագրում նշված որ գործոններն են կիրառվում այն երկրում, որտեղ Դուք աշխատում եք: Օրինակ՝
- Ձեր երկիրը մեծ թվով փախստականներ ընդունելու պատմություն ունի՝
 - Եթե այո, արդյո՞ք սա ներկայումս մտահոգություններ է առաջացնում սահմանափակ ռեսուրսների պատճառով:
 - Ինչպե՞ս են վերաբերվում հասարակության լայն շերտերը և քաղաքական կուսակցությունները ապաստան հայցողների և փախստականների առկայությանը:
 - Կա՞ արդյոք փախստականների՝ հասարակությանը հաջողությամբ ինտեգրվելու ավանդույթ, թե՞ շեշտը դրվում է նրանց հնարավորինս շուտ տուն վերադառնալու խրախուսման վրա:
 - Ձեր երկիրն ունի՞ ապաստանի մասին օրենսդրություն:
 - Եթե այո, ապա որքանո՞վ է այն լիովին համահունչ 1951թ. Կոնվենցիային և փախստականների վերաբերյալ որևէ այլ համապատասխան փաստաթղթին:
 - Ձեր երկիրը փախստականի կարգավիճակի որոշման մարմիններ ունի՞:
 - Եթե այո, ապա որքանո՞վ է դրանց գործունեությունը համապատասխանում միջազգային չափանիշներին:

Գլուխ 2

Միջազգային պաշտպանության իրավական
դաշտը և դրա իրականացումը



Հիմնական նպատակներ

Հասկանալ 1951 թվականի Կոնվենցիայի և դրա 1967 թվականի Արձանագրության նշանակությունը:

Բացահայտել փախստականների մասին միջազգային իրավունքի մյուս կարևոր աղբյուրները:

Դիտարկել, թե ինչպես են մարդու իրավունքների միջազգային իրավունքը և դրա կիրառման մեխանիզմները ամրապնդում փախստականների պաշտպանությունը:

Խորհրդածել միջազգային իրավունքի այլ համապատասխան ճյուղերի նշանակության մասին:

Բացահայտել, թե ինչպես են պետություններն իրականացնում փախստականների նկատմամբ իրենց միջազգային պարտավորությունները:

Տեղյակ լինել, թե ինչպես են մշակվում փախստականների քաղաքականությունը և պրակտիկան միջազգային մակարդակում:

Այս գլուխը ուսումնասիրում է փախստականների մասին միջազգային իրավունքի, մասնավորապես՝ 1951 թվականի Կոնվենցիայի և դրա 1967 թվականի Արձանագրության դերը փախստականների պաշտպանության գործում: Քննարկվում են նաև միջազգային իրավունքի այլ

համապատասխան ոլորտներ, ինչպիսիք են մարդու իրավունքներին առնչվող իրավական նորմերը, մարդասիրական իրավունքը և քրեական իրավունքը, ինչպես նաև ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձևերի դերը և այն, թե ինչպես են առանձին երկրներ իրականացնում միջազգային իրավունքով սահմանված իրենց պարտավորությունները: Գլուխն ավարտվում է միջազգային մակարդակով փախստականների քաղաքականության և պրակտիկայի քննարկմամբ:

2.1 Իրավական դաշտը

Փախստականների պաշտպանության հիմքում ընկած իրավական դաշտը բաղկացած է փախստականներին առնչվող միջազգային իրավական նորմերից, մարդու իրավունքներին առնչվող միջազգային իրավական նորմերից և, որոշ հանգամանքներում, միջազգային մարդասիրական իրավունքից և միջազգային քրեական իրավունքից: Իր հերթին, այս իրավական նորմերից յուրաքանչյուրը պարունակում է հետևյալ բաղադրիչներից մեկը կամ մի քանիսը.

- **Պայմանագրեր.** Սրանք իրավաբանորեն պարտադիր պայմանագրեր են պետությունների միջև, որոնք կարող են կամ բաց լինել բոլոր երկրների համար (համընդհանուր), կամ հատուկ սահմանափակված լինել ընդհանուր շահեր ունեցող մի քանի պետություններով (սովորաբար տարածաշրջանային): Պայմանագիրը պարտադիր չէ պետության համար, քանի դեռ պետությունը չի որոշել միանալ կամ վավերացնել այն և դրանով իսկ չի դարձել դրա Կողմ,
- **Միջազգային սովորույթային իրավունք.** Այս նորմը բաղկացած է պետությունների պրակտիկայից, որոնք այնքան ամուր են հաստատվել, որ դարձել են իրավաբանորեն պարտադիր կանոններ: Բոլոր երկրները համարվում են պարտավորված միջազգային սովորույթային իրավունքով,
- **Իրավունքի ընդհանուր սկզբունքներ.** Այն դեպքում, երբ ոչ պայմանագիրը, ոչ սովորույթը չեն ընդգրկում որոշակի խնդիր, կարող են կիրառվել նաև աշխարհի հիմնական իրավական համակարգերի համար ընդհանուր համարվող սկզբունքները,
- **Պետությունների վերադաս դատարանների կողմից ընդունված դատական որոշումները** և հարգված գիտնականների կարծիքները: Այս որոշումներն ու կարծիքներն օգնում են միջազգային իրավունքի մեկնաբանմանը:

Ինչպես նախատեսված է Պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիայով (1969թ.), երբ պետությունները մեկնաբանում են պայմանագրով իրենց պարտավորությունների չափը, նրանք պետք է դա անեն բարեխղճորեն, օգտագործված տերմինների սովորական նշանակությանը համապատասխան և հաշվի առնելով պայմանագրի առարկան և նպատակը: Իրենց մեկնաբանություններն անելիս պետությունները կարող են ուսումնասիրել գերիշխող համատեքստը, որում պետք է իրականացվեն իրենց պարտավորությունները, հետագա ցանկացած համաձայնագիր և իրենց ազգային գործելակերպը:

Կան նաև մի շարք փաստաթղթեր, եզրակացություններ և առաջարկություններ, որոնք արտացոլում են պետությունների քաղաքական, այլ ոչ թե իրավական պարտավորությունները, բայց որոնք, այնուամենայնիվ, ազդում են փախստականների պաշտպանության ընդհանուր իրավական դաշտի վրա: Սրանք հավաքականորեն հայտնի են որպես «փափուկ օրենք»: Որոշ կոնկրետ իրավիճակներում ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կողմից ՄԱԿ-ի կանոնադրության VII գլխի համաձայն ընդունված իրավաբանորեն պարտադիր բանաձևերը կարող են նաև լինել միջազգային պաշտպանության իրավական դաշտի մաս:

2.2 Փախստականներին առնչվող միջազգային իրավական նորմեր

Փախստականներին առնչվող միջազգային իրավական նորմերի առանցքը 1951 թվականի կոնվենցիան և նրա 1967 թվականի Արձանագրությունն են՝ միակ համընդհանուր պայմանագրերը, որոնք սահմանում են հատուկ իրավական ռեժիմ միջազգային պաշտպանության կարիք ունեցողների համար: Այս գործիքները չափազանց ճկուն և հարմար են եղել վերջին կես դարի ընթացքում փախստականների շարժումների մեծ փոփոխությունների նկատմամբ:

2.2.1 Համընդհանուր պայմանագրեր

2.2.1.1 Փախստականների կարգավիճակի մասին 1951 թվականի կոնվենցիա

1951 թվականի Կոնվենցիան մեկնարկային կետ է փախստականների միջազգային իրավունքի վերաբերյալ ցանկացած քննարկման համար: Այն փախստականների երկու համընդհանուր գործիքներից մեկն է. երկրորդը 1951 թվականի Կոնվենցիայի 1967 թվականի Արձանագրությունն է: Կոնվենցիան բեկումնային գործիք էր մի քանի առումներով, հատկապես այն պատճառով, որ միջազգային իրավունքում առաջին անգամ այն տվեց փախստականի ընդհանուր սահմանումը:

Չվերադարձելիության սկզբունքը, որն արգելում է փախստականների վերադարձը ցանկացած ձևով այն երկրներ կամ տարածքներ, որտեղ նրանց կյանքին կամ ազատությանը կարող է վտանգ սպառնալ ռասայի, կրոնի, ազգության, որոշակի սոցիալական խմբի անդամակցության կամ քաղաքական կարծիքի պատճառով, միջազգային պաշտպանության հիմնաքարն է: Այն ամրագրված է 1951թ. Կոնվենցիայի 33-րդ հոդվածի 1-ին մասում: Չվերադարձելիության սկզբունքից միակ թույլատրելի բացառությունները Կոնվենցիայի 33-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրվածներն են, որոնք կարող են կիրառվել, եթե փախստականը վտանգ է ներկայացնում այն երկրի ազգային անվտանգությանը, որտեղ նա ապրում է, կամ՝ առանձնապես ծանր հանցագործության համար դատապարտված լինելը վտանգ է ներկայացնում այդ համայնքի համար: Մարդու իրավունքների մասին օրենսդրության համաձայն, որը քննարկվում է ստորև, վերադարձը երբեք չի թույլատրվում, եթե դրա արդյունքում տվյալ անձը կարող է ենթարկվել խոշտանգումների, անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ

պատժի: 1951 թվականի Կոնվենցիայի 33-րդ հոդվածը կիրառվում է նաև սահմանին կամ ապաստանի երկրում ապաստան հայցողների նկատմամբ, քանի դեռ նրանց կարգավիճակը չի որոշվել:

1951 թվականի Կոնվենցիան նաև հայտարարում է, որ.

- Պաշտպանությունը պետք է տարածվի բոլոր փախստականների վրա՝ առանց խտրականության,
- Պետք է պահպանվեն վերաբերմունքի նվազագույն չափորոշիչներ փախստականների նկատմամբ, որոնք իրենց հերթին որոշակի պարտականություններ ունեն իրենց ընդունող պետության նկատմամբ,
- Փախստականին ապաստան տվող երկրից վտարումը այնպիսի ծանրության է, որ այն պետք է տեղի ունենա միայն բացառիկ դեպքերում՝ ազգային անվտանգության կամ հասարակական կարգի վտանգների հիման վրա,
- Քանի որ ապաստանի տրամադրումը կարող է անհարկի բեռ դնել որոշ պետությունների վրա, բավարար լուծումներ կարելի է գտնել միայն միջազգային համագործակցության միջոցով,
- Փախստականներին պաշտպանելը մարդասիրական քայլ է, ուստի ապաստանի տրամադրումը չպետք է լարվածություն առաջացնի պետությունների միջև,
- Պետությունները պետք է համագործակցեն ՄԱԿ ՓԳՀ-ի հետ՝ իրենց գործառույթներն իրականացնելիս և դյուրացնեն Կոնվենցիայի պատշաճ կիրառումը վերահսկելու նրա խնդիրը: Ինչպես արդեն նշվել է 1-ին գլխում, Կոնվենցիան մշակվել է ի պատասխան հետպատերազմական Եվրոպայում փախստականների առկա խնդիրների: Որպես այդպիսին, դրա կիրառման երկու հիմնական սահմանափակում կա. Նախ, թեև փախստականի սահմանումը ընդհանուր է, այն վերաբերում է միայն այն մարդկանց, ովքեր լքել են իրենց ծագման երկրները մինչև 1951 թվականը տեղի ունեցած իրադարձությունների հետևանքով: Երկրորդ, Կոնվենցիայի մասնակից դարձած պետությունները կարող են սահմանափակել դրա կիրառումը միայն Եվրոպայում փախստականների նկատմամբ:

2.2.1.2 Փախստականների կարգավիճակի մասին 1967 թվականի արձանագրություն

1967 թվականի Արձանագրության նպատակն էր ճանաչել 1951 թվականի Կոնվենցիայի կիրառելիությունը

փախստականների ժամանակակից շարժերի նկատմամբ: Արձանագրությունը անկախ փաստաթուղթ է, որին պետությունները կարող են միանալ առանց 1951 թվականի Կոնվենցիայի Կողմ դառնալու, թեև դա հազվադեպ է պատահում: Արձանագրության մասնակից պետությունները համաձայնում են կիրառել Կոնվենցիայի դրույթները այն փախստականների նկատմամբ, որոնք համապատասխանում են Կոնվենցիայի սահմանմանը, բայց առանց Կոնվենցիայի ժամանակային կամ աշխարհագրական սահմանափակման:

Կոնվենցիայի և/կամ Արձանագրության Կողմ դառնալով՝ պետությունները կարող են ուղղակիորեն նշել, որ չեն կիրառի կամ կկիրառեն միայն փոփոխություններով Կոնվենցիայի որոշ հոդվածներ: Այնուամենայնիվ, այս վերապահումները չեն կարող արվել հիմնական դրույթների, այդ թվում՝ 1-ին հոդվածի (փախստականի սահմանումը), 3-րդ հոդվածի (ռասայական, կրոնական կամ ծագման երկրի հիման վրա խտրականության բացառումը) և 33-րդ հոդվածի (չվերադարձելիություն) առնչությամբ՝ դրույթներ, որոնք Կոնվենցիայի և/կամ Արձանագրության բոլոր Կողմերը պետք է ընդունեն:

2.2.2 Տարածաշրջանային պայմանագրեր

2.2.2.1 Աֆրիկայում փախստականների խնդիրների կոնկրետ հայեցակերպերը կարգավորող 1969 թ. ԱՄԿ Կոնվենցիա

Այս կոնվենցիան ընդունվել է 1969 թվականին Աֆրիկյան միասնության կազմակերպության (այժմ՝ Աֆրիկյան միություն) անդամ պետությունների կողմից: Այս տարածաշրջանային պայմանագիրը լրացնում է 1951 թ. Կոնվենցիան՝ պարունակելով փախստականների ավելի լայն սահմանում, ապաստան տրամադրելու համար լավագույն ջանքերը գործադրելու դրական պարտավորություն, տեղական լուծումների դրույթներ և փախստականների դիվերսիոն գործունեությունը արգելող դրույթներ:

2.2.2.2 Եվրոպական Միության փաստաթղթերը

1980-ական թվականների կեսերից Եվրոպական Միության անդամ երկրները (ԵՄ) ձգտել են ներդաշնակեցնել ապաստանի հարցում իրենց քաղաքականությունն ու գործելակերպը: Սկզբում համակարգումը տեղի ունեցավ իրավաբանորեն ոչ պարտադիր քաղաքական նախաձեռնությունների տեսքով: Այնուամենայնիվ, 1999 թվականից ի վեր ԵՄ կառավարություններն աշխատում են Ապաստանի ընդհանուր եվրոպական համակարգի ստեղծման ուղղությամբ՝ հիմնված 1951 թվականի Կոնվենցիայի ամբողջական և ներառական կիրառման վրա:

Մինչև 2004թ. մայիսը, երբ 10 նոր երկրներ միացան ԵՄ-ի գործող 15 անդամ պետություններին, համաձայնություն էր ձեռք բերվել Ապաստանի տրամադրման միասնական եվրոպական համակարգի հիմնական կառուցողական տարրերի վերաբերյալ: Դրանք ներառում էին՝ համաձայնագրեր այնպիսի հարցերի շուրջ, ինչպիսիք են՝

- Ժամանակավոր պաշտպանություն,
- Ապաստան հայցողների ընդունելության նվազագույն չափանիշներ;
- Կանոնակարգ, որը սահմանում է, թե որն է պատասխանատու անդամ պետությունը ապաստանի հայցերի քննություն ժամանակ (փոխարինում է այս հարցի վերաբերյալ 1990թ. «Դուբլինի կոնվենցիային»),
- Ապաստան հայցողների մատնահետքերը համեմատելու համակարգ (հայտնի է որպես «Եվրոդակ»/Eurodac, որը գործում է 2003 թվականի հունվարից),
- «Որակավորման/իրավասության» ցուցիչը, որը սահմանում է փախստականների և օժանդակ կամ լրացուցիչ պաշտպանության հայեցակարգը և հետևաբար, սահմանում է նվազագույն չափանիշներ նրանց համար, ովքեր համապատասխանում են միջազգային պաշտպանությանը,
- «Ընթացակարգերի» ցուցիչը, որը սահմանում է կարգավիճակի որոշման ընթացակարգերի ընդհանուր նվազագույն չափորոշիչներ:

Այս հիմնական դրույթների հաստատումը, որոնք սահմանում են նվազագույն ընթացակարգային նորմեր, նշանավորում է Ապաստանի տրամադրման միասնական եվրոպական համակարգի ստեղծման առաջին փուլի ավարտը: Երկրորդ փուլը կներառի այս սկզբունքների արտացոլումը ազգային օրենսդրության մեջ և անդամ պետությունների միջև պրակտիկայի

ներդաշնակեցումը:

2.2.3 Միջազգային սովորության իրավունք

Չվերադարձելիության սկզբունքը միջազգային սովորության իրավունքի մի մասն է: Այսպիսով՝ բոլոր երկրները իրավաբանորեն կապված են փախստականներին ցանկացած ձևով վերադարձնելու արգելքով այն երկրներ կամ տարածքներ, որտեղ նրանց կյանքին կամ ազատությանը կարող է վտանգ սպառնալ իրենց ռասայի, կրոնի, ազգության, որոշակի սոցիալական խմբի անդամակցության կամ քաղաքական կարծիքի պատճառով: Սա հատկապես կարևոր է 1951 թվականի Կոնվենցիայի կամ նրա 1967 թվականի Արձանագրության՝ կողմ չհանդիսացող պետությունների համար (տե՛ս ստորև 2.3.3 կետում այս հայեցակարգի շրջանակը՝ մարդու իրավունքների միջազգային իրավունքի համատեքստում):

2.2.4 Դատական որոշումներ և ակադեմիական կարծիք

Ինչպես ցանկացած օրենսդրական համակարգում, հիմնական պայմանագրերի դրույթները և սովորության իրավունքի սկզբունքների շրջանակը բաց են մեկնաբանության համար: Խնդրո առարկա իրավական նորմերի վերաբերյալ ընդհանուր պատկերացում ձևավորելիս հաճախ օգտակար է ուսումնասիրել պետությունների վերադաս դատարանների վճիռները հարակից իրավական հարցերի վերաբերյալ: Հետևաբար, փախստականների մասին միջազգային իրավական նորմերի բովանդակությունը որոշելու համար կարևոր է այն դատարանների կարծիքը, որոնք ունեն փախստականների վերաբերյալ միջազգային իրավունքով նախատեսված պարտավորությունների կատարումը վերահսկելու մեծ փորձ: Փախստականների նկատմամբ պետությունների իրավական պարտավորությունները որոշելիս դատարանները հաճախ հղում են կատարել «փափուկ իրավունքի» գործիքներին, ինչպիսիք են Գործադիր կոմիտեի եզրակացությունները, ՄԱԿ ՓԳՀ-ի Փախստականի կարգավիճակի որոշման ընթացակարգերի և չափանիշների մասին ձեռնարկը և քաղաքականության վերաբերյալ փաստաթղթերը, այդ թվում՝ ՄԱԿ ՓԳՀ-ի պաշտպանության վերաբերյալ ուղեցույցները:

Փախստականների միջազգային իրավունքի ոլորտում առաջատար գիտնականների տեսակետերը, հատկապես նրանց, ովքեր ուսումնասիրել են, թե ինչպես են կիրառվում միջազգային պարտավորությունները գործնականում, կարող են նաև օգնել պարզելու միջազգային

պաշտպանության իրավական դաշտը:

2.2.5 «Փափուկ իրավունքի» գործիքներ

«Փափուկ իրավունքի» գործիքներն արտացոլում են պետությունների ստանձնած քաղաքական, այլ ոչ թե իրավական պարտավորությունները: Թեև իրավաբանորեն պարտադիր չէ, նրանք, այնուամենայնիվ, ներկայացնում են պետությունների տեսակետերը և շատ ազդեցիկ են փախստականների պաշտպանության գործում: Նրանք նաև ցույց են տալիս, թե ինչպես է զարգանում օրենքը: Համընդհանուր մակարդակում ամենաուշագրավ քաղաքական հռչակագրերն են՝

- *1951թ. Կոնվենցիայի և/կամ դրա 1967թ. Արձանագրության մասնակից պետությունների հռչակագիրը*, որը վերահաստատում է միջազգային պաշտպանության հարցում 1951թ. Կոնվենցիայի կենտրոնական նշանակությունը, ճանաչում է, որ չվերադարձելիության սկզբունքը ամրագրված է միջազգային սովորույթային իրավունքում և պարտավորեցնում է Պետություններին ապահովել փախստականների ավելի լավ պաշտպանություն միջազգային համերաշխության և բեռի բաշխման շրջանակներում,
- *Տարածքային ապաստանի մասին հռչակագիրը (1967թ.),* որն ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից, որն արտացոլում է միջազգային համաձայնությունն այն մասին, որ ապաստանի տրամադրումը խաղաղ և մարդասիրական գործողություն է, որը չպետք է համարվի ոչ բարեկամական որևէ այլ պետության կողմից, և նշում է, որ փախստականի կարգավիճակի վերաբերյալ հայցերի գնահատման պատասխանատվությունը պատկանում է այն երկրին, որտեղ անհատը փնտրում է անվտանգություն,
- *Գործադիր կոմիտեի (ԳործԿոմ) միջազգային պաշտպանության վերաբերյալ եզրակացությունները*, որոնք ամեն տարի ընդունվում են համընդհանուր համաձայնությամբ և մշակում են միջազգային պաշտպանությունը կարգավորող չափանիշներն ու սկզբունքները: Եզրակացություններն ընդգրկում են պաշտպանության հարցերի լայն շրջանակ, ներառյալ միջազգային իրավունքում խորությամբ չքննարկված հարցեր, ինչպիսիք են կամավոր հայրենադարձությունը, փախստականների զանգվածային ճգնաժամերին արձագանքելը և ապաստանի քաղաքացիական և մարդասիրական բնույթի պահպանումը: Հաշվի առնելով, որ ԳործԿոմ-ի եզրակացությունները

ներկայացնում են ավելի քան 50 պետությունների, այդ թվում՝ 1951 թվականի Կոնվենցիայի/1967 Արձանագրության Կողմ չհանդիսացող որոշ պետությունների տեսակետերը, դրանք կազմում են միջազգային պաշտպանության շրջանակի անբաժանելի մասը՝ ազդելով ազգային քաղաքականության, ինչպես նաև ՄԱԿ ՓԳՀ-ի գործունեության վրա:

Գոյություն ունեն փախստականների պաշտպանության երկու հատկապես կարևոր տարածաշրջանային գործիքներ՝

- *Փախստականների մասին Կարթագենի հռչակագիրը (1984թ.), որն ընդունվել է կառավարության ներկայացուցիչների, տարածաշրջանի նշանավոր գիտնականների և իրավաբանների կողմից*
Կենտրոնական Ամերիկայում 1980-ական թվականներին տեղի ունեցող քաղաքացիական պատերազմի հետ կապված փախստականների ճգնաժամի հետևանքով: Ինչպես ԱՄԿ-ի Փախստականների մասին կոնվենցիան, Հռչակագիրը ներառում է 1951 թվականի Կոնվենցիայի փախստականի սահմանումը և այն լրացնում է փախստականի ավելի լայն սահմանմամբ: Այն նաև պարունակում է առաջարկություններ փախստականների համար մարդասիրական վերաբերմունք և կայուն լուծումներ տրամադրելու վերաբերյալ: Չնայած Հռչակագիրը իրավաբանորեն պարտադիր չէ, այն բազմիցս հավանության է արժանացել Կենտրոնական և Լատինական Ամերիկայի պետությունների կողմից: Փախստականի լայն սահմանումը ներառվել է Կենտրոնական Ամերիկայի և Կարիբյան տարածաշրջանի բոլոր երկրների օրենսդրության մեջ, բացառությամբ մեկի և Լատինական Ամերիկայի մի շարք երկրների: Իրոք, դրա կարևորությունը որպես տարածաշրջանային պաշտպանության գործիք ճանաչվել է Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի և Ամերիկյան պետությունների կազմակերպության բազմաթիվ բանաձևերում,
- *Փախստականների կարգավիճակի և վերաբերմունքի վերաբերյալ Բանգկոկի սկզբունքները (1966թ., թարմացվել է 2001թ.), որոնք ընդունվել են Ասիայի, Մերձավոր Արևելքի և Աֆրիկայի որոշ պետությունների կողմից:* Այս սկզբունքները կարևոր են նրանով, որ արտացոլում են շատ պետությունների տեսակետերը, որոնք ունեն ապաստան տրամադրելու մեծ փորձ, ներառյալ՝ որոշ պետությունների, որոնք 1951 թվականի Կոնվենցիայի/1967 Արձանագրության կողմ չեն: Ինչպես

ԱՄԿ կոնվենցիան և Կարտագենի հռչակագիրը, սկզբունքները ներառում են փախստականի սահմանումը, որն ավելի լայն է, քան 1951 թվականի Կոնվենցիայի սահմանումը:

2.3 Մարդու իրավունքներին առնչվող միջազգային իրավական նորմեր

Մարդկանց հատկապես խոցելի խմբի համար մարդասիրական վերաբերմունք ապահովելուն ուղղված փախստականների միջազգային իրավական նորմերը սերտորեն կապված են մարդու իրավունքների միջազգային իրավունքի հետ, որը կենտրոնում յուրաքանչյուր անհատի արժանապատվության և բարեկեցության պահպանումն է: Օրենքի երկու մարմինները փոխլրացնող են: Փախստականների պաշտպանությունը ամրապնդելու համար ընդլայնվել են մարդու իրավունքների սկզբունքների կիրառությունը՝

- փախստականներն ու ապաստան հայցողների՝ ապաստանի երկրում մարդու իրավունքներին առնչվող միջազգային իրավական նորմերով սահմանված իրավունքներ ունենալու առումով,
- որի արդյունքում մարդու իրավունքներին առնչվող իրավական նորմերի պատշաճ կիրառումը վերահսկելու միջազգային մեխանիզմները կարող են օգտագործվել առանձին փախստական տղամարդկանց, կանանց և երեխաների կողմից և անունից,
- այն հարցում, թե ինչպես են մարդու իրավունքներին առնչվող միջազգային իրավական նորմերը ազդում ՄԱԿ ՓԳՀ-ի քաղաքականության վրա, օրինակ՝ պատշաճ գործընթացի չափանիշների, կալանքի պայմանների, գենդերային հավասարության և երեխաների իրավունքների սահմանման հարցում:

Միջազգային պաշտպանության ողջ շրջանակը հիմնված է մարդու իրավունքների հայեցակարգերի վրա: Այն նպատակ ունի օգնելու նրանց, ովքեր ստիպված են եղել լքել իրենց երկրները, քանի որ նրանց իրավունքները խախտվել են: Մասնավորապես՝ հետապնդում հասկացությունը, որը գտնվում է 1951թ.

Կոնվենցիայի/1967թ. Արձանագրության փախստականների սահմանման հիմքում, պարբերաբար մեկնաբանվում է մարդու իրավունքների չափանիշներին համապատասխան: Հետևաբար, մարդու իրավունքների միջազգային իրավունքի ըմբռնումը կենսական նշանակություն ունի փախստականների և խնդրո առարկա այլ անձանց միջազգային պաշտպանությունն ապահովելու

համար:

Քանի որ մարդու իրավունքներին առնչվող իրավական նորմերը կիրառվում են բոլորի, այդ թվում՝ փախստականների համար, անկախ նրանց իրավական կարգավիճակից, դրանք օգտակար չափանիշներ են գնահատելու այն վերաբերմունքի որակը, որը ապաստան տրամադրող երկրներն առաջարկում են իրենց տարածքում գտնվող փախստականներին և ապաստան հայցողներին: Սա հատկապես կարևոր է, երբ պետությունները փախստականների մասին համաձայնագրերից որևէ մեկի Կողմ չեն (1951թ. Կոնվենցիա, դրա 1967թ.-ի Արձանագրություն կամ ԱՄԿ փախստականներ համագումար):

Մարդու իրավունքների սովորույթային իրավունքի և պայմանագրերի վրա հիմնված արգելքը՝ անձին այն տարածք վերադարձնելու մասին, որտեղ նա գտնվում է խոշտանգումների, դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի վտանգի տակ, ամրապնդում է փախստականների օրենսդրությամբ սահմանված չվերադարձելիության սկզբունքը: Դրանով առաջարկվում է մեկ այլ իրավական ճանապարհ՝ առանձին փախստականների համար պաշտպանություն ապահովելու համար միջազգային բողոքարկման մեխանիզմի միջոցով, որը հասանելի չէ 1951թ. Կոնվենցիայի/1967թ. Արձանագրության դրույթներով: Մարդու իրավունքների կոմիտեն և խոշտանգումների դեմ կոմիտեն, օրինակ, կանխել են խոշտանգումների զգալի վտանգի ենթարկված անձանց վտարումը: Նմանապես, տարածաշրջանային մակարդակով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը կարող է կարգադրել իր իրավասության տակ գտնվող երկրին չվտարել ապաստան հայցողին այլ երկիր, որտեղ նա կարող է ենթարկվել խոշտանգումների կամ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների աշտպանության մասին եվրոպական կոնվենցիայով (1950թ.) նախատեսված որևէ այլ խախտման: Մարդու իրավունքների միջամերիկյան դատարանը նման իրավասություններ ունի՝ կապված Մարդու իրավունքների ամերիկյան կոնվենցիայով (1969թ.) նախատեսված խոշտանգումների արգելքի հետ:

Մարդու իրավունքների խթանումը կարևոր է նաև փախստականների ճգնաժամի լուծումներ ապահովելու հարցում: Փախստականի երկրում մարդու իրավունքների վիճակի բարելավմանն ուղղված ջանքերը հրամայական են, եթե ցանկանում ենք կայուն կամավոր վերադարձի և վերաինտեգրման իրական հեռանկարներ ունենալ:

Այսպիսով՝ մարդու իրավունքների սկզբունքները կիրառելի են տեղահանման շրջափուլի բոլոր փուլերի համար.

- Տեղահանման պատճառները,
- Միջազգային պաշտպանության իրավունքի որոշումը,
- Ապաստանի երկրում վերաբերմունքի համապատասխան չափանիշների ապահովումը,
- Լուծումների հարատևության երաշխավորումը,

Այսպիսով՝ ՄԱԿ ՓԳՀ-ն բարձր է գնահատում իր ստեղծած գործընկերությունը մարդու իրավունքների տարբեր դերակատարների, այդ թվում՝ Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակի, մարդու իրավունքների այլ միջազգային և տարածաշրջանային ինստիտուտների և մարմինների և ՀԿ-ների հետ:

2.3.1 Համընդհանուր գործիքներ

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը և *ամենահայտնի միջազգային փաստաթղթերից մեկը* Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրն է (1948): Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո ընդունված այս պատմական նախաձեռնությունը բարձրաձայնեց միջազգային հանրության ցանկության մասին՝ խթանելու մարդկության բոլոր անդամների արժանապատվության և հիմնարար ազատությունների հանդեպ համընդհանուր հարգանքը: Թեև Հռչակագիրն ընդունվել է որպես քաղաքական մտադրության հայտարարություն, այլ ոչ թե որպես իրավաբանորեն պարտավորեցնող պայմանագիր, այն, այնուամենայնիվ, չափազանց կարևոր է որպես իրավունքների միակ արտահայտություն, որոնցից օգտվելու իրավասու է յուրաքանչյուր անհատ: Հռչակագրի ընդունումից հետո դրա սկզբունքներից շատերը կրկնվել են պարտադիր իրավաբանական ուժ ունեցող պայմանագրերում, մինչդեռ որոշները ստացել են միջազգային սովորույթային իրավունքի կարգավիճակ:

Հռչակագրի որոշ հիմնական դրույթներ ներառում են.

«Բոլոր մարդիկ ծնվում են ազատ և արժանապատվորեն հավասար իրավունքներով»: (Հոդված 1)

«Յուրաքանչյուր ոք ունի սույն Հռչակագրում ամրագրված բոլոր իրավունքները և ազատությունները՝ առանց որևէ խտրականության, ինչպիսիք են ռասան, մաշկի գույնը, սեռը, լեզուն, կրոնը, քաղաքական կամ այլ կարծիքը, ազգային կամ սոցիալական ծագումը, սեփականությունը, ծնունդը կամ այլ կարգավիճակը»: (Հոդված 2)

«Յուրաքանչյուր ոք ունի կյանքի, ազատության և անձնական անվտանգության իրավունք»: (Հոդված 3)

Հոդված 14(1)-ը հատուկ հետաքրքրություն է ներկայացնում փախստականների համար: Դրանում նշվում է.

«Յուրաքանչյուր ոք ունի հետապնդումներից հետո ապաստան փնտրելու և այլ երկրներում ապաստան ստանալու իրավունք»:

1966թ.-ին պետությունները ընդունեցին իրավական, այլ ոչ թե քաղաքական կամ բարոյական պարտավորություն՝ նպաստելու և պաշտպանելու մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները: Այս պարտավորությունը ամրագրված է երկու միջազգային դաշնագրերում՝ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրում և Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրում: Երկու փաստաթղթերն էլ ուժի մեջ են մտել 1976թ.-ին: Համընդհանուր հռչակագրի և Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի երկու կամընտիր արձանագրությունների հետ մեկտեղ, այս փաստաթղթերը միասին հայտնի են որպես Մարդու իրավունքների միջազգային օրինագիծ:

Մարդու իրավունքների համընդհանուր այլ կարևոր փաստաթղթերը ներառում են՝

- Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիան (1965թ.)
- Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիան կանանց նկատմամբ խտրականություն բոլոր ձևերի վերացման մասին (1979թ.)
- Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիան (1984 թ.)
- Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիա (1989 թ.)
- Բոլոր աշխատանքային միգրանտների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության մասին միջազգային կոնվենցիա (1990 թ.):

Մարդու որոշ իրավունքներ, ինչպիսիք են կյանքի իրավունքը կամ խոշտանգումներից կամ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից զերծ լինելու իրավունքը, երբեք չեն կարող օրինականորեն սահմանափակվել: Այս իրավունքները

թվարկված են Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 4(2) հոդվածում և պետք է պաշտպանված լինեն բոլոր ժամանակներում և բոլոր հանգամանքներում, ներառյալ արտակարգ իրավիճակների ժամանակ: Դրանք սովորաբար կոչվում են **անժխտելի իրավունքներ**:

2.3.2 Տարածաշրջանային պայմանագրեր

Մարդու իրավունքներին առնչվող իրավական նորմերի զարգացումը նկատելիորեն ամրապնդվել է տարածաշրջանային գործիքների և վերահսկման մեխանիզմների ստեղծմամբ: Դրանցից առաջինը *Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան* էր (1950 թ.), որին ավելացվել են մի քանի լրացուցիչ արձանագրություններ: Դրան հաջորդեցին *Մարդու իրավունքների ամերիկյան կոնվենցիան* (1969թ.) և *Մարդու և ժողովուրդների իրավունքների աֆրիկյան խարտիան* (1981թ.): Տարածաշրջանային այլ պայմանագրեր ներառում են *Խոշտանգումների և պատժի կանխարգելման միջամերիկյան կոնվենցիան* (1985թ.), *Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոնվենցիան* (1987թ.) և *Երեխայի իրավունքների և բարեկեցության մասին Աֆրիկյան խարտիան* (1990թ.):

2.3.3 Միջազգային սովորույթային իրավունք

Մարդու իրավունքներին առնչվող իրավական նորմերի տարբեր սկզբունքներ միջազգային սովորույթային իրավունքի մաս են կազմում: Փախստականների պաշտպանության հետ կապված, սովորույթային իրավունքի հիմնական կանոնը ցանկացած անձի՝ խոշտանգումների, դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի վտանգի տակ վերադարձնելու արգելքն է:

(Փախստականներին առնչվող միջազգային իրավական նորմերի համատեքստում այս հայեցակարգի շրջանակը տե՛ս վերը՝ 2.2.3 կետում):

2.3.4 Մարդու իրավունքների մեխանիզմներ

Վերը նկարագրված փաստաթղթերի ընդունմանը զուգընթաց ստեղծվել են տարբեր մարմիններ՝ մարդու իրավունքների պարտավորությունների կատարումը վերահսկելու և ենթադրյալ խախտումները հետաքննելու համար:

2.3.4.1 Համընդհանուր հաստատություններ

Միավորված ազգերի կազմակերպության համակարգում գոյություն ունի մարդու իրավունքների պաշտպանության մշտադիտարկում իրականացնող մարմինների համալիր հավաքածու, որոնցից յուրաքանչյուրն ունի յուրահատուկ մանդատ: Այս մարմինները ստեղծվել են կամ Միավորված ազգերի կազմակերպության Տնտեսական և սոցիալական խորհրդի կամ մարդու իրավունքների հատուկ համընդհանուր պայմանագրերի կողմից:

Տնտեսական և սոցիալական խորհրդի երկու մարմիններն են՝

- **Մարդու իրավունքների հանձնաժողովը**, որը կազմված է Միավորված ազգերի կազմակերպության 53 անդամ պետություններից, որոնք ընտրվում են երեք տարի ժամկետով: Հանձնաժողովը հանդիպում է ամեն տարի՝ քննարկելու մարդու իրավունքներին առնչվող հարցեր աշխարհի ցանկացած կետում: Հանձնաժողովը հանձնարարում է Հատուկ զեկուցողներին (անհատական փորձագետներին, որոնք գործում են անկախ որևէ կառավարությունից) և Աշխատանքային խմբերին, որպեսզի հետաքննեն մարդու իրավունքներին առնչվող հարցերը աշխարհի ցանկացած կետում, անկախ նրանից, թե դրանք կոնկրետ երկրին են առնչվում, թե ավելի ընդհանուր թեմայով են: Երբ կա վերադարձի սպառնալիք, այս հարցի քննություն կարող է հանձնարարվել Խոշտանգումների կամ արտադատական, ամփոփ կամ կամայական մահապատիժների գծով հատուկ զեկուցողներին կամ հարկադիր անհետացումների աշխատանքային խմբին, որոնցից յուրաքանչյուրը կարող է հրատապ դիմում ներկայացնել տվյալ կառավարությանը: Իրեն իր աշխատանքներում աջակցելու նպատակով Հանձնաժողովը ստեղծեց մի շարք օժանդակ մարմիններ, այդ թվում՝ Մարդու իրավունքների խթանման և պաշտպանության ենթահանձնաժողովը (նախկինում կոչվում էր Խտրականության կանխարգելման և փոքրամասնությունների պաշտպանության

ենթահանձնաժողով): Այս ենթահանձնաժողովը ուսումնասիրում է մարդու իրավունքների կոպիտ խախտումների վերաբերյալ բողոքները և որոշում, թե արդյոք դրանք պետք է ներկայացվեն Հանձնաժողովի աշխատանքային խմբի ուշադրությանը (այսպես կոչված «1503 ընթացակարգ»):

- **Կանանց կարգավիճակի հանձնաժողովը**, որը նպաստում է կանանց հավասար իրավունքներին, կազմված է ՄԱԿ-ի անդամ 32 երկրների ներկայացուցիչներից, որոնք ընտրվում են չորս տարի ժամկետով: Այն հանդիպում է երկու տարին մեկ՝ Տնտեսական և սոցիալական խորհրդի համար առաջարկություններ պատրաստելու համար:

Կան յոթ **պայմանագրային մարմիններ**, որոնցից յուրաքանչյուրը վերաբերում է մարդու իրավունքների կոնկրետ պայմանագրին: Այս կոմիտեները կազմված են փորձագետներից, որոնք ծառայում են իրենց անկախ կարգավիճակով և ընտրվում են մասնակից պետությունների կողմից (բացառությամբ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի, որի բաղկացուցիչ փորձագետներն ընտրվում են Տնտեսական և սոցիալական խորհրդի անդամների կողմից): Ի տարբերություն վերը նշված Տնտեսական և սոցիալական խորհրդի հանձնաժողովների, այդ կոմիտեների մանդատը վերաբերում է միայն այն պետություններին, որոնք համապատասխան պայմանագրի կողմ են: Կոմիտեները ուսումնասիրում են Մասնակից պետությունների կողմից իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելու ջանքերի վերաբերյալ ներկայացված պարբերական զեկույցները: Այնուհետև հանձնաժողովները թողարկում են մեկնաբանություններ և բարելավման առաջարկություններ, որոնք հայտնի են որպես Եզրափակիչ դիտարկումներ: Հանձնաժողովները կարող են նաև ընդհանուր մեկնաբանություններ տալ թեմատիկ հարցերի վերաբերյալ: Այս մարմինները կարող են նաև որոշակի հանգամանքներում ուսումնասիրել անհատների կողմից մարդու իրավունքների խախտման մասին ներկայացված հայտարարությունները: Դրանով նրանք կարող են պահանջել, որ շահագրգիռ Պետությունը կասեցնի բողոքարկողի նկատմամբ արտաքսման ցանկացած միջոց, մինչև Կոմիտեն իր վերջնական որոշումը կայացնի: Հանձնաժողովներն են՝

- **Մարդու իրավունքների հանձնաժողովը**
(Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր),
- **Խոշտանգումների կանխարգելման հանձնաժողովը**
(Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիա ընդդեմ խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի),
- **Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների հանձնաժողովը** (Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր),
- **Ռասայական խտրականության վերացման հանձնաժողովը** (Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիա),
- **Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտե** (Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիա կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին),
- **Երեխայի իրավունքների հանձնաժողովը** (Միավորված ազգերի կազմակերպության Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա),
- **Բոլոր աշխատանքային միգրանտների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության հանձնաժողովը** (Բոլոր աշխատանքային միգրանտների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության միջազգային կոնվենցիա):

2.3.4.2 Տարածաշրջանային հաստատություններ

Մարդու իրավունքների վերոհիշյալ տարածաշրջանային պայմանագրերն ունեն նաև հատուկ ստեղծված մարմիններ՝ դրանց կատարումը վերահսկելու և մարդու իրավունքների խախտումները հետաքննելու համար: Առաջին նման մարմինը, որը ստեղծվել է, Մարդու իրավունքների եվրոպական դատարանն էր, որը վերաբերում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային: Տարածաշրջանային այլ մեխանիզմները ներառում են՝

- Միջամերիկյան հանձնաժողովը և Մարդու իրավունքների դատարանը,
- Մարդու և ժողովուրդների իրավունքների աֆրիկյան հանձնաժողովը և դատարանը,

- Խոշտանգումների կանխարգելման եվրոպական հանձնաժողովը:

Այս դատարաններից յուրաքանչյուրն իրավասու է պահանջելու պետություններից՝ ձեռնպահ մնալ քայլեր ձեռնարկելուց, օրինակ՝ փախստականին կամ ապաստան հայցողին արտաքսելուց, եթե դա անուղղելի վնաս կհասցնի շահագրգիռ անձին:

2.4 Միջազգային մարդասիրական իրավունք

Միջազգային իրավունքի այս ճյուղը, որը նախորդում է թե՛ մարդու իրավունքներին, թե՛ փախստականներին առնչվող իրավական նորմերին, զինված բախումների ժամանակ նպատակ ունի և՛ պաշտպանելու այն անձանց, ովքեր չեն մասնակցում կամ այլևս չեն մասնակցում ռազմական գործողություններին, և՛ կարգավորելու կամ, ավելի շուտ, սահմանափակելու պատերազմի միջոցներն ու մեթոդները: Այն հստակ նշանակություն ունի փախստականների պաշտպանության հարցում, քանի որ փախստականները գնալով դառնում են պատերազմների թիրախ: Հիմնական գործիքներն են Ժնևի չորս կոնվենցիաները (1949թ.) և դրանց երկու Լրացուցիչ արձանագրությունները (1977թ.): Ժնևի կոնվենցիաները բոլորը վերաբերում են միջազգային զինված հակամարտություններին, բացառությամբ նրա, որ 3-րդ հոդվածը, որն ընդհանուր է բոլոր չորս կոնվենցիաների համար, վերաբերում է ոչ միջազգային զինված հակամարտություններին, այսինքն՝ քաղաքացիական պատերազմներին: Լրացուցիչ I արձանագրությունը վերաբերում է բացառապես միջազգային հակամարտություններին: Լրացուցիչ Երկրորդ Արձանագրության կիզակետում ոչ միջազգային զինված հակամարտություններն են: Այսօր աշխարհում հակամարտությունների մեծ մասը տեղի է ունենում երկրի սահմաններում և, որպես այդպիսին, ենթակա է ավելի քիչ իրավական սահմանափակումների, քան երկրների միջև տեղի ունեցող հակամարտությունները:

Սկզբունքորեն, միջազգային զինված հակամարտության մեջ հայտնված փախստականները պատկանում են «պաշտպանված անձանց» կատեգորիային, ինչը նշանակում է, որ նրանք ընդգրկված են Ժնևի չորրորդ կոնվենցիայի և Լրացուցիչ I արձանագրության բոլոր դրույթներում: Ոչ միջազգային զինված հակամարտությունների ժամանակ փախստականները ավտոմատ կերպով պաշտպանված են, քանի որ նրանք, ըստ սահմանման, «քաղաքացիական անձինք են, որոնք ակտիվորեն չեն մասնակցում ռազմական գործողություններին»: Փախստականները օգտվում են, մասնավորապես, հետևյալ դրույթներից՝

- *Ժնևի չորս կոնվենցիաների համար ընդհանուր 3-րդ հոդվածը* սահմանում է այն նվազագույն պաշտպանությունը, որը պետք է տրամադրեն հակամարտող կողմերը այն անձանց, որոնք չեն մասնակցում կամ այլևս ակտիվորեն չեն մասնակցում ռազմական գործողություններին ոչ միջազգային զինված հակամարտությունների ժամանակ: Սա ներառում է պաշտպանություն բռնի գործողություններից,

մասնավորապես՝ սպանությունից, անդամահատումից, խոշտանգումներից, դաժան և նվաստացուցիչ վերաբերմունքից, պատանդ վերցնելու արգելք և արդար դատավարության պահանջ մինչև որևէ պատիժ նշանակելը,

- *Զինված հակամարտությունների ժամանակ քաղաքացիական անձանց պաշտպանության մասին Ժնևի չորրորդ կոնվենցիան*, մասնավորապես, վերաբերում է քաղաքացիական բնակչության ընդհանուր պաշտպանությանը պատերազմի որոշակի հետևանքներից: Դրա հիմնական դրույթներից են խաղաղ բնակչությանը որպես կենդանի վահան օգտագործելն արգելող դրույթները, քաղաքացիական անձանց կոլեկտիվ պատժելը, խաղաղ բնակչությանը ահաբեկելուն ուղղված միջոցառումները, թալանն ու քաղաքացիական անձանց նկատմամբ հաշվեհարդարը: Մյուս դրույթները վերաբերում են չեզոքացված գոտիների ստեղծմանը, որոնք կարող են լինել փախստականների բնակավայր, և ցրված ընտանիքների վերամիավորմանը, ինչպես նաև փախստականներին որպես թշնամի օտարերկրացիների վերաբերվելու արգելքը բացառապես այն հիմքով, որ նրանք ունեն թշնամի պետության քաղաքացիություն,
- *Լրացուցիչ Առաջին Արձանագրությունը* հայտարարում է, որ ազգային-ազատագրական պատերազմները պետք է դիտարկվեն որպես միջազգային բնույթի հակամարտություններ և ամրապնդում է այն կանոնը, որ պատերազմող կողմերը պետք է տարբերեն ռազմական նպատակները, մի կողմից, և քաղաքացիական անձանց և քաղաքացիական օբյեկտները, մյուս կողմից: Այն նաև ամրապնդում է Ժնևի կոնվենցիաներով նախատեսված պաշտպանությունը, օրինակ՝ հրահանգելով, որ քաղաքացիական անձինք չպետք է լինեն ռազմական գործողությունների կամ անկանոն հարձակման միտումնավոր թիրախ, և որ քաղաքացիական անձանց պետք է տրամադրվի անաչառ օգնություն մարդասիրական գործակալությունների կողմից՝ խնդրո առարկա կողմերի համաձայնությամբ,

- *Լրացուցիչ Երկրորդ արձանագրությամբ* ոչ միջազգային զինված հակամարտությունների վրա տարածվում են Առաջին Արձանագրության հիմնական կանոնները, որոնք վերաբերում են քաղաքացիական անձանց պաշտպանությանը ռազմական գործողությունների հետևանքներից: Հետևաբար, այն ընդլայնում է Հոդված 3-ով նախատեսված պաշտպանությունը: Քաղաքացիական բնակչության տեղահանում կարող է հանձնարարվել միայն այն դեպքում, եթե դա պահանջվում է հանուն նրա անվտանգություն կամ ռազմական հրամայական պատճառներով, և եթե ձեռնարկվել են բոլոր հնարավոր միջոցները ապահովելու համար, որ այն տեղի կունենա բավարար պայմաններում:

Ինչպես նշվեց վերը, մարդու որոշ իրավունքներ ենթակա չեն ժխտման: Մարդու իրավունքներին առնչվող միջազգային իրավական նորմերը ընդունում է, որ կան հանգամանքներ, որոնք կարող են արդարացնել որոշակի իրավունքների և ազատությունների սահմանափակումը: Այսպիսով՝ մարդու իրավունքներին առնչվող միջազգային իրավական նորմերով նախատեսված իրավունքներից շատերը (բայց ոչ բոլորը) կարող են կասեցվել զինված հակամարտության ընթացքում: Եթե դա տեղի ունենա, ապա միջազգային մարդասիրական իրավունքը, որը կիրառվում է միայն զինված հակամարտությունների իրավիճակներում, նպատակ ունի ապահովելու մարդու արժանապատվության հարգումը: Երբ անձը փախչում է հակամարտությունից և հասնում է չեզոք երկիր, փախստականների և մարդու իրավունքների մասին օրենքը կրկին կիրառվում է իր ամբողջականությամբ (1951թ. Փախստականների մասին կոնվենցիայի 9-րդ հոդվածը հաստատում է, որ փախստականների մասին օրենքը շարունակում է կիրառվել, թեև որոշ հնարավոր շեղումներով, զինված հակամարտության ժամանակ):

2.5 Միջազգային քրեական իրավունք

Միջազգային քրեական իրավունքի զարգացումները գնալով ավելի են ազդում ՄԱԿ ՓԳՀ-ի **խնդրո առարկա** աղջիկների, տղաների, կանանց և տղամարդկանց պաշտպանության վրա: Նախկին Հարավսլավիայի և Ռուանդայի վերաբերյալ միջազգային քրեական տրիբունալների կայացրած վճիռները, որոնք վերաբերում էին այնպիսի հանցագործությունների համար անհատական պատասխանատվությանը, ինչպիսիք են

ռազմական հանցագործությունները և մարդկության դեմ հանցագործությունները, օգնել են որոշելու, թե երբ մարդիկ պետք է բացառվեն փախստականի կարգավիճակից իրենց վարքագծի պատճառով: Միջազգային քրեական դատարանը (ՄԲԴ) անկասկած նմանատիպ ազդեցություն կունենա, երբ սկսի գործեր քննել: ՄԲԴ-ի կանոնադրությունը (1998), որն ուժի մեջ է 2002 թվականի հուլիսից, ինքնին նշանակալից է, քանի որ այն ապահովում է մարդկության դեմ հանցագործությունների առաջին համապարփակ ամրագրումը և դասակարգում է որպես ռազմական հանցագործություններ ոչ միջազգային զինված հակամարտությունների որոշ գործողություններ, որոնց համար նախկինում որևէ պայմանագրով քրեական պատասխանատվություն չէր նախատեսվում:

Քրեական իրավունքի և փախստականների հետ կապված մեկ այլ կարևոր զարգացում են եղել մարդկանց թրաֆիքինգի և մաքսանենգության դեմ պայքարի միջազգային գործողությունները: Գնալով ավելի շատ փախստականներ են ստիպված եղել ապավինել մաքսանենգներին՝ ապահովության հասնելու իրենց փորձերում: Դրանով նրանք ոչ միայն վտանգի են ենթարկում իրենց կյանքը, այլև հաճախ վտանգում են նպատակակետ պետությունում ապաստան ստանալու իրենց հայցերի արդյունքը: Այս հարցի վերաբերյալ երկու միջազգային համաձայնագրերի՝ 2004 թվականի հունվարից գործող Յամաբային, ծովային և օդային ճանապարհով միգրանտների մաքսանենգության դեմ ՄԱԿ-ի արձանագրության (2000թ.) և 2003 թվականի դեկտեմբերին ուժի մեջ մտած Մարդկանց թրաֆիքինգի կանխարգելման, ճնշման և պատժի մասին ՄԱԿ-ի արձանագրության (2000թ.) կիզակետում թրաֆիքինգը և մաքսանենգներն են, և դրանց նպատակն է հասկացնել, որ նրանց զոհերը չպետք է պատժվեն զուտ մաքսանենգության կամ թրաֆիքինգի ենթարկվելու համար: Երկու Արձանագրություններն էլ սահմանում են, որ իրենց դրույթներում ոչինչ չի ազդում անհատների իրավունքների և պետությունների պարտավորությունների վրա՝ 1951թ. Կոնվենցիայով/1967թ. Արձանագրությամբ սահմանված չվերադարձելիության սկզբունքի վրա: Այս Արձանագրությունները լրացնում են Միավորված ազգերի կազմակերպության Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ կոնվենցիան (2000թ.), որն ուժի մեջ է մտել 2003թ. սեպտեմբերին և նախատեսում է կառավարությունների միջև ավելի մեծ համագործակցություն միջսահմանային հանցավոր գործունեության դեմ պայքարում:

2.6 Միավորված ազգերի կազմակերպության Անվտանգության խորհրդի բանաձևերը

Անվտանգության խորհուրդը, որին ՄԱԿ-ի կանոնադրությամբ վստահված է միջազգային խաղաղության և անվտանգության պահպանումը, կազմված է ՄԱԿ-ի 15 անդամ պետությունների ներկայացուցիչներից, որոնցից հինգը մշտական անդամներ են (Չինաստան, Ֆրանսիա, Ռուսաստանի Դաշնություն, Միացյալ Թագավորություն և Ամերիկայի Միացյալ Նահանգներ): Մյուս 10 անդամ երկրներն ընտրվում են Անվտանգության խորհրդի անդամ երկու տարի ժամկետով: Ի տարբերություն ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի բանաձևերի, ՄԱԿ-ի կանոնադրության VII գլխի համաձայն՝ ընդունված Անվտանգության խորհրդի բանաձևերը իրավաբանական, այլ ոչ թե պարզապես քաղաքական պարտադիր ուժ ունեն Միավորված ազգերի կազմակերպության բոլոր պետությունների համար: VII գլխի 39-րդ հոդվածի համաձայն՝ Խորհուրդը

*«հաստատում է խաղաղությանը սպառնացող
ցանկացած սպառնալիքի, խաղաղության
խախտման կամ ագրեսիայի ակտի
առկայությունը և առաջարկություններ է անում
կամ որոշում, թե ինչ միջոցներ պետք է
ձեռնարկվեն... միջազգային խաղաղությունն ու
անվտանգությունը պահպանելու կամ
վերականգնելու համար»:*

Միջոցառումները, որոնք կարող են ձեռնարկվել, ներառում են ռազմական գործողություններ՝ հակամարտությունը դադարեցնելու համար, որին կարող է հաջորդել ՄԱԿ-ի քաղաքացիական և/կամ ռազմական մարմնի ստեղծումը, որը կկառավարի տվյալ տարածքը, մինչև ազատ ընտրված կառավարությունը ստանձնի իշխանությունը: Սառը պատերազմի ժամանակաշրջանում VII գլխով նախատեսված Անվտանգության խորհրդի լիազորությունները հազվադեպ էին օգտագործվում, քանի որ նման բանաձևերը պահանջում են բոլոր հինգ մշտական անդամների համաձայնությունը, որոնցից երկուսն այն ժամանակ հակառակորդ գերտերություններ էին: Սակայն 1990-ականների սկզբից Անվտանգության խորհուրդն ավելի ակտիվ է դարձել, մասնավորապես՝ ընդունելով, որ խաղաղ

բնակչության դեմ բռնությունը կարող է սպառնալիք լինել միջազգային խաղաղության և անվտանգության համար: Օրինակ՝ Կոսովոյի ալբանացիների նկատմամբ բռնաճնշումները դադարեցնելու նպատակով այն ժամանակվա Հարավսլավիայի Դաշնային Հանրապետության դեմ ՆԱՏՕ-ի անդամների ռազմական գործողություններից հետո Անվտանգության խորհուրդն ընդունեց 1244 (1999) բանաձևը, որը ստեղծեց ՄԱԿ-ի առաքելությունը Կոսովոյում: Կոսովոյում ՄԱԿ-ի առաքելությանը հանձնարարվել էր կառավարել նահանգը մինչև ժողովրդավարական ինքնակառավարման հաստատումը: ՄԱԿ ՓԳՀ-ն այդ առաքելության մարդասիրական հենասյունն էր: Այսպիսով, VII գլխի բանաձևերը կարող են ստեղծել իրավական հիմք և միջավայր, որտեղ ապահովվում է միջազգային պաշտպանություն, և որտեղ կարող է

2.7 1951 թվականի Կոնվենցիայի/ 1967 թվականի Արձանագրության կատարումը ազգային մակարդակում

1951 թվականի Կոնվենցիան և նրա 1967 թվականի Արձանագրությունը չեն սահմանում այն ձևը, որով պետությունները պետք է կատարեն այդ փաստաթղթերով նախատեսված իրենց պարտավորությունները: Այսպիսով, Մասնակից պետություններն ունեն որոշակի հայեցողականություն՝ որոշելիս, թե ինչ ընթացակարգեր և հաստատություններ են նրանք օգտագործելու այդ նպատակով: Փախստականների պաշտպանության միջազգային պարտավորությունների իրականացման ամենաարդյունավետ մեթոդը ապաստանի վերաբերյալ ազգային օրենսդրության ընդունումն է, որը ներառում է այդ պայմանագրերի դրույթները: Նման օրենսդրության կոնկրետ ձևը տարբեր կլինի տարբեր երկրներում՝ կախված նրանց իրավական ավանդույթներից և փախստականների վերաբերյալ գործող դրույթներից: ՄԱԿ ՓԳՀ-ն կարևոր դերակատարում ունի փախստականների պաշտպանության միջազգային չափանիշների վերաբերյալ պետություններին խորհրդատվություն տրամադրելու հարցում, որոնք պետք է պահպանվեն օրենսդրության մշակման ժամանակ: Պարզապես ապաստանի մասին օրենսդրություն չընդունելը երկրին չի ազատում իր պարտավորություններից այն պայմանագրերով, որոնց նա Կողմ է, կամ, որոնք նա կրում՝ միջազգային սովորույթային իրավունքի համաձայն:

Պետությունները ազատ են ընդունելու փախստականի

ավելի լայն սահմանում, քան այն միջազգային փաստաթղթերում առկա սահմանումներն են, որոնց նրանք մասնակից են, մասնավորապես՝ 1951թ.

Կոնվենցիայով/1967թ. Արձանագրությամբ նախատեսված սահմանումները: Սակայն պետությունները չեն կարող օգտագործել ազգային օրենսդրությունը՝ նվազեցնելու իրենց պարտավորությունները ավելի, քան նախատեսված է այն պայմանագրերով, որոնց նրանք անդամակցում են, կամ որոնք նրանց համար պարտադիր են միջազգային սովորույթային իրավունքով: Դրանով նրանք կարող են խախտել իրենց միջազգային պարտավորությունները:

Փախստականների պաշտպանության վերաբերյալ միջազգային փաստաթղթերը, սակայն, հստակ չեն սահմանում, թե ինչպես պետք է պետությունները համապատասխանեն այդ չափանիշներին կամ ինչպես պետք է որոշեն փախստականի կարգավիճակը:

Գործնականում պետությունները տարբեր մոտեցումներ են ցուցաբերել ինչպես իրենց օրենսդրությունը մշակելիս, այնպես էլ իրենց դատական մարմինների որոշումներում: Իրականում դրանք կարող են բավականին կտրուկ տարբերվել: Սա մասամբ պայմանավորված է 1951թ.

Կոնվենցիայի/1967թ. Արձանագրությամբ որևէ պարտադիր կատարման մեխանիզմի բացակայությամբ, որը կարող է օգտագործվել առանձին փախստականների կամ ապաստան հայցողների կողմից: Այդ իսկ պատճառով ՄԱԿ ՓԳՀ-ի վերահսկիչ դերը, որում նա աշխատում է մասնակից պետությունների հետ՝ ապահովելու այդ պայմանագրերի իրականացումը, կարևոր է:

Պայմանագրերի դրույթների մեկնաբանման և կիրառման վերաբերյալ ՄԱԿ ՓԳՀ-ի տեսակետերը զգալի կշիռ ունեն: ՄԱԿ ՓԳՀ-ի դիրքորոշումը կարող է պարզ լինել մի շարք ձևերով՝ ապաստանի մասին օրենսդրության նախագծերի վերաբերյալ գրավոր մեկնաբանությունների, առանձին ապաստանի գործերով վերաքննիչ վարույթում ներկայացված կարծիքների և, ընդհանուր առմամբ, 1951 թվականի Կոնվենցիայի տարբեր ասպեկտները մեկնաբանող ուղեցույցների հրապարակման միջոցով:

Մասնավորապես՝ ՄԱԿ ՓԳՀ-ի *Փախստականի կարգավիճակի որոշման ընթացակարգերը և չափանիշները* հաճախ համարվում են հեղինակավոր ուղեցույց պետությունների դատարանների կողմից՝ ազգային օրենսդրությունը 1951 թվականի Կոնվենցիայի համաձայն մեկնաբանելիս: Ապաստանի առաջադեմ համակարգեր ունեցող պետությունների վերադաս դատարանների որոշումները նույնպես նպաստում են փախստականների մասին միջազգային իրավունքի մեկնաբանմանը:

Ազգային մակարդակով ՄԱԿ ՓԳՀ-ն օգնում է առանձին երկրներին բարելավելու իրենց կարողությունները՝ իրենց տարածքում միջազգային պաշտպանություն ապահովելու համար: Կարողությունների զարգացումը կարող է ներառել ժամանողների և ապաստան հայցողների ընդունելության պայմանների բարելավում, ապաստանի հայցերի քննության իրականացում և բարելավում, փախստական ճանաչվածների նկատմամբ վերաբերմունքի բարելավում և կայուն լուծումների խթանում: Այս գործողություններն օգնում են մշակել փախստականների հարցով ազգային քաղաքականությունը և գործելակերպը՝ միջազգային իրավական դաշտին համապատասխան: Դրանք նաև ամրապնդում են միգրացիոն մարմինների հմտություններն ու գիտելիքները և օգնում խթանել ավելի մեծ տեղեկացվածություն և ավելի դրական վերաբերմունք փախստականների վերաբերյալ այն համայնքներում, որտեղ նրանց հյուրընկալում են կամ ապրում են նրանց հետ հայրենադարձությունից հետո:

Կարողությունների կառուցումը տարբեր ձևով է տեղի ունենում՝ կախված շահագրգիռ պետության ֆինանսական ռեսուրսներից և փախստականների հետ վարվելու նրա փորձից: Ապաստանի տրամադրման բարդ ընթացակարգեր ունեցող երկրներում նախաձեռնությունները կարող են ներառել կրթական ծրագրեր դպրոցներում և հանրային տեղեկատվական արշավներ փախստականների և ապաստան հայցողների մասին՝ նպաստելու նրանց ծանր վիճակի ըմբռնմանը լայն համայնքի շրջանում: Այն երկրներում, որոնք նոր են սկսում իրականացնել փախստականների ժամանմանը արձագանքելու քաղաքականություն, սովորաբար խրախուսվում է 1951 թվականի Կոնվենցիային և 1967 թվականի Արձանագրությանը միանալը և ապաստանի մասին ազգային օրենսդրության ընդունումը: Կարողությունների զարգացումը երկարաժամկետ աշխատանք է, որը պահանջում է ընդունող պետության իշխանությունների, ՄԱԿ ՓԳՀ-ի, ՀԿ-ների և հենց փախստականների մասնակցությունը:

2.8 Քաղաքականության և պրակտիկայի մշակումը

Ինչպես քննարկվեց Գլուխ 1-ում, ՄԱԿ ՓԳՀ-ի ամենակարևոր նախաձեռնությունը պաշտպանության խթանման վերաբերյալ վերջին տարիներին Միջազգային պաշտպանության վերաբերյալ գլոբալ խորհրդակցություններն էին, մի շարք հանդիպումներ, որոնք անցկացվեցին պետությունների, ՄԱԿ ՓԳՀ-ի, ՀԿ-ների և գիտնականների միջև 2001 և 2002 թվականներին: Խորհրդակցությունները գումարվեցին մասամբ ի պատասխան 1951թ. Կոնվենցիայի արդիականության վերաբերյալ բազմաթիվ առումներով ծագած հարցերին: Խորհրդակցությունների արդյունքում պետությունները 2001 թվականի իրենց Նախարարական հռչակագրում վերահաստատեցին, որ 1951 թվականի Կոնվենցիան մնում է առանցքային նշանակություն ունեցող գործիք փախստականների պաշտպանության միջազգային ռեժիմի համար:

Խորհրդակցությունները նաև հանգեցրին Պաշտպանության օրակարգի մշակմանը, որն ընդունվել էր խորհրդակցությունների մասնակից պետությունների կողմից և հաստատվել ԳործԿոմ-ի կողմից: Օրակարգը փախստականների գլոբալ քաղաքականության առաջին համապարփակ շրջանակն է ՄԱԿ ՓԳՀ-ի ստեղծումից ի վեր: Այն սահմանում է միջազգային պաշտպանության ամրապնդման հստակ նպատակներ և առաջարկում դրանց հասնելու գործնական ուղիներ: Այսպիսով՝ օրակարգը օգտակար շրջանակ է սահմանում պետությունների, ՀԿ-ների և ՄԱԿ ՓԳՀ-ի միջև փախստականների հարցերով համագործակցության համար և օգնում է ՄԱԿ ՓԳՀ-ին բացահայտել իր սեփական առաջնահերթությունները գլոբալ առումով, ինչպես նաև յուրաքանչյուր երկրի համար: Օրակարգի նպատակներն են.

- Ամրապնդել 1951 թվականի Կոնվենցիան և 1967 թ. Արձանագրությունը,
- Պաշտպանել փախստականներին ավելի լայն միգրացիոն շարժումների շրջանակներում,
- Ավելի արդարացիորեն կիսել բեռը և պարտականությունները և կառուցել փախստականներին ընդունելու և պաշտպանելու կարողություններ,
- Առավել արդյունավետ կերպով լուծել անվտանգության հետ կապված մտահոգությունները,

- Կրկնապատկել ջանքերը կայուն լուծումներ գտնելու համար,
- Բավարարել փախստական կանանց և փախստական երեխաների պաշտպանության կարիքները:

Օրակարգը խրախուսում է նոր գործիքների մշակումը՝ ապահովելու փախստականների և այլ մտահոգություն ունեցող անձանց արդյունավետ պաշտպանությունը: Այսպիսով, Գերագույն հանձնակատարն առաջարկել է օգտագործել բազմակողմ «հատուկ համաձայնագրեր» պետությունների միջև՝ լրացնելու 1951թ. Կոնվենցիան: Նման համաձայնագրերը, որոնք հայտնի են որպես «Կոնվենցիա պլյուս»/Convention Plus, կարող են կնքվել ընդհանուր թեմայով, կամ երբ պետությունների խումբը շահագրգռված է համագործակցելու փախստականների որոշակի իրավիճակի կամ խնդրի շուրջ: Հարակից նախաձեռնություններն իրականացվում են խորհրդատվական գործընթացում, որը հայտնի է որպես Ֆորում, որը մեկնարկել է 2003 թվականին: Այս գործընթացի առաջին կոնկրետ արդյունքներից մեկը վերաբնակեցման վերաբերյալ փոխըմբռնման բազմամյա շրջանակն է, որը համաձայնեցվել է 2004 թվականին:

ՄԱԿ ՓԳՀ-ն իր մանդատի համաձայն թողարկում է ուղեցույցներ միջազգային պաշտպանության թեմաներով: Դրանք կարող են վերաբերել Կոնվենցիայի դրույթների մեկնաբանմանն առնչվող իրավական հարցերին, ինչպիսին է փախստականի սահմանումը, կամ քաղաքականության և գործառնական մտահոգություններին, ինչպիսիք են փախստական երեխաների հատուկ պաշտպանության կարիքներին համապատասխան արձագանքները: ՄԱԿ ՓԳՀ-ի Ուղեցույցները հաճախ են վկայակոչվել ապաստանի հարցերով դատող դատարանների և այլ ազգային մարմինների կողմից:

Ամփոփում

Փախստականներին առնչվող միջազգային իրավական նորմերը

Սահմանում են փախստականների **միջազգային պաշտպանության հիմնական սկզբունքները**:

Հիմնական գործիքներն են 1951 թվականի Կոնվենցիան և նրա 1967 թվականի **Արձանագրությունը**: Դրանց դրույթները ներառում են՝

- Փախստականներին և ապաստան հայցողներին հետապնդման վտանգի տակ վերադարձնելու արգելքը (*չվերադարձելիության* սկզբունքը),
- Բոլոր փախստականների նկատմամբ ոչ խտրական վերաբերմունք ցուցաբերելու պահանջը,
- Փախստականների նկատմամբ վերաբերմունքի չափանիշներ
- Փախստականների պարտավորությունները ապաստանի երկրի նկատմամբ
- Պետությունների պարտականությունը՝ համագործակցելու ՄԱԿ ՓԳՀ-ի հետ՝

իր գործառնություններն իրականացնելիս:

Չվերադարձելիության սկզբունքը

- Արգելում է փախստականների վերադարձը ցանկացած ձևով այն երկրներ կամ տարածքներ, որտեղ նրանց կյանքը կամ ազատությունը կարող է վտանգված լինել նրանց ռասայի, կրոնի, ազգության, որոշակի սոցիալական խմբի անդամակցության կամ քաղաքական կարծիքի պատճառով,
- Բացառություն կարող է արվել միայն այն դեպքում, եթե փախստականը վտանգ է ներկայացնում ազգային անվտանգության համար կամ, հատկապես ծանր հանցագործության համար դատապարտված լինելով, վտանգ է ներկայացնում համայնքի համար, բայց ոչ այն դեպքում, եթե դրա արդյունքում տվյալ անձը կենթարկվի խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի վտանգի,
- Որպես սովորույթային և պայմանագրային իրավունքի մաս՝ այս հիմնարար սկզբունքը պարտադիր է **բոլոր** պետությունների համար:

Իրավունքի լրացուցիչ ոլորտները

Մարդու իրավունքներին առնչվող միջազգային իրավական նորմերը՝

- Ընդհանուր առմամբ վերաբերում են պետության բոլոր մարդկանց՝ անկախ նրանից՝ քաղաքացիներ, թե ոչ,
- Միջազգային պաշտպանության և ապաստանի հայեցակարգում առանցքային են, քանի որ փախստականները փնտրում են անվտանգություն մարդու իրավունքների խախտումներից,
- Օգնում են սահմանել, թե ինչպես պետք է վերաբերվեն փախստականներին և ապաստան հայցողներին այն երկրներում, որտեղ նրանք ապաստան են փնտրում
- Վերահսկվում են տարբեր միջազգային մարմինների կողմից, որոնց կարող

են կոչ անել օգնելու առանձին փախստականներին՝ կանխելու, օրինակ, վերադարձը մի տարածք, որտեղ նրանց սպառնում է խոշտանգումների վտանգ,

- Պատշաճ կիրառման դեպքում կարող է կանխել իրավիճակները, որոնք հանգեցնում են փախստականների տեղաշարժին, և նպաստել փախստականների անվտանգ վերադարձին:

Միջազգային մարդասիրական իրավունքը

- Կիրառվում է զինված հակամարտությունների ժամանակ՝ լինեն դրանք միջազգային, թե ներքին,
- Սահմանում է պահնաջ այն մասին, որ փախստականները ինչպես նաև այլ քաղաքացիական անձինք պետք է ստանան մարդասիրական վերաբերմունք և, մասնավորապես, պաշտպանված լինեն բռնի գործողություններից:

Օրենքի այլ համապատասխան ոլորտներն են՝

- Միջազգային քրեական իրավունքը
- Միավորված ազգերի կազմակերպության Անվտանգության խորհրդի պարտադիր բանաձևերը:

Լրացուցիչ ընթերցանություն

ՄԱԿ ՓԳՀ, *Փախստականներին և տեղահանվածներին վերաբերող միջազգային փաստաթղթերի և այլ իրավական տեքստերի ժողովածու* (հատոր I և II), 1995թ.

ՄԱԿ ՓԳՀ, Ծանոթագրություն միջազգային պաշտպանության վերաբերյալ (A/AC.96/930), 2000թ. հուլիս: ՄԱԿ ՓԳՀ, Ծանոթագրություն միջազգային պաշտպանության վերաբերյալ (A/AC.96/951), 2001թ. սեպտեմբեր

Փախստականներին առնչվող միջազգային իրավական նորմեր

ՄԱԿ ՓԳՀ, Փախստականների մասին 1951 թվականի Կոնվենցիայի մեկնաբանություն, 1963 թ.

Փախստականները միջազգային իրավունքում, Գայ Ս. Գուդվին-Ջիլ,

Կլարենդոն հրատարակչություն, 1996 թ..

ՄԱԿ ՓԳՀ, Ծանոթագրություն միջազգային պաշտպանության մասին

(A/AC.96/951), 2001թ. սեպտեմբեր

Մարդու իրավունքներին առնչվող միջազգային իրավական նորմեր

Մարդու իրավունքների պաշտպանությունը փախստականների, ապաստան հայցողների և ներքին տեղահանվածների համար: Միջազգային մեխանիզմների և ընթացակարգերի մասին ուղեցույց, Ջոան Ս. Ֆիցպատրիկ, «Տրանսնեշնլ Փաբլիշերս Ինկ.» հրատարակչություն, 2002թ..

ՄԱԿ ՓԳՀ, *Մարդու իրավունքների և փախստականների պաշտպանություն*, Վերապատրաստման մոդուլ, 1995թ. (Մաս I) և 1996թ. (Մաս II)

- 2 Հետևյալ պնդումներից ո՞ր մեկն է ճիշտ:
 - ա Անձը, որը համապատասխանում է 1951 թվականի Կոնվենցիայի ներառման կետերին, միշտ փախստական է:
 - բ Բոլոր պաղեստինցի փախստականները բացառված են փախստականի կարգավիճակից՝ համաձայն 1951 թվականի Կոնվենցիայի բացառման դրույթների:
 - գ Բացառման դրույթները միայն այն մարդկանց չեն վերաբերում, որոնք արժանի չեն փախստականի կարգավիճակին:
 - դ 1951 թվականի կոնվենցիայով ամրագրված հետապնդման պատճառները միմյանց բացառող են:
- 3 1951 թվականի Կոնվենցիայում հանդիպող հետապնդում հասկացության վերաբերյալ այս պնդումներից ո՞ր մեկն է ճիշտ:
 - ա Հալածանքը սահմանվում է մարդու իրավունքներին առնչվող միջազգային պայմանագրերում:
 - բ Հետապնդումը կարող է իրականացվել միայն այն մարդկանց կողմից, որոնք գործում են կառավարության հրահանգով:
 - գ Աշխատանքային հնարավորությունների հետ կապված խտրական վերաբերմունքը երբեք չի կարող հետապնդում լինել:
 - դ Տնտեսական վատ պայմաններից տառապելն ինքնին հետապնդում չէ:
- 4 Փախստականի կարգավիճակ ստանալու համար անձը պետք է լքած լինի իր ծագման երկիրը՝ վախենալով հետապնդումից: Ճի՞շտ է, թե՞ սխալ:
- 5 Լրացրե՛ք նախադասությունը հետևյալ արտահայտություններից մեկով.
Փախստականի կարգավիճակի դադարեցումը 1951 թվականի Կոնվենցիայի համաձայն.
 - ա Կախված չէ փախստական ճանաչված անձից:
 - բ Միշտ անհատ փախստականի վարքագծի արդյունք է:
 - գ Չի կարող կիրառվել խմբային հիմունքներով:
 - դ Տեղին չէ է, երբ միջազգային պաշտպանության շարունակական կարիք կա:
- 6 Հետևյալներից ո՞րը բնորոշ չէ Փախստականների մասին ԱՄԿ կոնվենցիային և Կարթագենի հռչակագրին:
 - ա Նրանք երկուսն էլ պարունակում են 1951 թվականի Կոնվենցիայում առկա փախստականի սահմանումը:
 - բ Նրանք երկուսն էլ իրավաբանական պարտադիր ուժ ունեցող փաստաթղթեր են:

գ Նրանք փախստականներին սահմանում են ավելի լայն են, քան պարզապես անձինք, որոնք վախենում են հետապնդումից, ներառելով այն անհատներին, որոնք լքում են իրենց երկրները համատարած բռնության պատճառով:
դ Նրանք երկուսն էլ սահմանափակված են աշխարհի որոշակի տարածաշրջաններով:

- 7** Լրացրե՛ք նախադասությունը հետևյալ արտահայտություններից մեկով. ՄԱԿ ՓԳՀ-ի մանդատի շրջանակում փախստականը սահմանվում է.
ա այնպես, ինչպես 1951 թվականի Կոնվենցիայում
բ համապարփակ կերպով՝ դրա կանոնադրության մեջ
գ ներառելով անձանց, որոնք փախչում են անխտիր բռնությունից, ինչպես նաև նրանց, ովքեր վախենում են հետապնդումից:
դ ՄԱԿ ՓԳՀ-ի խնդրո առարկա պետությունում կիրառելի փախստականի սահմանման համաձայն:
- 8** Փախստականի կարգավիճակի որոշումը հիմնականում
կառավարությունների, այլ ոչ թե ՄԱԿ ՓԳՀ-ի պարտականությունն է: Ճի՞շտ է,
թե՞ սխալ:
- 9** ՄԱԿ ՓԳՀ-ի մանդատի ներքո ճանաչված փախստականների նկատմամբ
վերաբերմունքը բացառապես ՄԱԿ ՓԳՀ-ի պարտականությունն է: Ճի՞շտ է,
թե՞ սխալ:
- 10** Հետևյալներից ո՞ր մեկն է անհամատեղելի փախստականի
կարգավիճակի հետ՝ համաձայն 1951 թվականի Կոնվենցիայի:
ա քրեական անցյալ ունենալը
բ ակտիվ ծառայությունից ժամանակավորապես ազատված զինծառայող լինելը
գ զինվորական ծառայությունից խուսափելը
դ ծագման երկրի բարոյական կամ կրոնական կանոնները խախտելը:

Դեպք Բ

Լուիսը՝ Ալֆաստանում քաղաքական կարծիք չունեցող ազաբակատեր էր, որը պատկանում էր էթնիկ փոքրամասնությանը, որի անդամներից շատերը կողմ էին կենտրոնական կառավարությունից ինքնավարություն ունենալուն, որը վերահսկվում էր մեծամասնություն կազմող էթնիկ խմբի անդամների կողմից: Լուիսի էթնիկ խմբի որոշ անդամների կողմից ստեղծվեց պարտիզանական խումբ, որը բռնության մարտավարություն էր կիրառում կառավարության դեմ: Ամեն անգամ, երբ այս պարտիզանական խմբերը գործողություններ էին ձեռնարկում, Լուիսը սպառնալիքներ էր ստանում իր հարևաններից, որոնք պատկանում էին էթնիկ մեծամասնությանը: Նա գնաց ոստիկանություն՝ օգնություն խնդրելու, բայց նրանք այնքան էին զբաղված էին քաղաքական անկարգությունները հանդարտեցնելով, որ չկարողացան հետաքննել կամ պաշտպանել նրան այդ սպառնալիքներից: Բացի այդ, Լուիսը սպառնալիքներ էր ստացել պարտիզանական խմբի անդամներից, որոնք զայրացած էին, որ նա ակտիվորեն չի աջակցել իրենց:

Ալֆաստանում լարվածությունը աճել էր՝ հանգեցնելով բազմաթիվ զոհերի: Լուիսի երեք հարազատները, որոնք ապրում էին նույն գյուղում, սպանվեցին, բայց այդ հանցագործությունների հեղինակները նույնիսկ չբացահայտվեցին, ոչ

Էլ պատասխանատվության ենթարկվեցին: Այս իրավիճակում Լուիսը գնեց ինքնաթիռի տոմս և մեկնեց Բետաստան, որտեղ ապաստան խնդրեց՝ պատճառաբանելով, որ իր կյանքին վտանգ է սպառնում:

Բետաստանը 1951 թվականի Կոնվենցիայի և 1967 թվականի Արձանագրության Կողմ է, բայց ոչ փախստականների հարցով որևէ տարածաշրջանային փաստաթղթի: Ալֆաստանը փախստականների հարցով միջազգային փաստաթղթերի Կողմ չէ:

Դուք պաշտպանության հարցերով աշխատակից եք, և Բետաստանի իշխանությունները խնդրել են Ձեզ կարծիք հայտնել Լուիսի ապաստանի հայցի վերաբերյալ: Ձեր առաջարկությունն անելու համար օգտագործեք ստորև բերված աղյուսակը:

Ո՞ր միջազգային փաստաթուղթն է պարունակում փախստականի կիրառելի սահմանումը:

Ստորև թվարկե՛ք ներառելու համար անհրաժեշտ տարրերը և հաշվի առեք, թե արդյոք դրանցից յուրաքանչյուրը բավարար է:

ա

բ

գ

դ	
ե	
Ներառման դրույթները բավարարվա՞ծ են:	Այո/ Ոչ
Եթե այո, կա՞ն հիմքեր փախստականի կարգավիճակը մերժելու կամ նման կարգավիճակը դադարեցնելու համար	
Լուիսը փախստական է	Այո/ Ոչ
Դեպք Գ	
Մայան՝ արգելված քաղաքական խմբի անդամ, որը դեմ է իր երկիրը՝ Լուզիտանիան կառավարող չընտրված ռեժիմին, գաղտնի բրոշյուրներ էր բաժանում այն գործարանում, որտեղ նա աշխատում էր: Այս բրոշյուրները ժողովրդին խաղաղ ապստամբության կոչ էին անում՝ պահանջելու ժողովրդավարություն և այլ հիմնական իրավունքներ, և փոխանցում էին միջազգային հանրության պահանջները այն մասին, որ Լուզիտանյան կառավարությունը պետք է բարելավի մարդու իրավունքների տխուր իրավիճակը: Այս թուղթիկները բաժանելիս Մայային բռնեցին ոստիկանները և դատապարտեցին հինգ տարվա ազատազրկման՝ առանց դատավարության: Երկու տարի անց նրան հաջողվեց փախչել, սակայն փախուստի ժամանակ նա վիրավորեց բանտապահներից մեկին, որը փորձում էր իրեն բերման ենթարկել: Այս բանտապահը ծանր հաշմանդամություն ձեռք բերեց, որով ապրելու է իր ողջ կյանքի ընթացքում: Մայան ի վերջո հասավ Սուրիտանիա, որտեղ ապաստան խնդրեց:	
Սուրիտանիան փախստականների հարցով միջազգային փաստաթղթերից որևէ մեկի Կողմ չէ և չունի ապաստանի վերաբերյալ որևէ օրենսդրություն: Փոխարենը, այն միջազգային պաշտպանություն է տրամադրում այն անձանց, որոնք ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից ճանաչվել են փախստական՝ իր մանդատի համաձայն: Որպես պաշտպանության աշխատակցի՝ Ձեզ խնդրել են ուսումնասիրել Մայայի գործը:	

Ո՞ր փաստաթուղթն է պարունակում փախստականի կիրառելի սահմանումը:	
Ստորև թվարկե՛ք ներառման համար անհրաժեշտ տարրերը և քննարկեք, թե արդյոք դրանցից յուրաքանչյուրը առկա է:	
ա	
բ	
գ	
դ	
ե	
Ներառման դրույթները բավարարվա՞ծ են:	Այո/ Ոչ
Եթե այո, կա՞ն հիմքեր փախստականի կարգավիճակը մերժելու կամ նման կարգավիճակը դադարեցնելու համար:	
Դեպք Դ Յուսուֆը նոր է դարձել 18 տարեկան: Երկու տարվա զինվորական ծառայությունից խուսափելու համար նա փախել է իր երկրից՝ Կամիբիայից: Նա, սկզբունքորեն, ինդիք չունեւր զինվորական ծառայության կամ կովելու հետ, բայց նրա երկիրը պատերազմում էր իր հարևան Մարնիայի հետ: Յուսուֆը դեմ էր այս	

հակամարտությանը, քանի որ Մարնիայի կառավարությունը քաղաքական կապեր ուներ իր աջակցած կուսակցության հետ, և այդ պատճառով նա Մարնիայի քաղաքացիներին համարում էր իր «եղբայրները»:

ա 1951 թվականի Կոնվենցիայում փախստականի սահմանումը կիրառելիս իրավասության ո ռ ի խնդիրն է առաջ գալիս:

բ Այս հարցի առնչությամբ ի նչ գործոններ պետք է ուսումնասիրեք նախքան այս դեպքում իրավասությունը որոշելը:

Դեպք Ե

Փոլը մի քանի տարի արգելված քաղաքական կուսակցության անդամ է: Նրա կուսակցությունը կարծում է, որ երկիրը ղեկավարում են կոռումպացված առաջնորդները, որոնք չեն հարգում քաղաքացիների կրոնական օրենքներն ու սովորույթները: Փոլը բազմիցս ձերբակալվել է այս կուսակցության անդամ լինելու համար, թեև առանձնապես ակտիվ չի եղել: Վերջին ձերբակալությունից հետո նա դատապարտվել է մեկ տարվա ազատազրկման՝ արագացված դատավարության արդյունքում: Ազատազրկման ընթացքում նա մի քանի անգամ ենթարկվել է խոշտանգումների, որոնց նպատակն է եղել ստիպել նրան տալու իր քաղաքական կուսակցության այլ անդամների անունները: Ավելի ուշ նա ազատ է արձակվել:

Իրենց կուսակցությունը օրինականացնելու անհաջող ջանքերից հետո նրա անդամները որոշեցին բռնի գործողություններ ձեռնարկել իրենց գործը հանրայնացնելու և կառավարությանը թուլացնելու համար: Փոլը համաձայնեց մասնակցել այդ արշավներին և ռումբ տեղադրեց մայրաքաղաքի օդանավակայանում: Ռումբը պայթեց, ինչի հետևանքով մահացան մեկնման սրահում սպասող 20 ուղևոր: Իր համախոհների օգնությամբ Փոլին մաքսանենգ ճանապարհով տեղափոխեցին այն սահմանը, որտեղ նա ապաստան խնդրեց: Նա մտավախություն ունի, որ վերադարձի դեպքում իշխանություններն արդար դատավարություն չեն իրականացնի և իրեն նորից կենթարկվեն խոշտանգումների:

Ո՞րն է այս դեպքում 1951 թվականի Կոնվենցիայի համաձայն փախստականի կարգավիճակ ստանալու հիմնական խնդիրը

Դեպք Զ

Լիայի ամուսնությունը կազմակերպել է նրա ընտանիքը՝ իր երկրի սովորույթներին համապատասխան: Հարսանիքից անմիջապես հետո ամուսինը սկսել է նրան խոսքային և ֆիզիկական բռնության ենթարկել: Երբ նա առաջարկեց աշխատանք գտնել, ամուսինն ասաց նրան, որ իր պարտականությունը տանը մնալն է, և որ իրեն թույլ չի տալու սիրախաղ անել այլ տղամարդկանց հետ և սիրավեպեր ունենալ: Ամուսինը գնալով ավելի ուժեղ էր քննադատում նրան՝ ասելով, որ նա հնազանդ կին չէ, և ի վերջո սկսեց հարվածել նրան: Երբ նա հղի էր և սպասում էր իրենց որդու ծնվելուն, ամուսինը շարունակում էր ֆիզիկական և բանավոր բռնությունը, այդ թվում՝ մի քանի

անգամ բռնաբարել է նրան:

Լիան այդ մասին անկեղծացել է իր ծնողների մոտ, բայց նրանք ասել են, որ նա չպետք է զայրացնի ամուսնուն, այլապես ամոթ կբերի իրենց ընտանիքին: Հատկապես դաժան ծեծից հետո Լիան գնացել է ոստիկանություն, սակայն նրանք հանդիմանել են ամուսնու նկատմամբ այդքան անհարգալից վերաբերմունքի համար և պատրաստ չեն եղել որևէ կերպ օգնել նրան: Դրանից կարճ ժամանակ անց նրա ամուսինը պետական բարձր պաշտոն ստացավ, ինչի արդյունքում Լիան ավելի շատ սկսեց վարանել իշխանություններից օգնություն խնդրելու հարցում:

Պաշտոնական պարտականությունների շրջանակում Լիայի ամուսինը պետք է այցելեր հարևան երկիր: Լիան և նրա որդին ուղեկցեցին նրան, քանի որ նա ասել է, որ չի վստահում, թե Լիան իրեն ինչպես կպահի իր բացակայության ժամանակ: Այս այցի ընթացքում և հատկապես դաժան ծեծից հետո, որի ժամանակ ամուսինը սպառնում էր իրենց մանկահասակ որդուն, Լիան փախավ տեղի ոստիկանական բաժանմունք և ապաստան հայցեց:

Որպես պաշտպանության աշխատակցի՝ Ձեզ խնդրել են խորհուրդ տալ հանձնաժողովին, որը որոշում է Լիայի հայցը այս երկու կետերի հետ կապված.

ա Եթե վերադարձնեն իր ծագման երկիր, Լիան վախենում է, որ իր ամուսնու կողմից հետագա ծեծի և սեռական ոտնձգությունների կենթարկվի: Արդյո՞ք նման գործողությունները կարող են հետապնդում լինել 1951 թվականի Կոնվենցիայում առկա փախստականի սահմանման իմաստով: Խնդրում ենք բացատրել Ձեր պատասխանը:

բ Արդյո՞ք կապ ունի, որ բռնությունը, որին նա ենթարկվում է, մասնավոր անձի կողմից է, որը չի գործում կառավարության հրահանգով: Խնդրում ենք բացատրել Ձեր պատասխանը:

գ Եթե դա հետապնդում է, կապվա՞ծ է 1951 թվականի Կոնվենցիայում նշված հիմքերից որևէ մեկի հետ:

Գլուխ 3-ի վարժությունների պատասխաններ

1 բ 1951 թվականի Կոնվենցիայում փախստականի սահմանումը փախստականի առաջին ընդհանուր սահմանումն էր, որը կարող էր ընդունվել ամբողջ աշխարհում պետությունների կողմից: Որպես այդպիսին, այն մնում է փախստականի հիմնական սահմանումը: Տարածաշրջանային փաստաթղթերում (Փախստականների մասին ԱՄԿ կոնվենցիա և Կարթագենի հռչակագիր) սահմանումները փոխարացնող են, այդ թվում՝ դրանք ընդգրկում են 1951 թվականի Կոնվենցիայի փախստականի սահմանման ձևակերպումները, բայց կիրառելի են միայն որոշակի տարածաշրջանի պետություններում: ՄԱԿ ՓԳՀ-ի կանոնադրությունը սահմանում է ՄԱԿ ՓԳՀ-ի մանդատը, սակայն, ի տարբերություն 1951թ. Կոնվենցիայի սահմանման, այն ուղղակիորեն պարտադիր չէ պետությունների համար:

2 գ Բացառման դրույթներն ընդգրկում են նաև այն մարդկանց, որոնք միջազգային պաշտպանության կարիք չունեն, ինչպիսիք են նրանք, ովքեր օգնություն են ստանում ՄԱԿ-ի մեկ այլ մարմնից: Այսպիսով, շատ պաղեստինցի փախստականներ կհայտնվեն բացառման դրույթների մեջ, քանի որ նրանք մտնում են ՄԱԿ-ի Մերձավոր Արևելքում Պաղեստինի փախստականների օգնության և աշխատանքների գործակալության շրջանակի մեջ: Այն պաղեստինցի փախստականները, որոնք գտնվում են ՄԱԿ-ի Մերձավոր Արևելքում Պաղեստինի փախստականների օգնության և աշխատանքների գործակալության գործունեության աշխարհագրական տարածքից դուրս, այնուամենայնիվ, բացառված չեն փախստականի կարգավիճակից՝ համաձայն 1951 թվականի Կոնվենցիայի (հետևաբար, Բ-ն ճիշտ չէ):

Տարբերակ Ա-ն սխալ է, քանի որ բացառման և դադարեցման դրույթները փախստականի կարգավիճակ ստանալու իրավունք չեն սահմանում այն անհատի համար, որը համապատասխանում է ներառման դրույթներին:

Տարբերակ Դ-ն սխալ է, քանի որ հետապնդման պատճառները (ռասա, կրոն և այլն) միմյանց բացառող չեն և հաճախ համընկնում են: Դրանցից առնվազն մեկը պետք է բավարարվի, որպեսզի անձը բավարարի ներառման կետերի պահանջները:

3 դ Հետապնդումը ներառում է ցանկացած գործողություն, որը լրջորեն խախտում է մարդու իրավունքները: Դաժան խտրականությունը զբաղվածության հնարավորությունների ոլորտում կարող է որոշակի հանգամանքներում հետապնդում համարվել, բայց պարզապես վատ տնտեսական միջավայրում ապրելը ոչ: Հետապնդումը սահմանված չէ 1951 թվականի Կոնվենցիայում, սակայն մարդու իրավունքների պայմանագրերում պարունակվող դրույթները ուղղորդում են տրամադրում գնահատելու, թե արդյոք որոշակի արարքը հետապնդում է:

Պարտադիր չէ, որ հետապնդումը իրականացվի կառավարության պատվերով գործող մարդկանց կողմից: Երբ կառավարությունն ի վիճակի չէ կամ չի ցանկանում կանխել մասնավոր անձանց կողմից հետապնդումները, կամ երբ նա հանդուրժում կամ ընդունում է նման վարքագիծը, այդ վարքագիծը նույնպես կարող է համարվել հետապնդում: Այն հայտնի է որպես հետապնդում ոչ պետական դերակատարների կողմից:

- 4 **Միալ** Թեև շատ դեպքերում փախստականները լքել են իրենց հայրենիքը՝ վախենալով հետապնդումից, հնարավոր է նաև, որ հետապնդման վախը ծագի այն բանից հետո, երբ ինչ-որ մեկը լքել է իր հայրենիքը այլ պատճառներով: Օրինակ՝ անձը կարող է տեղափոխվել արտերկիր՝ սովորելու և հետո պարզել, որ ծագման երկրում քաղաքական փոփոխությունները նշանակում են, որ նա այժմ գտնվում է վերադարձի դեպքում հետապնդման ենթարկվելու վտանգի տակ: Այդպիսի անձինք կոչվում են փախստականներ:
- 5 **դ** Դադարեցումը կարող է տեղի ունենալ միայն այն դեպքում, երբ անհատն այլևս միջազգային պաշտպանության կարիք չունի: Դադարեցման կիրառման համար անհատը նախ պետք է ճանաչված լինի որպես փախստական, հակառակ դեպքում փախստականի կարգավիճակը չի կարող դադարեցվել: Դադարեցումը կարող է առաջանալ փախստականի վարքագծի և/կամ ծագման երկրում հանգամանքների փոփոխության պատճառով: Հետևաբար, վերջին դեպքում այն կարող է կիրառվել մեծ թվով փախստականների նկատմամբ, այսինքն՝ խմբակային հիմունքներով: Դադարեցումը տեղին չէ, սակայն, եթե պահպանվում է պաշտպանության շարունակական անհրաժեշտությունը:
- 6 **բ** Միայն Փախստականների մասին ԱՄԿ կոնվենցիան է իրավաբանորեն պարտադիր: Երկու փաստաթղթերն էլ պարունակում են փախստականի սահմանում, որը լրացնում է 1951 թվականի Կոնվենցիայում տրված սահմանմանը և ներառում է համատարած բռնությունից փախչող մարդկանց: Դրանք երկուսն էլ տարածաշրջանային գործիքներ են:
- 7 **գ** Փախստականների հարցերով ՄԱԿ ՓԳՀ-ի մանդատը բխում է նրա կանոնադրությունից, ինչպես նաև Գլխավոր ասամբլեայի և Տնտեսական և սոցիալական խորհրդի բանաձևերից: Թեև Կանոնադրությունը պարունակում է փախստականի սահմանում, որը նման է 1951 թվականի Կոնվենցիայի սահմանմանը, հետագա բանաձևերը ընդլայնել են սահմանումը՝ ներառելով այն մարդկանց, որոնք փախչում են անխտիր բռնությունից, ինչպես օրինակ՝ նրանք, ովքեր կհամապատասխանեն փախստականների մասին տարածաշրջանային փաստաթղթերի լայն սահմանումներին: Հետևաբար, Կանոնադրությունը չի պարունակում փախստականների համապարփակ սահմանում ՄԱԿ ՓԳՀ-ի մանդատի նպատակներով: Բացի այդ, ՄԱԿ ՓԳՀ-ի մանդատը կախված չէ որևէ կոնկրետ երկրում կիրառելի փախստականների սահմանումներից:

- 8 Ճիշտ** Միջազգային պաշտպանության համար իրենց առաջնային պատասխանատվության շրջանակում պետությունները հիմնականում պատասխանատու են իրենց տարածքում գտնվող այն անձանց նույնականացման համար, որոնք նման պաշտպանության կարիք ունեն:
- 9 Միայն** Նույնիսկ այն դեպքում, երբ ՄԱԿ ՓԳՀ-ն, անհրաժեշտության դեպքում, պետք է իրականացնի փախստականի կարգավիճակի որոշում, միջազգային պաշտպանության չափանիշներին համապատասխան փախստական ճանաչված անձանց հետ վարվելու պատասխանատվությունը կրում է այն պետությունը, որտեղ նրանք գտնվում են: ՄԱԿ ՓԳՀ-ի դերն է կոչ անել շահագրգիռ պետությանը կատարել փախստականների նկատմամբ ստանձնած պարտավորությունները և աջակցել նրանց պաշտպանություն և օգնություն ցուցաբերելու ջանքերին:
- 10 Բ** Ջինվորը, որը ժամանակավորապես հանգստանում է ակտիվ ծառայությունից, քաղաքացիական անձ չէ և, հետևաբար, չի կարող լինել փախստական: Ի հակադրություն, քրեական անցյալ ունենալը անպայմանորեն անձին չի զրկի փախստականի կարգավիճակից, եթե տվյալ անձը փախչում է հետապնդումից և ոչ թե պատժից, և նա չի կատարել բացառվող արարք:

Դեպք Բ

Ո՞ր միջազգային փաստաթուղթն է պարունակում փախստականի կիրառելի սահմանումը:	1951 թվականի Կոնվենցիան, քանի որ Բեռլինում ղրա կողմ է: Ալֆաստանի պարտավորությունները, եթե այդպիսիք կան, փախստականների վերաբերյալ փաստաթղթերի համաձայն, անտեղի են:
Ստորև թվարկե՛ք ներառելու համար անհրաժեշտ տարրերը և հաշվի առեք, թե արդյոք դրանցից յուրաքանչյուրը առկա է.	
ա Հիմնավոր երկյուղ	Գնահատելու համար, թե արդյոք առկա է սուբյեկտիվ տարրը՝ երկյուղը, Լուիսը պետք է հարցազրույց անցնի, սակայն տվյալ փաստերի հիման վրա նա կարծես թե վախենում է: Դա հիմնավոր է՝ հաշվի առնելով նրա ընտանիքի անդամների սպանությունը ազգամիջյան/քաղաքական հակասությունների և նրան հասցված սպառնալիքների ֆոնին: Կան օբյեկտիվ պատճառներ, թե ինչու է նա վախենում իր անվտանգության համար:

բ Հետապնդում	Հաշվի առնելով հանգամանքները՝ մտավախություն կա սպանության կամ ֆիզիկական բռնության ենթարկվելու մասին: Թեև հետապնդման պաշտոնական սահմանում չկա, այն բաղկացած է մարդու իրավունքների լուրջ խախտումներից կամ այլ լուրջ վնասներից: Այն գործողությունները, որոնցից նա վախենում է, մտնում են այս հասկացությունների շրջանակի մեջ: Պարտադիր չէ, որ հետապնդումները, որոնցից նա վախենում է, լինեն կառավարության վերահսկողության տակ գտնվող մարդկանց կողմից: Դրանք կարող են լինել իշխանամետ հարևաններից կամ հակակառավարական պարտիզաններից: Այնուամենայնիվ, քանի որ իշխանությունները կարծես թե չեն կարողանում պաշտպանել նման ոչ պետական դերակատարների գործողություններից, սա, այնուամենայնիվ, հետապնդում է:
գ Կոնվենցիայի հինգ հիմքերից մեկը (օրինակ՝ ռասայական, կրոնական և այլն)	Հետապնդումը կարող է պայմանավորված լինել Կոնվենցիայի՝ մեկից ավելի հիմքերով: Լուիսի՝ էթնիկ փոքրամասնության անդամ լինելը էական նշանակություն ունի: Թեև նա չունի քաղաքական հայացքներ, նրան թյուրիմացաբար կարելի էր վերագրել իշխանամետ և հակաիշխանական քաղաքական հայացքներ: Բացի այդ, քաղաքական կարծիք չունենալը կարող է ընկալվել որպես քաղաքական դիրքորոշում:
դ Քաղաքացիության/մշտական բնակության երկրից դուրս:	Լուիսը գտնվում է իր ծագման երկրից դուրս:
ե Չի կարող կամ չի ցանկանում օգտվել այդ Պետության պաշտպանությունից կամ	Նա չկարողացավ պաշտպանություն ստանալ իշխանություններից, և չվերադառնալու պատճառները

վերադառնալ այնտեղ:	հիմնված են հետապնդման վախի վրա:
Ներառման դրույթները բավարարված են:	Այո
Եթե այո, կա՞ն հիմքեր փախստականի կարգավիճակը մերժելու կամ նման կարգավիճակը դադարեցնելու համար:	Բացառման դրույթներից ոչ մեկը տեղին չէ, ոչ էլ դադարեցումը կիրառելի է:
Լուիսը փախստակա՞ն է:	Այո

Դեպք Գ

Ո՞ր փաստաթուղթն է պարունակում փախստականի կիրառելի սահմանումը:	Որևէ միջազգային փաստաթղթի բացակայության դեպքում, որին Սուրիտանիան կողմ է, կամ փախստականների ազգային սահմանման բացակայության դեպքում, ՄԱԿ ՓԳՀ-ի մանդատով նախատեսված սահմանումը տեղին է: Այն հանդիպում է Կանոնադրության, ինչպես նաև Գլխավոր ասամբլեայի և Տնտեսական և սոցիալական խորհրդի բանաձևերում: Կանոնադրության սահմանումը, որը նման է 1951 թվականի Կոնվենցիայի սահմանմանը, կարծես կիրառելի է այստեղ, այլ ոչ թե ընդլայնված սահմանումը, որն առկա է հետագա բանաձևերում, որոնք վերաբերում են քաղաքացիական պատերազմի հանգամանքներին և այլն:
Ստորև թվարկե՛ք ներառելու համար անհրաժեշտ տարրերը և հաշվի առեք, թե արդյոք դրանցից յուրաքանչյուրը առկա է:	
ա Հիմնավոր երկյուղ	Մայան ակնհայտորեն վախենում է, թե ինչ կարող է պատահել իր վերադարձի դեպքում: Սա հիմնավոր է թվում՝ հաշվի առնելով նրա փախուստի հանգամանքները, նրա հանդեպ վերաբերմունքը քաղաքական գործունեության պատճառով և մարդու

	իրավունքների ընդհանուր մթնոլորտը Լուզիտանիայում:
բ Հետապնդում	Նրա ազատագրվումը ավելի շուտ հալածանք էր, քան օրինական հետապնդում/պատիժ, քանի որ դա արդար քրեական գործընթացի արդյունք չէր, և արարքը, որի համար նրան դատապարտվել էին, հավանաբար խախտում էր Մայայի մարդու իրավունքները:
գ Կոնվենցիայի հինգ հիմքերից մեկը	Այստեղ տեղին է քաղաքական կարծիքը:
դ Քաղաքացիության/մշտական բնակության երկրից դուրս	Առկա է
ե Չի կարող կամ չի ցանկանում օգտվել այդ պետության պաշտպանությունից կամ վերադառնալ այնտեղ:	Առկա է
Ներառման դրույթները բավարա՞րված են:	Այո
Եթե այո, կա՞ն հիմքեր փախստականի կարգավիճակը մերժելու կամ նման կարգավիճակը դադարեցնելու համար:	Նրա փախուստի ընթացքում բռնի պայքարի պատճառով առաջ է գալիս այն հարցը, թե արդյոք կարող է կիրառվել 1Զ հոդվածի բացառման դրույթը: Երեք հիմքերից ամենաարդիականը 1Զ հոդվածի բ) կետն է՝ պատասխանատվություն ծանր ոչ քաղաքական հանցագործության համար: Այս դրույթը, ինչպես բոլոր բացառման դրույթները, պետք է մեկնաբանվի սահմանափակող իմաստով:
	Լրացուցիչ ուղղորդում կարելի է գտնել <i>Միջազգային պաշտպանության վերաբերյալ թիվ 5 ուղեցույցում</i> : Քննարկվող գործոնները ներառում են. ▪ Հանցագործությունը քաղաքակա՞ն է, թե՞ ոչ քաղաքական: ▪ Արդյո՞ք այն լուրջ է իր բնույթով: ▪ Արդյո՞ք բացառման հետևանքները գերազանցում են հանցագործության ծանրությունը: Այս դեպքում, թվում է, թե դա լուրջ հանցագործություն է, քանի որ այն ներառում է բռնություն անձի նկատմամբ,

	որը հանգեցրել է մշտական վնասվածքի: Ինչ վերաբերում է հանցագործության քաղաքական բնույթին, անհրաժեշտ է դիտարկել Մայայի գործողությունների դրդապատճառը և համատեքստը, ինչպես նաև դրանց համաչափությունը ցանկացած քաղաքական նպատակին: Բանտից խուսափելու համար պահակին վիրավորելը, նույնիսկ այն դեպքում, երբ պատիժն անհիմն է, կարծես թե քաղաքական հանցագործություն չէ: Բացառման դրույթների՝ <i>Կանոնադրության</i> մարդասիրական նպատակներին համապատասխան մեկնաբանությունն ապահովելու համար դրանք պետք է կիրառվեն իրենց նպատակներին համաչափ ձևով: Հետևաբար, պետք է գնահատական տրվի, թե արդյոք այս դեպքում բացառման հետևանքները գերակշռում են կատարված ծանր, ոչ քաղաքական հանցագործության ծանրության նկատմամբ: Այսպիսով, պետք է հաշվի առնել ցանկացած հետապնդման բնույթը, որին կարող է հանդիպել Մայան վերադառնալիս, ինչպես նաև այն փաստը, որ նրա կատարած բռնությունն անհիմն չէր, այլ ավելի շուտ արարք, որը նպատակաուղղված էր անարդար բանտարկությունից փախչելուն:
--	--

Դեպք Դ

ա Արդյոք Յուսուֆը վախենո՞ւմ է հետապնդումից: Այլ կերպ ասած, վերադառնալուց հետո նա կենթարկվի՞ օրինական հետապնդման՝ զորակոչից խուսափելու համար, թե հալածանքի՝ իր քաղաքական համոզմունքների պատճառով:

բ Նախ՝ Կամիբիայի իշխանությունների պրակտիկան՝ կապված համոզմունքի հիմնավորմամբ զինծառայությունից հրաժարվելու հետ: Արդյո՞ք Յուսուֆը հնարավորություն ուներ որևէ տեսակի ոչ զինվորական ծառայություն իրականացնելու՝ այդպիսով պաշտպանելով իր իրավունքները և պետության օրինական ակնկալիքը, որ նա որոշակի ծառայություններ է մատուցում հանրային բարօրության համար, թե՞ նա ինքնաբերաբար կենթարկվեք քրեական պատժի: Երկրորդ՝ հակամարտությունը, որին պետք է մասնակցեր Յուսուֆը, ընթանո՞ւմ է միջազգային մարդասիրական իրավունքի համաձայն, օրինակ՝ քաղաքացիական անձինք պաշտպանվա՞ծ են բռնությունից:

Դեպք Ե

Այս գործով բարձրացված առանցքային հարցը բացառումն է: Եթե ներառման դրույթները բավարարվեն, դեռ հարց կլինի, թե արդյոք 1951 թվականի Կոնվենցիայի 12 հոդվածը կիրառելի է այս հանգամանքներում: Օդանավակայանի պայթյունը, որի համար պատասխանատու էր Փոլը, շատերի կողմից կհամարվեր որպես «ահաբեկչական» գործողություն, թեև ահաբեկչության միջազգայնորեն ընդունված սահմանում չկա, ոչ էլ բացահայտորեն նշված է 1951 թվականի Կոնվենցիայում: Այնուամենայնիվ, ռմբակոծությունը կարող է որակվել որպես «լուրջ ոչ քաղաքական հանցագործություն»՝ համաձայն 1951 թվականի Կոնվենցիայի 12 հոդվածի «բ» կետի:

Դեպք Զ

ա Այո, ֆիզիկական և սեռական ոտնձգությունը կարող է հավասարագոր լինել հետապնդմանի: Բռնության դրդապատճառը և ձևը, որից վախենում են այս դեպքում, դա դարձնում են գենդերային հետապնդում:

բ Իշխանությունների հսկողության տակ չգտնվող մասնավոր անձանց գործողությունները կարող են որակվել որպես հետապնդում, եթե ցույց տրվի, որ պետությունը կամ ներում է, կամ հանդուրժում է նման վարքագիծը, կամ չի ցանկանում կամ ի վիճակի չէ կանխել այն: Այս դեպքում պարզ է, որ Լիայի երկրի ոստիկանությունը ընտանեկան բռնությունը հանցագործություն չի համարում, և այդ պատճառով իշխանությունները կամ ներում են, կամ հանդուրժում են նման պահվածքը: Այս տեսակետի ապացույցն է նաև նրա ծնողների վերաբերմունքը, ինչը ենթադրում է, որ այս հասարակությունը, ընդհանուր առմամբ, կարծում է, որ կանայք պետք է ենթարկվեն իրենց ամուսիններին, ընդհուպ մինչև ֆիզիկական և սեռական բռնությունը ընդունելու աստիճան: Հետևաբար, այս դեպքում Լիայի ամուսնու գործողությունները կարող են հավասարագոր լինել հետապնդման՝ 1951 թվականի Կոնվենցիայի փախստականի սահմանման մեջ պարունակվող չափանիշներին համապատասխան:

գ Լիան սոցիալական խմբի անդամ է, որը բաղկացած է կանանցից, որոնք մերժում են իրենց հասարակության խիստ տեսակետերը կանանց ստորադաս դերի վերաբերյալ: Քաղաքական կարծիքը նույնպես, հնարավոր է, տեղին է, քանի որ Լիան կարող է դիտվել որպես կանանց իրավունքների վերաբերյալ քաղաքական համոզմունքներ կրող անձ, որոնք հակասում են իր ամուսնուն և հասարակությանը, որտեղ նա ապրում է:

Գլուխ 4

ՄԱԿ ՓԳՀ-ի խնդրո առարկա անձինք



Հիմնական նպատակներ

Հասկանալ, թե ով է վերադարձողը, և ՄԱԿ ՓԳՀ-ի դերը վերադարձողների հետ կապված հարցերում:

Ճանաչել, թե ինչ է ապաքաղաքացիությունը, այդ թվում՝ դրա պատճառներն ու կապը տեղահանման հետ:

Հասկանալ, թե ինչպես են Քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի մասին 1954թ. Կոնվենցիան և Ապաքաղաքացիության կրճատման մասին 1961թ. Կոնվենցիան օգնում դրանից տուժած անձանց:

Հասկանալ ՄԱԿ ՓԳՀ-ի հատուկ մանդատը՝ ապաքաղաքացիության հետ կապված:

Հասկանալ, թե ովքեր են ներքին տեղահանված անձինք, և թե ինչով են նրանք տարբերվում փախստականներից:

Ծանոթանալ ներքին տեղահանման հետ առնչվող միջազգային դերակատարներին և այն պայմաններին, որոնցում ներգրավվում է ՄԱԿ ՓԳՀ-ն:

Տեղյակ լինել Ներքին տեղահանման վերաբերյալ ուղղորդող սկզբունքների մասին:

Այս գլխում դիտարկվում են մյուս խմբերը, որոնց համար ՄԱԿ ՓԳՀ-ն նույնպես իր մանդատի ներքո ունի պարտականություններ՝ վերադարձողներ, քաղաքացիություն չունեցող անձինք և ներքին տեղահանված անձինք: Քննարկվում են նաև այն սկզբունքները, որոնք կարգավորում են այդ անձանց նկատմամբ վերաբերմունքը, որոնք հավաքականորեն կոչվում են «խնդրո առարկա անձինք», և ՄԱԿ ՓԳՀ-ի մանդատը այս խմբերից յուրաքանչյուրի նկատմամբ:

4.1 Վերադարձողներ

Վերադարձողները նախկին փախստականներն են, որոնք ինքնակամ կամ կազմակերպված կերպով վերադառնում են իրենց ծագման երկրներ: Թեև փախստականների մեծ մասը կնախընտրեր վերադառնալ իրենց ծագման երկրները, հաճախ կան հսկայական խոչընդոտներ այս կայուն լուծմանը հասնելու համար, ներառյալ ծագման երկրում անապահով պայմանները: Ծագման երկրում պայմանների բարելավման պատասխանատվությունը հիմնականում պատկանում է այդ երկրի իշխանություններին, որոնք կարող են նաև դիմել միջազգային հանրության աջակցությանը: Ապաստան տվող երկրները սովորաբար ցանկանում են հնարավորինս արագ դուրսացնել կամավոր հայրենադարձությունը՝ փորձելով նվազեցնել իրենց ռեսուրսների և հասարակության վրա ճնշումը: Այնուամենայնիվ, նման նկատառումները չպետք է հանգեցնեն վաղաժամ վերադարձի (տես Գլուխ 7): Բոլոր փախստականներին պետք է հասանելի լինի ծագման երկրում տիրող իրավիճակի մասին հավաստի տեղեկատվություն, որպեսզի նրանք կարողանան ազատ և տեղեկացված որոշում կայացնել՝ վերադառնալու կամ չվերադառնալու մասին:

4.1.1 Իրավական դաշտը

1951թ. Կոնվենցիան հստակորեն չի անդրադառնում կամավոր հայրենադարձության կամ վերադարձի խնդրին, թեև Փախստականների մասին ԱՄԿ կոնվենցիան և Կարթագենի հռչակագիրը սահմանում են որոշակի նկատառումներ կամավոր հայրենադարձության վերաբերյալ: Հիմնական իրավական նկատառումներից մեկը մարդու իրավունքներին առնչվող միջազգային իրավական նորմերի համաձայն յուրաքանչյուր անձի իր երկիր վերադառնալու իրավունքն է: Այս երաշխիքը ներառված է Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 12-րդ հոդվածում: Մարդու իրավունքներին առնչվող միջազգային իրավական նորմերը սահմանում են վերաբերմունքի ստանդարտը, որին պետք է արժանանան վերադարձողները իրենց տուն վերադառնալիս: (Կամավոր հայրենադարձության իրավական դաշտի մասին լրացուցիչ տեղեկությունների համար տես Գլուխ 7-ը):

4.1.2 ՄԱԿ ՓԳՀ-ի դերը

- 5 Թեև ՄԱԿ ՓԳՀ-ի կանոնադրությունը սահմանում է կազմակերպության՝ կամավոր հայրենադարձությունը խթանելու և օժանդակելու պատասխանատվությունը, ավանդաբար համարվում էր, որ փախստականների հետ նրա աշխատանքը ավարտվում է այն բանից հետո, երբ փախստականները հատում են սահմանը՝ անցնելով իրենց ծագման երկրներ: Այնուամենայնիվ, ԳործԿումի եզրակացությունները 18 (XXXI) 1980թ., 40 (XXXVI) 1985թ., 74 (XLV) 1994թ. և 85 (XLIX) 1998թ. հաստատում են, որ ՄԱԿ ՓԳՀ օրինական հետաքրքրություն ունի վերադարձի հարցում, հետևաբար այնպիսի գործողությունները, ինչպիսիք են վերադարձողների մշտադիտարկումը, արդարացված են: ՄԱԿ ՓԳՀ-ի դերը վերադարձողների հետ աշխատելու հարցում հստակորեն նշվել է համաձայնագրերում, որոնք վերաբերում են փախստականների հատուկ իրավիճակներին: Օրինակ, Բոսնիա և Հերցեգովինայում խաղաղության ընդհանուր շրջանակային համաձայնագրի 7-րդ հավելվածը (1995 թ.) սահմանում է, որ ՄԱԿ ՓԳՀ-ն կամավոր հայրենադարձության գլխավոր գործակալությունն է և պատասխանատվություն է կրում վերադարձի պայմանների մշտադիտարկման համար: (Ավելի մանրամասն տեղեկությունների համար տես Գլուխ 7-ը վերադարձողներին օգնելու հարցումը ՄԱԿ ՓԳՀ-ի ներգրավվածության մասին):

5.1 Քաղաքացիություն չունեցող անձինք

Քաղաքացիություն չունեցող անձը նա է, ով չի համարվում որևէ պետության քաղաքացի: Քաղաքացիությունը այն իրավական կապն է անձի և պետության միջև, որի միջոցով տվյալ պետության կողմից պաշտպանվում են անհատի մարդու իրավունքները: Քաղաքացիություն չունեցող անձին կարող են զրկել քաղաքական իրավունքներից կամ բնակարանից կամ կրթությունից օգտվելու հնարավորությունից, թեև նա ծնվել և մեծացել է տվյալ երկրում:

Ապաքաղաքացիությունը կարող է առաջանալ մի շարք պատճառներով, այդ թվում՝

- Պետությունների տրոհումը փոքր երկրների,
- Կառավարությունները կամայականորեն զրկում են մարդկանց իրենց քաղաքացիությունից,
- Անձը կամովին հրաժարվում է իր քաղաքացիությունից՝ առանց նախապես այլ քաղաքացիություն ձեռք բերելու,
- Ամուսնությունը կամ դրա լուծարումը, այն իրավիճակներում, երբ դա ինքնաբերաբար ազդում է կողմերից մեկի քաղաքացիության վրա,
- Երեխայի ծնունդը գրանցել չկարողանալը, որի արդյունքում երեխան չի ունենում քաղաքացիություն ունենալու իր իրավունքն ապացուցելու միջոցներ,
- քաղաքացիություն չունեցող անձի երեխա լինելը,
- Քաղաքացիության կարգավիճակը որոշելիս ազգային պատկանելության, կրոնի կամ ռասայական պատկանելության վրա հիմնված խտրական գործելակերպեր:

Ապաքաղաքացիությունը ոչ միշտ է կառավարության քաղաքականության ենթադրյալ հետևանքը: Այն կարող է առաջանալ գործող օրենքների արդյունքում (դե յուրե) կամ այն պատճառով, որ քաղաքացիության իրավունքները գործնականում չեն ճանաչվում (դե ֆակտո):

Երեխաները հատկապես գտնվում են քաղաքացիություն չունենալու վտանգի տակ, հատկապես, եթե նրանց ծնողները խառը ծագում ունեն, կամ եթե նրանք ծնվել են այն երկրներում, որտեղ նրանց ծնողները օտարերկրացի են:

Ապաքաղաքացիության վտանգի տակ են նաև կանայք, հատկապես՝ քանի որ որոշ օրենսդրություններում իրենց կարգավիճակը կախված է ամուսնու կարգավիճակից: Թեև քաղաքացիություն չունեցող անձանց վերաբերյալ հաստատուն վիճակագրություն չկա, փորձագետների գնահատմամբ՝ ամբողջ աշխարհում կարող է լինել մինչև ինը միլիոն քաղաքացիություն չունեցող անձ:

Քաղաքացիություն չունեցող անձը կարող է փախստական լինել, եթե նրան հարկադրում են փախչել այն երկրից, որտեղ սովորաբար ապրում է հետապնդման հիմնավոր վախի պատճառով: Սա հստակորեն հաստատվում է 1951 թվականի Կոնվենցիայում փախստականի սահմանման ձևակերպմամբ: Իրականում քաղաքացիություն չունենալը կարող է տեղահանման պատճառ դառնալ, քանի որ իրենց պետության կողմից իրավազրկված անձինք կարող են իրենց նկատմամբ խտրականության պատճառով հարկադրված լինել հեռանալու:

5.1.1 Իրավական դաշտը

Քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի մասին կոնվենցիան (1954թ.) և *Ապաքաղաքացիության կրճատման մասին կոնվենցիան* (1961թ.) նպատակ ունեն նվազեցնելու ապաքաղաքացիության դեպքերը և ապահովելու, որ բոլոր քաղաքացիություն չունեցող անձինք ունենան օրինական ինքնություն և արժանանան մարդկային վերաբերմունքի: Թեև համեմատաբար քիչ պետություններ են այս պայմանագրերին մասնակցում, դրանցում պարունակվող սկզբունքները օգտակար ուղեցույց են բոլոր երկրների համար և կազմում են ՄԱԿ ՓԳՀ-ի աշխատանքի առանցքը քաղաքացիություն չունեցող անձանց մասով: Այս երկու պայմանագրերն էլ ոգեշնչված են *Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի* 15-րդ հոդվածով, որտեղ ասվում է. «Յուրաքանչյուր ոք ունի քաղաքացիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի կամայականորեն զրկել իր քաղաքացիությունից կամ զրկել իր քաղաքացիությունը փոխելու իրավունքից»:

Քաղաքացիություն չունեցող անձը 1954թ.-ի Կոնվենցիայում սահմանվում է որպես «...անձ, որը որևէ պետության կողմից չի համարվում քաղաքացի իր օրենսդրության համաձայն», սակայն չի ներառում ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից պաշտպանություն կամ օգնություն ստացող անձանց: 1954 թվականի Կոնվենցիան սահմանում է այն իրավունքները, որոնցից կարող են օգտվել քաղաքացիություն չունեցող անձինք իրենց բնակության երկրում, ինչպես որ 1951 թվականի Կոնվենցիան սահմանում է փախստականների իրավունքներն ու պարտականությունները: Քաղաքացիություն չունեցող անձանց մասին կոնվենցիան անդրադառնում է սեփականության իրավունքի,

դատարանների հասանելիության, պետական օգնության, աշխատանքի և հանրային կրթության հարցերին: Որոշ դեպքերում վերաբերմունքի ստանդարտը համարժեք է քաղաքացիներին. այլ դրույթների դեպքում վերաբերմունքի ստանդարտը նման է նույն հանգամանքներում գտնվող օտարերկրացիներին: Կոնվենցիան ձգտում է բարելավել քաղաքացիություն չունեցող անձանց կյանքի որակը՝ նրանց համար ապահովելով ավելի մեծ աստիճանի կայունություն, քան նրանք այլ կերպ կարող էին ունենալ:

1961 թվականի Կոնվենցիան նպատակ ունի նվազեցնելու ապագա ապաքաղաքացիության դեպքերը: Կոնվենցիայի համաձայն՝ մասնակից պետությունը համաձայնում է քաղաքացիություն չնորհել այն անձանց, որոնք այլապես քաղաքացիություն չէին ունենա, եթե նրանք նշանակալից կապ ունեն այդ երկրի հետ, օրինակ՝ եթե նրանք ծնվել են այդ երկրում կամ սերում են քաղաքացուց: 1961 թվականի Կոնվենցիան հիմնված է «իրական և գործուն կապի» հայեցակարգի վրա, որն օգտագործվում է շատ պետությունների կողմից իրենց օրենսդրության և պրակտիկայում՝ քաղաքացիությունը կարգավորող չափանիշները որոշելու համար:

5.1.2 ՄԱԿ ՓԳՀ-ի դերը

Թեև ՄԱԿ ՓԳՀ-ն միշտ պատասխանատվություն է կրել քաղաքացիություն չունեցող փախստականների համար, նրա ներգրավվածությունը այլ քաղաքացիություն չունեցող անձանց հարցում բխում է 1970-ական թվականների՝ Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի բանաձևերից, որոնք կազմակերպությանը վստահել են հատուկ պարտականություններ՝ համաձայն 1961թ. Կոնվենցիայի: *ԳործԿոմի թիվ 78 (XLVI) եզրակացության* և *1995թ. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 50/152 բանաձևի* արդյունքում ՄԱԿ ՓԳՀ-ն այժմ ունի ապաքաղաքացիության վերաբերյալ լայն, համաշխարհային մանդատ: Իրականում այն միակ միջազգային գործակալությունն է, որն ունի հատուկ գործառույթներ, որոնք ուղղված են քաղաքացիություն չունեցող անձանց: Նրա խնդիրները ներառում են.

- 1954 և 1961 թվականների Կոնվենցիաներին անդամակցելու խթանում,
- Իրավաբանական խորհրդատվության տրամադրում բոլոր շահագրգիռ պետություններին քաղաքացիության մասին օրենքների պատրաստման և իրականացման վերաբերյալ,
- Համագործակցություն պետությունների և այլ գործընկերների հետ՝ հեշտացնելու

ապաքաղաքացիության խնդիրների արագ բացահայտումն ու լուծումը,

- Պետական պաշտոնյաների և ՄԱԿ ՓԳՀ-ի աշխատակիցների վերապատրաստում ապաքաղաքացիության հարցերի վերաբերյալ,
- Ամբողջ աշխարհում ապաքաղաքացիության խնդրի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում և փոխանակում,
- Պարբերաբար հաշվետվության ներկայացում Գործադիր կոմիտեին այս ոլորտում իր գործունեության մասին:

5.2 Ներքին տեղահանված անձինք

Փախստականների նման, ներքին տեղահանված անձինք ստիպված են եղել լքել իրենց տները, սակայն այլ երկիր անցնելու փոխարեն նրանք պաշտպանություն են փնտրում իրենց ծագման կամ բնակության երկրի ներսում: Թե՛ փախստականների, թե՛ ներքին տեղահանվածների տեղաշարժը հաճախ պայմանավորված է մարդու իրավունքների վատ իրավիճակով կամ երկրի որոշակի հատվածում ընթացող հակամարտությամբ: Մարդիկ կարող են նաև տեղահանվել իրենց երկրներում էկոլոգիական կամ բնական աղետների պատճառով, ինչպիսիք են երաշտը կամ փոթորիկները: Աշխարհում ներքին տեղահանվածների թիվը կտրուկ աճել է վերջին տասնամյակում և այժմ ավելի քան 25 միլիոն է:

Փաստորեն, չկա որևէ միջազգային պայմանագիր, որը սահմանում է ներքին տեղահանված անձին կամ կարգավորում է ներքին տեղահանվածների նկատմամբ վերաբերմունքը հիմնականում այն պատճառով, որ նրանք քաղաքացիներ են կամ այլ բնակիչներ, որոնք մնում են իրենց ծագման երկրի տարածքում: Նախկինում ՄԱԿ ՓԳՀ-ն լիազորված է եղել Գլխավոր ասամբլեայի կողմից՝ բացառիկ հիմունքներով օգնություն ցուցաբերելու ներքին տեղահանված անձանց որոշակի խմբի: Գրասենյակը նաև լիազորված էր օգնություն տրամադրելու տեղահանվածներին, որոնք գտնվում էին այն շրջաններում, որտեղ վերադարձները հայրենադարձվել էին: Ի տարբերություն քաղաքացիություն չունեցող անձանց, այնուամենայնիվ, ՄԱԿ ՓԳՀ-ին ՆՏԱ-ների համար լայն մանդատ չի տրվել:

Ավանդաբար, ներքին տեղահանված անձինք համարվում են տվյալ երկրի կառավարության պատասխանատվությունը. իրականում այլ պետությունների կամ կազմակերպությունների ցանկացած ներգրավվածություն դիտարկվել է որպես չհիմնավորված միջամտություն տվյալ երկրի գործերին: Հաշվի առնելով, որ ներքին տեղահանումը հաճախ պետական ռեպրեսիվ քաղաքականության արդյունք է, դա նշանակում է, որ միլիոնավոր ներքին տեղահանվածների մարդու իրավունքները անպաշտպան են: Վերջին տարիներին մարդասիրական այս խնդրի աճող ճանաչումը և պետության ինքնիշխանության հայեցակարգի նկատմամբ վերաբերմունքի փոփոխությունը հանգեցրել են ներքին տեղահանվածների համար ավելի մեծ միջազգային գործողությունների անհրաժեշտության ճանաչմանը:

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակի խնդրանքով 1992թ.-ին նշանակվել է Ներքին տեղահանվածների հարցերով ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ դոկտոր Ֆրենսիս Դենգը: Հատուկ ներկայացուցիչը աշխատում է չորս հիմնական ոլորտների վրա՝ նորմատիվ դաշտի մշակում, արդյունավետ ինստիտուցիոնալ շրջանակների խթանում միջազգային, տարածաշրջանային և ազգային մակարդակներում, երկրների առաքելություն և կոնկրետ հուզող հարցերի շուրջ շարունակական հետազոտություն: Նա հրաժարական տվեց 2004 թվականին, և Վալտեր Բելինը նշանակվեց Ներքին տեղահանվածների մարդու իրավունքների հարցերով Գլխավոր քարտուղարի ներկայացուցիչ:

5.2.1 Իրավական դաշտը

Հիմք ընդունելով մարդու իրավունքներին առնչվող միջազգային իրավական նորմերի, մարդասիրական իրավունքի և փախստականներին առնչվող իրավական նորմերի համապատասխան սկզբունքները՝ հատուկ ներկայացուցիչը գլխավորեց գործընթացը, որը հանգեցրեց Ներքին տեղահանման վերաբերյալ ուղեցույցի սկզբունքների ձևակերպմանը (1998 թ.): Սրանք **սահմանում են ներքին տեղահանվածներին** որպես

«...անձինք կամ անձանց խմբեր, որոնք հարկադրված կամ պարտավորված են եղել փախչել կամ լքել իրենց տները կամ մշտական բնակության վայրերը, մասնավորապես՝ զինված բախումների, ընդհանրացված բռնության իրավիճակների հետևանքով կամ դրանց

*հետևանքներից խուսափելու նպատակով,
մարդու իրավունքների խախտումների կամ
բնական կամ մարդածին աղետների հետևանքով,
և ուրքեր չեն հատել միջազգայնորեն ճանաչված
պետական սահմանը»:*

Թեև Ուղղորդող սկզբունքները պարտադիր իրավաբանական ուժ չունեն, սկզբունքներից շատերն արտացոլում են պետությունների՝ միջազգային պայմանագրերով և սովորույթային իրավունքով սահմանված պարտավորությունները: Հետևաբար, դրանք ամենահեղինակավոր հայտարարությունն են, որը սահմանում է այն չափանիշները, որոնք պետք է կիրառվեն կառավարությունների և այլ համապատասխան դերակատարների կողմից, ինչպիսին է ՄԱԿ ՓԳՀ-ն՝ արձագանքելու ներքին տեղահանված անձանց ծանր վիճակին:

5.2.2 Միջգործակալական համագործակցություն

Թեև Հատուկ ներկայացուցիչը պատասխանատու է ներքին տեղահանվածների կարիքների և նրանց վերաբերմունքը կարգավորող սկզբունքների բացահայտման համար, նա չունի որևէ գործառնական մանդատ: Նրանց պաշտպանության համար առաջնային պատասխանատվությունը մնում է տուժած երկրի կառավարության վրա: Ներքին տեղահանվածների անունից աշխատելու համար ՄԱԿ-ի նոր կազմակերպություն ստեղծելու կամ գոյություն ունեցող մարմնին նման մանդատ տալու փոխարեն՝ մարդասիրական, մարդու իրավունքների և զարգացման դերակատարների լայն շրջանակ այժմ արձագանքում է ներքին տեղահանվածների կարիքներին՝ իրենց մանդատին և փորձին համապատասխան: Այս համագործակցային մոտեցումը գործարկվել է ինչպես ՄԱԿ գլխավոր շտաբում, այնպես էլ երկրի գրասենյակներում:

- Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարը խնդրել է, որ Արտակարգ իրավիճակներում օգնության համակարգողը, որը նաև Մարդասիրական աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարն է, դաշտային աջակցություն ցուցաբերի ներքին տեղահանվածների հետ կապված իրավիճակներում, ներառյալ՝ բանակցություններ վարել նման բնակչության համար, պաշտպանել և աջակցել նրանց, ռեսուրսների մոբիլիզացում և ներքին տեղահանվածների վերաբերյալ գլոբալ տեղեկատվական համակարգի գործարկում,

- Միավորված ազգերի կազմակերպության միջգերատեսչական մշտական հանձնաժողովի աշխատանքային խումբը, որը նախագահում էր Արտակարգ օգնության համակարգողը, խորհրդակցություններ է անցկացրել ներգրավված տարբեր դերակատարների միջև պարտականությունների բաշխման շուրջ և համաձայնեցրել է ընդհանուր քաղաքականությունը, որը պետք է ընդունվի ներքին տեղահանվածների համար մարդասիրական ջանքերում,
- Արտակարգ իրավիճակներում օգնության համակարգողը Մարդասիրական աշխատանքների համակարգման գրասենյակի շրջանակներում ստեղծել է ներքին տեղահանման հարցերով միջգերատեսչական ստորաբաժանում՝ խթանելու ներքին տեղահանման հարցում միջազգային արձագանքման համակարգի բարելավումները և երկրների հատուկ իրավիճակներին նպատակային աջակցություն ցուցաբերելու,
- Կանոնավոր խորհրդակցություններ են անցկացվում ներքին տեղահանման համար պատասխանատուների միջև՝ Ներքին տեղահանման հարցերով ավագ միջգերատեսչական ցանցի շրջանակներում, որը գործում է որպես հարակից հարցերի վերաբերյալ խորհրդատվական և խորհրդակցային մարմին,
- Պաշտպանության և աջակցության գործողությունների համակարգման պատասխանատվությունը տրվել է Միավորված ազգերի կազմակերպության մշտական համակարգողին և/կամ մարդասիրական հարցերի համակարգողին, որը սերտորեն խորհրդակցում է երկրների միջգերատեսչական թիմերի հետ:

5.2.3 ՄԱԿ ՓԳՀ-ի դերը

Թեև ՄԱԿ ՓԳՀ-ի ներգրավվածությունը ներքին տեղահանված անձանց հարցում տարիների ընթացքում տարբեր է եղել, կազմակերպությունը մասնակցում է վերը նկարագրված միջգերատեսչական ջանքերին: Նրա քաղաքականությունը, որը հիմնված է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից տարբեր բանաձևերում սահմանված միջգերատեսչական համագործակցության մոտեցման և պայմանների վրա, ներքին տեղահանվածներին պաշտպանելն ու աջակցելն է միայն այն դեպքում, երբ

- Այդ օգնությունը պատվիրվել է/լիազորվել է Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարի կողմից,
- Կա համաձայնություն այն պետության ազգային

մարմինների կողմից, որտեղ գտնվում են տեղահանված անձինք,

- Առկա են համապատասխան ռեսուրսներ,
- Համարժեքորեն դիտարկվել են քաղաքականության նկատառումները, ինչպիսիք են փախստականների պաշտպանության գործողությունների վրա ազդեցությունը, այլ գործակալությունների գործառնությունների իրականացման անհրաժեշտությունը և իրավիճակի կարևորությունը միջազգային հանրության համար,
- Քննարկվել են գործառնական նկատառումները, ինչպիսիք են անձնակազմի անվտանգությունը և տեղահանված անձանց հասանելիությունը:

5.3 Այլ անհատներ

Երբեմն ՄԱԿ ՓԳՀ-ն, հումանիտար նկատառումներից ելնելով և իր մանդատի հիման վրա, ներգրավվել է փախստականներից կամ այլ խնդրո առարկա անձանցից բացի այլ անձանց հետ աշխատանքներում, հատկապես, երբ անհրազորժեղի է եղել տարբերակել այդ անձանց կազմակերպության մանդատի տակ գտնվող անձանցից: Օրինակ, ՄԱԿ ՓԳՀ-ն օգնել է տեղի բնակիչներին, որոնք երբեք չեն տեղահանվել, բայց ապրում են վերադարձողների և այն մարդկանց կողքին, որոնք վերադառնում են այն տարածքները, որտեղ նրանք փոքրամասնության անդամներ են, որոնց նորից տեղահանում է սպառնում:

Ամփոփում

Վերադարձողներ

Վերադարձողները նախկին փախստականներն են, որոնք կամովին

վերադարձել են հայրենիք:

Մարդու իրավունքներին առնչվող իրավական նորմերը՝

- երաշխավորում են անձի՝ հայրենիք վերադառնալու իրավունքը,
- սահմանում են վերադարձի դեպքում վերաբերմունքի չափանիշները:

ՄԱԿ ՓԳՀ-ի օրինական մտահոգությունը վերադարձի հետևանքների վերաբերյալ, և, հետևաբար, վերադարձողներին մշտադիտարկելու և աջակցելու հարցում նրա դերը հաստատվում է Գործադիր կոմիտեի եզրակացություններում:

Ապաքաղաքացիություն

Քաղաքացիություն չունեցող անձը՝

- Նա է, ով չի համարվում որևէ պետության քաղաքացի,
- Հետևաբար, իրավունք չունի օգտվելու այն իրավունքներից, որոնք սովորաբար կապված են քաղաքացիության հետ,
- Կարող է նաև լինել փախստական՝ կախված իր հանգամանքներից:

Քաղաքացիություն չունեցող անձանց հետ կապված հիմնական միջազգային փաստաթղթերն են՝

- *Քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի մասին կոնվենցիան (1954 թ.)*,
- *Ապաքաղաքացիության կրճատման մասին կոնվենցիան (1961 թ.)*:

ՄԱԿ ՓԳՀ-ն միակ միջազգային գործակալությունն է, որն ունի քաղաքացիություն չունեցող անձանց օգնելու ընդհանուր մանդատ, որը հիմնականում բխում է Գլխավոր ասամբլեայի բանաձևերից: Ղեկավարվելով վերը նշված պայմանագրերով՝ այն գործում է.

- Ապահովել քաղաքացիություն չունեցող անձանց իրավունքների հարգումը,
- Քաղաքացիություն չունենալը կանխելու համար, օրինակ՝ խրախուսելով պետություններին քաղաքացիություն շնորհել նրանց, ովքեր զգալի կապ ունեն իրենց տարածքի հետ, ովքեր հակառակ դեպքում կարող են քաղաքացիություն չունենալ:

Ներքին տեղահանված անձինք

Ներքին տեղահանված անձինք այն մարդիկ են, որոնք լքել են իրենց տունը և տեսափոխվել իրենց մշտական բնակության երկրի մեկ այլ մաս զինված բախումների, ընդհանրացված բռնության իրավիճակների, մարդու իրավունքների խախտումների կամ բնական կամ մարդածին աղետների հետևանքով:

Հաճախ նույնական իրավիճակների արդյունքում են առաջանում և՛ ներքին

տեղահանվածները, և՛ փախստականները: Երկու խմբերի տարբերությունն այն է, որ փախստականները փախչում են այլ երկիր:

Ներքին տեղահանվածների վերաբերյալ ՄԱԿ-ի ուղեցույց սկզբունքները (1998թ.) սահմանում են ներքին տեղահանվածների անունից միջազգային գործողությունների չափանիշները: ՄԱԿ ՓԳՀ-ն մասնակցում է ներքին տեղահանվածներին վերաբերող հարցերի շուրջ միջգերատեսչական համագործակցությանը և, որոշակի պայմաններում, միջգերատեսչական ջանքերին, մասնավորապես՝ պաշտպանելու և աջակցելու ներքին տեղահանված անձանց ՄԱԿ-ի Արտակարգ իրավիճակներում օգնության համակարգողի ղեկավարությամբ:

Լրացուցիչ ընթերցանություն

Վերադարձողներ

Կամավոր հայրենադարձության մասին ԳործԿում-ի Եզրակացություններ թիվ 18 (XXXI) 1980 թ. և թիվ 40 (XXXVI) 1985 թ.

Փախստականների միջազգային պաշտպանության մասին ԳործԿում-ի եզրակացություններ թիվ 74 (XLV) 1994թ. և թիվ 85 (XLIX) 1998թ.

Ապաքաղաքացիություն

ՄԱԿ ՓԳՀ, Փախստականներին և տեղահանվածներին վերաբերող միջազգային փաստաթղթերի և այլ իրավական տեքստերի ժողովածու, (հատոր I), 1995 թ.

Ապաքաղաքացիություն կանխարգելման և կրճատման մասին ԳործԿում-ի եզրակացություն թիվ 78 (XLVI) 1995 թ.

ՄԱԿ ՓԳՀ, ՄԱԿ ՓԳՀ-ի գործունեությունը ապաքաղաքացիության ոլորտում. առաջընթացի մասին զեկույց (EC/53/SC/CRP.11), 2003 թ. հունիս

ՄԱԿ ՓԳՀ, Ինչպիսի՞նք են կլիներ կյանքը, եթե քաղաքացիություն չունենայիք, 1998 թ.

Ներքին տեղահանված անձինք

Միավորված ազգերի կազմակերպություն, Ներքին տեղահանման վերաբերյալ ուղեցույց սկզբունքներ (E/CN.4/1998/53/Add.2), 1998 թ.

Ներքին տեղահանվածների մասին ԳործԿում-ի եզրակացություն թիվ 75 (XLV) 1994 թ. Միավորված ազգերի կազմակերպություն, Առանց ապաստան. ներքին տեղահանման մարտահրավերը, 2003 թ.

ՄԱԿ ՓԳՀ, Գործառնական ուղեցույց ՆՏԱ-ների հարցում ՄԱԿ ՓԳՀ-ի ներգրավվածության մասին, 2001թ.

Վարժություններ

- 1 Հետևյալ պնդումներից ո՞ր մեկն է ճիշտ վերադարձողների վերաբերյալ:
 ա Նրանց հայրենադարձությունը ոչ միշտ է տեղի ունենում կազմակերպված ծրագրով:
 բ Վերադարձի հնարավորությունը կախված է ծագման երկրի պայմաններից:
 գ Նրանց վերադարձին նպաստող պայմանների ապահովման առաջնային պատասխանատվությունը կրում է ՄԱԿ ՓԳՀ-ն:
 դ Նրանց վերադարձը տեղի է ունենում կամավոր հիմունքներով:
- 2 Վերադարձողների իրավական դաշտն ունի տարբեր տարրեր, որոնք հիմնված են յուրաքանչյուր քաղաքացու՝ մարդու իրավունքներին առնչվող միջազգային իրավական նորմերով սահմանված՝ տուն վերադառնալու իրավունքով: Ըի՞շտ է, թե՞ սխալ:
- 3 Ավարտե՞ք նախադասությունը հետևյալ արտահայտություններից մեկով.
 Քաղաքացիություն չունեցող անձը
 ա Անհատ է, որը ներկայումս ապրում է իր քաղաքացիության երկրից դուրս:
 բ Նա է, ով ճանաչված չէ որպես որևէ պետության քաղաքացի, թեև նա կարող է ունենալ քաղաքացիություն:
 գ Նա է, ով չի համարվում որևէ պետության քաղաքացի:
 դ Նա, ով ենթարկվում է խիստ խտրականության այն երկրում, որտեղ նա քաղաքացի է:
- 4 Հետևյալ պնդումներից ո՞ր մեկն է ճիշտ:
 ա Ապաքաղաքացիությունը սահմանվում է Փախստականների կարգավիճակի մասին 1951 թվականի կոնվենցիայով:
 բ Քաղաքացիություն չունենալը միշտ պետության կողմից խտրական կամ հետապնդողական վարքագծի արդյունք է:
 գ Ոչ Քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի մասին կոնվենցիան, ոչ Ապաքաղաքացիության կրճատման մասին կոնվենցիան չեն սահմանում, թե ով է քաղաքացիություն չունեցող անձը:
 դ 1951 թվականի Կոնվենցիան ընդունում է, որ որոշակի հանգամանքներում քաղաքացիություն չունեցող անձինք կարող են նաև փախստական լինել:
- 5 Հետևյալներից ո՞ր մեկը չի կարգավորվում քաղաքացիություն չունեցող անձին վերաբերող երկու կոնվենցիաներից որևէ մեկով:
 ա Քաղաքացիություն չունեցող տղամարդկանց և կանանց իրավունքները իրենց բնակության երկրում.
 բ Այն քաղաքացիություն չունեցող անձանց նկատմամբ վերաբերմունքը, որոնք նույնպես փախստական են:
 գ Քաղաքացիություն չունեցող անձի սահմանումը.
 դ Ո՞ր երկիրը պետք է քաղաքացիություն շնորհի այն անձին, որը այլապես քաղաքացիություն չէր ունենա:
- 6 Նշեք, թե ստորև բերված պնդումներից ո՞րն է ճիշտ նկարագրում ՄԱԿ ՓԳՀ-ի պարտականությունները քաղաքացիություն չունեցող անձանց նկատմամբ.
 ա ՄԱԿ ՓԳՀ-ն միակ միջազգային կազմակերպությունն է, որն ունի հատուկ գործառույթներ մարդկանց այս խմբի հետ կապված:
 բ Նրա մանդատը վերաբերում է միայն քաղաքացիություն չունեցող անձանց,

որոնք գտնվում են ապաքաղաքացիության հետ կապված երկու Կոնվենցիաներից մեկի կամ երկուսի Կողմ հանդիսացող երկրներում:
գ Քաղաքացիություն չունեցող անձանց առնչվող նրա մանդատը բխում է բացառապես նրա կանոնադրությունից:
դ ՄԱԿ ՓԳՀ-ն մանդատ ունի միայն քաղաքացիություն չունեցող փախստականների նկատմամբ:

- 7 Հետևյալներից ո՞ր մեկը ՄԱԿ ՓԳՀ-ի խնդիրներից չէ քաղաքացիություն չունեցող անձանց կապակցությամբ:
ա Ապաքաղաքացիության հետ կապված երկու Կոնվենցիաներին միանալու խթանում:
բ Քաղաքացիություն չունեցող անձանց պաշտոնապես քաղաքացիություն չնորհելը, երբ ոչ մի պետություն չի ցանկանում դա անել:
գ Շահագրգիռ պետություններին քաղաքացիության մասին օրենսդրության նախապատրաստման վերաբերյալ իրավական խորհրդատվության տրամադրում:
դ Համագործակցություն պետությունների հետ ապաքաղաքացիության խնդիրների բացահայտման և լուծման ուղղությամբ:
- 8 Ստորև թվարկված հանգամանքներից ո՞րը ապաքաղաքացիության պատճառ չէ:
ա Երկրի տրոհումը փոքր պետությունների.
բ Օրենսդրություն, որն ավտոմատ կերպով կնոջը զրկում է քաղաքացիությունից, եթե նա ամուսնանա օտարերկրացու հետ:
գ Ազգության հիմքով խտրականություն.
դ քաղաքացիություն չունեցող անձից ծնված լինելը.
- 9 Հետևյալներից ո՞ր մեկն է ճիշտ ներքին տեղահանված անձանց մասին:
ա Նրանք, վտանգից խուսափելով, փախչում են այն երկրի մեկ այլ հատված, որտեղ ապրում են, կամ արտասահման:
բ Նրանց տեղահանման պատճառը կարող է նաև առաջացնել փախստականների հոսքեր:
գ Նրանք պետք է որ ստիպված լինեին լքել իրենց տները:
դ Ի տարբերություն փախստականների, նրանց տեղահանման պատճառը կարող է լինել բնական աղետը:
- 10 Լրացրո՛ւ նախադասությունը հետևյալ արտահայտություններից մեկով.
Ներքին տեղաշարժի վերաբերյալ առաջնորդող սկզբունքները.
ա Կապված են պետությունների, այլ ոչ թե ներքին տեղահանվածների անունից հանդես եկող կազմակերպությունների գործունեության հետ, ինչպիսին է ՄԱԿ ՓԳՀ-ն:
բ Իրավաբանական պարտադիր ուժ չունեն, սակայն սկզբունքներից շատերը գոյություն ունեն անկախ՝ որպես միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորություններ:
գ Ներառված են Միավորված ազգերի կազմակերպության կողմից դեկլարվող գործընթացի շրջանակներում ընդունված պայմանագրում:
դ Հիմնված են բացառապես միջազգային մարդասիրական իրավունքի համապատասխան սկզբունքների վրա:
- 11 Հետևյալ հայտարարություններից ո՞ր մեկն է ճիշտ արտացոլում ներքին տեղահանվածների հետ կապված իրավիճակների նկատմամբ միջազգային հանրության մոտեցումը:

ա Միայն այն երկիրը, որտեղ տեղի է ունեցել տեղահանումը, ունի օրինական շահ և դեր ներքին տեղահանվածներին օգնելու հարցում:

բ ՄԱԿ ՓԳՀ-ն նման իրավիճակների լուծման գործում առաջատար միջազգային գործակալությունն է:

գ Առաջնային պատասխանատվությունը կրում է տեղահանված երկիրը, միջազգային աջակցությամբ, որը տրամադրվել է մի շարք մարդասիրական և զարգացման դերակատարների կողմից համագործակցային ջանքերով:

դ Գլխավոր քարտուղարի՝ ներքին տեղահանվածների մարդու իրավունքների հարցերով ներկայացուցիչն է ղեկավարում այդ անձանց օգնության ջանքերը:

12 ՄԱԿ ՓԳՀ-ն միայն որոշակի հանգամանքներում դերակատարում ունի ներքին տեղահանված անձանց առնչությամբ: Ճիշտ է, թե՛ սխալ:

Դեպք է

Բանտանա նահանգը վերջին երկու տարիների ընթացքում տուժել է քաղաքացիական պատերազմից, ինչը հանգեցրել է բնակչության մոտ 25 տոկոսի տեղափոխմանը իրենց տներից դեպի երկրի այլ շրջաններ: Թեև կառավարությունը մեկ տարի առաջ ընդունել է օրենք, որը սահմանում է ներքին տեղահանված անձանց և նրանց շահերտ պաշտպանելու համար անկախ իրավունքների պաշտպան նշանակելու հնարավորությունը, գործնականում այդ իրավունքներից շատերը չեն հարգվում: ՄԱԿ ՓԳՀ ոլորտային գործընկերների կողմից արված վերջին թարմացման մեջ ասվում է.

«Հյուսիսում բանակի և ապստամբ ուժերի միջև սրված մարտերը հանգեցրին անցյալ ամիս Կարմիր գետի շրջանի գյուղերից 10,000 մարդու տեղահանմանը: Ըստ երևույթին, ապստամբները կենտրոնացած են այս տարածքում, քանի որ տվյալ հողը բերրի է, և վերջերս բերքահավաք է եղել: Ապստամբները թիրախավորել են այն գյուղերը, որոնք իրենց կարծիքով աջակցում են կառավարությանը, վտարելով նրանց բնակիչներին, իսկ հետո նրանց հավաքած բերքը վերցրել են որպես պարենամթերք:

Այս գյուղացիները հայտնվել են երկրի արևելքում գտնվող ներքին տեղահանվածների համար գոյություն ունեցող բնակավայրերում, որտեղ սննդի պակաս արդեն կա: Այս բնակավայրերի համար նախատեսված մարդասիրական օգնությունը մի քանի անգամ կառավարական զինվորների կողմից ուղղվել է իրենց սեփական սպառմանը և հավատարիմ գյուղերին պարզևատրելու համար: Այս բնակավայրերի բնակչությունը ենթարկվել է «ստուգումների» կառավարական զինվորների կողմից, որոնք իբր դասալիքներ են փնտրում, բայց իրականում նպատակ ունեն այնտեղի խաղաղ բնակիչներից գումար և ունեցվածք կորզելու: Բացի այդ, ապստամբ ուժերի կողմից զինված հարձակումներ են եղել այս բնակավայրերի վրա, որոնց նպատակն է սպանել տեղահանված բնակչության անդամներին: Վերջին հարձակման ժամանակ զոհվել է 50 ներքին տեղահանված անձ:

Դրական փաստ է, որ վերջերս ՅՈՒՆԻՄԵՖ-ին թույլ տրվեց գնահատման առաքելություն իրականացնել ճամբարներում՝ այնտեղ երեխաների կրթության կարիքները դիտարկելու համար: ՅՈՒՆԻՄԵՖ-ը հայտնել է, որ թեև բնակավայրերի մոտ գտնվող պետական տեղական դպրոցները օրենքով պարտավոր են գրանցել ներքին տեղահանված երեխաներին, նրանք պարբերաբար հրաժարվում են դա անել՝ պատճառաբանելով սահմանափակ ռեսուրսները: Որպես այլընտրանք, նրանք ամսական վճար են գանձում, որը չի գանձվում տեղի երեխաներից: ՅՈՒՆԻՄԵՖ-ը սահմանափակ դերակատարում ունի որոշ բնակավայրերում նորածինների համար ներքին տեղահանվածների համար նախատեսված կերակրման ծրագրեր իրականացնելու համար, թեև նրանք խնդիրներ են ունեցել այլ ճամբարներ մուտք գործելու հարցում: Մարդասիրական աջակցության համակարգողի գրասենյակը նաև վերջերս գրասենյակ է բացել մայրաքաղաքում՝ ի պատասխան ներքին տեղահանվածների իրավիճակի վատթարացմանը»:

Կառավարությունը վերջերս դիմել է ՄԱԿ ՓԳՀ-ի Բանտանայում գտնվող գրասենյակ՝ խնդրելով աջակցություն տրամադրել ներքին տեղահանվածներին օգնելուն ուղղված գործողություններում: Այս գրասենյակը համեմատաբար փոքր է, քանի որ Բանտանայում շատ քիչ ապաստան հայցողներ և փախստականներ կան: Որպես Բանտանայի համար պատասխանատու շտաբի ավագ աշխատակից Ջեզանիգ խորհուրդ են խնդրել, թե ինչպես արձագանքել կառավարության խնդրանքին:

ա Ջեկույցում նշվում են *Ներքին տեղահանման վերաբերյալ ուղղորդող սկզբունքների* մի քանի խախտումներ:

Այս գործիքը կարդալուց հետո (որը կարելի է գտնել հետևյալ առցանց հասցեում՝

http://www.reliefweb.int/ocha_ol/pub/idp_gp/idp.html

օգտագործեք ստորև բերված աղյուսակը՝ բացահայտելու չորս սկզբունքներ, բացի թիվ 6 սկզբունքից, որոնք, ըստ Ձեզ, խախտվում են Բանտանայում, և յուրաքանչյուր խախտման բնույթը.

Թիվ 6. Կամայական տեղահանումից պաշտպանության իրավունք.	Ապստամբների կողմից հրահրված մարտերը հյուսիսային շրջանում նպատակ ունեն մասամբ դուրս մղելու քաղաքացիական բնակչության որոշ անդամների:

Բնչ գործոններ եք կարծում, որ պետք է հաշվի առնել նախքան որոշելը, թե արդյոք ՄԱԿ ՓԳՀ-ն պետք է կատարի կառավարության խնդրանքը, այն է՝ ակտիվ դերակատարություն ունենալ ներքին տեղահանվածներին օգնելու իր գործունեությանն աջակցելու գործում:

Դեպք Ը

Նորդլենդի քաղաքացի Յասմինն ամուսնացել է Իստլանդիայի քաղաքացի Քրիստոֆի հետ: Նա տեղափոխվեց Իստլանդիա՝ նրա հետ ապրելու, և նրանք ունեցան որդի՝ Անդրեին: Անդրեն իրականում ծնվել է Նորդլենդում՝ Յասմինի ծնողներին տեսնելու նպատակով այցելության ժամանակ: Յասմինը և Քրիստոֆը ցանկանում էին գրանցել Անդրեի ծնունդը Իստլանդիա վերադառնալուն պես, բայց, ի վերջո, նրանք չկարողացան դա անել: Զույգն այժմ ամուսնալուծված է, և Յասմինը մտածում է իր տասնութ ամսական որդու հետ վերադառնալ Նորդլենդ՝ այնտեղ ընտանիքի հետ ապրելու: Դուք Իստլանդիայում ՄԱԿ ՓԳՀ-ի պաշտպանության աշխատակից եք:

Յասմինը եկել է Ձեզ մոտ խորհրդատվություն ստանալու Նորդլենդ վերադառնալու իրավական ասպեկտների վերաբերյալ: Դուք տեղյակ եք, որ համաձայն Նորդլենդի քաղաքացիության մասին օրենքների, կանայք կորցնում են իրենց քաղաքացիությունը, եթե ամուսնանան օտարերկրացու հետ: Բացի այդ, միայն Նորդլենդ ի քաղաքացիներից ծնված երեխաները ինքնաբերաբար քաղաքացիության իրավունք ունեն: Իստլանդիայի օրենսդրությունը սահմանում է, որ օտարերկրացիները, որոնք ամուսնանում են իր քաղաքացիների հետ, ավտոմատ կերպով ձեռք են բերում Իստլանդիայի քաղաքացիություն, սակայն ամուսնալուծությունից հետո զրկվում են դրանից: Երեխաները կարող են ավտոմատ կերպով Իստլանդիայի քաղաքացիություն ձեռք բերել երկու եղանակով՝ ծնվելով այնտեղ, կամ գրանցվելով մինչև իրենց առաջին ծննդյան օրը, եթե նրանք ծնվել են արտերկրում Իստլանդիայի քաղաքացիներից:

ա Ո՞րն է Յասմինի ներկայիս քաղաքացիությունը:

բ Ո՞րն է Անդրեի քաղաքացիությունը

գ Արդյո՞ք ՄԱԿ ՓԳՀ-ի մտահոգության առարկան է Յասմինի և Անդրեի իրավիճակը:

Գլուխ 4-ի վարժությունների պատասխաններ

- 1 **գ** Վերադարձին նպաստող պայմաններ ապահովելու առաջնային պատասխանատվությունը կրում է ծագման երկրի կառավարությունը, այլ ոչ թե ՄԱԿ ՓԳՀ-ն, քանի որ կառավարությունը կարող է լավագույնս ազդել իր տարածքում քաղաքական, տնտեսական և անվտանգության իրավիճակի բարելավման վրա: Հայրենադարձությունը կարող է տեղի ունենալ ինքնաբուխ, և ոչ միայն կազմակերպված եղանակով (ա), վերադառնալու հնարավորությունը կախված է ծագման երկրի պայմաններից (բ), իսկ վերադարձողները կամավոր են տեղափոխվում (դ):
- 2 **Ճիշտ** Վերադարձողների իրավական դաշտը հիմնված է վերադարձի իրավունքի վրա և լրացվում է մարդու իրավունքների դրույթներով, որոնք կարգավորում են այն վերաբերմունքը, որը նրանք պետք է ստանան վերադառնալիս:
- 3 **գ** Քաղաքացիություն չունեցող անձը չունի քաղաքացիություն աշխարհի որևէ մի վայրում: Քանի որ քաղաքացիությունը և ազգությունը միմյանց փոխարինող հասկացություններ են, Բ տարբերակը ճիշտ չէ, քանի որ ազգություն ունեցող անձը չի կարող քաղաքացիություն չունեցող անձ լինել: Տարբերակ Ա-ն ճիշտ չէ, քանի որ քաղաքացիություն չունեցող անձը, ըստ սահմանման, չունի քաղաքացիության պետություն: Նմանապես, տարբերակը Դ-ն ճիշտ չէ, քանի որ չնայած քաղաքացիություն չունեցող անձը կարող է ենթարկվել խիստ խտրականության, դա չի կարող տեղի ունենալ մի պետությունում, որտեղ նա քաղաքացի է կամ ունի ազգություն, քանի որ քաղաքացիություն չունեցող անձը չունի որևէ քաղաքացիություն կամ ազգություն:
- 4 **դ** 1951 թվականի Կոնվենցիայում փախստականի սահմանումը բացահայտորեն ընդունում է, որ քաղաքացիություն չունեցող անձինք կարող են փախստական լինել: (Տե՛ս «մշտական բնակության երկրի» վկայակոչումը՝ որպես «ազգության երկրի» այլընտրանք 1951թ. Կոնվենցիայի 1Ա հոդվածում): Ինչ վերաբերում է Ա և Գ տարբերակներին, ապա ապաքաղաքացիությունը սահմանվում է ոչ թե 1951թ. Կոնվենցիայով, այլ ավելի շուտ Քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի մասին կոնվենցիայով (1954թ.): Ապաքաղաքացիության պատճառները տարբեր են, և դրանք ոչ միշտ են պետության (բ) կողմից թշնամական վերաբերմունքի արդյունք:
- 5 **բ** Քաղաքացիություն չունեցող անձի սահմանումը Քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի մասին կոնվենցիայում (1954 թ.) բացառում է այն անձանց, որոնք մտնում են Փախստականների մասին 1951 թվականի կոնվենցիայի շրջանակում: Քանի որ այս սահմանմամբ է որոշվում և՛ Քաղաքացիություն չունեցող անձանց

կարգավիճակի մասին 1954 թվականի կոնվենցիայի, և՛ Ապաքաղաքացիության մասին 1961 թվականի կոնվենցիայի շրջանակը, քաղաքացիություն չունեցող անձանց վերաբերյալ երկու միջազգային փաստաթղթերից, և ոչ մեկը չի կիրառվում այն փախստականների նկատմամբ, որոնք նաև քաղաքացիություն չունեն: 1954 թվականի Կոնվենցիան սահմանում է այդ իրավունքները, իսկ 1961 թվականի Կոնվենցիան սահմանում է քաղաքացիություն չունեցող անձին (ա) քաղաքացիություն չնորհելու համար առավել հարմար երկիրը որոշելու սկզբունքները:

- 6 ա** ՄԱԿ ՓԳՀ-ին տրվել է ընդհանուր մանդատ քաղաքացիություն չունեցող անձանց համար՝ Գլխավոր ասամբլեայի բանաձևերի, այլ ոչ իր Կանոնադրության համաձայն: Իրականում դա միակ միջազգային կազմակերպությունն է, որն ունի նման գործառույթ: Նրա պարտականությունները չեն սահմանափակվում ապաքաղաքացիության մասին պայմանագրերից մեկի կամ երկուսի մասնակից պետություններում գտնվող անհատներով, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձանցով, որոնք նաև փախստական են:
- 7 բ** Քաղաքացիություն չնորհելու որոշումը պետությունների հայեցողությունն է. ՄԱԿ ՓԳՀ-ն անհատին որոշակի քաղաքացիություն չնորհելու իրավունք չունի: ՄԱԿ ՓԳՀ-ի գործառույթներն են՝ աջակցել պետություններին տարբեր ձևերով՝ կանխելու ապաքաղաքացիության դեպքերը և բարելավելու իրավիճակը նրանց համար, ովքեր արդեն իսկ չունեն քաղաքացիություն:
- 8 գ** Անձը, ով ենթարկվում է խտրականության իր քաղաքացիության պատճառով, ըստ սահմանման չի կարող լինել քաղաքացիություն չունեցող անձ, քանի որ նա ունի քաղաքացիություն: Ի հակադրություն, թվարկված մնացած բոլոր տարբերակները կարող են քաղաքացիություն չունենալու պատճառ լինել:
- 9 ա** Ներքին տեղահանված անձինք տեղափոխվել են այլ վայր իրենց երկրի ներսում. նրանք չեն փախչում այլ պետություն: (Տե՛ս «Ներքին տեղահանման մասին ուղեցույցի սկզբունքներում» տրված սահմանումը): Այնուամենայնիվ, նրանց փախուստին տանող իրադարձությունները կարող են նաև հանգեցնել նրան, որ համաքաղաքացիները անվտանգություն փնտրեն սահմանից այն կողմ և այդ ընթացքում փախստական դառնան: Փախստականների նման, ներքին տեղահանված անձինք ստիպված են լինում լքել իրենց տները. ի տարբերություն փախստականների՝ նրանք կարող են փախչել բնական աղետի պատճառով:
- 10 բ** Թեև *Ուղղորդող սկզբունքները* իրավաբանական պարտադիր ուժ չունեն, սկզբունքներից շատերը գոյություն ունեն որպես անկախ պարտավորություններ մարդու իրավունքներին առնչվող միջազգային իրավական նորմերում և մարդասիրական

իրավունքում: Այնուամենայնիվ, հաշվի առնելով դրանց ոչ իրավական կարգավիճակը, սկզբունքները ներառված չեն պայմանագրում: Ուղեցույց սկզբունքները բխում են միջազգային իրավունքի համապատասխան ոլորտներից, ներառյալ՝ մարդու իրավունքներին առնչվող միջազգային նորմերից և մարդասիրական իրավունքից: Սկզբունքները վերաբերում են բոլոր կողմերի, ներառյալ՝ պետությունների և միջազգային կազմակերպությունների՝ ներքին տեղահանվածների համար իրականացվող գործողություններին:

- 11 q** Ինչպես ցանկացած մարդասիրական իրավիճակի դեպքում, առաջնային պատասխանատվությունը կրում է այն պետության կառավարությունը, որի տարածքում տեղի է ունեցել ներքին տեղահանումը: Այնուամենայնիվ, դա չի նշանակում, որ այլ դերակատարներ, ինչպիսիք են այլ պետությունները և ՄԱԿ ՓԳՀ-ն, օրինական շահ չունեն ներքին տեղահանվածներին օգնելու հարցում. նրանք կարող են օժանդակ դեր խաղալ: ՄԱԿ ՓԳՀ-ն կաջակցի ներքին տեղահանվածներին միայն որոշակի հանգամանքներում: Դա նման անձանց անունից ջանքեր գործադրող առաջատար գործակալությունը չէ: Թեև Գլխավոր քարտուղարի՝ Ներքին տեղահանվածների մարդու իրավունքների հարցերով ներկայացուցիչը կարևոր գործառնությունի՝ ներքին տեղահանվածների հետ կապված, սա չի ներառում գործառնական խնդիրները: Դրանք իրականացվում են միջգերատեսչական մեխանիզմի միջոցով, որը ղեկավարվում է շտաբի մակարդակով ՄԱԿ-ի Արտակարգ իրավիճակների մշտական համակարգողի կողմից:
- 12 Ճիշտ** Ինչպես նշվեց վերը նշված պատասխանի առնչությամբ, ՄԱԿ ՓԳՀ-ն օգնում է ներքին տեղահանվածներին միայն այն դեպքում, եթե բավարարված են որոշակի չափանիշներ, որոնք սահմանված են Գլխավոր ասամբլեայի տարբեր բանաձևերում: Օրինակ, պետք է առկա լինի ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի խնդրանքը կամ թույլտվությունը:

Դեպք Է

ա

Սկզբունք	Խախտում
Թիվ 6. Կամայական տեղահանումից պաշտպանված լինելու իրավունք	Ապստամբների կողմից հրահրված մարտերը հյուսիսային շրջանում նպատակ ունեն մասամբ դուրս մղելու քաղաքացիական բնակչության որոշ անդամների:
Թիվ 10. Կյանքի իրավունք և պաշտպանություն հարձակումից	Երկրի արևելքում ապստամբների ուժային հարձակումները ներքին տեղահանվածների վրա:
Թիվ 18. Բավարար կենսամակարդակի իրավունք (օրինակ՝ սնունդ և կացարան):	Ներքին տեղահանվածների համար սննդի բավարար պաշարների բացակայություն:
Թիվ 21. Պաշտպանություն սեփականությունից և ունեցվածքից կամայական զրկումից:	Ապստամբ ուժերի կողմից լքված գյուղերից բերքի գողություն: Ներքին տեղահանվածների բնակավայրերը «ստուգող» պետական զինվորների կողմից փողի և այլ անձնական ունեցվածքի անհիմն բռնագրավում:
Թիվ 23. Անվճար տարրական կրթության իրավունք	Տեղական դպրոցները մերժում են ընդունել բոլոր ներքին տեղահանված երեխաներին առանց վճարի:
Թիվ 24. Մարդասիրական օգնությունը պետք է տրամադրվի անաչառ, մասնավորապես՝ առանց ռազմական կամ քաղաքական նպատակներ հետապնդելու:	Կառավարական զորքերը ներքին տեղահանվածների համար նախատեսված պարենային օգնությունը ուղղում են իրենց շահերի և իշխանամետ գյուղերին:

բ Ներքին տեղահանված անձանց հետ ՄԱԿ ՓԳՀ-ի աշխատելու չափանիշները ներկայացված են Էջ 86-ում: Այս կոնկրետ իրավիճակում հետևյալը տեղին կլինի այս չափանիշները գնահատելիս:

- Գլխավոր քարտուղարի խնդրանքի բացակայությունը,
- Կառավարության մոտեցումը,
- Միավորված ազգերի կազմակերպության այլ գործակալություններ նույնպես ներկա են, այդ թվում՝ Մարդասիրական աշխատանքների համակարգման գրասենյակը,
- ՅՈՒՆԻՍԵՖ-ն արդեն օպերատիվ ներգրավվածություն ունի ներքին տեղահանվածների մի մասի հետ աշխատանքներում,
- Միավորված ազգերի կազմակերպության ո՞ր գործակալությունն է ներկայումս Բանտանայի մշտական/մարդասիրական աշխատանքների

համակարգողը:

Դեպք Ը

ա Յասմինը քաղաքացիություն չունեցող անձ է: Նա կորցրել է Նորդլենդի իր քաղաքացիությունը ամուսնության ժամանակ, իսկ այժմ կորցրել է Էստլանդիայի իր քաղաքացիությունը ամուսնալուծության պատճառով:

բ Անդրեն նույնպես քաղաքացիություն չունի: Չնայած նա ծնվել է Նորդլենդում, քանի որ նրա ծնողներից ոչ մեկն այդ ժամանակ այս երկրի քաղաքացի չի եղել, նա այնտեղ քաղաքացիություն չի ստացել: Նա նաև չի կարող ինքնաբերաբար իրավասու լինել Էստլանդիայի քաղաքացիություն ստանալու համար. նա այնտեղ չի ծնվել, և ծնողները ժամանակին չեն գրանցել նրա ծնունդը:

գ Քանի որ ՄԱԿ ՓԳՀ-ն ունի ապաքաղաքացիության խնդիրների բացահայտման և լուծման հետ կապված ընդհանուր մանդատ, նրան մտահագում է Յասմինի և Անդրեի ծանր վիճակը:

Գլուխ 5

Տեղահանման շրջափուլը

Մաս I: Փախուստ և ապաստանի հասանելիություն



Հիմնական նպատակներ

Հասկանալ, թե ինչ գործոններ են հարկադրում անձին փախչել իր երկրից և ապաստան հայցել:

Դիտարկել, թե ինչ պայմաններում են տեղի ունենում նմանատիպ ճամփորդությունները, և ինչ խորընդոտների են հանդիպում ապաստան հայցողները այլ երկրում անվտանգություն ձեռք բերելու հարցում:

Հասկանալ երկրների՝ ապաստան հայցողներին ընդունելու, նրանց անվտանգությունն ապահովելու և նյութական ու հոգեւտոգիական կարիքները հոգալու պարտավորությունները:

Գնահատել կարգավիճակի որոշման ընթացակարգերում ՄԱԿ ՓԳՀ-ի դերը, գործառույթը, տարբեր մոտեցումները և նվազագույն չափանիշները:

Այս գլուխը ուսումնասիրում է, թե ինչու են փախստականները լքում իրենց տները, ինչպիսին կարող են լինել նրանց ճանապարհորդությունները, և ինչպես են նրանք ապաստան հայցում մեկ այլ երկրում: Ապաստան հայցելը հաճախ պահանջում է մուտքի ֆիզիկական խոչընդոտների հաղթահարում, փախստականի կարգավիճակի որոշման ընթացակարգի հասանելիություն ձեռք բերելու և ապաստանի դիմումի վերաբերյալ որոշմանը սպասելիս առօրյա կյանքի կարիքները հոգալու կարողություն: Քննարկվում են նաև այն չափանիշները, որոնք պետությունները պետք է պահպանեն այս տարրերից յուրաքանչյուրի առնչությամբ: Բացի այդ, գլուխը կենտրոնանում է կարգավիճակի որոշման ընթացակարգերի նպատակների և տարբեր մոտեցումների վրա, որոնք կիրառվում են, այդ թվում՝ փախստականների արտակարգ իրավիճակներում:

5.1 Ինչո՞ւ և ինչպե՞ս են փախչում փախստականները

Ի՞նչն է ստիպում ինչ-որ մեկին լքել իր տունը և հաճախ ընտանիքը, որպեսզի ապահովություն փնտրի արտասահմանում: Հալածանքները, որոնք կարող են ներառել խոշտանգում, ոտնձգություն, սեռական բռնություն, կամայական կամ երկարատև կալանք, մարդու իրավունքների այլ լուրջ խախտումներ կամ սպառնալիքներ, նման հուսահատ գործողությունների շարժիչ ուժն են: **Հետապնդումը** կարող է տեղի ունենալ խաղաղության ժամանակ կամ կարող է առաջանալ հակամարտության ընթացքում՝ լինի դա ներքին, թե միջազգային: Ընդհանրապես, հետապնդողը կառավարող իշխանությունների հետ կապված մեկն է լինում, սակայն որոշ իրավիճակներում հետապնդողները կարող են լինել ոչ պետական դերակատարներ, օրինակ՝ ապստամբների խմբերը: Զանգվածային տեղահանումներ, ամենայն հավանականությամբ, տեղի են ունենում լայնածավալ հետապնդումների դեպքում, օրինակ, երբ որոշակի էթնիկական ծագման քաղաքացիական անձինք թիրախավորվում են անջատողական շարժման կամ քաղաքական ընդդիմադիր խմբերին ճնշելու համատեքստում, կամ երբ տեղի է ունենում անխտիր և համատարած բռնություն:

Երբեք չպետք է թերագնահատել **փախուստի հասցրած վնասը**: Մարդը, ով մտածում է իր տնից հեռանալու մասին, պետք է ծանրութեթև անի փախուստի ռիսկերը՝ դրան հետևող ֆիզիկական վտանգներով և խստագույնս պատժվելու հնարավորությամբ, եթե նրան բռնեն,

համեմատալով դա այն հետևանքների երկյուղի հետ, որոնք կարող են սպասվել, եթե նա չփորձի փախչել: Նրանք, ովքեր ստիպված են լքել ընտանիքի անդամներին և մտերիմ ընկերներին, հաճախ ունեն մեղքի և վախի զգացում: Բացի այդ ճանապարհորդությունն ինքնին լի է վտանգներով: Փախչող անձը կարող է չկարողանալ լքել երկիրը՝ նորմալ կերպով հատելով սահմանը՝ վախենալով իշխանությունների կողմից հայտնաբերվելուց: Փոխարենը, նա կարող է ստիպված լինել ճանապարհորդել դժվար կամ վտանգավոր տեղանքով և/կամ օգտագործել գաղտնի տրանսպորտային միջոցներ: Այս դեպքերում անհատը կարող է խոցելի լինել այն մարդկանց կողմից, որոնք բավականաչափ անբարեխիղճ են և ցանկանում են նրան շահագործել՝ օգտվելով նրանք թշվառությունից և հուսահատ վիճակից:

Հետևաբար, կարևոր է բոլոր ապաստան հայցողներին և փախստականներին վերաբերվել ըմբռնումով: Բացի այն տառապանքներից, որ նրանք արդեն կրել են, նրանք բախվում են մշտական անորոշության հետ իրենց և մնացած ընտանիքի անդամների ապագայի վերաբերյալ: Երբեք չպետք է թերագնահատել փախուստի ազդեցությունը երեխաների վրա, հատկապես նրանց, ովքեր ստիպված են եղել միայնակ ճանապարհորդել՝ առանց որևէ մեծահասակ խնամողի:

Առանց ուղեկցության ապաստան հայցող երեխաները ոչ միայն բախվում են ֆիզիկական վտանգների հետ, այլև նրանք պետք է իրենց համար սնունդ, ջուր և ապաստան գտնեն և ենթարկվեն անձանոթների կողմից բռնության վտանգի, այդ թվում՝ զինվորական խմբերի, որոնք կարող են բռնի ուժով փորձել հավաքագրել նրանց: Կանայք կարող են նաև առանձնահատուկ վտանգի ենթարկվել փախուստի ժամանակ, հատկապես, եթե նրանք կորցրել են ավանդական պաշտպանությունը, որը նրանք ունեն արական սեռի հարազատների ներկայությամբ: Քաղաքացիական պատերազմից փախչող կանայք զինվորների կամ պարտիզանների կողմից կարող են ենթարկվել սեռական բռնության, այդ թվում՝ բռնաբարության: Տարեց ապաստան հայցողները նույնպես խոցելի են փախուստի ժամանակ, հատկապես եթե ստիպված են եղել ինքնուրույն փախչել:

Մինչդեռ փախստականները ստիպված են լքել իրենց ծագման երկրները՝ հետապնդման վախի պատճառով, այլ միգրանտներ կարող են տեղափոխվել տարբեր պատճառներով, օրինակ՝ աղքատությունից փախչելու համար: Փախստականները հայտնվում են ավելի մեծ **բնակչության խառը տեղաշարժերի** մեջ: Նրանք, ովքեր

ապաստան են փնտրում, կարող են ստիպված լինել ճանապարհորդել նույն եղանակով, ինչ մյուս միգրանտները՝ օգտագործելով, օրինակ, կեղծ փաստաթղթեր կամ մարդկանց մաքսանենգությամբ կամ թրաֆիքինգով զբաղվողների ծառայությունները:

5.2 Ապաստանի երկիր ընդունելությունը

Ընդհանուր առմամբ, երկրներից չի պահանջվում օտարերկրացիներին իրենց տարածք ընդունել: Այս կանոնից բացառություն են կազմում փախստականները: Իրոք, ՄԱԿ ՓԳՀ-ի ջանքերը հիմնված են պետությունների՝ ապաստան հայցող անձանց իրենց տարածք ընդունելու պարտավորության վրա, գոնե ժամանակավոր հիմունքներով: Ինչպես նշվեց վերը, փախստականների մասին բոլոր պայմանագրերով և միջազգային սովորույթային իրավունքով նախատեսված **չվերադարձելիության սկզբունքը** արգելում է պետություններին փախստականին վերադարձնել այն տարածքների սահմանները, որտեղ նրա կյանքը կամ ազատությունը վտանգված կլինի ռասայի, կրոնի, ազգության, որոշակի սոցիալական խմբի անդամակցության կամ քաղաքական կարծիքի պատճառով: Այս հայեցակարգին ներհատուկ է այն սկզբունքը, որ ապաստան հայցողները չպետք է հետ վերադարձվեն սահմանին: Փաստորեն, այս սկզբունքը կտրականապես ամրագրված է *Տարածքային ապաստանի մասին Միավորված ազգերի կազմակերպության հռչակագրում*: **Ապաստան հայցելու և դրանից օգտվելու իրավունքն** ամրագրված է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում, որը, թեև իրավաբանորեն պարտադիր չէ, կրում է զգալի բարոյական հորդոր: Ապաստանը ներառում է պաշտպանություն ոչ սեփական պետության տարածքում և ներառում է չվերադարձելիություն, այդ երկրում մնալու թույլտվություն և վերաբերմունքի մարդասիրական չափանիշներ:.

Պետությունները իրավունք ունեն, համաձայն փախստականների մասին միջազգային իրավունքի, մարդու իրավունքների և միջազգային սովորույթային իրավունքի ներքո ստանձնած իրենց պարտավորությունների, վերահսկելու ոչ քաղաքացիների (օտարերկրացիների) մուտքը, բնակությունը և արտաքսումը: Տարիների ընթացքում, ի պատասխան ապաստան հայցողների և տնտեսական միգրանտների աճող թվի, նրանք ակտիվացրել են իրենց ջանքերը՝ կառավարելու միգրացիան դեպի իրենց տարածքներ՝ մասամբ ֆիզիկական մուտքը սահմանափակելու միջոցով:

Անկանոն միգրացիան նվազեցնելու նպատակով կառավարությունները վիզայի պահանջներ են սահմանում, պատժամիջոցներ են սահմանում ավիաընկերությունների և բեռնափոխադրող ընկերությունների համար, որոնք տեղափոխում են փաստաթղթեր չունեցող կամ ոչ պատշաճ փաստաթղթերով օտարերկրացիների, և/կամ ձերբակալում են նման անհատներին, որպեսզի թույլ չտան նրանց մուտք գործել իրենց երկրի սահմաններ: Ցավոք սրտի, սակայն, այս ջանքերը կարող են նաև խանգարել միջազգային պաշտպանության կարիք ունեցողների անվտանգությանը: Թեև ՄԱԿ ՓԳՀ-ն միգրացիայի հետ կապված մանդատ չունի, այն աշխատում է կառավարությունների և այլ մարմինների հետ, ինչպիսին է Միգրացիայի միջազգային կազմակերպությունը (ՄՄԿ)՝ ապահովելու, որ փախստականների պաշտպանությունը վտանգի տակ չհայտնվի սահմաններով մարդկանց տեղաշարժը վերահսկելու այլ օրինական փորձերից:

Միգրացիան վերահսկելուն ուղղված սահմանափակող միջոցները, սակայն, չպետք է հանգեցնեն վերադարձի: *Գործնական թիվ 97 (LIV) 2003թ. եզրակացությունը* սա հստակեցնում է: Երբ պետությունը հետախուզական խողովակներով հայտնաբերում է նավ, որը, օրինակ, դեպի իր տարածք երթնելու է, պետությունը պետք է ապահովի, որ իր պաշտոնատար անձինք հայտնաբերեն նավի վրա գտնվող ցանկացած անձի, որը կարող է միջազգային պաշտպանության կարիք ունենալ: Այն փաստը, որ անհատը ժամանում է օդանավակայան կամ ծովային նավահանգիստ առանց անհրաժեշտ ներգաղթային փաստաթղթերի, օրինակ՝ վավեր վիզայի, չի արդարացնում մուտքի մերժումը, եթե նա ապաստան է հայցում: Ընդհանրապես, միայն ավելի զարգացած պետություններն ունեն ֆինանսական ռեսուրսներ՝ բարդ գաղտնալսումներ իրականացնելու համար: Իրականում փախստականների մեծ մասը, ներառյալ՝ զանգվածաբար ժամանողները, գտնվում են զարգացող երկրներում, որոնք չունեն նման միջոցներ կիրառելու հնարավորություն:

Ապաստանի երկիր ֆիզիկական մուտքի խնդիր առաջանում է նաև, երբ ապաստան հայցողներին փրկում են ծովում պետական նավերը կամ մասնավոր նավերը, և երբ նավարկողները գաղտնի են նստել նավ: Թեև միջազգային իրավունքի համաձայն՝ ծովում վտանգի տակ գտնվողներին փրկելու պարտականություն կա, այդ անձանց պաշտպանության կարիքները բավարարելու հստակ իրավական դաշտ չկա: ՄԱԿ ՓԳՀ-ի կարծիքով՝ այդ անձանց պետք է թույլատրվի իջնել նավից հաջորդ նավահանգստում: Եթե իջնելը մերժվում է, և ապաստան հայցողները, հետևաբար, իջնում են մի երկրում, որտեղ

նրանք գտնվում են հետապնդման վտանգի տակ, դա հավասար է վերադարձի պետության կողմից, որին նրանք դիմել էին օգնության: Եթե այս երկիրը չհամագործակցի, ՄԱԿ ՓԳՀ-ի աշխատակիցները կփորձեն հարցազրույց անցկացնել նավի վրա գտնվող անձանց հետ, և եթե նրանք որոշեն, որ նրանք միջազգային պաշտպանության կարիք ունեն, ՄԱԿ ՓԳՀ-ն կփորձի գտնել համապատասխան լուծում, որը սովորաբար վերաբնակեցումն է երրորդ երկրում:

5.3 Ապաստան հայցողների ընդունելությունը

Տարածք ընդունվելուց հետո ապաստան հայցողներն իրավունք ունեն փախստականների մասին միջազգային իրավունքին և մարդու իրավունքներին առնչվող միջազգային իրավական նորմերին համապատասխան վերաբերմունքի արժանանալու: Մարդու իրավունքները, այդ թվում՝ բավարար կացարան ունենալու իրավունքը, բոլորի համար են: 1951 թվականի Կոնվենցիան հստակորեն չի նշում ապաստան հայցողներին, սակայն այն փաստը, որ որոշ ապաստան հայցողներ փախստականներ են, նշանակում է, որ Կոնվենցիայի հիմնական դրույթները վերաբերմունքի չափանիշների վերաբերյալ կիրառվում են նաև ապաստան հայցողների նկատմամբ:

Ապաստան հայցողների նկատմամբ վերաբերմունքը տարբերվում է երկրից երկիր՝ կախված առկա ֆինանսական ռեսուրսներից, գործող իրավական համակարգից և սոցիալական վերաբերմունքից: *ԳործԿոմ-ի թիվ 93 (LIII) 2002թ. եզրակացությունը առանձին երկրներում ապաստան հայցողների ընդունելության վերաբերյալ* հաստատում է, որ վերաբերմունքի հիմնական չափանիշները պետք է պահպանվեն բոլոր ապաստան հայցողների համար, և պետք է հաշվի առնվեն կանանց և երեխաների առանձնահատուկ կարիքները: Թեև դժվարություններ կարող են առաջանալ, երբ ապաստան հայցողները զանգվածաբար են ժամանում, այնուամենայնիվ պետք է պահպանվեն վերաբերմունքի նվազագույն չափանիշները (տե՛ս *ԳործԿոմ-ի թիվ 22 (XXXII) 1981 թ. եզրակացությունը մեծածավալ հոսքերի ժամանակ ապաստան հայցողներին պաշտպանելու մասին* և *ԳործԿոմ-ի թիվ 100 (LV) 2004թ. եզրակացությունը միջազգային համագործակցության և զանգվածային հոսքի իրավիճակներում բեռի ու պատասխանատվության բաշխման մասին*): Այս իրավիճակները սովորաբար պահանջում են ավելի մեծ համագործակցություն շահագրգիռ պետությունների միջև: Իրոք, բեռի և

պատասխանատվության բարելավումը, այդ թվում՝
զանգվածային հոսքերին ուղղված ավելի կանխատեսելի
արձագանքների զարգացումը, *Պաշտպանության
օրակարգի* նպատակներից մեկն է։

Նոր երկիր ժամանելուց հետո, որը հաճախ շատ քիչ
ռեսուրսներ ունի, ապաստան հայցողները օգնության
կարիք են ունենում հիմնական կենսական կարիքները
հոգալու համար։ Շատերը չեն կարողանում իրենց հետ
բերել բավարար միջոցներ կացարանի համար վճարելու
համար։ Այսպիսով՝ ապաստան տվող երկիրը միջազգային
հանրության և ՄԱԿ ՓԳՀ-ի օգնությամբ,
անհրաժեշտության դեպքում, պատասխանատու է
համապատասխան **կացարան, սնունդ և հագուստ**
տրամադրելու համար։ Կացարանով ապահովումը կարող է
լինել տարբեր ձևերով, ներառյալ՝ ընդունելության
կենտրոններում, հանրային կացարաններում և վրանային
ճամբարներում։ Որոշ դեպքերում, ապաստան հայցողները
կարողանում են կացարան գտնել ընկերների,
հարազատների կամ իրենց էթնիկ խմբի այլ անձանց հետ,
որոնք նույնպես ապրում են ապաստանի երկրում։
Ապաստան հայցողների համար մեկ այլ կարևոր
անհրաժեշտություն է **բժշկական օգնության
հասանելիությունը**, հատկապես այն պատճառով, որ
նրանք կարող են ֆիզիկական և հոգեկան վնասվածքներ են
ստանալա իրենց ճանապարհորդության ընթացքում, եթե ոչ
մեկնելուց առաջ։

Ապաստան տրամադրող երկրի սոցիալական
ծառայություններից կախվածությունը կարող է զգալիորեն
կրճատվել, եթե ապաստան հայցողներին թույլատրվի
աշխատանք փնտրել կամ զբաղվել սեփական եկամուտն
ապահովող գործունեությամբ։ Ապաստան հայցողների
ինքնուրույնության խրախուսումը օգնում է վերականգնել
այդ մարդկանց արժանապատվությունն ու հույսը, որոնք
կտրվել են իրենց սովորական կյանքից. դա նաև մեծապես
մեծացնում է նրանց՝ դժվարություններին կայուն լուծումներ
գտնելու հեռանկարները։ Շատ պետություններում
ապաստան հայցողներին տրվում է ժամանակավոր
աշխատանքի թույլտվություն, կամ գյուղական շրջաններում
թույլատրվում է հողագործությամբ զբաղվել չօգտագործված
հողատարածքներում։

Աճող թվով երկրներում սահմանափակումներ են դրվում
ապաստան հայցողների **ազատ տեղաշարժի** նկատմամբ։
Նրանք գտնվում են կալանքի տակ կամ ենթարկվում են այլ
սահմանափակող միջոցների՝ մինչ իրենց հայցերի որոշումը։
Նրանց երբեմն բերման են ենթարկում զուտ այն պատճառով,
որ ժամանել են անօրինական ճանապարհով։ Կալանքը

միայն բանտում պահելը չէ: Կալանքը տեղի է ունենում, երբ անհատի տեղաշարժը սահմանափակվում է փոքր, փակ միջավայրով, ինչպիսիք են ճամբարը, հյուրանոցի սենյակը կամ օդանավակայանի տարանցիկ գոտին, և ազատ արձակման միակ միջոցը երկիրը լքելն է:

Ապաստան հայցողների կալանավորումը, ՄԱԿ ՓԳՀ-ի կարծիքով, էապես անցանկալի է: Պետությունները չպետք է դիմեն կալանավորմանը ինքնաբերաբար կամ որպես այլ ապաստան հայցողներին զսպելու միջոց: Կալանավորումը պետք է կիրառվի միայն այն դեպքում, եթե դա նախատեսված է օրենքով, և եթե դա անհրաժեշտ է համարվում՝ համաձայն *Գործիքների թիվ 44 (XXXVII) 1986 թ. եզրակացության* չորս հանգամանքների.

- Ստուգել ինքնությունը, երբ դա վիճարկվում է կամ անհայտ է,
- Վարել նախնական հարցազրույց՝ պարզելու ապաստանի հայցի հիմնական տարրերը,
- Երբ անհատը գործել է անբարեխիղճ՝ ոչնչացնելով ճամփորդական կամ անձը հաստատող փաստաթղթերը կամ օգտագործելով կեղծ փաստաթղթեր՝ իշխանություններին մոլորեցնելու համար,
- Երբ տվյալ անձը վտանգ է ներկայացնում ազգային անվտանգության կամ հասարակական կարգի համար:

Եթե անգամ վերը նշված պատճառներով կալանքը անհրաժեշտ է համարվել, այն պետք է օգտագործվի հնարավորինս կարճ ժամկետով: 1951թ. Կոնվենցիան հստակեցնում է, որ ապաստան հայցող երկիր անօրինական մուտքի համար քրեական պատիժ չպետք է սահմանվի այն ապաստան հայցողների նկատմամբ, որոնք հիմնավոր պատճառներ ունենին տարածք մուտք գործելու նպատակով նման միջոցների դիմելու համար, և որոնք անհապաղ կապ են հաստատել իշխանություններին հետ:

Իրենց հայցերի արդյունքներին սպասելիս՝ ապաստան հայցողները պետք է ունենան իրավական կարգավիճակ տվյալ իրենց գտնվելու տևողության ընթացքում: Նրանց պետք է տրվեն **անձը հաստատող որևէ փաստաթուղթ**՝ թեկուզ ժամանակավոր և տարրական: **Գրանցումը**՝ գործընթաց, որի միջոցով յուրաքանչյուր ապաստան հայցողից ստացվում են հիմնական անձնական տվյալները, նույնպես իրավական պաշտպանություն ապահովելու արդյունավետ միջոց է: Այն հեշտացնում է նյութական օգնության բաշխումը ապաստան հայցողներին և օգնում է բացահայտել հատուկ պաշտպանության կարիք

ունեցողներին: Գրանցման ցանկացած գործընթացի հիմնական նկատառումները, ինչպիսիք են հավաքագրված բոլոր տվյալների գաղտնիության ապահովումը, ներկայացված են *ԳործԿոմ-ի թիվ 91 (LII) 2001թ.*

եզրակացության մեջ: Գրանցման կարևորությունը որպես պաշտպանական գործիք ճանաչված է նաև

Պաշտպանության օրակարգում։

Ընդունելության քաղաքականությունը պետք է հաշվի առնի կանանց, աղջիկների և տղաների հատուկ կարիքները:

Ընդհանուր առմամբ, կանայք պետք է ունենան հիմնական օգնության նույնպիսի հասանելիություն, այդ թվում՝ սնունդը, ջուր և ապաստան, ինչպես և տղամարդիկ:

Կանայք չպետք է հույսը դնեն արական սեռի

հարազատների վրա ծառայություններից օգտվելու և իրենց կարիքները հոգալու համար, հակառակ դեպքում նրանք կարող են խոցելի դառնալ շահագործման համար:

Ապաստան հայցող շատ կանանց համար սա կարող է լինել առաջին դեպքը, երբ նրանք գտնվում են իրենց սովորական սոցիալական համակարգից դուրս և, որոշ դեպքերում, առանց ընտանիքի որևէ անդամի ուղեկցության: Ուստի նրանց տրամադրվող կացարանը պետք է լինի ապահով և անվտանգ: Հարկավոր է ապահովել անհրաժեշտ բժշկական օգնություն կանանց համար՝ հաշվի առնելով նրանց սոցիալական և մշակութային առանձնահատկությունները, և կարևոր է, որ փորձառու անձնակազմի անդամներ ներկա լինեն սեռական բռնության ենթարկված կանանց օգնելիս:

Ապաստան հայցող երեխաների հետ աշխատելիս նրանց «լավագույն շահերը»՝ անկախ նրանից՝ անհատապես, թե հավաքականորեն, պետք է առաջնային մտահոգության առարկա լինեն: Այս սկզբունքը ամրագրված է *Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայով* (1989 թ.), որում երեխան սահմանվում է որպես տասնութ տարեկանից ցածր յուրաքանչյուր անձ: Առանձին երեխայի վերաբերյալ որոշումներ կայացնելիս նրա լավագույն շահերը որոշելը պահանջում է ուսումնասիրել ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ չափանիշները, ներառյալ՝ երեխայի տեսակետերը: Երեխայի լավագույն շահը սահմանելիս պետք է հաշվի առնել նրա գործի կոնկրետ փաստերը, այդ թվում՝ երեխայի տարիքը, սեռը, մշակութային ծագումը և անցյալի փորձը, ինչպես նաև ընդհանուր միջավայրը:

Երեխա ապաստան հայցողների կալանավորումից պետք է ամեն գնով խուսափել՝ հաշվի առնելով այն չափազանց վնասակար հետևանքները, որոնք դա կարող է ունենալ երիտասարդների վրա: Պետք է ջանքեր գործադրել՝ օգնելու ստեղծել զգացում, որ ամեն ինչ նորմալ է, և բավարարել

երեխաների զարգացման կարիքները: Հատկապես կարևոր են **կրթության և հանգստի, ժամանցի և խաղի իրավունքները**: Տղաների և աղջիկների համար ընդունելության քաղաքականություն մշակելիս կարևոր է նկատի ունենալ նրանց առջև ծառացած ռիսկերը՝ շահագործում, ֆիզիկական և սեռական բռնություն, թրաֆիքինգ և բռնի հավաքագրում բանակ կամ զինված խմբերը:

Կարևոր է, որ այն երեխաները, որոնց ուղեկցում է չափահաս խնամակալը (առանց ուղեկցության), կամ որոնք մասին հոգ են տանում այլ չափահասներ ծնողների կամ սովորական խնամակալի բացակայությամբ (առանձնացված), հնարավորինս շուտ նույնականացվեն, որպեսզի համապատասխան խնամքի միջոցներ հնարավոր լինի տրամադրել: Պետք է խրախուսվեն համայնքի վրա հիմնված պայմանավորվածությունները, ինչպիսիք են նմանատիպ ծագում ունեցող մեկ այլ փախստական ընտանիքի կողմից խնամակալությունը, այլ ոչ այնպիսի հաստատություններ դիմելը, ինչպիսիք են մանկատները: Հնարավորության դեպքում հնարավորինս շուտ հարկավոր է ջանքեր գործադրել այս երեխաների հարազատներին հայտնաբերելու համար, որպեսզի նրանք կարողանան վերամիավորվել ընտանիքի անդամների հետ:

Հաճախ տարեց ապաստան հայցողները բաժանված են լինում իրենց սովորական խնամողներից: Նրանք կարող են նաև տառապել առողջական խնդիրներից և/կամ դժվարությամբ հարմարվել իրենց նոր միջավայրին և իմանալ, թե որտեղից կարող են օգնություն խնդրել: Ընդունելության քաղաքականությունը նույնպես պետք է զգայուն լինի նրանց հատուկ կարիքների նկատմամբ:

5.4 Փախստականի կարգավիճակի որոշման ընթացակարգերի հասանելիությունը

Անձը փախստական է այն պահից, երբ նա բավարարում է 1951 թվականի Կոնվենցիայով/1967 թվականի Արձանագրությամբ (կամ համապատասխան տարածաշրջանային կամ ազգային փաստաթղթով) սահմանված չափանիշները: Երբ իշխանությունները մեկին ճանաչում են որպես փախստական, նրան ոչ թե փախստական են դարձնում, այլ պարզապես հայտարարում են, որ նա փախստական է: Որպեսզի կառավարությունը արդյունավետ կերպով պաշտպանի փախստականներին, նախ պետք է բացահայտի նրանց և կարողանա տարբերակել այլ օտարերկրացիներից, որոնք ցանկանում են մնալ իր տարածքում: Ինչպես է կառավարությունը դա անում՝

մեծապես կախված է նրա իրավական ավանդույթներից և նրանից, թե տեղին է արդյոք ապաստանի հայցն առանձին քննել, թե ժամանող ապաստան հայցողների թիվն այնքան մեծ է, որ խմբակային մոտեցումն է ավելի նպատակահարմար: Ոչ 1951 թվականի Կոնվենցիան, ոչ նրա Արձանագրությունը չեն անդրադառնում այս ընթացակարգային հարցերի:

Ինչպես քննարկվել է Գլուխ 3-ում, պետությունների պարտականությունն է իրականացնել կարգավիճակի որոշման ընթացակարգեր: Այնուամենայնիվ, եթե պետությունը չի կարողանում կամ չի ցանկանում նույնականացնել փախստականներին իր տարածքում, ՄԱԿ ՓԳՀ-ն կարող է իրականացնել այդ ընթացակարգերը իր մանդատի ներքո: ՄԱԿ ՓԳՀ-ն, ինչպես առանձին պետությունները, որոշում է կարգավիճակի որոշման իր մոտեցումը՝ հիմնվելով այն բանի վրա, թե արդյոք հնարավոր է յուրաքանչյուր ապաստանի հայց քննել առանձին, թե ոչ:

5.4.1 Կարգավիճակի որոշման անհատականացված ընթացակարգեր

Փախստականներին անհատապես նույնականացնելու համար օգտագործվող մեթոդները տարբեր են տարբեր երկրներում՝ կախված տեղական իրավական ավանդույթներից, ռեսուրսներից և հանգամանքներից: Շատ երկրներում նախնական որոշումը կայացվում է մասնագիտացված հանձնաժողովի կամ պաշտոնյաների կողմից՝ ապաստան հայցողների հետ հարցազրույցներից հետո: Դրանք հետագայում կարող են վերանայվել վերաքննիչ մարմնի կամ վարչական դատարանների կողմից վերաքննիչ բողոքի հիման վրա: Երբեմն ՄԱԿ ՓԳՀ-ն ունենում գործի նյութերի հասանելիություն և առանձին գործերի վերաբերյալ իր կարծիքն է տրամադրում պետական մարմիններին: Որոշ երկրներում ՄԱԿ ՓԳՀ-ն կարող է լինել բողոքարկման մարմնի կազմում, որը լսում է փախստականի կարգավիճակի դիմումը մերժված անձանց գործերը:

Ինչպիսի էլ որ լինի որևէ ազգային համակարգի առանձնահատկությունները, Փախստականի կարգավիճակի որոշման մասին ԳործԿոմ-ի թիվ 8 (XXVII) 1977 թ. եզրակացությունը հաստատում է, որ որոշ հիմնական չափորոշիչներ միշտ պետք է պահպանվեն՝ **արդար և արդյունավետ ընթացակարգեր** ապահովելու համար: Դրանց թվում են՝

- Ապաստանի հայցերով զբաղվող բոլոր պաշտոնատար

անձինք պետք է համապատասխան վերապատրաստում անցնեն, ներառյալ՝
չվերադարձելիության սկզբունքի պատշաճ ըմբռնումը,

- Ապաստան հայցողները պետք է հստակ տեղեկացված լինեն իրականացվող ընթացակարգերի մասին և պետք է ունենան անհրաժեշտ օգնություն, օրինակ՝ թարգմանիչներ՝ իրենց գործը ներկայացնելու համար,
- Ապաստան հայցողներին պետք է հնարավորություն տրվի մուտք գործել ՄԱԿ ՓԳՀ դիմումի հիման վրա,
- Ապաստանի հայցի վերաբերյալ պետք է լինի անկախ բողոքարկման կամ բացասական որոշման վերանայման իրավունք,
- Ապաստան հայցողներին պետք է թույլատրվի մնալ երկրի տարածքում մինչև նրանց գործի հանգուցալուծումը, այդ թվում՝ բողոքարկման/վերանայման գործընթացի ժամանակ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայցը ակնհայտորեն չարաշահում է:

Փախստականի կարգավիճակի որոշման ընթացակարգերի և չափանիշների վերաբերյալ ՄԱԿ ՓԳՀ ձեռնարկը, որը վկայակոչվել է ամբողջ աշխարհի դատարանների կողմից, առաջարկում է ուղղորդում որոշակի հարցերի և հայցերի քննության բովանդակային ասպեկտների վերաբերյալ

Ի պատասխան ապաստանի դիմումների թվի աճին՝ շատ կառավարություններ փորձել են պարզեցնել իրենց ապաստանի ընթացակարգերը: Դրանք ներառում են.

- Ընդունելիության ընթացակարգեր, որոնց միջոցով այն պետության իշխանությունները, որտեղ անհատը ի սկզբանե ապաստան է հայցում, որոշում են՝ (i) արդյոք նրանք պատասխանատու են որոշակի հայցի գնահատման համար, թե արդյոք պատասխանատու է մեկ այլ պետություն: (ii) Երբեմն պետությունները պետք է փորձեն որոշել, թե արդյոք ապաստան հայցողն արդեն պաշտպանություն գտել է մեկ այլ պետությունում՝ ենթադրելով, որ անձի կողմից պահանջվող պաշտպանությունը հասանելի է կամ կարող է հասանելի լինել (հայտնի է որպես «ապաստանի առաջին երկիր»), կամ (iii) արդյոք նա կարող է վերադարձվել երրորդ երկիր, որը ցանկանում է արդար ընթացակարգով քննել նրա հայցի էությունը, որը հարգում է չվերադարձելիության սկզբունքը և արդյունավետ պաշտպանություն կապահովի, եթե դիմումը բավարարվի (հայտնի է որպես «անվտանգ երրորդ

երկիր» հայեցակարգ),

- Ապաստանի դիմում ներկայացնելու ժամկետները, Արագացված ընթացակարգեր՝ ակնհայտ անհիմն կամ չարաշահող համարվող հայցերի համար (ինչպես սահմանված է *Գործնական թիվ 30 (XXXIV) 1983թ. եզրակացության* մեջ), կամ այն երկրների քաղաքացիների դիմումների համար, որոնք համարվում են անվտանգ ծագման երկրներ, այսինքն՝ ենթադրվում է, որ դիմումատուն հետապնդման վտանգի տակ չի կարող լինել:

Այնուամենայնիվ, ցանկացած նախաձեռնություն, որն ուղղված է համակարգն ավելի արդյունավետ դարձնելուն, չպետք է խաթարի չվերադարձելիության սկզբունքը: Ավելին, այս ընթացակարգային միջոցառումներից մի քանիսը պաշտպանական այլ մտահոգություններ են առաջացրել, այդ թվում՝ հասանելիության վերաբերյալ: Կարգավիճակը որոշելիս առանձնահատուկ ուշադրության կարիք ունեն **վտանգի տակ գտնվող ապաստան հայցողները**, ինչպիսիք են երեխաները, խոշտանգումների կամ սեռական բռնության զոհերը, որոշակի հանգամանքներում գտնվող կանայք, տարեցները և հոգեկան խնդիրներ ունեցող անձինք: ՄԱԿ ՓԳՀ-ն ողջունել է հատուկ մշակված ընթացակարգերը և/կամ ուղեցույցները նման դեպքերի հետ կապված, որոնք որոշ պետություններ ներկայացրել են նման անձանց կապակցությամբ: Կին ապաստան հայցողները, որոնց ուղեկցում է արական սեռի ազգականը, պետք է գաղտնի կերպով տեղեկացված լինեն ցանկացած փուլում ապաստանի անկախ դիմում ներկայացնելու իրենց իրավունքի մասին և ստանալ իրավաբանական խորհրդատվություն՝ նախքան նման հայց ներկայացնելը: Հնարավորության դեպքում կանայք պետք է հարցազրույց անցկացնեն հմուտ կին հարցազրուցավարների և թարգմանիչների կիսով, որոնք զգայուն են այնպիսի հարցերի նկատմամբ, ինչպիսին է սեռական բռնությունը: Եթե կնոջ ամուսնուն մերժում են ապաստան տալ, ապա կնոջը դեռ պետք է հնարավորություն տրվի հիմնավորելու փախստականի կարգավիճակ ստանալու իր իրավունքը:

Առանց ուղեկցության կամ ընտանիքից բաժանված երեխաներին երկիր ժամանելուն պես չպետք է ենթարկել մանրամասն հարցաքննության: Նման երեխայի հայտնաբերումից հետո պետք է նշանակվի համապատասխան որակավորում ունեցող խնամակալ կամ խորհրդական, որը կօգնի նրան որոշման ընթացակարգի բոլոր փուլերում, և հատուկ պատրաստված անձնակազմը պետք է հարցազրույց անցկացնի նրա հետ

Անձինք, որոնք, հաստատվում է, որ չունեն միջազգային պաշտպանության կարիք

Եթե անհատի փախստականի դիմումը վերջնականապես մերժվում է արդար գործընթացից հետո, կառավարությունն իրավունք ունի նրան հեռացնելու իր տարածքից, բացառությամբ այն դեպքերի, երբ նա այլ պարտավորություններ ունի մարդու իրավունքների միջազգային իրավունքի համաձայն (տե՛ս ստորև «Լրացուցիչ պաշտպանություն»), օրինակ՝ խոշտանգումներին վերադառնալու արգելքի դեպքում: Ինչպես նշված է գործԿոմ-ի 2003թ. թիվ 96 (LIV) եզրակացության մեջ, ցանկացած հեռացում պետք է ձեռնարկվի մարդասիրաբար՝ հարգելով մարդու իրավունքները, և այս հանգամանքներում երեխաների լավագույն շահը դեռ պետք է առաջնային լինի:

ՄԱԿ ՓԳՀ-ն, սկզբունքորեն, չի մասնակցում մերժված ապաստան հայցողների վերադարձին, քանի որ նման անձինք այլևս չեն մտահոգում ՄԱԿ ՓԳՀ-ին: Այնուամենայնիվ, տարածքից նրանց հեռացնելու ձևը կարող է ազդել միջազգային պաշտպանության ռեժիմի ամբողջականության վրա: ՄԱԿ ՓԳՀ-ն երբեմն օգնել է պետություններին, վերջիններիս խնդրանքով, վերադարձնելու մերժված ապաստան հայցողներին, բայց միայն այն դեպքում, երբ դա համապատասխանում է կազմակերպության՝ փախստականներին պաշտպանելու մարդասիրական մանդատին:

Լրացուցիչ պաշտպանություն

Միշտ չէ, որ մարդիկ, որոնք փախչում են ընդհանրացված բռնության իրավիճակներից կամ հասարակական կարգը լրջորեն խաթարող իրադարձություններից, մտնում են 1951թ. Կոնվենցիայով սահմանված հիմքերի շրջանակում: Որպես այդպիսին, նրանք իրավասու չեն ստանալու փախստականի կարգավիճակ՝ համաձայն 1951 թվականի Կոնվենցիայի կամ դրա 1967 թվականի Արձանագրության, թեև նրանք կարող են ընդգրկվել փախստականի ավելի լայն սահմանման մեջ, որը պարունակվում է Փախստականների մասին ԱՄԿ կոնվենցիայում կամ Կարթագենյան հռչակագրում: Այն պետությունները, որոնք չեն կիրառում փախստականի ավելի լայն սահմանում, ընդհանուր առմամբ համաձայն են, որ անմարդկային կլինի նման մարդկանց հետ ուղարկել լուրջ անապահով իրավիճակ, որտեղ նրանց կյանքը վտանգի տակ կհայտնվի: Այսպիսով՝ **պետությունները, որոնք պարտավոր չեն հետևելու փախստականի ավելի լայն սահմանմանը,**

սովորաբար թույլ են տալիս, որ մարդիկ, որոնք փախչում են ընդհանրացված բռնությունից, մնան իրենց տարածքում մինչև ծագման երկրում պայմանների բարելավումը:

Այս դեպքերում, մարդու իրավունքներին առնչվող միջազգային իրավական նորմերի համաձայն, կարող է կիրառվել նաև խոշտանգումների, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի վտանգի տակ գտնվող անձանց վերադարձնելու արգելքը: Որոշ երկրներ, ազգային օրենսդրության համաձայն, շնորհում են հատուկ հումանիտար կամ օժանդակ կարգավիճակ. մյուսները կարգավիճակ են շնորհում որպես վարչական հայեցողություն: Ինչ կոնկրետ անուն էլ որ տրվի այս կարգավիճակին, այն ընդհանուր առմամբ հայտնի է որպես **լրացուցիչ պաշտպանություն**, քանի որ այն լրացնում է 1951 թվականի Կոնվենցիայի համաձայն տրվող փախստականների պաշտպանությանը:

Լրացուցիչ պաշտպանությունը սովորաբար տրվում է փախստականի կարգավիճակի որոշման անհատական ընթացակարգերի համատեքստում՝ ապաստան հայցողի հատուկ հանգամանքների ուսումնասիրությունից հետո: Հետևաբար, այն պետք է տարբերվի այն պաշտպանությունից, որը անձը կարող է ստանալ զանգվածային ներհոսքին ուղղված խմբային արձագանքի շրջանակում, ինչպիսին է ժամանակավոր պաշտպանությունը (քննարկվում է ստորև)

5.4.2 Խմբային հիմունքներով կարգավիճակի որոշման ընթացակարգեր

Երբ միանգամից ժամանում են մեծ թվով ապաստան հայցողներ, հաճախ հնարավոր չէ անհատական կարգավիճակի որոշում իրականացնել: Այս իրավիճակներում զանգվածային ներհոսքի պատճառը, ինչպիսին է միջերկրական քաղաքացիական պատերազմի բռնի սրումը, սովորաբար ակնհայտ է: Եթե ծագման երկրում տեղի ունեցած վերջին իրադարձությունների վերաբերյալ հավաստի ապացույցները, որոնք ստացվել են տարբեր աղբյուրներից, ներառյալ՝ լրատվամիջոցներից և դիվանագիտական զեկույցներից, ցույց են տալիս, որ ժամանողների մեծամասնությունը փախստականի կարգավիճակ ստանալու իրավունք կունենա, ապա ապաստանի երկիրը պետք է զանգվածաբար ժամանողներին ճանաչի որպես փախստականներ: Խմբի յուրաքանչյուր անդամ այնուհետև դիտարկվում է որպես *առաջին հայացքից* փախստական (այսինքն՝ հակառակը ապացուցող ապացույցների բացակայության դեպքում) և

ճանաչվում է կառավարության կողմից որպես այդպիսին: Որոշ իրավիճակներում ՄԱԿ ՓԳՀ-ն կարող է նաև ճանաչել փախստականներին ի սկզբանե իր մանդատի հիման վրա: Նման ճանաչումը հիմնված է փախստականների վերաբերյալ կիրառելի փաստաթղթի վրա: Եթե *առաջին հայացքից* փախստականի կարգավիճակ ստանալուց հետո ի հայտ գան տեղեկություններ, որոնք կասկածներ են հարուցում այս խմբի մեջ գտնվող անհատի փախստականի կարգավիճակ ստանալու իրավասության վերաբերյալ, ապա պետք է կատարվի անհատի գործի քննություն՝ պարզելու, թե արդյոք նրա առաջնային կարգավիճակը պետք է չեղարկվի:

5.4.3 Ժամանակավոր պաշտպանություն

Որոշ կառավարություններ, հիմնականում՝ արդյունաբերական զարգացած երկրներում, առաջարկում են **Ժամանակավոր պաշտպանություն** զանգվածային հոսքի իրավիճակներում: Սա կարճաժամկետ, արտակարգ արձագանք է, որը հետաձգում է փախստականի կարգավիճակ ստանալու իրավասության որոշումը: Փոխարենը, խումբն ընդունվում է ժամանակավոր հիմունքներով՝ համաձայն 1951 թվականի կոնվենցիայի սկզբունքների վրա հիմնված նվազագույն պաշտպանության ստանդարտների: Երբ ծագման երկրում իրավիճակը այնքան բարելավվի, որ ապաստան հայցողների մեծ մասը կարողանա ապահով վերադառնալ, ժամանակավոր պաշտպանությունը հանվում է: Եթե մի քանի տարի անց ծագման երկրում իրավիճակը բավականաչափ չբարելավվի, ապա պետք է գտնել միջազգային պաշտպանության այլ ձև: Հակառակ դեպքում, անարդար կլինի մարդկանց թողնել միջազգային պաշտպանության միայն սահմանափակ ձևով, երբ նրանք կարող են ավելի առատաձեռն վերաբերմունքի և ավելի մեծ կայունության իրավունք ունենալ որպես ճանաչված փախստականներ:

Ամփոփում

Ապաստանի երկրի ֆիզիկական հասանելիություն

Չվերադարձելիության սկզբունքը՝

- Սահմանում է պետությունների՝ **ապաստան հայցողներին իրենց տարածք ընդունելու պարտավորությունը**,
- Հարկավոր է հաշվի առնել միգրացիայի վերահսկման միջոցառումները մշակելիս և իրականացնելիս, ինչպիսիք են վիզայի պահանջները և անօրինական միգրանտներին ձերբակալելը:

Ապաստան հայցողների ընդունելությունը

Ապաստան հայցողները **իրավասու են օգտվելու մարդու իրավունքներից**, ինչպիսիք են՝

- Պատշաճ կացարան և սնունդ
- Բուժօգնություն
- Ազատ տեղաշարժ
- Կրթություն երեխաների համար:

Պետք է լուծում տրվի տարեց ապաստան հայցողների, վտանգի տակ գտնվող կանանց, խոշտանգումներից փրկվածների և երեխաների առանձնահատուկ կարիքներին:

Փախստականի կարգավիճակի որոշման ընթացակարգեր

Նման ընթացակարգերը

- Թույլ են տալիս պետություններին բացահայտել, թե որ ապաստան հայցողներն են փախստական և, հետևաբար, միջազգային պաշտպանության կարիք ունեն:
- Կարող են շատ տարբեր լինել տարբեր երկրներում, քանի որ 1951 թվականի Կոնվենցիայում կամ 1967 թվականի Արձանագրությունում դրանց վերաբերյալ բան նախատեսված չէ:
- Անցկացվում են անհատական կամ խմբային հիմունքներով:

Կարգավիճակի որոշման **անհատականացված** ընթացակարգերը

- Պահանջում են ապաստանի յուրաքանչյուր դիմումի առանձին գնահատում,
- Պետք է պահպանեն որոշակի ընթացակարգային չափանիշներ, ինչպես օրինակ՝ **բողոքարկման** իրավունքը,
- Պետք է թույլ տան, որ մարդիկ, որոնք չեն ճանաչվել որպես փախստական Կոնվենցիայի իմաստով, ստանան **լրացուցիչ պաշտպանություն**, քանի որ նրանց վերադարձը իրենց ծագման երկիր կլիներ անմարդկային է՝ հաշվի առնելով դաժան վերաբերմունքի ենթարկվելու վտանգը, որը հավասարազոր կլիներ հետապնդման:

Խմբային հիմունքներով պաշտպանության արձագանքները

- Կարող են տեղին լինել զանգվածային ներհուսքի իրավիճակներում, երբ

փախստականի անհատական կարգավիճակի որոշումը գործնական չէ, բայց երբ առկա են օբյեկտիվ ապացույցներ խմբի մեծամասնությանը փախստական համարելու համար,

- Կարող են ունենալ առաջին հայացքից ճանաչման կամ

Ժամանակավոր պաշտպանության ձև.

ՄԱԿ ՄԳՀ-ի դերը

- Կարող է տարբեր ձև ունենալ, երբ աջակցում են պետությունների կողմից իրականացվող ընթացակարգերին,
- Կարող է ներառել փախստականի կարգավիճակի որոշում հենց կազմակերպության մանդատի ներքո՝ պետական գործողությունների բացակայության դեպքում:

Լրացուցիչ ընթերցանություն

Ֆիզիկական հասանելիություն

ԳործԿում-ի թիվ 97 (LIV) եզրակացություն զաղտնալսման միջոցառումներում պաշտպանության երաշխիքների մասին, 2003թ.

Ընդունելություն

ԳործԿում-ի թիվ 93 (LIII) եզրակացություն ապաստան հայցողների ընդունելության մասին անհատական ապաստանի համակարգերի համատեքստում, 2002 թ.

ԳործԿում-ի թիվ 22 (XXXII) եզրակացություն լայնածավալ ներհոսքի իրավիճակներում ապաստան հայցողների պաշտպանության մասին, 1981թ.

ԳործԿում-ի թիվ 44 (XXXVII) եզրակացություն փախստականների և ապաստան հայցողների կալանավորման մասին, 1986 թ.

ԳործԿում-ի թիվ 91 (LII) եզրակացություն փախստականների և ապաստան հայցողների գրանցման վերաբերյալ, 2001 թ.

ԳործԿում-ի թիվ 100 (LV) եզրակացություն միջազգային համագործակցության և զանգվածային ներհոսքի իրավիճակներում բեռի ու պատասխանատվության բաշխման մասին:

ՄԱԿ ՓԳՀ, Արտակարգ իրավիճակների վերաբերյալ ձեռնարկ, 2000թ. (Երկրորդ հրատարակություն)

ՄԱԿ ՓԳՀ, Ապաստան հայցողների կալանավորման հետ կապված կիրառելի չափանիշների և չափորոշիչների վերաբերյալ ուղեցույց, 1999 թ.

Կարգավիճակի որոշման ընթացակարգեր

ԳործԿում-ի թիվ 8 (XXVIII) եզրակացություն փախստականի կարգավիճակի որոշման մասին, 1977 թ.

ԳործԿում-ի թիվ 96 (LIV) եզրակացություն միջազգային պաշտպանության կարիք չունեցող անձանց վերադարձի մասին, 2003թ.

ՄԱԿ ՓԳՀ, Փախստականի կարգավիճակի որոշման ընթացակարգերի և չափանիշների մասին ձեռնարկ, 1979թ.՝ վերախմբագրված 1992 թ.

ՄԱԿ ՓԳՀ, Ապաստանի ընթացակարգեր (Ապաստանի արդար և արդյունավետ ընթացակարգեր) (EC/GC/01/12), 2001 թ.

ՄԱԿ ՓԳՀ, Պաշտպանության լրացուցիչ ձևեր (EC/GC/01/18), 2001 թ.

Վարժություններ

Դեպք Թ

Այս դեպքն ուսումնասիրում է փախստականների որոշակի իրավիճակի զարգացումը՝ դրա առաջացումից մինչև տեղահանման մշտական լուծումների որոնումը: Որպես այդպիսին, պատմությունը շարունակվում է 6-րդ և 7-րդ գլուխների վերջում գտնվող վարժություններում (Դեպք Ի և Դեպք Լ):

1960-ական թվականների անկախացումից ի վեր Քսանադուն կառավարվում է մեծամասնություն կազմող էթնիկ խմբի՝ Քսանիների կողմից: Այնուամենայնիվ, 1980-ական թվականների վերջից փոքրամասնություն կազմող էթնիկ խումբը՝ Արկադացիները, քարոզչություն են իրականացնում ավելի մեծ քաղաքական իշխանություն ձեռք բերելու և իրենց մարդու իրավունքների հանդեպ հարգանք ապահովելու համար: Թեև փորձեր արվեցին որոշակի ինքնավարություն ապահովել Արկադիա հարավային նահանգում, որտեղ հիմնականում ապրում են արկադացիները, դրանք կարճատև էին: Խնդիրները սրվեցին 1994 թվականին Արկադիայում նավթի արժեքավոր պաշարների հայտնաբերման արդյունքում: Արկադացիները պնդում էին, որ իրենք պետք է ստանան այդ պաշարներից եկամտի զգալի մասը, քանի որ պաշարները գտնվել են ավանդաբար իրենց հողատարածքում: Այնուամենայնիվ, կառավարությունը անբարյացակամ էր, և նավթի վաճառքից ստացված շահույթից շատ քիչ էր նրանց տրամադրում:

Փորձելով ճնշել Արկադիայում աճող քաղաքական ակտիվությունը, որը հրահրվել էր նավթի հարցով, Կառավարությունը 2003 թվականին կասեցրեց Արկադիայի նահանգային խորհրդարանը և հսկողություն սահմանեց նահանգի մայրաքաղաքում: Ներդրված միջոցառումների թվում էր արկադական դպրոցներում օգտագործվող ուսուցման լեզվի փոփոխությունը՝ արկադերենից քսանացիների լեզուն: Բացի այդ, Արկադիայի ավելի մեծ ինքնավարության կամ անջատման համար պայքարող բոլոր քաղաքական կուսակցություններն արգելվեցին: Հարյուրավոր արկադացի երիտասարդներ ձերբակալվեցին անջատողական տրամադրությունների կասկածանքով. նրանք կալանավորվել են առանց դատավարության: 2003 թվականի աշնանը կառավարության դեմ ցույցերը դարձան ամենօրյա երևույթ: Նոյեմբերին նման երթի ժամանակ բանակը հանվեց ժողովրդի դեմ, և նրանց ու անգեն ցուցարարների միջև տեղի ունեցավ դաժան առճակատում:

Դրանից հետո էլ ավելի շատ արկադացիներ կամայականորեն կալանավորվեցին և խոշտանգվեցին: Հարյուրավոր այլ մարդիկ, հատկապես՝ երիտասարդ տղամարդիկ, փախան հարևան Էլիզիա նահանգ: Միևնույն ժամանակ, Արկադիայի ազատագրման ճակատ (ԱԱՃ) կոչվող կազմակերպությունը ռմբակոծեց նահանգի կառավարական թիրախները, այդ թվում՝ ռադիկալական բաժանմունքները և զինվորական զորանոցները: Ի պատասխան՝ կառավարությունը հրամայեց իր ուժերին ջարդել այն, ինչը նա դատապարտեց որպես ահաբեկչական շարժում: Մեծ թվով զորքեր ուղարկվեցին Արկադիա 2003 թվականի վերջին: ԱԱՃ-ն սկսեց պարտիզանական հակամարտություն զինված ուժերի դեմ՝ հրահրելով բանակին կատաղի հարձակումներ իրականացնել անմեղ արկադացիների վրա: 2004 թվականի հունվարի առաջին երկու շաբաթվա

ընթացքում հարյուրավոր արկադացի տղամարդկանց և կանանց սպանություններ, բռնաբարություններ և խոշտանգումներ տեղի ունեցան: Արկադիայի գյուղերը ամբողջությամբ հրկիզվեցին զորքերի կողմից՝ ակնհայտ նպատակ ունենալով նրանց բնակիչներին ստիպել լքել երկիրը:

Արկադացիների դեմ ահաբեկչության այս արշավի արդյունքում հազարավոր մարդիկ փախան հարևան Էլիզիա նահանգ: Ենթադրվում է, որ միայն հունվարին սահմանը հատել է 200 հազար փախստական: Այս ճգնաժամի անսպասելի բնույթը նշանակում էր, որ շատ քիչ մարդասիրական կազմակերպություններ էին ներկա տեղում, և որ Էլիզիայի կառավարությունը նույնքան անպատրաստ էր: Իրականում Էլիզիան զարգացող երկիր է՝ հազիվ զործող հանրային ծառայություններով (հատկապես դատական, առողջապահական և կրթական ոլորտներում) և ցածր վարձատրվող և հաճախ կոռումպացված պետական պաշտոնյաներով:

Հետևաբար, սահմանի երկայնքով քառսային ձևով ստեղծվեցին փախստականների ճամբարներ: Թեև ՄԱԿ ՓԳՀ-ն և այլ մարդասիրական կազմակերպություններ այժմ ներկա են, կացարանային պարագաները և սննդի պաշարները անբավարար են, և բաշխման գործընթացը արդյունավետ չէ: Մաքուր ջրի հասանելիությունը նույնպես շատ քիչ է: Արդյունքում փախստականներից շատերն ապրում են բաց երկնքի տակ, և աղտոտված ջրից առաջացած հիվանդությունները կարծես թե աճում են: Սա հատկապես մտահոգիչ է, քանի որ ճամբարում քիչ բուժհաստատություններ կան: Բացի այդ, շատ երեխաներ կարծես թե բաժանվել են իրենց ծնողներից փախուստի ժամանակ և ապրում են կամ ինքնուրույն (որպես առանց ուղեկցության երեխաներ), կամ ընտանիքներում, որոնք իրենց ընդունել են (որպես ընտանիքից բաժանված երեխաներ):

Վերջին շաբաթների ընթացքում, Արկադիայում ռազմական գործողությունների աճի պատճառով, հազարավոր մարդիկ ճանապարհ ընկան դեպի Էլիզիա: Այնուամենայնիվ, նաև տեղեկություններ են ստացվել, որ Էլիզիայի զինվորականները հսկում են սահմանը և կանխում հարյուրավոր ապաստան հայցողների մուտքը: Ենթադրվում է, որ այժմ Էլիզիայում մոտ 250,000 փախստական կա Քսանադուից այն դեպքում, երբ Էլիզիան սովորաբար ընդունում է տարեկան մոտ 20,000 ապաստան հայցող: Էլիզիայի իշխանությունները ծանրաբեռնված են և բողոքում են, որ իրենք ռեսուրսներ չունեն այս հսկայական փախստական բնակչության կարիքները հոգալու համար: Բարձրաստիճան պաշտոնյաները եկել են այն եզրակացության, որ փախստականի կարգավիճակի որոշման իրենց ընթացակարգերը պարզապես ի վիճակի չեն լինելու լուծել ապաստան հայցած մեծ թվով արկադացիների խնդիրները: Կառավարությունը հրաժարվում է պաշտոնապես ճանաչել արկադացիներին որպես փախստականներ՝ չնայած նրանց ծագման երկրում էթնիկ և քաղաքական բռնություններին:

Էլիզիան, այնուամենայնիվ, պատրաստ է հանդուրժել փախստականների կարճաժամկետ ներկայությունը, քանի դեռ օգնությունը տրամադրվում է միջազգային հանրության կողմից, այդ թվում՝ ՄԱԿ ՓԳՀ-ի միջոցով:

Դուք պաշտպանության աշխատակից եք, որը վերջերս է ժամանել Էլիզիա, որը Փախստականների կարգավիճակի մասին 1951 թվականի կոնվենցիայի և դրա 1967 թվականի Արձանագրության կողմ է: Այս վարժության նպատակների համար դուք կարող եք ենթադրել, որ կազմակերպությունը ներքին

եզրակացության է եկել, որ նրանք, ովքեր փախչում են Արկադիայից, իրավասու են փախստականի կարգավիճակ ստանալու համար՝ 1951 թվականի Կոնվենցիայի սահմանման համաձայն:

ա Ի՞նչ խորհուրդ կտաք կառավարությանը այս իրավիճակում փախստականի կարգավիճակը որոշելու վերաբերյալ:

բ Դուք մտահոգվու՞մ եք այս համատեքստում փախստականների վերադարձի վերաբերյալ:

գ Նայելով ներկա իրավիճակին՝ բացահայտեք պաշտպանության երկու մտահոգություն, բացի վերադարձելիության վտանգից, Քսանադուից/Արկադիայից եկած փախստականների հետ կապված:

Դեպք Ժ

Ատլանտիսի Հանրապետությունը դարձավ 1951 թվականի Կոնվենցիայի անդամ, իսկ 1978 թվականին՝ Փախստականների կարգավիճակի մասին դրա 1967 թվականի Արձանագրության կողմ: Դրանից կարճ ժամանակ անց այն ստեղծեց Փախստականների նույնականացման խորհուրդ (ՓՆԽ): ՄԱԿ ՓԳՀ-ն մասնակցել է ՓՆԽ-ի բոլոր նիստերին որպես դիտորդ/խորհրդատու, և ՓՆԽ-ի բացասական որոշումները վերանայվել են Կենտրոնական Վերաքննիչ դատարանի (ԿՎԴ) կողմից:

Հաշվի առնելով ապաստանի դիմումների աճող թիվը՝ Ատլանտիսի կառավարությունն առաջարկել է պարզեցնել ապաստանի իր ընթացակարգերը: Հիմնական առաջարկությունները հետևյալն են:

ա Սահմանին ապաստան հայցող բոլոր մարդիկ անմիջապես կհայտնվեն կալանքի տակ՝ նպատակ ունենալով զսպել այլ հավանական ապաստան հայցողներին:

բ Բոլոր ապաստան հայցողները մանրամասն հարցազրույց կանցնեն, հենց որ ապաստանի հայց ներկայացնեն:

գ Եթե ապաստան հայցողը ամուսնացած է, նա չի կարող իր ամուսնու դիմումից առանձին ապաստանի դիմում ներկայացնել:

դ ՓՆԽ-ի կողմից մերժված դիմումները կվերանայվեն ներգաղթային ածխատակցի կողմից, և ՎԿԴ բողոքարկելու իրավունքը կհանվի:

ե Ապաստան հայցողները, որոնք սպասում են նման վերանայման արդյունքին, կարող են հետ արտաքսվել իրենց ծագման երկիր՝ հիմք ընդունելով, որ նրանց թույլտվություն կտրվի կրկին մուտք գործել Ատլանտիս, եթե իրենց բողոքարկումը բավարարվի:

Ձեզ խնդրել են մեկնաբանել այս առաջարկները ՄԱԿ ՓԳՀ-ի անունից:

Գլուխ 5-ի վարժությունների պատասխաններ

Դեպք Թ

ա Հաշվի առնելով այդքան կարճ ժամանակում ժամանակ փախստականների մեծ թիվը՝ փախստականի կարգավիճակի որոշումը տեղին է թվում ոչ թե անհատական, այլ խմբակային հիմունքներով: Նախընտրելի տարբերակը խմբի՝ առաջին անհայցքից ճանաչումն է որպես Կոնվենցիայի փախստականներ. կարելի է նաև դիտարկել ժամանակավոր պաշտպանության հարցը:

բ Այո՝ Նախ՝ եթե զինվորականները թույլ չեն տալիս արկադացիներին հատել սահմանը, դա կնշանակի վերադարձ, եթե այդ մարդիկ ապաստանի կարիք ունեն: Երկրորդ՝ կառավարության այն որոշումը, որ փախստականները կարող են մնալ միայն կարճ ժամկետով, մեծացնում է հարկադիր վերադարձի հեռանկարը, նախքան Քսանադոում պայմանների բարելավումը, այլ կերպ ասած՝ վերադարձելիություն:

գ Մտահոգությունները ներառում են.

- Փաստաթղթերի ապահովում;
- Անբավարար սնունդ, խմելու ջուր և ապաստանի համար անհրաժեշտ նյութեր.
- Սննդի և կացարանի նյութերի բաշխման կազմակերպված համակարգի բացակայություն, ինչը նշանակում է, որ որոշ փախստականներ, հատկապես՝ խոցելի իրավիճակներում հայտնվածները, անարդարացիորեն անբարենպաստ վիճակում են.
- Բավարար բժշկական հաստատությունների բացակայություն;
- Ընտանիքից բաժանված և առանց ուղեկցության երեխաների առկայությունը:

Դեպք Ժ

ՄԱԿ ՓԳՀ-ի մեկնաբանությունները յուրաքանչյուր տարրի վերաբերյալ հետևյալն են՝
ա Ավտոմատ կալանավորումը կամ կալանավորումը որպես զսպող միջոց կիրառելը երբեք արդարացված չէ: Այսպիսով՝ բոլոր ապաստան հայցողների կալանավորումը սահմանին տեղին չէ և անհամատեղելի է ԳործԿոմ-ի թիվ 44 (XXXVII) 1986 թ. եզրակացության հետ:

բ Այս պահանջը չպետք է տարածվի առանց ուղեկցության կամ ընտանիքից բաժանված երեխաների վրա, որոնք նոր են ժամանել երկիր՝ հաշվի առնելով նրանց խոցելիությունը:

գ Կանայք, որոնք ցանկանում են իրենց ամուսնուց առանձին ապաստանի հայց ներկայացնել, իրավունք ունեն դա անելու և հակառակը:

դ Պետք է լինի վերանայում անկախ և վերադաս մարմնի կողմից: Ներգաղթային աշխատակիցը չի բավարարում ՓԿՈ այս պահանջներից որևէ մեկը:

ե Ընդհանուր առմամբ, ապաստան հայցողներին պետք է թույլատրվի մնալ ապաստանի երկրում մինչև բողոքարկման/վերանայման գործընթացի ավարտը: Բողոքարկման հաջողության դեպքում վերադարձի երաշխիքը բավարար չէ:

Գլուխ 6

Տեղահանման շրջափուլը

Մաս II: Վերաբերմունքի չափանիշներ



Հիմնական նպատակներ

Ծանոթանալ վերաբերմունքի չափանիշներին, որոնց իրավասու են փախստականները ապաստանի երկրում:

Հասկանալ ՄԱԿ ՓԳՀ-ի դերը այդ չափանիշների պահպանումն ապահովելու հարցում:

Գնահատել պաշտպանության խնդիրները, որոնք ծագում են կանանց, երեխաների և հատուկ կարիքներ ունեցող այլ խմբերի առնչությամբ:

Այս գլուխը ուսումնասիրում է ապաստանի երկրում ապրող փախստականների կարիքները: Փախստականները հաճախ կախված են իրենց հյուրընկալող կառավարությունից և միջազգային օգնությունից, հատկապես՝ որպես փախստական իրենց կյանքի վաղ փուլերում: Այնուամենայնիվ, ինքնուրույնությունը կենսականորեն կարևոր է հատկապես կայուն լուծումներ գտնելու համատեքստում: Գլուխը ցույց է տալիս, թե ինչպես է ՄԱԿ ՓԳՀ-ի աջակցության գործունեությունը, ինչպիսիք են սննդի, կացարանի և բժշկական օգնության տրամադրումը, նպատակաուղղված պաշտպանությանն աջակցելուն: Քննարկվում են նաև հատուկ պաշտպանության հարցեր՝ կապված կանանց և երեխաների հետ, որոնք, միասին վերցրած, սովորաբար ցանկացած փախստական բնակչության մեծամասնությունն են, ինչպես նաև մի քանի հիմնական մեթոդներ, որոնք պետք է կիրառվեն պաշտպանության ծրագրերի պլանավորման ժամանակ: Դիտարկվում է նաև փախստականների՝ երկրից երկիր տեղափոխվելու խնդիրը՝ արդյունավետ պաշտպանություն փնտրելու համար:

6.1 Վերաբերմունքի չափանիշներ

Այն չափանիշները, որոնք փախստականը կարող է ակնկալել ապաստանի երկրից, հիմնված են փախստականների մասին միջազգային օրենքների և մարդու իրավունքների համակցության վրա: Ստորև բերված պարբերությունները ուրվագծում են, թե ինչ են դրանք ներառում 1951թ. Կոնվենցիայի/1967թ. Արձանագրության մասնակից երկրում: Քանի որ խնդրո առարկա իրավունքներից շատերը բխում են մարդու իրավունքների միջազգային փաստաթղթերից և, իհարկե, սովորույթային իրավունքից, նմանատիպ չափանիշները պետք է պահպանվեն նաև 1951 թվականի Կոնվենցիայի և նրա 1967 թվականի Արձանագրության Կողմ չհանդիսացող երկրների կողմից: Հիմնական բացառությունը ճամփորդական փաստաթղթեր տրամադրելու պարտավորությունն է, որը 1951 թվականի Կոնվենցիայի եզակի դրույթ է:

Համաձայն 1951 թվականի Կոնվենցիայի՝ շահագրգիռ կառավարությունը պետք է իր դրույթները կիրառի իր հողում գտնվող փախստականների նկատմամբ՝ **առանց ռասայական, կրոնական կամ ծագման երկրի հետ կապված խտրականության**, նույնիսկ արտակարգ

իրավիճակներում:

Ֆիզիկական անվտանգությունը, որը նշանակում է և՛ պաշտպանություն վերադարձից, և՛ պաշտպանություն բռնությունից ապաստանի երկրում, առաջնահերթություն է: Փախստականները պետք է տեղակայվեն սահմանից հեռու, եթե իրենց երկրում շարունակական հակամարտություն է ընթանում, որպեսզի չհայտնվեն անդրսահմանային հարձակումների կամ զինված տարրերի ներթափանցման վտանգի տակ: Ընդհանրապես ապաստան տրամադրող երկիրը պետք է ապահովի համապատասխան միջոցառումների իրականացումը՝ փախստականներին հանցավոր բռնությունից, հատկապես՝ ռասայական խտրականությունից կամ այլատյացությունից, այդ թվում՝ խոշտանգումներից, պաշտոնատար անձանց կողմից նվաստացուցիչ կամ անմարդկային վերաբերմունքից կամ այլատյացությունից պաշտպանելու համար:

Չվերադարձելիության սկզբունքից բացառությունները ինչպես պայմանագրային, այնպես էլ սովորույթային իրավունքով շատ նեղ են սահմանված: Դրանք կիրառելի են որպես վերջին միջոց միայն այն դեպքում, երբ տվյալ անհատը ակնհայտորեն վտանգ է ներկայացնում այն երկրի ազգային անվտանգության համար, որտեղ նա բնակվում է, կամ առանձնապես ծանր հանցագործության համար վերջնականապես դատապարտվելուց հետո վտանգ է ներկայացնում համայնքի համար: Որոշ դեպքերում կարող է լինել երրորդ պետություն վտարման հնարավորություն: Հնարավոր իրավիճակներից յուրաքանչյուրում անհատին խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի վտանգի տակ վերադարձնելու արգելքը դեռևս գործում է:

Անվտանգությունը քիչ օգտակար է, քանի դեռ փախստականը չի կարողանում բավարարել իր հիմնական ֆիզիկական և **նյութական կարիքները**: Ապաստան տրամադրած երկիրը հաճախ օգնության կարիք կունենա փախստականներին կերակրելու, հագցնելու, կացարան տալու և բժշկական օգնություն ցուցաբերելու համար: Հաճախ կառավարությունը ստիպված է լինում ապավինել միջազգային հանրության օգնությանը: Այս դեպքերում ՄԱԿ ՓԳՀ-ն փախստականներին տրամադրում է հիմնական ապրանքներ և ծառայություններ: ՄԱԿ ՓԳՀ-ի տարբերանշանը կրող պլաստմասսայից պատրաստված կապույտ վրանները դարձել են պաշտպանության խորհրդանիշ փախստականների արտակարգ իրավիճակներում ողջ աշխարհում: Քանի որ կանայք և երեխաները միասին կազմում են փախստականների մեծամասնությունը, ՄԱԿ ՓԳՀ-ի նպատակներից մեկը, ինչպես նշված է Պաշտպանության օրակարգում, նրանց պաշտպանությունը բարելավելն է: Դա անելու եղանակներից մեկն այն է, որ փախստական կանայք և երեխաները տղամարդկանց հետ հավասար հիմունքներով մասնակցեն իրենց

առօրյա կյանքի վրա ազդող որոշումների կայացմանը:

Եթե փախստականների մեծամասնության համար անխուսափելի է ուրիշների աջակցությունից կախվածությունը, հատկապես՝ ապաստանի երկրում գտնվելու սկզբնական փուլերում, դա չի նշանակում, որ նրանք չեն կարող ավելի ու ավելի ապավինել սեփական հմտություններին իրենց և իրենց ընտանիքների նյութական կարիքները բավարարելու համար: Ընդունող պետության շահերից է բխում հեշտացնել **ինքնուրույնությունը**՝ թույլ տալով օգտվելով աշխատաշուկայի հասանելիությունից և ինքնազբաղվածության նախաձեռնություններից: Նման նախաձեռնությունները, ի վերջո, կօգնեն փախստականներին գտնել իրենց ծանր վիճակի համար կայուն լուծումներ՝ լինի դա կամավոր հայրենադարձության, տեղական ինտեգրման, թե վերաբնակեցման միջոցով: Հաճախ հասկանալի մտահոգություններ կան այն մասին, որ քաղաքացիները փախստականների պատճառով կորցնում են սակավ տնտեսական հնարավորությունները: Այնուամենայնիվ, փախստականները կարող են նպաստել երկրի զարգացմանը՝ տրամադրելով հմտություններ և աշխատուժ նվազ ռեսուրսներով ապահովված ոլորտներում, նպաստելով ենթակառուցվածքային նախագծերին և այլ կերպ չօգտագործվող հողերի մշակմանը:

Ինքնուրույնության հասնելու կարևոր գործոն է, որն ընդհանուր առմամբ մեծ ազդեցություն ունի պաշտպանության որակի վրա, **տեղաշարժի ազատությունը**, որից օգտվում են փախստականները: Եթե անհատը հատուկ վտանգ չի ներկայացնում հասարակական կարգի կամ առողջության համար, նա պետք է ունենա երկրում ազատ տեղաշարժվելու նույնպիսի իրավունք, որպիսին ունի ցանկացած քաղաքացի: Իհարկե, կարող են լինել երկրի տարածքներ, որոնք բոլորի համար արգելված են՝ անվտանգության նկատառումներից ելնելով (օրինակ՝ որտեղ տեղի են ունենում սահմանային փոխհրաձգություններ): Այս դեպքերում փախստականները կընդգրկվեն նման սահմանափակումներով:

Փախստականների՝ վերը նկարագրված բազմաթիվ իրավունքներից օգտվելու հնարավորությունը, հատկապես՝ տեղաշարժի ազատությունը և վերադարձից պաշտպանությունը, շատ ավելի մեծ է, եթե նրանք ունեն անձը հաստատող փաստաթղթեր: Ապաստան տվող

երկիրը պարտավոր է յուրաքանչյուր փախստականին տրամադրել նման փաստաթղթեր, եթե նա չունի ճամփորդական փաստաթուղթ: Երբ կառավարությունները չեն կատարում այդ պարտավորությունները, ՄԱԿ ՓԳՀ-ն հաճախ աշխատում է նրանց հետ՝ ուժեղացնելու գրանցման գործընթացները և համատեղ **անձը հաստատող փաստաթղթեր** տրամադրելու համար: Երբեմն ՄԱԿ ՓԳՀ-ն գրություն է տրամադրում, որում նշվում է, որ տվյալ անհատը կազմակերպության խնդրո առարկա անձ է: Սա կարող է նվազեցնել փախստականների խոցելիությունը արտաքսման և կամայական կալանավորման նկատմամբ և որոշակի երաշխիք ապահովել այլ իրավունքների մերժման դեմ

1951 թվականի Կոնվենցիան նկարագրում է **ճամփորդական փաստաթղթերի ձևը**, որպեսզի դրանք ճանաչվեն Կոնվենցիայի մյուս մասնակից պետությունների կողմից: Որոշ երկրներում ճամփորդական փաստաթղթեր են տրամադրվում, որպես կանոն, երբ փախստականի կարգավիճակ է շնորհվում: Մակայն, հաշվի առնելով վարչական ծախսերը, շատ պետություններ տրամադրում են այս փաստաթուղթը միայն պահանջի դեպքում:

Երեխա փախստականների հատուկ կարիքները ներառում են համապատասխան **կրթության** հասանելիությունը՝ առնվազն տարրական մակարդակում, և հանգստի հնարավորությունները: Որոշ դեպքերում երեխա փախստականները գնում են դպրոցներ, որտեղ հաճախում են նաև տեղացի երեխաներ: Դա հաճախ հնարավոր չէ ճամբարային իրավիճակներում, ուստի պետք է այլ դրույթներ ձեռնարկվեն: Ուսումնական ծրագրի և ուսուցման լեզվի վերաբերյալ որոշում կայացնելը մանրակրկիտ քննարկում է պահանջում: Հնարավորության սահմաններում հարկավոր է ապահովել երեխաների՝ նախքան փախստական դառնալը ստացած կրթության շարունակությունը փախստական լինելու ընթացքում: Միևնույն ժամանակ, նրանց կրթությունը պետք է նախապատրաստի նրանց ապագային, որը կարող է ներառել կամ չներառել տուն վերադարձը:

Ընտանիքի միասնությունը ևս կարևոր խնդիր է, որն ազդում է այն երեխաների վրա, որոնք բաժանվում են իրենց ընտանիքներից փախուստի ժամանակ: Կարևոր է, որ ընտանիքի մերձավոր անդամները (առնվազն ամուսինները և խնամարկյալ երեխաները) հնարավորինս շուտ վերամիավորվեն ապաստանի երկրում:

Ապաստանի երկրների և փախստականների միջև

հարաբերությունները միակողմանի չեն.
փախստականները **պարտավոր են ենթարկվել այն երկրի օրենքներին**, որտեղ նրանք ապրում են, ներառյալ՝ հասարակական կարգը պահպանելու օրինական կանոնակարգերին: Փախստականները նաև ենթակա են ապաստան տրամադրող երկրի քրեական օրենսդրությանը այնպես, ինչպես երկրի քաղաքացիները: Փախստականները պետք է անարգել մուտք ունենան ապաստանի երկրի դատարաններ, ինչպես որ նրանց հիմնական քաղաքացիական իրավունքն է:

Զանգվածային ներհոսքի իրավիճակները զգալի մարտահրավերներ են ներկայացնում փախստականների նկատմամբ համապատասխան վերաբերմունքի ընդունելի չափանիշների ապահովման համար: Ներգրավված երկիրը հանկարծակի խնդրի առաջ կարող է կանգնել իր ռեսուրսների հսկայական պահանջարկի պատճառով: Աղքատ երկրները կարող են դժվարությամբ ապահովել համապատասխան նյութական աջակցություն, հատկապես, երբ իրավիճակը երկարաձգվում է: ԳործԿում-ի թիվ 22 (XXXII) 1981 թ. եզրակացությունը, որն ընդունվել է Հարավարևելյան Ասիայի փախստականների ճգնաժամի հմատանքստում, հաստատում է, որ նվազագույն մարդասիրական չափանիշները՝ հիմնականում վերը նշվածները, միշտ պետք է պահպանվեն: Այսպիսով՝ միջազգային համագործակցությունը վճռորոշ է զանգվածային հոսքերի ժամանակ:

6.1.1 Հատուկ պաշտպանության խնդիրներ

Փախուստի տրավման և տարագրության մեջ ապրելու լարվածությունը անխուսափելիորեն հանգեցնում են **փախստականների բնականոն սոցիալական միջավայրի խախտմանը**: Սա կարող է ազդել փախստականների վրա, որոնք ցրված են տեղական համայնքում կամ բնակվում են հատուկ նշանակված կենտրոններում կամ ճամբարներում: Ընտանիքների ներսում առկա ճնշումները կարող են հանգեցնել ընտանեկան բռնության կամ երեխաների նկատմամբ բռնության: Բռնություն կարող է բռնկվել փախստականների համայնքում, քանի որ ապաստանի երկրի իրավապահ համակարգը կարող է թույլ լինել, հատկապես՝ ճամբարներում: Կարևոր է վստահություն ձևավորել փախստականների համայնքի հետ, որպեսզի հնարավոր լինի բարձրաձայնել բռնության և ոտնձգությունների վերաբերյալ մտահոգությունները: Պետք է գործի դրվեն արդյունավետ համակարգեր՝ այս խնդիրների լուծման գործում առաջընթացը վերահսկելու համար:

Փախստականների անվտանգությունն ու վստահությունը բարելավելու գործնական միջոցառումները ներառում են ճամբարներում ոստիկանական պարեկության նշանակումը կամ հատուկ պահակախմբերի ավելացումը: Փախստականների համար կենսականորեն կարևոր է մասնակցել և միջոցներ ձեռնարկել իրենց առջև ծառացած սոցիալական խնդիրների լուծման համար: Երբ փախստականները տեղավորվում են հավաքական կացարաններում, ընդհանուր անվտանգությունը կարող է ուժեղացվել՝ ապահովելով համապատասխան լուսավորություն և տեղադրելով սանիտարական սարքավորումներ անվտանգ և լավ լուսավորված տարածքներում: Ինքնուրույնության զարգացմանն ուղղված նախաձեռնությունները կարող են օգնել նվազեցնել ընտանեկան բռնության և այլ հակասոցիալական վարքագծի դեպքերը, որոնք հաճախ բխում են հուսահատությունից և հիասթափությունից, որոնք զգում են բարոյալքված տղամարդ փախստականները:

Փախստականների բնակավայրերի մերձությունը հայրենի երկրին պաշտպանության կարևոր խնդիր է: Վերջին մի քանի տասնամյակների ընթացքում զինված տարրերը ներթափանցել են փախստականների ճամբարներ՝ այդպիսով վտանգելով **ապաստանի քաղաքացիական և մարդասիրական բնույթը**: Նման զինված խմբավորումների առկայությունը ոչ միայն սպառնում է ռազմական հարձակումներ և ոստիկանական գործողություններ հրահրել փախստականների դեմ, այլև կարող է հանգեցնել դաժան ահաբեկչության հենց ճամբարում: Ռուանդայի ճգնաժամի ժամանակ, օրինակ, 1994–96 թվականներին փախստականների ճամբարներից շատերը փաստացիորեն դեկավարվում էին նախկին կառավարության զինված անդամների կողմից, որոնք վերահսկում էին մարդասիրական օգնության բաշխումը, գանձում էին «հարկեր» և սպառնալիք էին ներկայացնում ծագման երկրի իշխանությունների համար:

Ինչպես նշվում է *Գործնական-ի թիվ 94 (LIII) 2002 թ. եզրակացության* մեջ, ապաստան տրամադրող երկրի պարտականությունն է զինված տարրերին հեռու պահել փախստականների ճամբարներից: Բայց շատ երկրներ պարզապես չունեն ֆինանսական և մարդկային ռեսուրսներ, որոնք անհրաժեշտ են նման բարդ գործը ստանձնելու համար. հաճախ պահանջվում է միջազգային հանրության էական աջակցությունը: Միավորված ազգերի կազմակերպության որևէ գործակալության բացակայության դեպքում, որը հատուկ մանդատ ունի

զինված տարրերին փախստականների շրջանում բացահայտելու և նրանցից առանձնացնելու համար, ՄԱԿ ՓԳՀ-ն, համագործակցելով Կարմիր խաչի միջազգային կոմիտեի հետ, աշխատում է պետությունների հետ՝ գտնելու գործնական միջոցներ այս դժվարին խնդիրը լուծելու համար: Մոտեցումներից մեկն այն է, որ սահմանների վրա հետախուզական գործողություններ իրականացվեն՝ տարբերելու միջազգային պաշտպանության կարիք ունեցող մարդկանց այն փախստականներից, որոնք ներգրավված են ռազմական գործողությունների մեջ, կամ որոնք ցանկանում են հանգստանալ, այնուհետև վերսկսել ռազմական գործողությունները: Պաշտպանության օրակարգը սահմանում է մի շարք միջոցառումներ, որոնք կարող են իրականացվել փախստականների անվտանգությունը բարելավելու համար, այդ թվում՝ ապաստան տրամադրող երկրների, ՄԱԿ ՓԳՀ-ի և դոնոր պետությունների միջև համագործակցությունը:

Զինված հակամարտություններին մոտ ապրող փախստականների մեկ այլ խնդիր է **զինված ուժեր գորակոչվելու վտանգը**: Աղջիկները և տղաները հատկապես վտանգի տակ են, հատկապես՝ եթե դեռահասների համար բավարար կրթական կամ ժամանցային հնարավորություններ չկան: Քանի որ այս իրավիճակներում հավաքագրումը հաճախ հարկադրված է, շատ կարևոր է պահպանել փախստականների ճամբարների քաղաքացիական բնույթը, ամրապնդել համայնքային համախմբվածությունը և վերահսկել երիտասարդ փախստականների գործունեությունը: Երեխաների դեպքում, որոնք փախել են զինված ուժերից, կարևոր է հեշտացնել նրանց վերադարձը դեպի քաղաքացիական կյանք և օգնել նրանց հաղթահարելու իրենց ապրած սարսափելի փորձառությունները: «Զինվոր երեխաներ» տերմինը չի վերաբերում միայն նրանց, ովքեր զենք են կրել կամ օգտագործել. այն նաև վերաբերում է ցանկացած երեխայի, որը ծառայել է զինված խմբում ցանկացած կարգավիճակով, ներառյալ՝ աղջիկները, որոնք հավաքագրվել են սեռական շահագործման նպատակներով կամ հարկադիր ամուսնության համար:

Ընտանեկան բռնությունը **սեռական և գենդերային բռնության** (ՄԳԲ) ձևերից մեկն է, որը կարող է ազդել փախստականների վրա: ՄԳԲ-ն մարդու իրավունքների խախտում է, որը ամրապնդում է հասարակության մեջ տղամարդկանց և կանանց տարբեր դերերի վերաբերյալ կարծրատիպերը: Հաշվի առնելով, որ հասարակությունների մեծ մասում կանայք և աղջիկները

ավանդաբար պակաս ուժեղ են եղել, քան տղամարդիկ, նրանք նույնպես ամենայն հավանականությամբ կլինեն ՍԳԲ-ի գոհեր: ՍԳԲ -ն կարող է լինել ֆիզիկական կամ սեռական բռնության, այդ թվում՝ բռնաբարության, մարդկանց թրաֆիքինգի և կանանց սեռական օրգանների խեղման ձևով: Երբ սեռական ոտնձգությունն օգտագործվում է որպես պատերազմի զենք, ՍԳԲ-ն կարող է փախուստի պատճառ դառնալ: Այն կարող է իրականացվել նաև փախուստի և ապաստանի ժամանակ, օրինակ, երբ աղջիկ փախստականներին ստիպում են մարմնավաճառությամբ զբաղվել՝ իրենց ընտանիքի համար հավելյալ սնունդ ստանալու համար:.

ՄԱԿ ՓԳՀ-ն մշակել է ՍԳԲ-ի կանխարգելման և դրան արձագանքելու համապարփակ ուղեցույցներ, որոնք հաստատվել են Պաշտպանության օրակարգով: ՍԳԲ-ի պատճառները բարդ են և բխում են հիմնական սոցիալական կառույցներից: Հետևաբար, ՍԳԲ-ի դեմ պայքարի և կանխարգելմանն ուղղված միջոցառումների մշակումն ու իրականացումը պետք է ներգրավի մի շարք դերակատարների, այդ թվում՝ փախստականների համայնքին և բոլոր նրանց, ովքեր ներգրավված են նրանց աջակցելու գործում: ՄԱԿ ՓԳՀ-ի վարքագծի կանոնագիրքը նաև հստակեցնում է, որ կազմակերպության աշխատակիցները երբեք չպետք է չարաչափեն փախստականների առնչությամբ իրենց ուժի դիրքը՝ ստանալով սեռական ծառայություններ պաշտպանության կամ օգնության դիմաց: ԳործԿում-ի թիվ 98 (LIV) 2003թ. եզրակացությունն ընդգծում է ապաստան տրամադրող երկրների կողմից իրենց տարածքում փախստականների սեռական բռնությունը և շահագործումը կանխելու նպատակով միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտությունը:

6.1.2 Պաշտպանության մեթոդաբանություններ

Պաշտպանական գործողությունների՝ **համակարգված և հաշվետու կերպով իրականացումն ապահովելու համար կարևոր է հաշվի առնել սեռը և տարիքը, խրախուսել համայնքի զարգացման մոտեցումը և ապահովել իրավունքների վրա հիմնված մոտեցում** այդ գործողություններին:

Սեռի և տարիքի հիմնական նկատառումները ներառում են ցանկացած ծրագրված գործողության, այդ թվում՝ օրենսդրության, քաղաքականության և ծրագրերի գնահատումը կանանց, տղամարդկանց, աղջիկների և տղաների համար դրանց ազդեցության տեսանկյունից յուրաքանչյուր ոլորտում և բոլոր մակարդակներում: Մառազմավարություն է՝ երաշխավորելու, որ բոլոր կանանց, տղամարդկանց, աղջիկների և տղաների մտահոգությունները հաշվի առնվեն բոլոր քաղաքական, տնտեսական և սոցիալական ոլորտներում քաղաքականություն և ծրագրեր մշակելիս, իրականացնելիս, մշտադիտարկելիս և գնահատելիս, որպեսզի անհավասարությունը չամրապնդվի: Այս մառազմավարության վերջնական նպատակը գենդերային և տարիքային հավասարության հասնելն է:

Հաճախ թյուր կարծիք կա, որ գենդերը վերաբերում է միայն կանանց, և որ գենդերային ինտեգրումը հիմնականում վերաբերում է կանանց համար հատուկ նախագծեր ստեղծելուն: Սեռի և տարիքի ինտեգրումը գործառնական առաջնահերթություն է, որը ներառում է բոլոր տարիքի տղամարդկանց և կանանց, ներառյալ՝ երեխաներին:

Համայնքների զարգացման մոտեցման միջոցով փախստականների համայնքը, ի դեմս բոլոր խմբերի (կանայք, տղամարդիկ, երեխաներ, տարեցներ, փոքրամասնություններ և այլն), ներգրավված է բոլոր այն ծրագրերի գնահատման, իրականացման և մշտադիտարկման մեջ, որոնք ազդում են իրենց վրա: Փախստականների մասնակցության մեծացումը որոշումների կայացման միջոցառումներին օգնում է վերականգնել նրանց արժանապատվությունն ու ինքնագնահատականը և խրախուսել ինքնավստահությունը:

Պաշտպանության՝ **իրավունքների վրա հիմնված մոտեցումը** հիմնված է մարդու իրավունքների միջազգային չափանիշների վրա: Այն ներառում է մարդու իրավունքների միջազգային համակարգի նորմերը,

չափանիշները և սկզբունքները փախստականների պաշտպանությանն առնչվող ծրագրերում, քաղաքականության մեջ և գործընթացներում: Այս իրավունքները թվարկված են միջազգային պայմանագրերում և հռչակագրերում, որոնք վերաբերում են քաղաքացիական, մշակութային, տնտեսական, քաղաքական և սոցիալական իրավունքներին: Կիրառվող սկզբունքները ներառում են հավասարություն և արդարություն, հաշվետվողականություն, լիազորություններ և մասնակցություն:

ՄԱԿ ՓԳՀ-ի աշխատակիցների համար հաճախ դժվար է ստուգել, թե արդյոք դրանք ներառում են սեռը և տարիքը, և իրենց աշխատանքում ընդգրկում են համայնքի զարգացման և իրավունքների վրա հիմնված մոտեցում: Ուստի անհրաժեշտ է վերլուծել, թե ինչպես են մարդասիրական միջամտությունները տարբեր կերպ ազդում տղամարդկանց, կանանց, տարեցների և երեխաների վրա: Իրավիճակային համապարփակ վերլուծության իրականացումը հաճախ անհրաժեշտ է նաև ճամբարում կանանց, տղամարդկանց, աղջիկների և տղաների վիճակը գնահատելու և նրանց համար ռազմավարություններ և ծրագրեր պլանավորելու համար: Իրավիճակի վերլուծության ժամանակ տեղեկատվություն է հավաքագրվում փախստական բնակչության հիմնական խնդիրների և կարիքների մասին, և բացահայտվում են այդ բնակչության մեջ առկա հիմնական ռեսուրսները: Այս ամբողջ տեղեկատվությունը վերլուծելուց հետո ծրագրերը կարող են պլանավորվել ավելի արդյունավետ կերպով:

6.1.3 Երկրորդային տեղաշարժեր

Երբ փախստականները չեն կարողանում արդյունավետ պաշտպանություն վայելել այն երկրում, որտեղ նրանք առաջին անգամ ապաստան են հայցում, նրանք կարող են անվտանգություն փնտրել այլուր: Այս ճանապարհորդությունը կոչվում է երկրորդային տեղաշարժ և կարող է տեղի ունենալ, եթե փախստականին թույլ չեն տվել օգտվել կարգավիճակի որոշման ընթացակարգերից, եթե նա չի կարողացել կարգավորել իր կարգավիճակը, եթե նա չի ստացել համապատասխան օգնություն, նույնիսկ այն բանից հետո, երբ նա ճանաչվել է փախստական, եթե ապաստանի երկրում ֆիզիկական վտանգի տակ է եղել, կամ եթե երկարաժամկետ լուծումների հասանելիություն չունի: Որպեսզի փախստականները ստիպված չլինեն շարունակել ապաստան փնտրելը, կարևոր է զարգացնել առաջին ապաստանի երկրներում պաշտպանական

կարողությունները, մասնավորապես՝ նրանց կարգավիճակի որոշման ընթացակարգերը և վերաբերմունքի չափանիշները: Երկրորդային տեղաշարժը կարող է առաջանալ նաև փախստականների երկարատև իրավիճակներում, երբ փախստականները չեն տեսնում իրենց ծանր վիճակի վերջը (տես Գլուխ 7):

Ամփոփում

Վերաբերմունքի չափանիշներ

Ճանաչված փախստականների իրավունքները

- Բխում են ինչպես փախստականներին, այնպես էլ մարդու իրավունքներին առնչվող միջազգային իրավական նորմերից,
- Նույնն են յուրաքանչյուր երկրում՝ անկախ նրանից, թե ապաստան տրամադրող երկիրը 1951 թվականի Կոնվենցիայի/1967 Արձանագրության կողմ է, թե ոչ,
- Լրացվում են փախստականների պարտավորություններով այն երկրի նկատմամբ, որտեղ նրանք գտնվում են, մասնավորապես՝ պահպանելով այդ երկրի օրենքները:

Մարդասիրական աջակցություն

Պետությունների միջև միջազգային համագործակցությունը էական նշանակություն ունի փախստականների պայմանների համապատասխանությունը միջազգային չափանիշներին ապահովելու համար, հատկապես, երբ ապաստան տրամադրող երկիրն ունի սահմանափակ ռեսուրսներ:

ՄԱԿ ՓԳՀ-ն հաճախ նյութական օգնություն և հիմնական ծառայություններ է տրամադրում փախստականներին՝

- Նման օգնությունը կարող է օգնել ապահովելու պաշտպանության նպատակները, հատկապես, քանի որ կանայք և երեխաները կազմում են փախստականների մեծամասնությունը.
- ՄԱԿ ՓԳՀ-ի աշխատակիցները պարտավոր են չչարաշահել իրենց լիազորությունները, որոնք բխում են այն փաստից, որ նրանք պատասխանատու են սուղ ռեսուրսների համար:

Հատուկ պաշտպանության խնդիրներ

Կառավարությունները, մարդասիրական դերակատարները, այդ թվում՝ ՄԱԿ ՓԳՀ-ն և փախստականները, պետք է միասին աշխատեն՝ վերջ տալու՝

- Բռնությանը, որը կարող է առաջանալ փախստականների համայնքում բնականոն սոցիալական միջավայրի խախտման հետևանքով,
- Զինված խմբերի ներթափանցման վտանգին, երբ փախստականների համայնքը փախել է հակամարտությունից,
- Երեխա փախստականների խոցելիությանը զինվորական հավաքագրման նկատմամբ,
- Սեռական և գենդերային հիմքով բռնությանը, որը հիմնականում ազդում է փախստական կանանց և աղջիկների վրա:

Լրացուցիչ ընթերցանություն

Զանգվածային ներհոսքի իրավիճակներ

ՄԱԿ ՓԳՀ, *Արտակարգ իրավիճակների վերաբերյալ ձեռնարկ*, 2000թ. (երկրորդ հրատարակություն)

Ապաստանի քաղաքացիական և մարդասիրական բնույթը

ԳործԿում-ի թիվ 94 (LIII) եզրակացություն ապաստանի քաղաքացիական և մարդասիրական բնույթի մասին, 2002 թ.

ԳործԿում-ի թիվ 48 (XXXVIII) եզրակացություն փախստականների ճամբարների և բնակավայրերի վրա ռազմական կամ զինված հարձակումների մասին, 1987թ.

ԳործԿում-ի թիվ 45 (XXXVII) եզրակացություն փախստականների ճամբարների և բնակավայրերի վրա ռազմական կամ զինված հարձակումների մասին, 1986թ.

Երեխաներ

ԳործԿում-ի թիվ 84 (XLVIII) եզրակացություն փախստական երեխաների և դեռահասների մասին, 1997 թ.

Գործողություններ հանուն երեխայի իրավունքների, «Սեյվ դե Չիլդրեն»/ՄԱԿՄԻԳՀԳ/ՄԱԿ ՓԳՀ/ՅՈՒՆԻՍԵՖ, 2002թ.

ՄԱԿ ՓԳՀ, *Փախստական երեխաներ. ուղեցույց պաշտպանության և խնամքի վերաբերյալ*, 1994թ.

Սեռական և գենդերային բռնություն

ԳործԿում-ի թիվ 98 (LIV) եզրակացություն սեռական չարաշահումից և շահագործումից պաշտպանության մասին, 2003թ.

ԳործԿում-ի թիվ 73 (XLIV) եզրակացություն փախստականների պաշտպանության և սեռական բռնության մասին, 1993 թ.

ՄԱԿ ՓԳՀ, *Սեռական և գենդերային բռնությունը փախստականների, վերադարձողների և ներքին տեղահանվածների նկատմամբ*, 2003 թ.

ՄԱԿ ՓԳՀ, *Վարքագծի կանոնագիրք*, 2002 թ..

Վարժություններ

Դեպք Ի

Այս դեպքը 5-րդ գլխի Դեպքի Թ-ի շարունակությունն է:

2004 թվականի կեսերին Էլիզիայի փախստականների ճամբարներում ապրելու պայմանները որոշ չափով բարելավվել էին: Վրաններ պատրաստելու համար պլաստմասսե ծածկերի և խմելու ջրի հասանելիությունը բարելավվել էր: Սակայն ճամբարների անվտանգությունը մեծ խնդիր էր դարձել: Քանի որ ճամբարները գտնվում էին սահմանի մոտ, ԱԱԶ-ի անդամները դրանք օգտագործում էին որպես հանգստի կետեր: Սա ոչ միայն հանգեցրեց նրան, որ մարդասիրական օգնությունից կարողանում էին օգտվել նրանք, ովքեր փախստական չէին, այլև ճամբարներում վախի մթնոլորտի առաջացմանը: Մարդասիրական անձնակազմը, այդ թվում՝ ՄԱԿ ՓԳՀ-ի աշխատակիցները, արեցին հնարավորը, բայց մինչ այդ Էլիզիայի կառավարությունը անվտանգության անձնակազմ չէր տեղակայել զինված տարրերին արմատախիլ անելու համար: Փոխարենը, Էլիզիայի զինված ուստիկանության վերջին արշավանքները, որոնք իբրև ձերբակալել էին զինված ԱԱԶ անդամներին, հանգեցրին միայն փախստական երիտասարդ տղամարդկանց կամայական ձերբակալություններին և կալանավորմանը:

Բացի այդ, իշխանություններն արգելել էին փախստականներին լքել ճամբարները, եթե նրանք հատուկ թույլտվություն չստանային ճամբարի կառավարչից, որը բարձրաստիճան ուստիկանական ուժերի անդամ էր: Նահանգապետը հազվադեպ էր ներկա լինում ճամբարում, ուստի չափազանց դժվար էր նման թույլտվություն ստանալը: Որոշ փախստականներ, այնուամենայնիվ, լքել էին ճամբարը, քանի որ մոտակայքում կար չօգտագործված հող, որտեղ նրանք փորձում էին հողագործությամբ զբաղվել՝ իրենց ստացած պարենային օգնությունը համալրելու համար: Պարբերաբար նրանցից մեկին ձերբակալում էին ճամբարից չարտոնված ելքի համար և մի քանի օրով պահում կալանքի տակ: Բանտարկության ընթացքում այս փախստականները ծեծի էին ենթարկվում բանտի պահակախմբի կողմից, և նրանց ուտելու բան չէին տալիս: Որոշ փախստական կանայք նույնպես գաղտնի հեռանում էին ճամբարից՝ վառելափայտ հավաքելու նպատակով, որի պակաս կար: Վերջերս այդ կանանցից երեքը բռնաբարվել են տեղի տղամարդկանց կողմից: Նրանք հարձակման մասին հայտնել են տեղի ուստիկանությանը, սակայն մինչ այս պահը որևէ քայլ չի ձեռնարկվել:

Ճամբարներ կատարած Ձեր այցելությունների ժամանակ Դուք ուսումնասիրել եք Ժյուլի իրավիճակը՝ տասը տարեկան տղա, ում խնամում է իր տասնիննամյա քույրը՝ Կամիլը: Նրանք փախել են Արկադիայից այն բանից հետո, երբ նրանց ծնողները սպանվել են զինվորների կողմից: Կամիլը դժվարությունների է հնադիպել, երբ փորձել է իր և Ժյուլի համար պարենային օգնության ճիշտ չափաբաժիններ ստանալ: Բաշխումն իրականացվում է ՀԿ-ի տեղական աշխատակիցների կողմից, որը ՄԱԿ ՓԳՀ-ի իրականացնող գործընկերներից է: Բաշխման կետերը շատ մարդաշատ են, որտեղ մարդիկ շտապում են պաշարների համար: Արդյունքում կանայք դուրս մղվում հերթերից: Վերջին այցի

Ժամանակ ժյուլը Ձեզ ասել է, որ իրենք սնունդ էին ստանում քրոջ նոր էլիզացի ընկերոջից՝ Պեդրոյից: Ըստ ժյուլի՝ Կամիլն ու Պեդրոն հեռանում էին մոտ մեկ ժամով՝ զրուցելու, որից հետո Պեդրոն թողնում էր որոշ սննդամթերք: Ժյուլը նկատել է, որ իր քույրը այս խոսակցություններից վերադառնում էր ալեկոծված վիճակում, հաճախ կարծես լաց լինելով: Ժյուլը տեսել է, որ Պեդրոն աշխատում է ՀԿ-ում, որը ճամբարում սնունդ է բաժանում:

Ժյուլը նաև ասել է Ձեզ, որ նա իսկապես ուրախ է, որ փախստականների ճամբարում գտել է դպրոցական հին ընկերոջը՝ Սեզարին: Նա վստահ չէ, թե ինչ է պատահել Սեզարի ընտանիքի հետ, բայց հիշում է նրանց, քանի որ հայրը, որը արկադացի էր, ամուսնացել էր քսանիացի կնոջ հետ: Այս պահին Սեզարն ապրում է մեկ այլ փախստական ընտանիքի հետ, որը կերակրում է նրան՝ որոշակի գործեր կատարելու դիմաց: Սեզարը ժյուլին պատմել է, որ իրեն այնքան էլ դուր չի գալիս այս ընտանիքը, հատկապես որ հայրը ծեծում է իրեն, եթե նա լավ չի կատարում իր առաջադրանքները: Նա ավելի մեծ տղաներից լսել է, որ ԱԱԶ-ն էլի է մարտիկներ փնտրում: Սեզարը ցանկանում է միանալ ԱԱԶ-ին, քանի որ կարծում է, որ դա նրան ավելի մեծ հարգանք կբերի և ելք կլինի իր դժբախտ ընտանեկան կյանքից:

Դուք նաև ծանոթացել եք ժյուլի հարևանուհու՝ Մարիայի հետ: Նրա ամուսինը հայտնի գործարար և քաղաքական ակտիվիստ էր Քսանադուում, բայց այժմ գործազուրկ է, նա իր օրերի մեծ մասն անցկացնում է ճամբարում այլ տղամարդկանց հետ խմելով և թղթախաղ խաղալով: Տղամարդկանցից շատերի նման նա զայրանում է իրեն անգործ և անպետք զգալուց: Հաճախ նրա վրդովմունքը, որը ուժեղանում է խմելուց, դրսևորվում է Մարիայի հետ տհաճ վեճերի տեսքով: Այնուամենայնիվ, Մարիան շարունակում է ամեն ինչ անել, որպեսզի կերակրի և հագցնի իր ընտանիքին և նրանց հիմնական կացարանը հնարավորինս հարմարավետ դարձնի:

Մի քանի շաբաթ առաջ առանձնակի բուռն վիճաբանության ժամանակ Մարիան ֆիզիկական հարձակման է ենթարկվել ամուսնու կողմից և բուժօգնության է դիմել: Նրա մոտ աջ աչքի ծանր կտրվածք ու ուժեղ կապտուկ է մնացել: Անհանգստանալով իր երեխաների, ինչպես նաև իր համար՝ Մարիան հարձակման մասին բողոքել է ճամբարի «Առաջնորդների խորհրդին»: Խորհուրդը կազմված է արկադացի եթնիկ խմբի ավանդական առաջնորդներից: Խորհուրդը արդարացրել է նրա ամուսնուն ցանկացած անօրինական վարքագծից՝ նշելով, որ իրենց սովորույթների համաձայն՝ ամուսինների միջև վեճերը մասնավոր հարցեր են, որոնց համայնքը չի կարող միջամտել:

Որպեսզի կարողանաք առաջնահերթություն տալ Ձեր անելիքներին, կազմեք պաշտպանությանն առնչվող մտահոգությունների ցուցակ ճամբարում տիրող իրավիճակի վերաբերյալ ընդհանուր առմամբ կամ անհատների առնչությամբ:

Գլուխ 6-ի վարժությունների պատասխաններ

Դեպք Ի

Պաշտպանությանն առնչվող ընդհանուր խնդիրներ՝

- ԱԱԶ-ի կողմից, ապաստանի քաղաքացիական և մարդասիրական բնույթը վտանգելով, փախստականների ճամբարներ ներթափանցելը: Սա փախստականների համայնքին դնում է Քսանադուի ռազմական ուժերի հարձակումների վտանգի տակ և վտանգում է նրանց կացությունը: Էլիզիայում, եթե այնտեղի իշխանությունները կարծեն, որ նրանք զինված խմբավորումներ են, այլ ոչ թե փախստականներ,
- Փախստականների ահաբեկումը ԱԱԶ-ի անդամների կողմից,
- Փախստականների համար նախատեսված օգնության տրամադրումը ոչ փախստականներին, այսինքն՝ ԱԱԶ անդամներին,
- Էլիզիայի ոստիկանության կողմից փախստականների կամայական ձերբակալությունն ու կալանավորումը,
- Էլիզիայի իշխանությունների անկարողությունը պատշաճ կերպով ապահովել ճամբարների առանձնացումը զինված տարրերից,
- Փախստականների ազատ տեղաշարժի սահմանափակումը,
- Էլիզիայի իշխանությունների կողմից ինքնուրույնության խթանման բացակայությունը, այսինքն՝ նրանք չեն խրախուսում փախստականներին մշակելու չօգտագործվող հողերը,
- Այն փախստականների հնարավոր անհիմն կալանավորումը, որոնք օգտվել են ազատ տեղաշարժվելու իրենց իրավունքից,
- Կալանքի անընդունելի պայմանները, օրինակ՝ սննդի բացակայությունը, ծեծը (տե՛ս Դեպք Ա-ն 2-րդ գլխում, որը վերաբերում է կալանավորմանն առնչվող մարդու իրավունքների միջազգային չափանիշներին),
- Տեղացի տղամարդկանց կողմից կին փախստականների բռնաբարությունը և տեղական ոստիկանության անգործությունը,
- Կին փախստականների կամ տեղացիների կողմից սեռական և գենդերային հիմքով բռնության դեպքերին չանդրադառնալը,
- Նյութական օգնությունը չի բաշխվում այնպես, որ ապահովի կանանց համար նույնպիսի հասանելիություն, ինչպիսին տղամարդկանց համար,
- Անբավարար ջանքեր՝ գտնելու և վերամիավորելու առանց ուղեկցության և ընտանիքից բաժանված երեխաներին իրենց ընտանիքների հետ,
- Առանց ուղեկցության և ընտանիքից բաժանված երեխաների

բարեկեցության անբավարար մշտադիտարկում:

Պաշտպանության մտահոգություն(ներ)՝ կապված Ժյուլիի հետ՝

- Որպես որբ և ընտանիքից բաժանված երեխա (նրա ծնողները նրա սովորական խնամակալներն էին), արդյո՞ք նրա լավագույն շահին է ծառայում ներկայիս իրավիճակը, որում քույրը խնամում է նրան:

Պաշտպանության մտահոգություն(ներ)՝ կապված Կամիլի հետ՝

- Ժյուլի պատմությունից կասկածելի են թվում, այն հանգամանքները, որոնցում Կամիլը լրացուցիչ սննդի պաշար է ստանում: Հավանականություն կա, որ նա սեռական շահագործման է ենթարկվում Պեդրոյի կողմից:

Սեզարի հետ կապված պաշտպանության մտահոգություն(ներ)՝

- Ընտանիքը, որը վերցրել է նրան, կարող է շահագործել նրան որպես չվարձատրվող աշխատանքի աղբյուր, և նա չի ստանում իրեն անհրաժեշտ խնամքը,
- Վտանգ կա, որ նա կարող է կամավոր կերպով միանալ ԱԱԶ-ին՝ իրեն լուրջ վտանգի ենթարկելով,
- Պետք է ձեռնարկվեն հետախուզական աշխատանքներ՝ վերամիավորման նպատակով նրա ծնողներին գտնելու համար:
- Մարիայի հետ կապված պաշտպանության մտահոգություն(ներ)՝
- Նա ենթարկվել է և գտնվում է իր ամուսնու կողմից բռնության ենթարկվելու վտանգի տակ,
- Ընտանեկան բռնության նկատմամբ նրա համայնքի վերաբերմունքը վտանգի տակ է դնում նրան և մյուս կանանց:

Ավանդական արդարադատության համակարգը որևէ արդյունավետ փոխհատուցում կամ պաշտպանություն չի ապահովում: Թվում է, թե ճամբարում սեռական և գենդերային բռնության դեմ պայքարի արդյունավետ մեխանիզմ չկա (տե՛ս 2003թ. ՄԳԲ ուղեցույցը):

Գլուխ 7

Տեղահանման շրջափուլը



Հիմնական նպատակներ

Հասկանալ, թե ինչ է ներառված երեք տեղական լուծումներում՝ կամավոր հայրենադարձություն, վերաբնակեցում և տեղական ինտեգրում:

Բմանալ, թե որ տեղական լուծումն է նպատակահարմար տվյալ դեպքում:

Գնահատել երեք տեղական լուծումների փոխընդհանուր բնույթը և ՄԱԿ ՓԳՀ-ի դերը՝ դրանցից յուրաքանչյուրի հետ կապված:

Մաս III: Պատեհաժամ և տեղական լուծումներ

Այս գլուխը նկարագրում է երեք ավանդական տևական լուծումներից յուրաքանչյուրը: Այն բացատրում է, թե ինչպես փախստականների շրջանում ինքնավստահությունը կարող է բարելավել իրենց ծանր վիճակին հաջող լուծումներ գտնելու հնարավորությունները: Քննարկվում են նաև ՄԱԿ ՓԳՀ-ի մանդատը և գործունեությունը՝ կապված երեք տևական լուծումների հետ:

7.1 Ընդհանուր ակնարկ

Փախստականների համար տևական լուծումն այն լուծումն է, որը վերջ է դնում տեղահանման շրջափուլին՝ վերջ տալով նրանց դժվարություններին, որպեսզի նրանք կարողանան նորմալ կյանք վարել: Ավանդաբար, երեք տևական լուծումներից մեկին են փորձում հասնել՝

- **Կամավոր հայրենադարձություն**, որի ժամանակ փախստականները ապահով և արժանապատվորեն վերադառնում են իրենց ծագման երկիր,
- **Տեղական ինտեգրում**, որտեղ ապաստանի երկիրը տրամադրում է բնակություն,
- **Վերաբնակեցում**, որի ընթացքում փախստականները ապաստանի երկրից տեղափոխվում են երրորդ պետություն, որը ցանկանում է նրանց մշտական հիմունքներով ընդունել:

Թեև կայուն լուծումների միջև չկա պաշտոնական ստորակարգություն, լուծումը, որը փնտրում և գտնում է փախստականների մեծամասնությունը, կամավոր հայրենադարձությունն է: Բազմաթիվ փաստաթղթեր, այդ թվում՝ հատկապես Պաշտպանության օրակարգը և ԳործԿում-ի եզրակացությունները, այն ճանաչել են որպես նախընտրելի լուծում փախստականների իրավիճակների մեծ մասում: Այնուամենայնիվ, երեք այլընտրանքային լուծումներն իրենց բնույթով փոխլրացնող են և միասին կիրառելու դեպքում կարող են ձևավորել կենսունակ և համապարփակ ռազմավարություն փախստականների հետ կապված իրավիճակի լուծման համար: Ցանկացած կայուն լուծում փնտրելիս և իրականացնելիս պետք է հաշվի առնել փախստականների տարիքը և սեռը:

Թեև ՄԱԿ ՓԳՀ-ն իր դերակատարումն ունի երկարաժամկետ լուծումներից յուրաքանչյուրի հետ կապված, դրանցից որևէ մեկի հաջողությունը կախված է տարբեր շահագրգիռ կողմերից, այդ թվում՝ շահագրգիռ երկրների հետ **գործընկերությունից**:

- Քանի դեռ չի գտնվել համապատասխան կայուն լուծում, կարևոր է խրախուսել փախստականների ինքնուրույնությունը, քանի որ այն.

- Նվազեցնում է ապաստան տրամադրող երկրի բեռը՝ նվազեցնելով փախստականների կախվածությունը նրա օգնությունից,
- Խթանում է փախստականների արժանապատվությունն ու վստահությունը՝ նրանց տալով ավելի շատ վերահսկողություն իրենց առօրյա կյանքի նկատմամբ և հույս ապագայի հանդեպ;
- Օգնում է ցանկացած երկարաժամկետ լուծում դարձնել ավելի կայուն, քանի որ փախստականները, որոնք ակտիվորեն աջակցել ապահովում են սեփական կարիքները, լավագույնս կարող են դիմակայել կամավոր հայրենադարձության, վերաբնակեցման կամ տեղական ինտեգրման մարտահրավերներին:
Ինքնուրույնության խթանումը ամրապնդում է փախստականների հմտությունները և կարող է բարելավել նրանց, ինչպես նաև տեղական համայնքի բարեկեցությունը: Ինքնուրույնությունը հավասարապես օգտակար է երեք կայուն լուծումներից որևէ ցանկացածին հասնելու համար:
Պաշտպանության օրակարգը ընդգծում է, որ փախստականների հմտությունների օգտագործումը հատկապես կարևոր է փախստականների ձգձգվող իրավիճակներում: Այդ պայմաններում շտապ օգնությունից արագ անցումը զարգացման աջակցության կարող է ստեղծել ինքնուրույնության ավելի մեծ հնարավորություններ և երկարաժամկետ հեռանկարում օգտակար լինել և՛ փախստական բնակչությանը, և՛ ապաստան տրամադրած երկրին:

Որպես ինքնուրույնության և համապատասխան երկարաժամկետ լուծումների խթանման գործիք՝ ՄԱԿ ՓԳՀ-ն իր գործընկերների հետ սերտ համագործակցությամբ մշակել է Փախստականների և խնդրո առարկա անձանց համար կայուն լուծումների շրջանակ, որը ներառում է.

- **Փախստականների զարգացման աջակցության (ՓԶԱ)** խթանումը նման աջակցության ավելի լավ թիրախավորված կերպով ուղղորդելով այն երկրներին և տարածքներին, որտեղ մեծ թվով փախստականներ են հյուրընկալվում երկար ժամանակով (բեռը կիսելու համար), և փախստականներին վերջնական երկարաժամկետ լուծումներ տրամադրելու միջոցով (տեղական ինտեգրում, հայրենադարձություն և վերաբնակեցում),
- **Տեղական ինտեգրման միջոցով զարգացման** ռազմավարության խթանում, որտեղ փախստականների տեղական ինտեգրումը կենսունակ լուծում է: Այս ռազմավարության հաջողության մեջ առանցքային

նշանակություն ունի ընդունող կառավարության և տեղական իշխանությունների վերաբերմունքը: Հետևաբար, տեղական ինտեգրման միջոցով զագացումը տարբերակ է և ոչ թե պարտավորություն փախստականներ ընդունող երկրի համար, և այն հիմնված է ՓԶԱ-ի վրա:

ՓԶԱ-ն, ինչպես նաև տեղական ինտեգրման միջոցով զագացումը նախատեսում են լայնածավալ բազմակողմանի և երկկողմանի գործընկերություն կառավարությունների և մարդասիրական զարգացման գործակալությունների միջև: Գործընկերության բնույթը կարող է տարբեր լինել տարբեր երկրներում, սակայն անփոփոխ և էական բաղադրիչն է համապատասխան ընդունող կառավարության և հարակից կենտրոնական և տեղական իշխանությունների պարտավորությունը:

7.2 Կամավոր հայրենադարձություն

Ինչպես նշվեց վերը, կամավոր հայրենադարձությունը նախընտրելի լուծումն է, սակայն միշտ չէ, որ դրան հասնելը հեշտ է: Հաճախ վերադարձի հիմնական պահանջները՝ **անվտանգությունը և ազգային պաշտպանության վերականգնումը**, առկա չեն: Առանց այս պայմանների՝ վերադարձը կարող է կայուն չլինել, և համապատասխան փախստականները կարող են վերադառնալ ապաստանի երկիր: Կամավոր հայրենադարձության համար նպաստավոր պայմանների ստեղծումը մեծ մարտահրավեր է, առաջին հերթին, ծագման երկրի, բայց նաև միջազգային հանրության համար, որի աջակցությունը հաճախ կարևոր է: Սա հատկապես ճիշտ է հետկոնֆլիկտային իրավիճակներում, որտեղ խաղաղության հաստատման, մարդու իրավունքների հարգման, ենթակառուցվածքների վերականգնման, բնականոն քաղաքական, տնտեսական և սոցիալական կյանքի վերականգնման, դատական համակարգի վերականգնման և երկարատև խթանման, տնական կայունության համար պահանջվող ծախսեր, ջանքեր ու ժամանակ գտնելը խիստ դժվար է՝ մեղմ ասած: Այս դժվար իրողությունը համեմատվում է ապաստան տրամադրած շատ երկրների ցանկության հետ, որ կամավոր հայրենադարձությունը տեղի ունենա հնարավորինս շուտ, հատկապես, երբ նրանք երկար ժամանակով են հյուրընկալում փախստականներին: Շահագրգիռ պետությունները, հնարավոր է, նկատել իրենց պաշտպանության ջանքերի ուղղված միջազգային աջակցության անկում, ինչը մտավախություն է

առաջացնում նրանց ռեսուրսների երկարաժամկետ սպառման վերաբերյալ: Երկարատև լուծումներ գտնելու իր մանդատի համաձայն՝ ՄԱԿ ՓԳՀ-ն հաճախ պետք է ջանա մեղմելու պետությունների կողմից անիրատեսականորեն բարձր ակնկալիքները կամավոր հայրենադարձության հնարավորության վերաբերյալ, երբ անհրաժեշտ պայմաններ կարծես թե գոյություն չունեն: Ցավոք սրտի, փախստականները հաճախ հայտնվում են անորոշ վիճակում՝ հայտնվելով ապաստանի երկրում անբավարար պաշտպանության և օգնության և իրենց ծագման երկրում շարունակվող անապահովության միջև:

Կամավոր հայրենադարձության **իրավական դաշտի հիմնական տարրերը** ներառում են.

- Մարդու իրավունքների միջազգային իրավունքի համաձայն անձի՝ իր երկիր վերադառնալու իրավունքը,
- Փախստականները, օգտվելով իրենց երկիր վերադառնալու իրավունքից, սկզբունքորեն պետք է հնարավորություն ունենան վերադառնալու իրենց ծագման վայր կամ իրենց ընտրած բնակության վայր՝ միայն մարդու իրավունքներին առնչվող միջազգային իրավական նորմերով թույլատրված սահմանափակումներով,
- Ցուցանիշները, թե արդյոք ծագման երկրում ազգային պաշտպանությունը վերականգնվել է, հիմնված են մարդու իրավունքների միջազգային օրենսդրությամբ սահմանված չափանիշների վրա,
- Փախստականների հարցով տարածաշրջանային փաստաթղթերը, որոնք սահմանում են կամավոր հայրենադարձության սկզբունքները.
- ԳործԿում-ի տարբեր եզրակացությունները, որոնք սահմանում են կամավոր հայրենադարձության գործընթացի չափանիշները,
- Հատուկ իրավիճակներում ծագման երկրի, ապաստանի երկրի և ՄԱԿ ՓԳՀ-ի միջև երկկողմ կամ եռակողմ համաձայնագրերը, որոնք սահմանում են կողմերի համապատասխան պարտականություններն ու երաշխիքները հայրենադարձների համար: Գնալով հաշտության համաձայնագրերը ներառում են նաև դրույթներ կամավոր հայրենադարձության վերաբերյալ:

1951 թվականի Կոնվենցիան բացահայտորեն չի անդրադառնում կամավոր հայրենադարձության խնդրին, թեև դադարեցման դրույթները (տես Գլուխ 3)

անուղղակիորեն կապված են դրա հետ:

- 1951թ. Կոնվենցիայի 1Գ(4) հոդվածը սահմանում է, որ փախստականի կարգավիճակը դադարում է, եթե փախստականը կամովին վերականգնում է իր մշտական բնակության կամ ծագման երկիր,
- 1Գ(5) և 1Գ(6) հոդվածների «դադարման հանգամանքների» դադարեցման դրույթների հետ կապված՝ կամավոր հայրենադարձության հաջող իրականացումը կարող է ցույց տալ, որ ի սկզբանե փախուստի պատճառ դարձած հանգամանքներն այլևս գոյություն չունեն:

Հետևաբար, կամավոր հայրենադարձությունը, ի վերջո, հանգեցնում է փախստականի կարգավիճակի դադարեցմանը, լինի դա անհատական, թե խմբային հիմունքներով:

Ելնելով վերը նշված իրավական շրջանակից՝ ՄԱԿ ՓԳՀ-ն գտնում է, որ կամավոր հայրենադարձության հիմնական բաղադրիչը **անվտանգ և արժանապատիվ վերադարձն է**: Սա ներառում է վերադարձ դեպի **Ֆիզիկական, իրավական և նյութական անվտանգության պայմաններ**, և որպես վերջնական արդյունք՝ **ազգային պաշտպանության լիարժեք վերականգնում**: Ֆիզիկական անվտանգության հայեցակետերը ներառում են՝

- Անվտանգության ընդհանուր իրավիճակը և իշխանությունների հավաստիացումները վերադարձողների անվտանգության վերաբերյալ
- Անվտանգության հատուկ խնդիրները, ինչպիսիք են ականների և չպայթած զինամթերքի առկայությունը:

Իրավական անվտանգության հայեցակետերը ներառում են՝

- Համաներման մասին օրենքների ընդունում և կիրարկում՝ վերադարձողներին խտրականությունից կամ պատժից պաշտպանելու համար՝ միայն երկրից փախած լինելու հիմքով,
- Օրենսդրություն՝ ապահովելու վերադարձողի քաղաքացիության կարգավիճակը, ինչպես նաև անձնական կարգավիճակին վերաբերող փաստաթղթերի հասանելիությունը,
- Ձեռնարկված միջոցներ գույքի վերականգնումն ապահովելու համար կամ, եթե դա հնարավոր չէ, համապատասխան փոխհատուցում ստանալու իրավունք:

Նյութական անվտանգության հայեցակերպերը ներառում են՝

- Գոյատևման միջոցների և հիմնական ծառայությունների հասանելիություն, ինչպիսիք են խմելու ջուրը, առողջապահական ծառայությունները և կրթությունը,
- Եկամուտ ստեղծող հնարավորությունները:

ՄԱԿ ՓԳՀ-ի պարտականությունները կամավոր հայրենադարձության հետ կապված բխում են նրա կանոնադրությունից: Պետությունները պարտավոր են համագործակցել կազմակերպության՝ կամավոր հայրենադարձությանն ուղղված աշխատանքներում՝ *1951 թվականի Կոնվենցիայի* ընդհանուր համագործակցության մասին դրույթի համաձայն: **ՄԱԿ ՓԳՀ-ի ներգրավվածության** աստիճանը հայրենադարձության շարժումներին կախված է նրանից, թե որքանով են բավարարվել վերը նշված հիմնական բաղադրիչները: Այսպիսով՝ ՄԱԿ ՓԳՀ-ն կարող է.

- Խթանել լայնածավալ կամավոր հայրենադարձությունը, երբ պայմանները հարմար են համարվում անվտանգ և արժանապատիվ վերադառնալու համար,
- Նպաստել անհատների կամավոր հայրենադարձությանը փախստականների հատուկ և լիովին տեղեկացված խնդրանքով, նույնիսկ այն դեպքում, երբ պայմանները լիովին նպաստավոր չեն փախստականների մեծամասնության վերադարձի համար,
- Տրամադրել օգնություն ծագման երկրում նրանց, ովքեր վերադարձել են կազմակերպված ձևով, և նրանց, ովքեր ինքնաբերական են վերադառնում, եթե ՄԱԿ ՓԳՀ-ն նրանց հանդեպ հասանելիություն ունի:

ՄԱԿ ՓԳՀ-ի **գործունեությունը** կամավոր հայրենադարձության հետ կապված ներառում է.

- Ծագման երկրի պայմանների մասին տեղեկատվության հավաքագրում և հարցազրույցների անցկացում՝ համոզվելու համար, որ վերադարձող տղամարդիկ և կանայք ազատ և տեղեկացված որոշում են կայացրել դա անելու հարցում,
- Ծագման և ապաստանի երկրի հետ հայրենադարձության եռակողմ համաձայնագրերի կնքում, որտեղ սահմանվում են հայրենադարձության եղանակները, ներառյալ՝ վերադարձողների ընդունելության երաշխիքը,
- Անհրաժեշտության դեպքում վերադարձողներին

- փաստաթղթերի տրամադրում և նրանց տուն տեղափոխելու համար տրանսպորտի տրամադրում,
- Անհապաղ նյութական կամ ֆինանսական աջակցության տրամադրում, ըստ անհրաժեշտության, նախնական փուլում վերադարձը և վերահաստատումը հնարավոր դարձնելու համար,
 - Վերադարձողների մշտադիտարկում՝ ապահովելու, որ նրանք վայելեն իրենց կառավարության լիակատար պաշտպանությունը,
 - Մասնակցություն հաջող վերաինտեգրման ապահովմանն ուղղված ջանքերին:

ՄԱԿ ՓԳՀ-ի և այլ մարդասիրական դերակատարների կողմից իրականացվող վերաինտեգրման միջոցառումների մեծ մասը եղել է վերադարձի սկզբնական փուլերում տրամադրված շտապ օգնության տեսքով: Քիչ գործողություններ որևէ կապ ունեն վերադարձի կայունությունն ապահովելու երկարաժամկետ զարգացման ջանքերի հետ: ՄԱԿ ՓԳՀ-ն այժմ աշխատում է Միավորված ազգերի կազմակերպության այլ գործակալությունների և երկկողմանի զարգացման գործակալությունների հետ՝ վերադարձից դեպի վերաինտեգրում, վերականգնում և վերակառուցում ավելի սահուն անցում ստեղծելու համար (հայտնի է որպես «4Վ-եր»): ՄԱԿ ՓԳՀ-ն առաջատար դերակատարում ունի հայրենադարձությանն ուղղված աշխատանքներում, մինչդեռ ՄԱԿ-ի այլ գործակալություններ և Համաշխարհային բանկը ի սկզբանե ավելի սերտորեն են ներգրավված, ուստի նրանց հետագա զարգացման խնդիրները ավելի հաջող կլինեն: Այս ռազմավարությունը նպատակ ունի ներառելու վերադարձողների կարիքները ազգային զարգացման ծրագրերում, որպեսզի միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում ավելանան նրանց տնտեսական հնարավորությունները:

Երբեմն շարունակվող քաղաքացիական պատերազմի արդյուքում տարբեր նահանգներ կարող են անվնաս մնալ և համեմատաբար արդյունավետ տեղական վարչակազմի վերահսկողության տակ, նույնիսկ այն դեպքում, երբ երկրի մյուս մասերում շարունակվում է իրարանցումը: Թեև այս ավելի հանգիստ շրջաններ հայրենադարձությունը կարող է ցանկալի թվալ ապաստանի երկրներին և, հնարավոր է, որոշ առանձին փախստականների, այս տարբերակին պետք է հետևել ծայրահեղ զգուշավորությամբ: Այս շրջաններում կայունությունը դժվար թե երկար պահպանվի, եթե ողջ երկրում իրավիճակի բարելավում չլինի: Բացի այդ,

վերադարձողների անսպասելի հոսքը դեպի փխրուն, տեղայնացված խաղաղություն կարող է իրականում անկայունություն առաջացնել: Մեծ թվով մարդկանց վերադարձը երկրի՝ իրենց սկզբնական բնակավայրից տարբեր այլ մասեր կարող է լարվածություն առաջացնել տեղի բնակչության հետ և կարող է հանգեցնել ավելի մեծ տեղահանումների:

7.3 Տեղական ինտեգրում

Տեղական ինտեգրման դեպքում ապաստանի երկիրը՝ փախստականներին առաջարկում է **մշտական բնակություն**՝ վերջնական քաղաքացիություն ստանալու հնարավորությամբ: Դրա ներուժը՝ որպես կայուն լուծում, ճանաչված է ինչպես 1951 թվականի Կոնվենցիայում, այնպես էլ ՄԱԿ ՓԳՀ-ի կանոնադրությունում: Թեև որոշ երկրներում որոշ ժամանակ անց ճանաչված փախստականների հպատակագրումը ստանդարտ պրակտիկա է, շատ պետություններ մտահոգված են փախստականների՝ իրենց հողում անժամկետ մնալու թույլտվությամբ: Նրանք վախենում են սակավ ռեսուրսների վրա ազդեցությունից, անվտանգության խնդիրների վտանգից և փախստականների նկատմամբ հնարավոր ընդդիմությունից: Նրանք կարող են նաև մտահոգված լինել միգրացիայի վերահսկմամբ:

Այնուամենայնիվ, կամավոր հայրենադարձությունն ինքնին չի կարող լուծել փախստականների բոլոր խնդիրները: Տեղական ինտեգրումը կարող է մշտական լուծում լինել բազմաթիվ փախստականների համար. այն կարող է նաև որոշ առավելություններ ապահովել ընդունող երկրի համար՝

- Փախստականները կարող են իրենց հետ բերել այնպիսի հմտություններ, որոնք կարող են օգնել ապաստանի երկրին,
- Նրանց ներկայությունը կարող է գրավել ռեսուրսներ միջազգային հանրությունից, որոնք այլ կերպ հասանելի չէին լինի տեղի բնակչությանը,
- Տեղական համայնքի հետ էթնիկ, մշակութային կամ լեզվական կապերը կարող են մեծացնել տեղական հաջող ինտեգրման հնարավորությունները,
- Կան բազմաթիվ իրավիճակներ, ինչպես արդյունաբերական, այնպես էլ զարգացող երկրներում, երբ մեծ թվով փախստականներ խաղաղ կերպով հաստատվել են ապաստանի երկրում և կարողանում են գոյատևել:

Տեղական ինտեգրումը **աստիճանական գործընթաց** է, որը տեղի է ունենում երեք մակարդակներում՝

- **Իրավական.** փախստականներին տրվում են աստիճանաբար ավելի լայն իրավունքներ, որոնք նման են քաղաքացիների իրավունքներին, որոնք ի վերջո հանգեցնում են մշտական բնակության և, հավանաբար, քաղաքացիության:
- **Տնտեսական.** փախստականներն աստիճանաբար դառնում են ավելի անկախ ապաստանի երկրի օգնությունից կամ մարդասիրական օգնությունից և ավելի ու ավելի ինքնուրույն են դառնում և կարողանում են պահել իրենք իրենց և նպաստել տեղական տնտեսությանը:
- **Մոցիալական և մշակութային.** փախստականների և տեղական համայնքի փոխազդեցությունը թույլ է տալիս փախստականներին մասնակցել իրենց նոր երկրի հասարակական կյանքին՝ առանց խտրականության կամ թշնամանքի վախի:

Նույնիսկ այն դեպքում, երբ տեղական ինտեգրումը չի հետապնդվում որպես կայուն լուծում, փախստականների շրջանում ինքնուրույնության խթանումը կարող է օգնել հասնելու մյուս երկու կայուն լուծումներին:

Տեղական ինտեգրման պարտավորությունը գալիս է ապաստանի երկրի կառավարությունից: ՄԱԿ ՓԳՀ-ն կարող է հեշտացնել գործընթացը և համախմբել մի շարք դերակատարների, այդ թվում՝ դոնոր պետություններին և Միավորված ազգերի կազմակերպության այլ գործակալություններին, նախագծելու և իրականացնելու համակարգված ծրագրեր՝ փախստականների ինտեգրմանն աջակցելու համար:

7.4 Վերաբնակեցում

Վերաբնակեցումը ներառում է փախստականների **մշտական տեղափոխումը** երրորդ երկիր: Թեև համեմատաբար փոքր թվով փախստականներ օգտվում են վերաբնակեցումից, ինչպես ընդունված է ԳործԿում-ի 2001թ. թիվ 90 (LII) եզրակացության մեջ, այն, այնուամենայնիվ, իրականացնում է երեք հավասարապես կարևոր գործառույթներ:.

Վերաբնակեցումը

- Պաշտպանության գործիք է առանձին փախստականների համար, որոնց կյանքը, ազատությունը, անվտանգությունը, առողջությունը կամ այլ հիմնարար իրավունքները վտանգի տակ են գտնվում ապաստանի երկրում,
- Տեղական լուծում է ավելի մեծ թվով փախստականների կամ խմբերի համար,
- Պետությունների միջև բեռի և պատասխանատվության բաշխման մեխանիզմ է.

Որպես **պաշտպանության գործիք**, առաջնահերթությունը տրվում է հատուկ և անմիջական պաշտպանության խնդիրներ ունեցող անձանց վերաբնակեցմանը, ինչպիսիք են վերադարձի կամ ֆիզիկական հարձակման, ներառյալ սեռական բռնության վտանգի տակ գտնվող մարդիկ: Այն անհատները, որոնք ենթարկվել են խոշտանգումների կամ բռնության կամ հոգեբանական օգնության հրատապ կարիք ունեն, նույնպես դիտարկվում են վերաբնակեցման համար, եթե չեն գտնվում համապատասխան պայմաններով երկրում, որտեղ կարող են աջակցություն ստանալ: Մեծ թվով փախստականների համար, որոնց պաշտպանության կարիքները բխում են ապաստանի կամ ծագման երկրում երկարաժամկետ լուծման բացակայությունից, այնուամենայնիվ, վերաբնակեցումը հաճախ ավելի ցածր առաջնահերթություն է ստանում և, հաշվի առնելով տեղերի սահմանափակությունը, միշտ չէ, որ հնարավոր է հասնել այս լուծմանը:

Վերաբնակեցման պաշտպանության գործառույթին հատկացվող ավանդական ուշադրությունը, որը կենտրոնանում է անհատի կարիքների վրա, հակված է քողարկելու դրա **ռազմավարական օգտագործումը որպես կայուն լուծում**: Մարդկանց խմբերի կամ կատեգորիաների վերաբնակեցումը կարող է տեղի ունենալ փախստականների իրավիճակին համապարփակ արձագանքման շրջանակում: Օրինակ, երբ կամավոր

հայրենադարձությունը կամ տեղական ինտեգրումը տարբերակ չէ որոշակի էթնիկ խմբի համար՝ հետապնդման շարունակական ռիսկի պատճառով, որը վերաբերում է միայն նրանց, այլ ոչ թե իրենց հայրենակիցներին, այդ խմբի հավաքական վերաբնակեցումը կարող է նպատակահարմար լինել: Վերաբնակեցումը ոչ միայն կբավարարի շահագրգիռ անձանց երկարաժամկետ պաշտպանության կարիքները, այլև կարող է բարելավել այն անձանց ինտեգրման հեռանկարները, որոնց թույլատրվում է մշտապես մնալ ապաստանի երկրում՝ դրանով իսկ հեշտացնելով կայուն լուծումը բոլոր նրանց համար, ովքեր փախստական են: Իր բնույթով վերաբնակեցումը **բեռի և**

պատասխանատվության բաշխման ձև է, որի շնորհիվ ապաստանի երկրի վրա ճնշումը թեթևանում է փախստական բնակչության որոշ մասի համար այլ պետությունների կողմից մշտական ապաստարան առաջարկելու միջոցով: Պաշտպանության օրակարգի նպատակներից մեկը վերաբնակեցման երկրների թվի ավելացումն է և փախստականների անսպասելի արտակարգ իրավիճակներին արձագանքելու նպատակով վերաբնակեցման ծրագրերի կարողությունների բարելավումը:

Վերաբնակեցման համար իրավասու լինելու համար անհատը պետք է համապատասխանի ինչպես ՄԱԿ ՓԳՀ-ի, այնպես էլ հնարավոր նպատակակետ երկրի վերաբնակեցման չափանիշներին: ՄԱԿ ՓԳՀ-ի չափանիշներն արտացոլում են վերաբնակեցման գործառույթը՝ որպես պաշտպանության գործիք: Իր արդյունավետությունը բարելավելու նպատակով ՄԱԿ ՓԳՀ-ն աշխատում է վերաբնակեցման պետությունների հետ՝ կատարելագործելու և ներդաշնակեցնելու վերաբնակեցման չափանիշներն ու գործընթացները: Հաշվի առնելով, որ վերաբնակեցումը հաճախ բարձր է գնահատվում փախստականների կողմից, կարևոր է, որ դրա կառավարումը լինի թափանցիկ՝ կանխելու կոռուպցիան և նվազեցնելու այն ռիսկը, որ վերաբնակեցումը կարող է դառնալ գայթակղիչ գործոն նոր ժամանողների համար: ՄԱԿ ՓԳՀ-ի աշխատակիցները, որոնք վերաբնակեցման պարտականություններ ունեն, հետևաբար, որպես անհատներ պարտավոր են գործել հաշվետու և պրոֆեսիոնալ կերպով:

Ամփոփում

Երկարատև լուծումները

- Վերջ են դնում տեղահանման շրջափուլին՝ անհատին տալով բնականոն կյանք ունենալու մշտական միջոց,
- Կարող են լինել կամավոր հայրենադարձության, տեղական ինտեգրման կամ վերաբնակեցման ձևով,
- Ավելի մեծ հավանականություն ունեն հաջողությամբ պսակվելու, երբ փախստականներին տրվում է ինքնապահովման/ինքնուրույնության հնարավորություն:

Կամավոր հայրենադարձությունը՝

- Փախստականների մեծամասնության համար նախընտրելի լուծումն է.
- Ներառում է **անվտանգ և արժանապատիվ կամավոր վերադարձ դեպի ծագման երկիր**,
- Կախված է հիմնականում ծագման երկրի ջանքերից՝ ստեղծելու ֆիզիկական, իրավական և նյութական անվտանգության պայմաններ, որոնք նպաստում են վերադարձին, և որպես վերջնական արդյունք՝ ամբողջական ազգային պաշտպանության վերականգնում,
- Ներգրավում է ՄԱԿ ՓԳՀ-ին տարբեր դերերում՝ խթանում, օժանդակություն կամ աջակցություն, կախված այն բանից, թե որքանով են բավարարվել վերադարձի հիմնական պայմանները,
- Կայունության համար պահանջվում է ՄԱԿ ՓԳՀ-ի, ապաստանի և ծագման երկրների կառավարությունների և Միավորված ազգերի կազմակերպության այլ գործակալությունների համագործակցությունը՝ ապահովելու անխափան անցում հայրենադարձությունից վերաինտեգրում, վերականգնում և վերակառուցում:

Տեղական ինտեգրումը՝

- Ներառում է **մշտական բնակություն ապաստանի երկրում**,
- Բնութագրվում է փախստականների տնտեսական, իրավական, սոցիալական և մշակութային ինտեգրման աստիճանական աճով տեղական համայնքում,
- Կախված ապաստանի երկրի նախաձեռնությունից՝ ՄԱԿ ՓԳՀ-ն միավորում է կառավարությանը և այլ դերակատարներին, ինչպիսիք են դոնոր երկրները և Միավորված ազգերի կազմակերպության գործակալությունները:

Վերաբնակեցումը՝

- Փախստականին ապաստանի երկրից երրորդ պետություն տեղափոխելն է, որը ցանկանում է նրան մշտական հիմունքներով ընդունել և այնտեղ վերաբնակեցնել,
- Հիմնական պաշտպանության գործիք է, որն առաջնահերթություն է տալիս նրանց, ովքեր ունեն հրատապ և լուրջ պաշտպանության խնդիրներ,

- Նաև նպաստում է փախստականների հետ կապված միջազգային բեռի և պատասխանատվության բաշխմանը,
- Կարող է, որպես կայուն լուծում, ռազմավարական դեր խաղալ փախստականների հետ կապված իրավիճակներին լուծում տալու համար, մասնավորապես՝ խմբակային վերաբնակեցման միջոցով,
- Պետք է վերահսկվի ՄԱԿ ՓԳՀ-ի և կառավարությունների կողմից թափանցիկ և արդար կերպով՝ հաշվի առնելով ՄԱԿ ՓԳՀ-ի վերաբնակեցման չափանիշները:

Լրացուցիչ ընթերցանություն

Կամավոր հայրենադարձություն

ԳործԿում-ի թիվ 18 (XXXI) 1980թ.եզրակացություն և Թիվ 40 (XXXVI) 1985 թ. եզրակացություն կամավոր հայրենադարձության մասին:

ՄԱԿ ՓԳՀ, *Կամավոր հայրենադարձություն* (EC/GC/02/5), 2002 թ.

ՄԱԿ ՓԳՀ, ՄԱԿ ՓԳՀ ձեռնարկ. *Կամավոր հայրենադարձությունը. միջազգային պաշտպանություն*, 1996թ.

Տեղական ինտեգրում

ՄԱԿ ՓԳՀ, *Տեղական ինտեգրում*, (EC/GC/02/6), 2002թ.

Վերաբնակեցում

ԳործԿում-ի թիվ 90 (LII)եզրակացություն Միջազգային պաշտպանության մասին, 2001թ.

ԳործԿում-ի թիվ 101 (LV)ի եզրակացություն Փախստականների կամավոր հայրենադարձության համատեքստում իրավական անվտանգության հարցերի վերաբերյալ, 2004թ.

ՄԱԿ ՓԳՀ, *Այսօրվա վերաբնակեցման ուժեղացումն ու ընդլայնումը. երկրնտրանքներ, մարտահրավերներ և հնարավորություններ* (EC/GC/02/7), 2002թ.

ՄԱԿ ՓԳՀ, *Վերաբնակեցման մասին ձեռնարկ*, 2002 թ.

Վարժություններ

Դեպք I

Այս դեպքի ուսումնասիրությունը Թ և Ի Դեպքերի շարունակությունն է: Դուք կարող եք վերընթերցել այս դեպքերը 5-րդ և 6-րդ գլուխներում: Ահա հակիրճ ամփոփումը. էթնիկ և քաղաքական անկարգությունները Քսանադուում հանգեցրին քաղաքացիական պատերազմի և արկադական էթնիկ խմբի մոտ 250,000 մարդկանց փախուստի դեպի Էլիզիա: ՄԱԿ ՓԳՀ-ի միջամտությունից հետո Էլիզիայի իշխանությունները ի վերջո ճանաչեցին այդ մարդկանց որպես Կոնվենցիայի իմաստով փախստականներ՝ առաջին հայացքից ճանաչման հիմունքներով: Չանգվածային ներհոսքից երեք տարի անց փախստականները դեռ ապրում են ճամբարներում, թեև նրանցից շատերը տեղափոխվել են սահմանից հեռու:

Մեկ տարի առաջ՝ տարածաշրջանային միջկառավարական կազմակերպության և ՄԱԿ-ի դիվանագիտական ջանքերից հետո, Քսանադուի կառավարությունը և ԱԱԸ-ն համաձայնության եկան հրադադարի մասին: Վեց ամիս տևած ինտենսիվ բանակցություններից հետո ստորագրվեց խաղաղության համաձայնագիր, որը երաշխավորում էր Արկադիայի նահանգի ինքնավարության մեծ աստիճան, ինչպես նաև տարվա վերջում ընդհանուր ընտրություններ: Այդ ժամանակից ի վեր ԱԱԸ-ն զինաթափվել է, բռնությունները դադարեցվել են, և երկիր վերադարձել է որոշակի բնականոն կյանքի: Մասնավորապես, կտրուկ բարելավվել է Արկադիայի փոքրամասնության մարդու իրավունքների նկատմամբ հարգանքը:

Մայրաքաղաքը և հարակից շրջանները հիմնականում անձեռնմխելի էին մարտերից, որոնք տեղի էին ունենում հիմնականում Արկադիա նահանգում: Արկադիան մեծ վերականգնողական աշխատանքների կարիք կունենա, մասնավորապես, վնասված կառավարական շենքերի, ինչպես օրինակ՝ ոստիկանական բաժանմունքների ու դպրոցների, ինչպես նաև ավիրված գյուղերի վերականգնման համար: Սակայն վերակառուցման մեծ օգնություն արդեն ստացվել է, և շահագործման են հանձնվել և, հետևաբար, այժմ գործում են ողջամիտ թվով կարևոր հասարակական հաստատություններ, ինչպիսիք են դպրոցներն ու հիվանդանոցները:

Քսանադուի կառավարությունը ՄԱԿ ՓԳՀ-ին և Էլիզիայի իշխանություններին ասել է, որ ցանկանում է, որ փախստականները վերադառնան տուն: Այն ուրվագծել է եռակողմ կամավոր հայրենադարձության համաձայնագրի հիմնական տարրերը՝

- i Փախստականների՝ Քսանադու վերադառնալու իրավունքը, սակայն, այնտեղի իշխանությունները պետք է որոշեն, այն է՝ թե կոնկրետ որտեղ նրանք կարող են բնակություն հաստատել,
- ii Անձեռնմխելիություն քրեական հետապնդումից նրանց համար, ովքեր վերադարձել են Էլիզիայից,
- iii Լավագույն ջանքերը կգործադրվեն վերադարձող

փախստականների գույքը վերականգնելու համար, սակայն փոխհատուցում չի վճարվի, եթե դա հնարավոր չէ,

- iv Իշխանությունները կճանաչեն վերադարձողների իրավական կարգավիճակը,
- v Վերադարձի փուլերը կախված կլինեն ազգային պաշտպանության հասանելիության աստիճանից, սակայն Համաձայնագրի ստորագրումից վեց ամիս հետո ՄԱԿ ՓԳՀ-ն կնպաստի կամավոր հայրենադարձությանը, նույնիսկ եթե ֆիզիկական, իրավական և նյութական անվտանգության պայմանները դեռ լիովին բավարարված չեն,
- vi Որքան հնարավոր է, փախստականներին կտրամադրվի ճշգրիտ տեղեկատվություն ծագման երկրում տիրող իրավիճակի մասին, սակայն վերադարձի համաձայնությունը կախված չէ նման տեղեկատվության ստացումից,
- vii ՄԱԿ ՓԳՀ-ն անխոչընդոտ մուտք կունենա փախստականների մոտ, որոնք մտածում են վերադառնալու մասին, սակայն Քսանադու վերադարձողների մուտքը կլինի այնտեղի կառավարության հայեցողությամբ:

ա Ձեզ խնդրել են դիտարկել, թե արդյոք այս տարրերն ընդունելի են ՄԱԿ ՓԳՀ-ի համար: Բացահայտեք հինգ տարրերը, որոնք մտահոգություն են առաջացնում և բացատրեք նման մտահոգության պատճառները յուրաքանչյուր դեպքում:

Քսանադուի կառավարությունը, ի վերջո, հաշվի առավ ՄԱԿ ՓԳՀ-ի մտահոգությունները, և ստորագրվեց եռակողմ կամավոր հայրենադարձության պայմանագիր: Քանի որ իրավիճակը Քսանադուում էլ ավելի է բարելավվել, ՄԱԿ ՓԳՀ-ն խթանում է լայնածավալ կամավոր հայրենադարձությունը: Մինչ այժմ մոտ 150 հազար փախստական է վերադարձել: Մշտադիտարկման գործողությունները ցույց են տալիս, որ վերադարձողների մեծ մասը հաջողությամբ վերաինտեգրվում է, սակայն խառն ամուսնությունների մեջ գտնվող մարդիկ (քսանիացիների և արկադիացիների միջև), կամ նման գույգերի երեխաները բախվում են խտրականության և թշնամանքի:

ՄԱԿ ՓԳՀ-ի՝ հայրենադարձության խթանմանն ուղղված գործունեության շրջանակում Դուք Էլիզիայում փախստականներին տեղեկացրել էք վերադարձի գործնական հնարավորությունների և նրանց սպասվող պայմանների մասին: Մի ընտանիք, որի հետ Դուք զրուցել էք, Ժյուլի և Կամիլի ընտանիքն է: Մի քանի տարի առաջ Դուք օգնեցիք դադարեցնել Կամիլի սեռական շահագործումը Պեդրոյի՝ տեղական ՀԿ-ի աշխատողի կողմից: Այդ ժամանակից ի վեր Կամիլն ամուսնացել է Էլիզիացի Լուիսի հետ, ում հետ ծանոթացել է ճամբարում տեղական եկեղեցու կողմից կազմակերպված կրոնական արարողությունների ժամանակ: Էլիզիայի իշխանությունները նրան թույլ են տվել ապրել նրա հետ, այլ ոչ թե ճամբարում, և նրանք այժմ ունեն փոքր երեխա: Ժյուլը նույնպես ապրում է Կամիլի և Լուիսի հետ, որոնք կարողացել են նրան ընդունել տեղի դպրոց:

Դուք նաև վերջերս կապի մեջ եք եղել Ժյուլի ընկերոջ՝ Սեզարի ընտանիքի հետ՝ քննարկելու հայրենադարձության հնարավորությունը:

Բարեբախտաբար, ՄԱԿ ՓԳՀ-ի և ԿԽՄԿ-ի հետախուզական գործունեության

միջոցով Սեզարը երկու տարի առաջ վերամիավորվեց իր ծնողների հետ. նրանք հայտնվել էին Էլիզիայի մեկ այլ ճամբարում: Սակայն, ցավոք, վերջերս նրա մոր մոտ ախտորոշվել է սակավարյունության հազվագյուտ տեսակ, որի դեմ նա ստանում է միայն տարրական բուժում, քանի որ ճամբարում և ընդհանրապես Էլիզիայում բժշկական հաստատությունները սահմանափակ են: Ձեր հարցումներից Դուք իմացել եք, որ Քսանադուի հիվանդանոցները կարող են նաև չունենալ փորձառություն և ռեսուրսներ, որոնք անհրաժեշտ են Սեզարի մոր վիճակի երկարաժամկետ բարելավման համար:

ա Հաշվի առնելով Ժյուլի և Կամիլի հանգամանքները՝ Ձեր կարծիքով երեք կայուն լուծումներից ո՞րն է առավել հարմար նրանց համար և ինչո՞ւ:

բ Ո՞ր կայուն լուծումը կլինի լավագույնը Սեզարի ընտանիքի համար և ինչո՞ւ:

Գլուխ 7-ի վարժությունների պատասխաններ

Դեպք L

ա

- i Փախստականները, օգտվելով իրենց երկիր վերադառնալու իրավունքից, սկզբունքորեն պետք է հնարավորություն ունենան վերադառնալու իրենց ծագման վայր կամ իրենց ընտրած բնակության վայր՝ մարդու իրավունքների միջազգային օրենսդրությամբ թույլատրված սահմանափակումներով, ինչպես նշված է ԳործԿում-ի թիվ 101 (LV) 2004թ. եզրակացության (բ) կետում):
- iii Փոխհատուցում պետք է հասանելի լինի, երբ գույքի վերականգնումը հնարավոր չէ:
- v ՄԱԿ ՓԳՀ-ն չի խրախուսի կամավոր հայրենադարձությունը, քանի դեռ այդպիսի վերադարձի հիմնական տարրերը չեն ապահովվել:
- vi Փախստականների համար միշտ պետք է հասանելի լինի ճշգրիտ տեղեկատվություն, նախքան վերադառնալու որոշում կայացնելը, հատկապես՝ եթե դա իրականացվում է ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից խրախուսվող կազմակերպված ծրագրի համաձայն:
- vii ՄԱԿ ՓԳՀ-ն վերադարձածներին վերահսկելու մանդատ ունի՝ ապահովելու, որ նրանց հետ վարվեն իրենց իրավունքներին համապատասխան:
- ii Վերադարձող փախստականներին պետք է տրվի անձեռնմխելիություն քրեական հետապնդումից՝ ծագման երկրից դուրս մեկնելու կամ մնալու համար: Այնուամենայնիվ, համաներումները չպետք է տարածվեն այն փախստականների վրա, որոնք, ի թիվս այլոց, մեղադրվում են միջազգային մարդասիրական իրավունքի լուրջ խախտման կամ ցեղասպանության, մարդկության դեմ հանցագործության կամ մարդու իրավունքների լուրջ խախտման կամ ընդհանուր բնույթի ծանր հանցագործության մեջ, որը ենթադրում է մահ կամ լուրջ մարմնական վնասվածք, և որը կատարվել է աքսորից առաջ կամ դրա ընթացքում, ինչպես նշված է ԳործԿում-ի թիվ 101 (LV) 2004թ. եզրակացության ե կետում:
- iv ԳործԿում-ի թիվ 101 (LV) 2004թ. եզրակացության բ կետ ընդգծում է ազգային օրենսդրության համաձայն վերադարձող փախստականների քաղաքացիական կարգավիճակի և դրա փոփոխությունների, այդ թվում՝ ծննդյան, մահվան, որդեգրման, ամուսնության և ամուսնալուծության հետևանքով առաջացած փոփոխությունների ճանաչման, ինչպես նաև իրավասու մարմինների կողմից տրված՝ այդ կարգավիճակը հաստատող փաստաթղթերի կամ ապաստանի վարչական շրջանում կամ այլուր դրանց գրանցման կարևորությունը՝ հաշվի առնելով վերադարձող փախստական կանանց հատուկ իրավիճակը, որոնք կարող են չունենալ իրենց քաղաքացիական կարգավիճակը հաստատող փաստաթղթեր, կամ

որոնք կարող են դժվարությունների հանդիպել ապաստանի երկրի իշխանությունների կողմից տրված փաստաթղթերի ճանաչումն ապահովելու հարցում:

Բ Տեղական ինտեգրում. Կամիլն ամուսնացել է տեղացի տղամարդու հետ, որից երեխա ունի: Ե՛վ նա, և՛ Ժյուլն արդեն զգալի չափով ինտեգրվել են տեղական համայնքին՝ ապրելով Լուիսի գյուղում և Ժյուլի՝ տեղի դպրոց հաճախելով: Հայրենադարձության դեպքում դժվարություններ կարող են առաջանալ ամուսնու համար, որը Քսանադուի քաղաքացի չէ, ուստի ընտանիքի բաժանման վտանգ կա: Այս հանգամանքներում քիչ հավանական է, որ Կամիլը կամավոր կերպով կցանկանա հայրենադարձվել, և քանի որ Ժյուլը այսքան երկար ժամանակ գտնվել է նրա խնամակալության ներքո, կարծես թե նրա կողքին մնալը ձեռնտու է: Ամեն դեպքում երեխա ժամանակ նա չէր կարողանա ինքնուրույն հայրենադարձվել, եթե չկարողանար իր համար համապատասխան խնամքի միջոցներ ձեռնարկել Քսանադուում:

զ Հաշվի առնելով, որ Մեզարի ծնողները ամուսնությունը խառն ամուսնություն է, նրանք կարող են դժվարությունների հանդիպել Քսանադոտում վերաինտեգրվելու հարցում: Կամավոր հայրենադարձությունը նրանց հարմար չի լինի, քանի որ վտանգ կա, որ նրանց վերադարձը չի լինի իրավական, ֆիզիկական և նյութական ապահովության պայմաններում: Փոխարենը կարելի է հետամուտ լինել տեղական ինտեգրմանը, սակայն Մեզարի մոր առողջական վիճակը հուշում է, որ դա լավ չի անդրադառնա նրա հիվանդության վրա: Փոխարենը, ընտանիքը կարող է դիմել վերաբնակեցման համար՝ պատճառաբանելով, որ նա չի կարող համապատասխան բուժօգնություն ստանալ ապաստանի երկրում:

Բառարան

Ա

Ազգային լրացուցիչ պաշտպանություն

Պաշտոնական թույլտվություն, համաձայն ազգային օրենսդրության կամ պրակտիկայի, երկրում բնակվելու համար, որը տրամադրվում է այդ երկրի կողմից այն անձանց, որոնք ունեն միջազգային պաշտպանության կարիք, չնայած որ նրանք չեն համապատասխանում 1951 թվականի Կոնվենցիայի փախստականի կարգավիճակի պահանջներին:

Ապաստան

Պետության կողմից իր տարածքում պաշտպանության տրամադրում այլ պետության այն անձանց, որոնք փախչում են հետապնդումից կամ լուրջ վտանգից: Ապաստանը ներառում է մի շարք տարրեր, այդ թվում՝ չվերադարձելիությունը, ապաստան տրամադրող երկրի տարածքում մնալու թույլտվությունը և վերաբերմունքի մարդասիրական չափանիշները:

Ապաստան հայցող

Ապաստան հայցողն այն անհատն է, որը փնտրում է միջազգային պաշտպանություն՝ լինի դա անհատական, թե խմբակային: Անհատականացված ընթացակարգեր ունեցող երկրներում ապաստան հայցողն այն անձն է, ում հայցի վերաբերյալ վերջնական որոշում դեռ չի կայացվել այն երկրի կողմից, որտեղ

նա ներկայացրել է հայցը: Ամեն ապաստան հայցող չէ, որ ի վերջո կճանաչվի որպես փախստական, բայց յուրաքանչյուր փախստական ի սկզբանե ապաստան հայցող է:

Ապաքաղաքացիության կրճատման մասին կոնվենցիա

Պայմանագիր, որը նախատեսում է քաղաքացիության ձեռքբերում այն անձանց կողմից, որոնք այլ կերպ քաղաքացիություն չէին ունենա, և որոնք համապատասխան կապ ունեն պետության հետ՝ այդ տարածքում ծնվելու կամ ծագումով այն երկրից լինելու հիմքով: Կոնվենցիան նաև նախատեսում է քաղաքացիության պահպանում նրանց համար, ովքեր կդառնան քաղաքացիություն չունեցող անձ, եթե կորցնեն պետության քաղաքացիությունը: Սույն Կոնվենցիայի 11-րդ հոդվածի համաձայն՝ ՄԱԿ ՓԳՀ-ն ստանձնել է հատուկ գործառնություններ:

Ապաքաղաքացիություն

Որևէ պետության կողմից իր օրենսդրության համաձայն քաղաքացի չհամարվելու կարգավիճակը:

Առանձնացված/ընտանիքից բաժանված երեխաներ

Երեխաներ, որոնց խնամում են այլ մեծահասակները ծնողների կամ սովորական չափահաս խնամողի բացակայության դեպքում:

Առաջին հայացքից փախստականներ

Պետության կամ ՄԱԿ ՓԳՀ-ի

կողմից փախստական ճանաչված անձինք՝ հիմնվելով իրենց ծագման երկրի հանգամանքների հետ կապված օբյեկտիվ չափանիշների վրա, որոնք հիմնավորում են այն ենթադրությունը, որ նրանք համապատասխանում են փախստականի կիրառելի սահմանման չափանիշներին: Տես նաև՝ Խմբի վրա հիմնված պաշտպանության արձագանքները:

Աջակցություն

Տրամադրվող օգնություն՝ խնդրո առարկա անձանց ֆիզիկական և նյութական կարիքները հոգալու համար: Սա կարող է ներառել սննդամթերք, բժշկական պարագաներ, հագուստ, կացարան, սերմեր և գործիքներ, ինչպես նաև ենթակառուցվածքների ապահովում, ինչպիսիք են դպրոցները և ճանապարհները: «Մարդասիրական օգնությունը» վերաբերում է մարդասիրական կազմակերպությունների կողմից մարդասիրական նպատակներով (այսինքն՝ ոչ քաղաքական, ոչ առևտրային և ոչ ռազմական նպատակներով) տրամադրվող օգնությանը: ՄԱԿ ՓԳՀ-ի պրակտիկայում աջակցությունը ուղղված է և լրացնում է պաշտպանության նպատակների իրագործմանը:

Առանց ուղեկցության երեխաներ

Երեխաներ, որոնց չեն ուղեկցում ծնողները կամ այլ չափահաս խնամողներ:

Աֆրիկայում փախստականների խնդիրների հատուկ ասպեկտները կարգավորող ԱՄԿ (Աֆրիկյան միասնության կազմակերպություն) կոնվենցիա

1951 թվականի կոնվենցիայի տարածաշրջանային լրացում, որը նախատեսում է փախստականի ավելի լայն սահմանում: 1969 թվականին ընդունված Փախստականների մասին ԱՄԿ կոնվենցիան նախատեսում է, որ «փախստական» տերմինը «կիրառում է նաև նրանց նկատմամբ, ովքեր փախել են արտաքին ագրեսիայից, օկուպացիայից, օտարերկրյա գերիշխանությունից կամ այն իրադարձություններից, որոնք լրջորեն խաթարում են հասարակական կարգը ծագման երկրի որևէ մասում կամ ամբողջ տարածքում»: ԱՄԿ-ն այժմ կոչվում է Աֆրիկյան միություն:

Բ

Բացառման դրույթներ

Իրավական դրույթներ, որոնք թույլ չեն տալիս միջազգային պաշտպանության առավելություններից օգտվել այն անձանց, որոնք այլ կերպ կբավարարեին փախստականի կարգավիճակի չափանիշները: 1951 թվականի Կոնվենցիայում բացառման դրույթները ներկայացված են 1Դ, 1Ե և 1Զ հոդվածներում: Այս կետերը վերաբերում են հետևյալ կատեգորիաներին. Անձինք, որոնք պաշտպանություն կամ աջակցություն են ստանում ՄԱԿ ՓԳՀ-ից բացի ՄԱԿ-ի այլ գործակալություններից, անձինք, որոնք ունեն իրենց մշտական բնակության երկրի քաղաքացիության հետ կապվախ իրավունքներ և պարտականություններ, և անձինք, որոնց դեպքում կան լուրջ պատճառներ համարելու, որ նրանք

կատարել են հանցագործություն
խաղաղության դեմ,
պատերազմական
հանցագործություն, մարդկության
դեմ հանցագործություն, լուրջ ոչ
քաղաքական հանցագործություն
կամ գործողություններ, որոնք
հակասում են Միավորված ազգերի
կազմակերպության
նպատակներին և սկզբունքներին:

Գ

**Գերագույն հանձնակատարի
ծրագրի գործադիր կոմիտե
(ԳործԿոմ)**

Կոմիտե, որը պատասխանատու է
Գերագույն հանձնակատարին իր
գործառնությունների իրականացման
վերաբերյալ խորհրդատվություն
տրամադրելու համար: ԳործԿոմ-ը
բաղկացած է 64 պետությունների
ներկայացուցիչներից, որոնք
ակնհայտորեն հետաքրքրված են
փախստականների հարցերով: Այլ
պետություններ կարող են ՀԿ-ների
հետ միասին մասնակցել որպես
դիտորդ:

**Գործադիր կոմիտեի (ԳործԿոմ)
եզրակացություններ միջազգային
պաշտպանության վերաբերյալ**

Պաշտոնական տեքստեր, որոնք
ներառում են միջազգային
պաշտպանության հարցերի
վերաբերյալ ԳործԿոմ-ի տարեկան
քննարկումների արդյունքները:
ԳործԿոմ-ի եզրակացությունները
նպաստում են փախստականների և
ՄԱԿ ՓԳՀ-ի խնդրո առարկա այլ
անձանց պաշտպանության
սկզբունքների և չափանիշների
մշակմանը:

Գենդերային հետապնդում

Հալածանք, որն ուղղված է կամ
անհամաչափորեն ազդում է
կոնկրետ անձի վրա: Որոշ
փաստացի հանգամանքներում
գենդերի հետ կապված
հետապնդումները կարող են
ներառվել փախստականների
սահմանման մեջ:

Դ

Դադարեցման դրույթներ

Իրավական դրույթներ, որոնք
սահմանում են այն պայմանները,
որոնց դեպքում փախստականի
կարգավիճակը ավարտվում է, քանի
որ դրա կարիքն այլևս չկա կամ
հիմնավորված չէ: Դադարեցման
դրույթները տեղ են գտել 1951
թվականի Կոնվենցիայի 1-ին
հոդվածի «Գ» կետում և
Փախստականների մասին 1969
թվականի ԱՄԿ կոնվենցիայի 1-ին
հոդվածի 4-րդ կետում:

Ե

Երեխաներ

Անձինք, որոնք օրինական
չափահասության տարիքից փոքր են
և, հետևաբար, օրենքի առումով
անկախ չեն: Այս տերմինը ներառում
է դեռահասներին: Երեխայի
իրավունքների մասին կոնվենցիայի
(ԵԻԿ) համաձայն՝ «երեխան» այն
անձն է, որը տասնութ տարեկանից
ցածր է, բացառությամբ այն
դեպքերի, երբ գործող
օրենսդրությունը ավելի ցածր
տարիք է սահմանում: ԵԻԿ-ը
նույնացնում է «երեխային»
«անչափահասի» հետ:

Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա (ԵԻԿ)

1989 թվականին ընդունված այս պայմանագիրը երեխաների իրավունքների պաշտպանության համապարփակ չափորոշիչներ է սահմանում: Այն հիմնված է չորս առաջնորդող սկզբունքների վրա, որոնցից մեկը խտրականության բացառումն է բոլոր երեխաների նկատմամբ իր կիրառման հարցում: Հետևաբար, փախստական երեխաները լիովին մտնում են դրա շրջանակի մեջ: Մյուս առաջնորդող սկզբունքներն են՝ երեխայի «լավագույն շահը», կյանքի, գոյատևման և զարգացման իրավունքը և մասնակցության իրավունքը:

Ը

Ընտանիքի վերամիավորում

Ցանկացած գործընթաց, որի միջոցով ընտանիքի մտերիմ անդամները համախմբվում են՝ այդպիսով հարգելով ընտանիքը՝ որպես հասարակության բնական և հիմնարար խմբային միավոր: Այն առանձնահատուկ կիրառություն ունի առհասարակ երկարատև լուծումների և, մասնավորապես, վերաբնակեցման համատեքստում:

Ժ

Ժամանակավոր պաշտպանություն

Կոնֆլիկտների կամ ընդհանրացված բռնության իրավիճակներից զանգվածաբար ժամանող անձանց ժամանակավոր պաշտպանություն առաջարկելու համար պետությունների կողմից մշակված պայմանավորվածություն կամ գործիք, որի դեպքում

պաշտպանությունը տրամադրվում է՝ առանց շահագրգիռ անձանց կարգավիճակը սահմանելու: Ժամանակավոր պաշտպանությունը հիմնականում օգտագործվել է արդյունաբերական պետություններում:

Տես Խմբի վրա հիմնված պաշտպանության արձագանքները:

Ի

Ինքնուրույնություն

Փախստականների համատեքստում ապաստան հայցողի կամ փախստականի՝ իր և իր խնամակալների կարիքները հոգալու կարողությունը:

Խ

Խմբային պաշտպանության արձագանքներ

Մոտեցումներ, որոնցով փախստականների պաշտպանության և աջակցության կարիքները բավարարվում են՝ առանց նախապես անհատական հիմունքներով նրանց կարգավիճակը որոշելու: Տեղին են, երբ ապաստան հայցողները ժամանում են զանգվածաբար, և անհատականացված ընթացակարգերը ոչ իրագործելի են, ոչ էլ անհրաժեշտ (փախուստի պատճառը հաճախ ինքնին պարզ է): Երկու հիմնական մոտեցումներն են փախստականի կարգավիճակի *առաջին հայացքից* ճանաչումը և ժամանակավոր պաշտպանությունը:

Կ

Կալանավորում

Տեղաշարժի ազատության սահմանափակում՝ սովորաբար հարկադիր կալանքի տեսքով:

Կոնվենցիայի իմաստով փախստականներ

1951 թվականի Կոնվենցիայի 1-ին հոդվածով նախատեսված իրավասության չափանիշներով պետությունների կողմից փախստական ճանաչված անձինք և այդ պայմանագրով նախատեսված մի շարք իրավունքներից օգտվելու իրավասություն:

Կոնվենցիա Պլյուս

Փախստականների բարելավման նպատակով Գերագույն հանձնակատարի նախաձեռնությամբ պաշտպանություն ամբողջ աշխարհում, որի նպատակն է հեշտացնել փախստականների խնդիրների լուծումը բազմակողմ հատուկ համաձայնագրերի միջոցով այնպիսի հարցերի շուրջ, ինչպիսիք են երկրորդային տեղաշարժը, վերաբնակեցումը և օգնության և զարգացման միջև կապը:

Կոնվենցիայի հիմքեր

1951 թվականի Կոնվենցիայում փախստականի սահմանումը պահանջում է, որ հետապնդման վախը կապված լինի հետևյալ հինգ հիմքերից մեկի կամ մի քանիսի հետ՝ ռասա, կրոն, ազգություն, որոշակի սոցիալական խմբի անդամակցություն կամ քաղաքական կարծիք:

Կամավոր հայրենադարձություն

Փախստականների վերադարձը ծագման երկիր ազատ և տեղեկացված որոշման հիման վրա: Կամավոր հայրենադարձությունը երեք կայուն լուծումներից մեկն է և կարող է լինել կազմակերպված (այսինքն, երբ այն տեղի է ունենում խնդրո առարկա կառավարությունների և ՄԱԿ ՓԳՀ-ի հովանու ներքո) կամ ինքնաբերական (այսինքն՝ փախստականները վերադառնում են իրենց միջոցներով, ՄԱԿ ՓԳՀ-ի և կառավարությունների փոքր մասնակցությամբ:)

Հ

Համաներում

Իրավական երաշխիք, որն ազատում է անձին կամ մարդկանց խմբին քրեական կամ քաղաքական հանցագործությունների համար պատասխանատվությունից:

Համաներումը կարող է նպաստել փախստականների կամավոր հայրենադարձությանը, եթե այն հարգվի և պատշաճ կերպով կիրառվի:

Հայտնաբերում

Փախստականների համատեքստում՝ ՄԱԿ ՓԳՀ-ի խնդրո առարկա անձանց ընտանիքի անդամների կամ մերձավորների գտնվելու վայրը պարզելու ջանքերը: Հայտնաբերումը կարող է իրականացվել ընտանիքի վերամիավորման նպատակով, երկարատև լուծումների համատեքստում կամ պարզապես ընտանիքի անդամների միջև շփումները հեշտացնելու համար: Կարմիր խաչի միջազգային կոմիտեն (ԿԽՄԿ) ղեկավարում է

Կենտրոնական հետախուզման գործակալություն, որն ունի հատուկ իրավասություն այս ոլորտում:

Հասարակական կազմակերպություն (ՀԿ)

Կազմակերպություն, որը գործնականորեն անկախ է և հանդես չի գալիս որևէ երկրի անունից: Այս տերմինը սովորաբար կիրառվում է այն կազմակերպությունների նկատմամբ, որոնք նվիրված են մարդասիրական և մարդու իրավունքների խնդիրներին, որոնցից շատերն իրականացնում են փախստականների հետ կապված իրենց ծրագրերը ՄԱԿ ՓԳՀ-ի հետ համագործակցությամբ:

Հատուկ սոցիալական խումբ (անդամակցություն...)

1951 թվականի Կոնվենցիայի հինգ հնարավոր հիմքերից մեկը, որի հիման վրա կարող է հաստատվել հետապնդումը: Սոցիալական որոշակի խումբն այն մարդկանց խումբն է, որոնք կամ ունեն ընդհանուր բնութագիր (բացի հետապնդման վտանգից), կամ հասարակության կողմից ընկալվում են որպես խումբ: Բնութագիրը հաճախ լինում է բնածին, անփոփոխ կամ այլ կերպ հիմնարար ինքնության, խոչի կամ հիմնարար իրավունքների իրականացման համար:

Հետապնդում

Հետապնդման հիմնական հայեցակարգը միտումնավոր չի սահմանվել 1951 թվականի Կոնվենցիայում՝ ենթադրելով, որ

մշակողները նախատեսում էին այն մեկնաբանել բավական ճկուն կերպով, որպեսզի ներառի հետապնդման անընդհատ փոփոխվող ձևերը: Ենթադրվում է, որ այն ներառում է մարդու իրավունքների խախտումներ կամ այլ լուրջ վնասներ՝ հաճախ, բայց ոչ միշտ համակարգված կամ կրկնվող տարրով:

Հետապնդման հիմնավոր երկյուղ

1951 թվականի Կոնվենցիայի փախստականի սահմանման տարրերից մեկն է: Այս արտահայտությունը պարունակում է սուբյեկտիվ տարր (հետապնդման երկյուղ), ինչպես նաև օբյեկտիվ տարր (վախը պետք է ունենա օբյեկտիվորեն հիմնավորված հիմք): Համաձայն 1951 թվականի Կոնվենցիայի՝ հետապնդումը պետք է կապված լինի նշված հինգ հիմքերից մեկի կամ մի քանիսի հետ՝ ռասա, կրոն, ազգային պատկանելություն, որոշակի սոցիալական խմբի անդամակցություն և քաղաքական կարծիք:

Հետապնդում իրականացնող ոչ պետական դերակատարներ

Մարդիկ կամ կազմակերպություններ, որոնք պատասխանատու են գործողությունների կամ հետապնդման սպառնալիքների համար, որոնք չեն գտնվում կառավարության վերահսկողության տակ: Նրանց գործունեությունը կարող է որակվել որպես հետապնդում 1951 թվականի Կոնվենցիայի համաձայն, եթե դրանք օժանդակվում, խրախուսվում կամ հանդուրժվում են կառավարության կողմից, կամ

եթե կառավարությունը չի կարողանում կամ չի ցանկանում արդյունավետ պաշտպանություն ապահովել դրանց դեմ:

Մ

ՄԱԿ ՓԳՀ-ի խնդրո առարկա անձինք

Ընդհանուր տերմին, որն օգտագործվում է նկարագրելու բոլոր այն անձանց, ում պաշտպանության և աջակցության կարիքները հետաքրքրում են ՄԱԿ ՓԳՀ-ին: Դրանք ներառում են 1951 թվականի Կոնվենցիայի և տարածաշրջանային փաստաթղթերի համաձայն փախստականներին, վերադարձողներին, քաղաքացիություն չունեցող անձանց և, որոշ իրավիճակներում, ներքին տեղահանված անձանց և տեղահանման վտանգի տակ գտնվող անձանց: Փախստականներից բացի, խնդրո առարկա այլ անձանց անունից գործելու ՄԱԿ ՓԳՀ-ի իրավասությունը հիմնված է Գլխավոր ասամբլեայի և Տնտեսական և սոցիալական խորհրդի բանաձևերի վրա:

Մանդատային փախստականներ

ՄԱԿ ՓԳՀ-ի խնդրո առարկա փախստականները, այսինքն՝ այն անձինք, որոնք ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից ճանաչվել են որպես փախստական, որը գործում է իր Կանոնադրության և Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի և Տնտեսական և սոցիալական խորհրդի համապատասխան բանաձևերի և 1951 թվականի Կոնվենցիայի համաձայն: Մանդատային

փախստականի կարգավիճակը հատկապես կարևոր է 1951 թվականի Կոնվենցիայի կամ դրա 1967 թվականի Արձանագրության կողմ չհանդիսացող պետություններում:

Մարդու իրավունքներին առնչվող իրավական նորմեր

Տե՛ս Մարդու իրավունքներին առնչվող միջազգային իրավական նորմերը

Մարդու իրավունքներին առնչվող միջազգային իրավական նորմեր

Միջազգային փաստաթղթերի և միջազգային սովորույթային իրավունքի ամբողջություն, որը ճանաչում և պաշտպանում է մարդու իրավունքները: Ամենահայտնի գործիքները կազմում են իրավունքների միջազգային օրինագիծը (Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը և Տնտեսական և սոցիալական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը): Փախստականներին և մարդու իրավունքների առնչվող իրավական նորմերը լրացնում են միմյանց:

Միջազգային սովորույթային իրավունք

Միջազգային իրավական նորմեր, որոնց հեղինակությունը բխում է պետությունների մշտական և հետևողական պրակտիկայից, այլ ոչ թե պայմանագրում կամ այլ իրավական տեքստում պաշտոնական արտահայտումից: Որպեսզի պետական պրակտիկան նպաստի միջազգային սովորույթային իրավունքի

ձևավորմանը, այդ պրակտիկան պետք է իրականացվի իրավական պարտավորության զգացումով (opinio juris):

ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի կանոնադրություն

Փաստաթուղթ, որն ընդունվել է Գլխավոր ասամբլեայի կողմից 1950 թվականին, որն առաջին անգամ սահմանել է ՄԱԿ ՓԳՀ-ի մանդատը, գործառույթներն ու կառուցվածքը և սահմանում է փախստական հասկացությունը ՄԱԿ ՓԳՀ-ի աշխատանքի նպատակների համար: Ավելի ուշ, ՄԱԿ ՓԳՀ-ի պարտականությունները ընդլայնվեցին Գլխավոր ասամբլեայի և Տնտեսական և սոցիալական խորհրդի բանաձևերով՝ 1951թ. Կոնվենցիայի հետ համատեղ:

ՄԱԿ ՓԳՀ

ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատար

ՄԱԿ ՓԳՀ մանդատ

ՄԱԿ ՓԳՀ-ի դերն ու գործառույթները, ինչպես սահմանված են նրա կանոնադրությամբ և ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի և Տնտեսական և սոցիալական խորհրդի հետագա բանաձևերում՝ 1951թ. Կոնվենցիայի հետ միասին:

Մերժում սահմանին

Փախստականների համատեքստում ապաստան հայցողին թույլ չտալ մուտք գործել

ապագա ապաստանի երկիր: Սահմանին մերժումը կարող է հանգեցնել չվերադարձելիության սկզբունքի խախտման:

Միջազգային պաշտպանության վերաբերյալ համաշխարհային խորհրդակցություններ

Գործընթաց, որը մեկնարկել է ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից 2000 թվականի վերջին՝ փախստականների պաշտպանության շրջանակը վերահաստատելու, դրա հիմնարար բաղադրիչները վերահաստատելու, վիճելի հասկացությունների պարզաբանման և ժամանակակից մարտահրավերներին դիմակայելու հետագա գործառնական մոտեցումների մշակման նպատակով: ՄԱԿ ՓԳՀ-ն, պետությունները, միջազգային կազմակերպությունները, ՀԿ-ները և փախստականները ներգրավված են այդ գործընթացում: Արդյունքները ներառում են 2001թ. Նախարարական հռչակագիրը և Պաշտպանության օրակարգը:

Միգրանտներ

Անձինք, որոնք լքում են իրենց երկրները, այդ թվում՝ փախստականները: Սակայն, ի տարբերություն այլ միգրանտների, փախստականները չեն մեկնում իրենց ընտրությամբ: Միգրանտները, ինչպես օրինակ՝ նրանք, ովքեր տեղափոխվում են տնտեսական կամ ընտանեկան պատճառներով, չեն համապատասխանում փախստականի կարգավիճակի չափանիշներին, իրավունք չունեն օգտվելու միջազգային պաշտպանությունից:

Միջազգային մարդասիրական

իրավունք

Միջազգային սովորույթային իրավունքի և միջազգային փաստաթղթերի ամբողջություն, որը կարգավորում է միջազգային կամ ոչ միջազգային զինված հակամարտությունների իրավիճակները: Հիմնական գործիքներն են 1949 թվականի Ժնևի չորս կոնվենցիաները և դրանց երկու 1977 թվականի Լրացուցիչ արձանագրությունները: Գործնականում յուրաքանչյուր երկիր Ժնևի կոնվենցիաների կողմ է:

Միջազգային պաշտպանություն

Միջազգային պաշտպանությունը կարող է սահմանվել որպես գործողությունների ամբողջությունը, որոնք ուղղված են մարդկանց իրավունքների հավասար հասանելիության և դրանցից օգտվելու ապահովմանը ՄԱԿ ՓԳՀ-ի խնդրո առարկա կանանց, տղամարդկանց, աղջիկների և տղաների համար՝ համապատասխան իրավական նորմերի համաձայն (այդ թվում՝ միջազգային մարդասիրական իրավունքի, մարդու իրավունքներին և փախստականներին առնչվող միջազգային իրավական նորմերի համաձայն): Այն ներառում է պետությունների կամ ՄԱԿ ՓԳՀ-ի միջամտությունները ապաստան հայցողների և փախստականների անունից՝ երաշխավորելու, որ նրանց իրավունքները, անվտանգությունը և բարեկեցությունը ճանաչվեն և պաշտպանվեն միջազգային չափանիշներին համապատասխան: Նման միջամտությունները ներառում են

չվերադարձելիության սկզբունքի հարգման ապահովումը, անվտանգության հասանելիությունը, փախստականի կարգավիճակի որոշման արդար ընթացակարգերի հասանելիությունը, վերաբերմունքի մարդասիրական չափանիշները և տևական լուծումների իրականացումը: ՄԱԿ ՓԳՀ-ն Միավորված ազգերի կազմակերպության միակ գործակալությունն է, որն ունի համաշխարհային մակարդակով փախստականների պաշտպանության մանդատ:

Միջկառավարական գործակալություն (ՄԿԳ)

Պետություններից կազմված կազմակերպություն: Օրինակները ներառում են Միավորված ազգերի կազմակերպությունը, Աֆրիկյան միությունը (ԱՄ), Ամերիկյան պետությունների կազմակերպությունը (ԱՊԿ), Եվրոպական միությունը (ԵՄ) և Անկախ պետությունների համագործակցությունը (ԱՊՀ):

Ն

Ներքին տեղահանում

Մարդկանց ականա տեղաշարժը սեփական երկրի ներսում: Այս տեղաշարժը կարող է պայմանավորված լինել տարբեր պատճառներով, ներառյալ բնական կամ մարդածին աղետներով, զինված հակամարտություններով կամ ընդհանրացված բռնության իրավիճակներով:

Ներքին տեղահանվածներ (ՆՏԱ)

Մարդիկ, որոնք հարկադրված կամ պարտավորված են փախչել իրենց տներից, «...մասնավորապես զինված հակամարտությունների, ընդհանրացված բռնության իրավիճակների, մարդու իրավունքների խախտումների կամ բնական կամ մարդածին աղետների հետևանքով կամ դրանց հետևանքներից խուսափելու նպատակով, և որոնք չեն հատել միջազգայնորեն ճանաչված պետական սահմանը» (համաձայն ներքին տեղահանման մասին ուղեցույցի սկզբունքների):

Ներքին տեղահանման կամ վերաբնակեցման այլընտրանք

Փաստացի որոշում, որ անձը, որը փախչում է իր ծագման երկրի մի մասում առկա հետապնդումներից, կարող է պաշտպանություն գտնել նույն երկրի մեկ այլ մասում: Ներքին վերաբնակեցումը կարևոր կլինի միայն որոշ սահմանափակ դեպքերում փախստականի կարգավիճակի որոշման համար:

Ներքին տեղահանման վերաբերյալ ուղղորդող սկզբունքներ

Մի շարք սկզբունքներ, որոնք սահմանում են ներքին տեղահանվածների պաշտպանության, օգնության և լուծումների չափանիշները: Ուղղորդող սկզբունքները հրապարակվել են 1998թ.-ին ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի՝ տեղահանված անձանց հարցերով ներքին գործերի հատուկ ներկայացուցչի կողմից: Դրանք արտացոլում են մարդու իրավունքների առնչվող իրավական նորմերը,

մարդասիրական իրավունքը և, համանմանությամբ, փախստականների մասին օրենքը: Սկզբունքները ուղղորդում են տրամադրում պետություններին, ինչպես նաև միջկառավարական և ոչ պետական կազմակերպություններին, որոնք զբաղվում են ներքին տեղահանման հարցերով:

2

Զվերադարձելիություն (Զվերադարձելիության սկզբունք)

Փախստականների մասին միջազգային իրավական նորմերի հիմնական սկզբունքը, որն արգելում է պետություններին ցանկացած ձևով վերադարձնել փախստականներին այն երկրներ կամ տարածքներ, որտեղ նրանց կյանքը կամ ազատությունը կարող է վտանգվել Կոնվենցիայի հիմքերից որևէ մեկի պատճառով: Զվերադարձելիության սկզբունքը միջազգային սովորույթային իրավունքի մի մասն է և, հետևաբար, պարտադիր է բոլոր պետությունների համար, անկախ նրանից՝ նրանք 1951 թվականի Կոնվենցիայի կողմ են, թե ոչ:

Պ

Պայմանագիր

Պաշտոնական համաձայնագիր՝ հիմնականում պետությունների միջև, որը պարտադիր իրավական պարտավորություններ է սահմանում իր կողմերի միջև: Պայմանագրերը միջազգային իրավունքի հիմնական աղբյուրներից են:

Պաշտպանության օրակարգ

Գործողությունների ծրագիր ամբողջ աշխարհում փախստականների և ապաստան հայցողների պաշտպանությունը բարելավելու համար, որը համաձայնեցվել է ՄԱԿ ՓԳՀ-ի և պետությունների կողմից Համաշխարհային խորհրդակցությունների գործընթացի շրջանակում, հաստատվել է Գործադիր կոմիտեի կողմից 2002թ. հոկտեմբերին և ողջունվել Գլխավոր ասամբլեայի կողմից:

Ս

Մեռական և գենդերային բռնություն (ՄԳԲ)

Մարդու իրավունքների խախտման առանձնահատուկ ձև, որը ամրապնդում է հասարակության մեջ տղամարդկանց և կանանց տարբեր դերերի մասին կարծրատիպերը:

Սոցիալական խումբ

Տես Հատուկ սոցիալական խումբ

Վ

Վերաբերմունքի չափանիշներ

Չափանիշներ, որոնք բխում են Փախստականների մասին 1951 թվականի կոնվենցիայից և այլ միջազգային փաստաթղթերից, որոնք սահմանում են փախստականների նկատմամբ վերաբերմունքի չափանիշները: 1951 թվականի Կոնվենցիան նախատեսում է վերաբերմունքի տարբեր չափանիշներ՝ կախված կոնկրետ իրավունքներից: Դրանք են՝ ոչ պակաս բարենպաստ վերաբերմունք, քան այն

վերաբերմունքը, որին սովորաբար արժանանում են օտարերկրացիները նմանատիպ հանգամանքներում, նույն հանգամանքներում օտարերկրյա քաղաքացիների նկատմամբ ցուցաբերվող առավելագույն բարենպաստ վերաբերմունքը, նույն վերաբերմունքը, ինչ տրամադրվում է քաղաքացիներին, և հնարավորինս բարենպաստ վերաբերմունք:

Վերաբնակեցում

Փախստականների տեղափոխում այն երկրից, որտեղ նրանք ապաստան են խնդրել, մեկ այլ պետություն, որը համաձայնել է նրանց ընդունել: Սովորաբար փախստականները կստանան ապաստան կամ երկարաժամկետ բնակության իրավունքի որևէ այլ ձև և, շատ դեպքերում, հնարավորություն կունենան դառնալու քաղաքացիություն ունեցող անձինք: Այդ իսկ պատճառով վերաբնակեցումը կայուն լուծում է, ինչպես նաև գործիք փախստականների պաշտպանության համար: Այն նաև միջազգային բեռի և պատասխանատվության բաշխման գործնական օրինակ է:

Վերաբնակեցման երկիր

Երկիր, որն առաջարկում է փախստականների մշտական բնակության հնարավորություններ: Սա կլինի այլ երկիր, քան ծագման երկիրը կամ այն երկիրը, որտեղ առաջին անգամ ճանաչվել է փախստականի կարգավիճակը:

Վերադարձելիություն

Անձին վերադարձնելը մի տարածք, որտեղ նրան կսպառնա

հետապնդման վտանգ, կամ տեղափոխելը այլ տարածք, որտեղ նա կենթարկվի հետապնդման: Համաձայն փախստականների առնչվող միջազգային իրավական նորմերի և միջազգային սովորության իրավունքի՝ վերադարձը թույլատրվում է միայն բացառիկ դեպքերում:

Վերաինտեգրում

Գործընթաց, որը վերադարձողներին հնարավորություն է տալիս վերականգնելու իրենց ֆիզիկական, սոցիալական, իրավական և նյութական անվտանգությունը, որն անհրաժեշտ է կյանքի, կենսապահովման և արժանապատվության պահպանման համար, և որն ի վերջո հանգեցնում է իրենց հայրենակիցների հետ համեմատությամբ ցանկացած նկատելի տարբերությունների վերացմանը:

Վտարում

Պետական մարմինների կողմից օրինական բնակչի հեռացում պետության տարածքից: 1951 թվականի Կոնվենցիայի 32-րդ հոդվածի համաձայն՝ ազգային անվտանգությունը և հասարակական կարգը փախստականին վտարելու միակ թույլատրելի հիմքերն են: Ընթացակարգերը, որոնցով վտարման որոշում է կայացվում, պետք է լինեն արդար և անաչառ, և փախստականին պետք է ողջամիտ ժամանակ տրվի այլ երկիր ընդունվելու համար:

Տարածաշրջանային գործիքներ փախստականների համար

Փախստականներին վերաբերող միջազգային իրավական փաստաթղթեր, որոնք ընդունվել են պետությունների կամ միջկառավարական կազմակերպությունների կողմից աշխարհագրական տարածաշրջանում կամ ենթաշրջանում: Նման գործիքները սովորաբար լրացնում են 1951 թվականի Կոնվենցիային և արտացոլում է փախստականների խնդիրների առանձնահատուկ բնույթը կոնկրետ աշխարհագրական տարածքում: Տարածաշրջանային փաստաթղթերի ուշագրավ օրինակներ են Փախստականների մասին ԱՄԿ կոնվենցիան և Կարթագենի հռչակագիրը:

Տեսական լուծումներ

Ցանկացած միջոց, որով փախստականների իրավիճակը կարող է բավարար կերպով և մշտապես կարգավորվել՝ նրանց բնականոն կյանքով ապրելու հնարավորություն տալով: Երեք տեսական լուծումներն են՝ կամավոր հայրենադարձությունը, տեղական ինտեգրումը և վերաբնակեցումը:

Տեղական ինտեգրում

Փախստականների ծանր վիճակի կայուն լուծում, որը ներառում է նրանց մշտական բնակությունն այն երկրում, որտեղ նրանք ապաստան են խնդրել:

Տեղում փախստական դարձած անձինք

Անձինք, որոնք փախստական չեն եղել, երբ լքել են իրենց ծագման

երկրները, բայց ավելի ուշ փախստական են դարձել միջամտող իրադարձությունների պատճառով: Տեղում փախստական դարձած անձանց համար կարող է հետապնդման երկյուղի պատճառ դառնալ ծագման երկրում տեղի ունեցած փոփոխությունը, օրինակ՝ պետական հեղաշրջումը, կամ ապաստանի երկրում իրենց ձեռնարկած գործողությունները:

Փ

Փախստական

Անձ, որը համապատասխանում է փախստականի գործող սահմանմանը համապատասխանության չափանիշներին, ինչպես նախատեսված է փախստականների մասին միջազգային կամ տարածաշրջանային փաստաթղթերով, ՄԱԿ ՓԳՀ-ի մանդատով և/կամ ազգային օրենսդրությամբ:

Փախստականներին առնչվող իրավական նորմեր

Տես՝ Փախստականներին առնչվող միջազգային իրավական նորմերը

Փախստականի կարգավիճակի որոշման ընթացակարգեր

Պետությունների և/կամ ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից ձեռնարկված իրավական և վարչական ընթացակարգեր՝ որոշելու, թե արդյոք անհատը պետք է ճանաչվի որպես փախստական՝ ազգային և միջազգային իրավունքի համաձայն:

Փախստականների մասին

Կարթագենի հռչակագիր

Հռչակագիր, որն ընդունվել է Կենտրոնական Ամերիկայի փորձագետների համաժողովում 1984 թվականին: Հռչակագիրը դուրս է գալիս 1951 թվականի կոնվենցիայի սահմաններից՝ ներառելով փախստականների սահմանման մեջ «... անձանց, որոնք լքել են իրենց երկիրը, քանի որ իրենց կյանքին, անվտանգությանը կամ ազատությանը վտանգ է սպառնացել ընդհանրացված բռնության, արտաքին ագրեսիայի, ներքին հակամարտությունների, մարդու իրավունքների զանգվածային խախտումների կամ հասարակական կարգը լրջորեն խախտած այլ հանգամանքների պատճառով»: Թեև Կարթագենի հռչակագիրը պայմանագիր չէ, դրա դրույթները հարգվում են Կենտրոնական Ամերիկայում: Դրա փախստականի սահմանումը ներառվել է Կենտրոնական Ամերիկայի բոլոր երկրների օրենսդրությունում, բացառությամբ մեկի, և Լատինական Ամերիկայի մի շարք երկրների օրենսդրության մեջ:

Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիա (1951 թ. Կոնվենցիա)

Այս պայմանագիրը սահմանում է փախստականների պաշտպանության համար ամենալայն կիրառելի շրջանակը: Կոնվենցիայի 1-ին հոդվածը սահմանափակում է դրա շրջանակը «1951 թվականի հունվարի 1-ից առաջ տեղի ունեցած իրադարձություններով», սակայն այս սահմանափակումը հանվել է Փախստականների կարգավիճակի մասին դրա 1967 թվականի Արձանագրությամբ: 2004 թվականի

հոկտեմբերի դրությամբ 1951 թվականի Կոնվենցիայի և/կամ դրա 1967 թվականի Արձանագրության մասնակից պետությունները 145 են:

Փախստականների պարտականությունները

Այն պարտավորությունները, որոնք փախստականները պետք է կատարեն ապաստանի երկրում: 1951 թվականի Կոնվենցիայի 2-րդ հոդվածի համաձայն՝ փախստականները պետք է համապատասխանեն ցանկացած երկրի օրենքներին և կանոնակարգերին, որտեղ նրանք գտնվում են: Մասնավորապես, փախստականները պետք է ձեռնպահ մնան ցանկացած գործողությունից, որը վտանգում է համայնքների կամ ապաստանի երկրների անվտանգությունը, ապահովությունը կամ հասարակական կարգը:

Փախստականներին առնչվող միջազգային իրավական նորմեր

Միջազգային սովորության իրավունքի և միջազգային փաստաթղթերի ամբողջություն, որոնք սահմանում են փախստականների պաշտպանություն չափանիշները: Փախստականներին առնչվող իրավական նորմերի հիմնաքարը Փախստականների կարգավիճակի մասին 1951 թվականի Կոնվենցիան է:

նախատեսված կարգով: Որոշ երկրներ օգտագործում են «ազգություն» բառը՝ նկատի ունենալով այս իրավական կապը, իսկ որոշ երկրներ օգտագործում են «քաղաքացիություն» բառը:

Քաղաքացիություն

Որոշակի երկրի քաղաքացի լինելու կարգավիճակը

Քաղաքացիություն չունեցող անձ

Անձ, որն ոչ մի պետության կողմից չի համարվում քաղաքացի այդ պետության օրենսդրության համաձայն:

Քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի մասին կոնվենցիա

Կոնվենցիա, որը տալիս է քաղաքացիություն չունեցող անձի սահմանումը և սահմանում է այն իրավունքների շրջանակը, որոնցից քաղաքացիություն չունեցող անձինք կարող են օգտվել այն երկրներում, որտեղ նրանք օրինականորեն բնակվում են:

Ք

Քաղաքացի

Անհատ, որը ճանաչված է որպես տվյալ երկրի հետ իրավական կապ ունեցող անձ՝ օրենքով